

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
4 (2)

Երևան 2016

Ցեղասպանագիտական հանդես

Journal of Genocide Studies

Журнал исследований геноцида

Լույս է տեսնում 2013 թվականից

4 (2), 2016

Խմբագրական խորհուրդ

Հայկ Դեմոյան, պ. գ. դ. (գլխ. խմբագիր)

Սուրեն Մանուկյան, պ. գ. թ.

(գլխ. խմբագրի տեղակալ)

Լևոն Աբրահամյան, պ. գ. թ.

Մելինե Անումյան, պ. գ. թ.

Արսեն Ավագյան, պ. գ. դ.

Ռոբերտ Թաթոյան, պ. գ. թ.

Վալերի Թունյան, պ. գ. դ.

Անահիտ Խոսրոնա, պ. գ. թ.

Աշոտ Հայրունի, պ. գ. դ.

Նարինե Մարգարյան, պ. գ. թ.

Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ.

Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.

Ցեղասպանագիտական հանդես, Երևան:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2016.– 180 էջ:

Հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ

Հրատարակիչ՝ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Հասցեն՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Երևան, 0028

Հեռ.՝ (+374 10) 39 09 81), էլ. հասցեն՝ handes@genocide-museum.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ռոբերտ Թաթոյան

Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության
էթնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կեսերին
Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում 7

Նարինե Հակոբյան

Սասունի՝ 1894 թ. կոտորածի արձագանքներն արևելահայ մամուլում 43

Սեդա Պարսամյան

Հայ մտավորականության և հոգևորականության բնաջնջումը որպես
մշակութային ցեղասպանության դրսևորում 56

Նարինե Մարգարյան

Հայ գաղթականների վրանաքաղաքներն Իրաքում 1918-1922 թթ. 65

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռեգինա Գալուստյան

Թուրքական ազգայնականության ակունքներում. նոր օսմաններ 84

Շուշան Խաչատրյան

Բռնությունների և սպանությունների ծիսականացումը Մեծ եղեռնի ընթացքում 100

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նարեկ Պողոսյան

Ռաֆայել Լեմկինի դիտարկումները հայկական կոտորածների վերաբերյալ
գրքաչափ (book-length) ձեռագրի «Սպանելու մտադրություն: Ո՞վ է մեղավոր»
ենթաբաժնում 118

Միհրան Մինասեան

Անտիպ փաստաթուղթեր կիլիկեան կոտորածներու օրերուն Այնթապի հայութեան
իրավիճակին մասին 129

Տաթև Արշակյան

Հայոց ցեղասպանության ականատես Բերբերյան գերդաստանի պատմությունը 147

Էդիտա Գզոյան

Փրկություն հայ որբերին. Առաքել Չաքրյանի հուշերը 161

Հեղինակների մասին 178

CONTENT

HISTORY

Robert Tatoyan

The Questions of Number of Western Armenians and the Ethnic Composition of the Population of Western Armenia During the Period of the Aggravation of the Armenian Question in the mid-90 ^s of the XIX century	7
--	---

Narine Hakobyan

The Coverage of 1894 Sassoun Massacre in Eastern Armenian Press	43
---	----

Seda Parsamyan

Extermination of Armenian Intelligentsia and Clergy as an Act of Cultural Genocide	56
--	----

Narine Margaryan

Tent Camps of Armenian Refugees in Iraq in 1918-1922.	65
--	----

IDEOLOGY

Regina Galustyan

At the Roots of Turkish Nationalism: Young Ottomans.....	84
--	----

Shushan Khachatryan

Ritualization of Violence and Murders during the Armenian Genocide	100
--	-----

SOURCES

Narek Poghosyan

Raphael Lemkin Observations on the Subsection «Intent to Kill - Who is Guilty?» of “Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript”	118
---	-----

Mihran Minasyan

Unpublished Documents about the Condition of Aintab Armenians on the Days of Cilicia Massacres	129
--	-----

Tatev Arshakian

Story of Armenian Genocide Eyewitness Berberian Family.....	147
---	-----

Edita Gzoyan

Saving Armenian Orphans: Memoirs of Arakel Chakirian	161
--	-----

About Authors	178
---------------------	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Роберт Татоян

Вопросы численности западных армян и этнического состава населения Западной Армении в период обострения Армянского вопроса в середине 90-ых годов XIX века	7
--	---

Нарине Акопян

Сасунская резня 1894 года на страницах восточноармянской прессы	43
---	----

Седа Парсамян

Истребление армянской интеллигенции и духовенства как проявление политики культурного геноцида.....	56
---	----

Нарине Маргарян

Палаточные лагеря депортированных армян в Ираке в 1918-1922 гг.....	65
---	----

ИДЕОЛОГИЯ

Регина Галустян

У истоков турецкого национализма: новые османы.....	84
---	----

Шушан Хачатрян

Ритуализация насилий и убийств во время Геноцида армян	100
--	-----

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ

Нарек Погосян

Наблюдения Рафаэля Лэмкина в «Намерение убийства: кто виноват?» в подразделе рукописи «Рукопись книжного формата об армянской резне».....	118
---	-----

Мигран Минасян

Неопубликованные документы о положении армян Айнтаба в дни Киликийской резни	129
--	-----

Татев Аршакян

История семьи Берберян – очевидцев Геноцида армян	147
---	-----

Эдита Гзоян

Спасение армянским сиротам: воспоминания Аракела Чакряна	161
--	-----

Об авторах	178
------------------	-----

Պատմություն • History • История

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ. ԿԵՍԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռոբերտ Թաթոյան

Ա. Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հարցերի արծարծումը 1890-ական թթ. կեսերին հայկական բարեփոխումների շուրջ բանակցությունների ընթացքում

Ինչպես հայտնի է, 1878 թ. հուլիսի 13-ին ստորագրված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորություն է ստանձնում երկրի «հայաբնակ» նահանգներում իրականացնելու «տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ», ինչպես նաև «ապահովելու հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից»¹: Սրանով Հայկական հարցը մտնում է միջազգային դիվանագիտության օրակարգ՝ դրդելով թուրքական իշխանություններին ձեռնամուխ լինելու մի քաղաքականության իրականացման, որը նպատակ ուներ հնարավորինս նվազեցնելու Արևմտյան Հայաստանում հայերի թիվը ինչպես թղթի վրա, այնպես էլ իրականության մեջ²:

¹ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը մեջբերվում է ըստ *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում* (1828-1923), Երևան, «Հայաստան» հրատ., 1972, էջ 128:

² 1878-1894 թթ. ընկած ժամանակահատվածի համար կարելի է առանձնացնել օսմանյան կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի տարածքում իրականացվող հակահայկական ժողովրդագրական քաղաքականության հետևյալ հիմնական տարրերը.

- հայերի կոտորածների կազմակերպում,
- դրացի մահմեդական ազգաբնակչության, հատկապես քրդերի՝ հայերի նկատմամբ հարձակումների և հարստահարության քաջալերում «համլիդիե» հեծելազորի ստեղծման (1891 թ.), հայերի բողոքների անտեսման, դատարաններում կողմնապահության դրսևորման և այլ միջոցներով,
- «հայաբնակ» նահանգներում մահմեդական գաղթականների և ոչ նստակյաց քրդերի բնակեցում,
- հայ բնակչության իսլամացման խրախուսում,
- հայաբնակ վարչական միավորների վերաձևում՝ դրանց տրոհման և մոտակա հիմնականում իսլամաբնակ վայրերի հետ միացման միջոցով (տե՛ս նաև Թաթոյան Ռոբերտ, *Արևմտահայոթյան թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին*, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտ, 2015, էջ 35,36):

1890-ական թթ. կեսերի մերձավորարևելյան ճգնաժամի շրջանում ևս միջազգային դիվանագիտական օրակարգում Հայկական հարցը շարունակվեց դրսևորվել որպես «հայաբնակ» նահանգներում բարեփոխումներ իրականացնելու հարց³: Դրանից ելնելով՝ օսմանյան կառավարությունը պայքարում էր բարեփոխումների ծրագրերի դեմ՝ նաև նորից երևան հանելով իր այն պնդումները, որ հայերն Արևմտյան Հայաստանի տարածքում փոքրամասնություն են կազմում: Նման պայմաններում նորից կարևորություն էին ստանում արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանում հայերի՝ այլ էթնիկական խմբերի համեմատ հարաբերակցության հարցերը:

Բեռլինի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո ընկած շրջանում արևմտահայությունը ներկայացնող մարմինը՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, բավականին ակտիվ դերակատարում էր ստանձնել բարեփոխումների հարցը հետապնդելու ուղղությամբ՝ այդ նպատակով հրապարակ հանելով Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի՝ կառավարական տվյալներից տարբերվող հաշվարկներ և դրանով ոչ ուղղակի բանավեճի մեջ մտնելով օսմանյան կառավարության հետ: Սակայն 1890-ական թթ. պատրիարքարանը խուսափում է սեփական վիճակագրական հաշվարկներով հանդես գալուց և ընդհանուր առմամբ ձեռնպահ է մնում նախաձեռնողականություն դրսևորելուց բարեփոխումների հարցի լուծման ուղղությամբ՝ ըստ երևույթին չցանկանալով ավելորդ անգամ հրահրել օսմանյան իշխանությունների դժգոհությունը:

Բեռլինի պայմանագրի տակ ստորագրած եվրոպական վեց տերություններից (Ավստրո-Հունգարիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ֆրանսիա) Արևմտյան Հայաստանի ժողովրդագրությանը՝ արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի հարցերին, 1890-ական թթ. կեսերին անդրադարձել են հատկապես Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, որոնք առավել ակտիվ դերակատարություն էին ստանձնել Հայկական հարցում:

Հայկական հարցը նորից հայտնվում է մեծ տերությունների ուշադրության կենտրոնում Սուլթան Աբդուլ Համիդ II-ի վարչակարգի կողմից 1894 թվականի օգոստոսին Սասունի հայերի դիմադրության ճնշմանը հաջորդած զանգվածային կոտորածի⁴ հետևանքով: 1895 թ. սկզբներին Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները⁵ մշակում են «հայկական նահանգ-

³ 1890-ական թթ. կեսերին որպես բարեփոխումների ենթակա տարածք՝ «հայաբնակ» նահանգներ, ճանաչվել էին Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբեռլի (Մամուրեթ ուլ-Ազիզ) և Սեբաստիայի վիլայեթները. հողվածում «Արևմտյան Հայաստան» հասկացությունը վերաբերում է տվյալ տարածքին:

⁴ Կոտորածներին զոհ էր գնացել շուրջ 10,000 հայ, ավերվել էին տասնյակ հայկական գյուղեր (տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 402):

⁵ Մեծ տերություններից երեքը՝ այսպես կոչված Եռյակ դաշինքի երկրներ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան, հրաժարվեցին միանալ Մեծ Բրիտանիայի նախաձեռնությա-

ների» համար բարեփոխումների նախագիծը, որը մայիսի 11-ին հանձնվում է օսմանյան կառավարությանը⁶:

Մայիսյան ծրագրում երեք տերությունների դիվանագետները նաև հանգամանակից անդրադառնում են 1878–1894 թթ. ընկած ժամանակաշրջանում օսմանյան իշխանությունների հակահայկական ժողովրդագրական քաղաքականության հիմնական միջոցառումներին՝ առաջարկելով դադարեցնել դրանք:

Այսպես, ծրագրի հենց առաջին կետում, որը վերնագրված էր «Վիլայեթների թվի պակասեցում», նշվում էր հետևյալը. «Քանի որ ռեֆորմները պետք է մտցվեն Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Մերաստիայի, Մամուրեթ ուլ-Ազիզի և Դիարբեքի վեց նահանգներում, պետք է աշխատել այդ վիլայեթների թիվը պակասեցնել: ...Վերաձևումը պետք է կատարել այնպիսի եղանակով, որ ազգաբնակչության բաժանումը վերածվի այնպիսի էթնիկական խմբերի, որոնք ամեն մի նահանգի վարչական ստորաբաժանումների մեջ ըստ կարելիության համացել լինեն»⁷: Այս կետով առաջարկվում էր վեց նահանգների տարածքի հիման վրա մեկ կամ երկու վարչական միավոր ստեղծել, որտեղ ընդգրկված կլինեն առավել միատարր հայ բնակչություն ունեցող շրջանները:

Փաստաթղթում ծանոթության կարգով համառոտ ներկայացվում էր Արևմտյան Հայաստանի նահանգների տարածքի՝ օսմանյան կառավարության կողմից իրականացված վարչական վերաձևումների պատմությունը. «1875 թվից 10 տարի առաջ Էրզրումի էյալեթը⁸ բաղկացած էր հետևյալ գավառներից՝ Չըղդըր, Կարս, Էրզրում (այժմյան վիլայեթը), նույնպես Վան, որ պարունակում էր իր մեջ Հաքյարի, Բիթլիս և Մուշ: Այդ էյալեթը 1877-78 թթ. պատերազմից հետո հետզհետե բաժանվեց հինգ վիլայեթի և երկրի այն մասը, որ մնաց Թուրքիայի ձեռքում, բաժանվեց հետևյալ վիլայեթների՝ Էրզրումի, Վանի, Հաքյարիի և Մուշի: Այնուհետև, Հաքյարիի գավառը նորից միացվեց Վանի վիլայեթին, իսկ Մուշի գավառը՝ նոր կազմված Բիթլիսի վիլայեթին: Դրանից հետո էր, որ Մամուրեթ-Ուլ-Ազիզ սանջակը դարձավ վիլայեթ, որի հետ միացվեցին մի քանի հարևան հողեր: Այնինչ Դերսիմի վիլայեթը կրկին դարձավ սանջակ»⁹: Վերոնշյալ բոլոր վերաձևումների միջոցով օսմանյան կառա-

նը (տե՛ս *История дипломатии*, том II. *Дипломатия в Новое время 1871-1914*, Автор тома В.М. Хвостов, Москва, Государственное издательство политической литературы, 1963, էջ 335):

⁶ Տե՛ս Տարկսյան Է.Կ., *Политика османского правительства в Западной Армении*, Ереван, изд. АН Армянской ССР, 1972, էջ 33:

⁷ Մեջբերվում է ըստ Լէօ, *Հայոց հարցի վաերագրերը*, Թիֆլիս, տպարան Ն. Աղանեանցի, 1915, էջ 203: Տե՛ս նաև *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փառաթղթերում (1828-1923)...*, էջ 131: Հատվածի անգլերեն տեքստը՝ “The redistribution should be effected in such a way as to divide the populations into ethnographical groups as homogeneous a character as possible in the different administrative divisions of each province” (*Turkey. No 1 (1896), Correspondence Respecting the Introduction of Reforms in the Armenian Provinces of Asiatic Turkey*, London, 1896, p. 41):

⁸ Էյալեթ էին կոչվում նախքան 1866 թ. Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող վարչական միավորները, որոնց փոխարինելու եկան վիլայեթները:

⁹ Լէօ, *նշվ. աշխ.*, էջ 203:

վարությունը հետզհետե փորձում էր գտնել Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը յուրաքանչյուր վարչական միավորում փոքրամասնություն դարձնելու առավել արդյունավետ ձևաչափը, և Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դիվանագետներն ըստ էության իրենց բացասական գնահատականն էին տալիս իրականացված միջոցառումներին:

Բարեփոխումների մայիսյան ծրագրում կարևոր տեղ էր հատկացված հայերի կառավարման մարմիններում ներկայացված լինելու հարցին: Նախատեսվում էր, որ խոշորացված և էթնիկական սկզբունքով կազմված հայկական նահանգ(ներ)ի նահանգապետ(ներ)ը (վալի) պետք է ունենային օգնականներ (մուավին), որոնք պետք է լինեին քրիստոնյաներ, եթե վալին ինքը մուսուլման էր, և մուսուլմաններ, եթե վալին քրիստոնյա էր¹⁰:

Յուրաքանչյուր հայկական նահանգում գավառապետների (մյութեսարիֆ) որոշակի մասը պետք է լինեին քրիստոնյաներ: Քրիստոնյա գավառապետներ պետք է նշանակվեին այն սանջակներում, որտեղ քրիստոնյաները մեծամասնություն էին կազմում: Այն վիլայեթներում, որտեղ միայն մեկ մյութեսարիֆ պետք է լիներ (այսինքն՝ մեկ գավառից բաղկացած վիլայեթ), նա անպայման պետք է լիներ քրիստոնյա, եթե վալին իսլամադավան էր: Ինչպես և նահանգապետների պարագայում, գավառապետի օգնականը պետք է լիներ քրիստոնյա, եթե գավառապետը մահմեդական էր, և հակառակը¹¹:

Նույնպես և գավառակների (կազա) կառավարիչների (կայմական) նշանակման հարցում ծրագրով նախատեսվում էր ապահովել քրիստոնյաների (հայերի) որոշակի թիվ: Քրիստոնյա կայմականներ պետք է նշանակվեին այն կազաներում, որտեղ քրիստոնյաները մեծամասնություն էին կազմում: Կայմականների պարագայում նույնպես գործելու էր տեղակալի մահմեդական կամ քրիստոնյա լինելու սկզբունքը: Կարևոր դրույթ էր, որ քրիստոնյա մյութեսարիֆների և կայմականների թիվը չպետք է պակաս լիներ վիլայեթի կայմականների և մյութեսարիֆների ընդհանուր թվի մեկ երրորդից¹²: Նահանգապետներին, գավառապետներին, գավառակապետներին կից պետք է ստեղծվեին խորհուրդներ, որոնց անդամների կեսը պետք է լինեին քրիստոնյաներ¹³:

Բարեփոխումների մայիսյան ծրագիրը և՛ ժամանակակիցների, և՛ հետագա ուսումնասիրողների կողմից բնութագրվել է որպես չափավոր¹⁴: Այն չէր տալիս հայ բնակչությանն առանձին իրավունքներ և անտեսում էր նրանց քաղաքական պահանջները¹⁵: Սակայն անգամ այդ չափավոր առաջարկներին սուլթան Աբդուլ

¹⁰ Նույն տեղում, էջ 214:

¹¹ Նույն տեղում, էջ 215, 216:

¹² Նույն տեղում, էջ 216, 217:

¹³ Նույն տեղում, էջ 217:

¹⁴ Տե՛ս Պողոսյան Սո., Պողոսյան Կ., *Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն*, հ.1, Երևան, ՀՀ ՊՆ գործ. կառ. տպ., 2000, էջ 492

¹⁵ Տե՛ս Աճառեան Հ., *Տաճկահայոց հարցի պատմությունը*, Նոր Նախիջևան, տպ. Ս.Յ. Աւագեան, 1915, էջ 26:

Համիդը հետևողական դիմադրություն ցույց տվեց¹⁶: Որդեգրվեց խոստանալու և ձգձգելու, խուսանավելու քաղաքականություն. «...թուրքերի դիվանագիտական խուսահնարքները նույնքան անթիվ են, որքան ավագահատիկն օվկիանոսում», – այսպես էր դիպուկ բնութագրում օսմանյան կառավարության քաղաքականությունը Հայկական հարցում դեպքերին ժամանակակից բրիտանական թերթերից մեկը¹⁷:

Սուլթանական կառավարության՝ բարեփոխումների 1895 թ. մայիսյան ծրագրի կյանքի կոչմանը դիմադրելու գինանոցում կարևոր տեղ հատկացվեց Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում հայերի՝ փոքրամասնություն կազմելու փաստարկին: 1895 թ. հունիսի 3–ին օսմանյան իշխանությունները ներկայացնում են իրենց պատասխանը բարեփոխումների ծրագրին, որով ըստ էության մերժում են առաջարկների մեծ մասը¹⁸: Թուրքական պատասխանին կցված բացատրագրում անդրադարձ էր կատարվում բարեփոխումների ծրագրի առանձին դրույթներին: Վիլայեթների խոշորացման կետի վերաբերյալ նշվում էր, որ նահանգային ներկա բաժանման համակարգն ընդունված է կառավարումը հեշտացնելու նպատակով, և վարչական սահմանների փոփոխության դեպքում տարածքների վարչարարությունը կդժվարանա: Բացի դրանից, հայտարարվում էր, որ սահմանների փոփոխությունը գործնականում անհնարին է իրականացնել նաև բնակչության էթնիկական բաշխման տեսանկյունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վեց նահանգների բոլոր գավառներն ունեն խառը բնակչություն¹⁹: Վերջին պնդումը նույնիսկ հակասում էր խեղաթյուրված օսմանյան վիճակագրական տվյալներին, որոնց համաձայն՝ Վանի, Մուշի և Բիթլիսի գավառներում միասին վերցրած հայերը մեծամասնություն էին (Վան, ընդհանուր բնակչություն՝ 113,964, որից հայեր՝ 59,382²⁰, Մուշի գավառ, ընդհանուր բնակչություն՝ 99,560, որից հայեր՝ 56,252²¹, Բիթլիսի գավառ, ընդհանուր բնակչություն՝ 75,760, որից հայեր՝ 30,471²²):

1895 թ. հունիսի 17–ին օսմանյան կառավարությունը Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպաններին ուղարկված նոր գրությունում հայտարարում էր, որ երեք պետությունների առաջարկած բարեփոխումների իրականացման հարցում առաջնորդվելու է իր հպատակ ազգությունների տոկոսային հարաբերակցության թվերով²³:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Կիրակոսյան Ա., *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ. – 1914 թ.)*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 279:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս Turkey. No 1 (1896)..., էջ 78:

²⁰ Տե՛ս Karpas K., *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics*, Wisconsin, The University of Wisconsin Press, 1985, էջ 146:

²¹ Նույն տեղում, էջ 130:

²² Նույն տեղում:

²³ Turkey. No 1 (1896)..., էջ 89:

Օսմանյան կառավարության թվով երրորդ՝ առավել մանրամասն պատասխանը մեծ տերությունների բարեփոխումների ծրագրին ներկայացվում է նույն թվականի օգոստոսի 2-ին: Պատասխանում մեկ առ մեկ դիտարկվում էին Մայիսյան ծրագրի բոլոր կետերը և առանց բացահայտ մերժելու բարեփոխումների իրականացման գաղափարը՝ որպես սկզբունք, ծրագրի մեջ այնպիսի բովանդակային առարկություններ և ուղղումներ էին մտցվում, որոնք ըստ էության ամրացնում էին գրեթե բոլոր առաջարկները: Հայտարարվում էր, որ օսմանյան կառավարությունը մտադիր է բարեփոխումներ իրականացնել ոչ թե հայկական վեց նահանգների, այլ ամբողջ Օսմանյան կայսրության տարածքի նկատմամբ: Կրկին վերահաստատվում էր, որ բարեփոխումների անցկացման հարցում օսմանյան կառավարությունն առաջնորդվելու է հպատակ ազգությունների թվաքանակների հարաբերակցությամբ²⁴: Մերժվում էր նահանգապետների նշանակման հարցում որևէ փոփոխություն կատարել՝ վկայակոչելով այն «փաստարկը», որ համաձայն մարդահամարի տվյալների՝ վարչական բոլոր միավորներում մահմեդական տարրը մեծամասնություն է կազմում, հետևաբար՝ ցանկացած փոփոխություն հանգեցնելու է հանրային անդորրի խափանմանը (սա ակնարկ էր մահմեդական «մեծամասնության» հայերի նկատմամբ հնարավոր դժգոհությանը, որը և հրահրվեց Աբդուլ Համիդի կողմից նույն թվականի աշնանը՝ հանգեցնելով Արևմտյան Հայաստանի տարածքում զանգվածային կոտորածների)²⁵: Բարեփոխումների ծրագրի պահանջը՝ սանջակների կառավարիչների մեկ երրորդին նշանակել քրիստոնյաներից, մերժվում էր այն հիմնավորմամբ, որ ինչպես վիլայեթների գլխավոր քաղաքներում, այնպես էլ սանջակների մեծ մասում մահմեդականները կազմում են բնակչության մեծամասնությունը: Միևնույն ժամանակ մերժումը մեղմելու և մեծ տերություններին սիրաշահելու նպատակով պատասխանում չէր բացառվում առանձին երկրորդական գիշումների կատարումը, օրինակ՝ ունակ քրիստոնյաների՝ որոշ գավառապետների տեղակալների պաշտոններում նշանակումը²⁶:

Կայմակամների մեկ երրորդին քրիստոնյաներից նշանակելու և մահմեդական կայմակամի դեպքում նրա տեղակալ քրիստոնյա կայմակամ նշանակելու պահանջները նույնպես մերժվում էին, դրա փոխարեն չէր բացառվում, որ առանձին կայմակամների համար կսահմանվի տեղակալ ունենալու հնարավորություն, և այդ պաշտոնում կնշանակվեն քրիստոնյաներ²⁷: Մերժվում էր անգամ նահիեների (գյուղախումբ) կառավարիչներին տեղական ժողովի կողմից ընտրվելու առաջարկը: Սա նշանակում էր, որ հայերն ու քրիստոնյա այլ էթնիկական խմբեր զրկվում էին կառավարման հնարավորությունից անգամ հայկական կամ քրիստոնյա մեծամասնություն ունեցող վարչական ամենափոքր միավորներում:

²⁴ Նույն տեղում, էջ 99, 100:

²⁵ Նույն տեղում, էջ 107:

²⁶ Նույն տեղում, էջ 108:

²⁷ Նույն տեղում:

Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարին վարչապետ Սոլսբերիին ուղղված իր նամակում, հանրագումարի բերելով օսմանյան իշխանությունների պատասխանը, նշում էր. «Այսպես կոչված բարեփոխումները, որոնք խոստացվել են Բարձր դռան կողմից, մահմեդականներին օժտում են գործադիր իշխանության մարմիններում էլ ավելի բացարձակ վերահսկողությամբ, քան նախատեսված է ներկա կանոնակարգերով»²⁸: Այսինքն՝ օսմանյան իշխանությունները, ի պատասխան եվրոպական ճնշման, փոխանակ ավելացնելու հայերի ներկայացուցչությունն ու լիազորությունները կառավարման մարմիններում, ընդհակառակը՝ միջոցներ էին ձեռնարկում դրանք էլ ավելի սահմանափակելու ուղղությամբ: Մեծ տերությունների՝ հայկական բարեփոխումների հռչակագրային ծրագրերն ու հայտարարությունները հերթական անգամ հանգեցնում էին հակառակ արդյունքի՝ արտոնելով Աբդուլ Համիդին խստացնել իր հակահայկական քաղաքականությունը:

Օսմանյան կառավարությունն իր օգոստոսի 2-ի պատասխանով գրեթե բացահայտ մերժում էր Մայիսյան ծրագրի բոլոր կետերը, և ծրագրի հեղինակ պետությունները՝ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, չէին կարող չարձագանքել իրենց հեղինակությանը վնաս հասցնող նման կեցվածքին: Երեք տերությունների բողոքները ստիպում են օսմանյան իշխանություններին դիմել հերթական խուսանավման և սեպտեմբերի 6-ին հանդես գալ նոր՝ արտաքուստ ավելի զիջողական բնույթ ունեցող առաջարկներով²⁹: Մասնավորապես օսմանյան կառավարությունը խոստանում էր, բացի նահանգապետներից և գավառապետներից, որոնք պետք է լինեն մահմեդականներ, նշանակել քրիստոնյա պաշտոնյաներ՝ տարբեր ազգությունների տոկոսային հարաբերակցության համաձայն, ոստիկանության և ժանդարմերիայի կազմ քրիստոնյաներ ընդգրկել, գյուղախմբերի (նահիե) կառավարիչների ընտրության լիազորությունը տալ տվյալ գյուղախմբի խորհուրդներին և այլն³⁰:

Այս պատասխանը չի գոհացնում բարեփոխումների նախաձեռնող Մեծ Բրիտանիայի կառավարությանը: 1895 թ. սեպտեմբերի 11-ին վարչապետ Ռոբերտ Սոլսբերին հանդիպում է ունենում երկրում Օսմանյան կայսրության դեսպան Ռուստեմ փաշայի հետ: Զրույցի ընթացքում նա պնդում է, որ տեղական կառավարման մարմիններում պետք է սահմանել քրիստոնյաների չափաբաժին որոշակի տոկոս, և կառավարման բոլոր պաշտոնները, որոնք զբաղեցնում են մահմեդականները, պետք է ունենան քրիստոնյա տեղակալներ³¹: Սա անուղղակի փաստում է այն մասին, որ քրիտանական կառավարությունը չէր վստահում վեց նահանգներում հայ և այլ քրիստոնյա ազգաբնակչության տոկոսային հարաբերակցության վերաբերյալ օսմանյան իշխանությունների տվյալներին: Դրա մասին է վկայում նաև օսմանյան

²⁸ Նույն տեղում, էջ 124:

²⁹ St' u Fuat Dündar, *Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question (1878–1918)*, New Brunswick (USA) and London (UK), Transaction Publishers, 2010, էջ 38: St' u նաև *Turkey. No 1 (1896)*..., էջ 140, 141:

³⁰ St' u *Turkey. No 1 (1896)*..., էջ 141:

³¹ Նույն տեղում, էջ 142:

վիճակագրական տվյալների վերաբերյալ բրիտանական դիվանագիտական ներկայացուցիչների արտահայտած կարծիքը, որի մասին կխոսվի հաջորդիվ:

Մինչ երեք տերությունների և օսմանյան կառավարության միջև հայկական բարեփոխումների հարցի շուրջ բանակցությունները շարունակվում էին, 1895 թ. սեպտեմբերի 30-ին տեղի են ունենում Բաբը Ալիի ցույցի հայտնի դեպքերը: Թուրքական ոստիկանությունը բռնի ուժի գործադրմամբ ցրում է բարեփոխումների իրականացման խնդրանքը պարունակող գրություն հանձնելու նպատակով դեպի սուլթանական պալատ քայլող հազարավոր հայերի թափորը: Դրան հաջորդում են հայերի զանգվածային կոտորածներ Կ. Պոլսում, որոնց զոհ է գնում շուրջ 3,000 մարդ³²: Բաբը Ալիի դեպքերն ազդարարում են հայկական կոտորածների ալիքի մեկնարկը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի գավառներում: 1895 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ջարդեր են տեղի ունենում Տրապիզոնում, Բաբերդում, Դերջանում, Երզնկայում, Չարսանճագում և Քղիում, Բաղեշում և Գյումուշհանեում, Եդեսիայում (Ուրֆա) և Շապին-Գարահիսարում, Կարինում, Մալաթիայում, Խարբերդում, Ակնում, Դիարբեքիրում, Մարզվանում, Սեբաստիայում և այլուր³³:

Այս զարգացումներին զուգահեռ 1895 թ. հոկտեմբերի 10-ին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարությունները սահմանում են Մայիսյան ծրագրի այն դրույթները, որոնք պետք է պարտադիր իրականացվեն: Այդ դրույթներից էին սուլթանի կողմից բարեփոխումների իրականացումը համակարգելու և կառավարչական լիազորություններով հայաբնակ վեց նահանգներ ուղարկված Շաքիր փաշային քրիստոնյա տեղակալ նշանակելը, կառավարման օղակներում քրիստոնյաների մասնակցության չափի հստակեցումը, նահանգապետի և գավառապետի պաշտոնների՝ քրիստոնյաների համար բաց լինելը, նահանգապետների և գավառապետների համար քրիստոնյա օգնականների նշանակումը, բարեփոխումների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հատուկ հանձնաժողովի (Comission of Control) կողմից քրիստոնյա պետական ծառայողների թվի ամրագրումը յուրաքանչյուր նահանգի բնակչության չափաբաժիններին համապատասխան³⁴: Ուշագրավ է, որ երեք տերությունները չէին պնդում Մայիսյան ծրագրի երկու էական կետերի՝ Արևմտյան Հայաստանի տարածքում առավել միատարր հայաբնակ նահանգի կամ նահանգների ստեղծման և բարեփոխումների իրականացման ընթացքի նկատմամբ եվրոպական վերահսկողության առավել գործուն մեխանիզմների ստեղծման իրենց առաջարկների վրա՝ դրանով ըստ էության ամորձատելով հայկական բարեփոխումների գաղափարը: Բացի դրանից, գործընթացը մնում էր օսմանյան կառավարության «բարյացակամության» հույսին, ինչը կանխորոշում էր դրա տխուր վախճանը:

Ձգտելով թուլացնել կոտորածների ալիքի փաստի կապակցությամբ եվրոպական տերությունների և հանրային կարծիքի դժգոհությունը՝ Արդուլ Համիդն արդեն

³² Տե՛ս Պողոսյան Ստ., Պողոսյան Կ., *նշվ. աշխ.*, էջ 415:

³³ Տե՛ս «Հայկական հարց» *հանրագիտարան...*, էջ 229, 230:

³⁴ Տե՛ս Turkey. No 1 (1896) ..., էջ 158:

իրեն կարող էր թույլ տալ որոշակի զիջումներ անել բարեփոխումների հարցում՝ ընդառաջելով մեծ տերությունների պահանջներից մի քանիսին: 1895 թ. հոկտեմբերի 20–ին օսմանյան կառավարությունն ընդունում է Շաքիր փաշային և հայկական վեց նահանգների նահանգապետներին ուղղված կարգադրություն, որտեղ համաձայնություն էր հայտնվում հետևյալ բարեփոխումների իրականացմանը՝ յուրաքանչյուր նահանգի համար քրիստոնյա մուավինի (նահանգապետի օգնական) նշանակում, ոչ մահմեդական մուավինների նշանակում «այն գավառներում և գավառակներում, որտեղ քրիստոնյաները կարևոր տարր են կազմում», վարչական պաշտոններում մահմեդականների և ոչ մահմեդականների նշանակում՝ ըստ տվյալ նահանգում մահմեդականների և ոչ մահմեդականների թվի հարաբերակցության³⁵: Սրանք սուլթանական կառավարության կողմից էական զիջումներ չէին, քանի որ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների վարչական սահմանները փոփոխության ենթարկելու առաջարկը կտրականապես մերժվել էր, և Արդուլ Համիդի կողմից այդ նահանգներին կցված առավելապես մահմեդականներով բնակեցված տարածքները շարունակում էին մնալ դրանց կազմում:

Օսմանյան կառավարությունը նաև հայտարարում է, որ տեղական կառավարման մարմիններում և ոստիկանությունում իսլամ և ոչ իսլամ ազգաբնակչության չափաբաժինները որոշվելու են պաշտոնական մարդահամարի արդյունքներից ելնելով³⁶: Այսինքն՝ հիմք էին ընդունվելու օսմանյան կառավարության տվյալները, որն առավելագույնս շահագրգռված էր հայկական բարեփոխումների ծրագիրը վիժեցնելու հարցով: Բացի դրանից, նաև սահմանվում էր, որ այն գավառներում և գավառակներում, որտեղ անգամ, ըստ պաշտոնական տվյալների, ոչ մահմեդականները կկազմեն ընդհանուր բնակչության թվի կեսից ավելին, միևնույն է, նրանք վարչական պաշտոնների կեսից ավելին չեն ստանալու³⁷:

Նշենք նաև, որ սուլթանը չէր պատրաստվում կատարել բարենորոգումների ծրագիրը հրապարակելու վերաբերյալ իր խոստումը՝ այն շինծու հիմնավորմամբ, որ դա բացասական ազդեցություն կունենա կայսրության մահմեդական հպատակների շրջանում³⁸: Ծրագիրը չհրապարակելը հեշտացնում էր օսմանյան կառավարության կողմից առանց լուրջ հետևանքների ցանկացած պահի անգամ այս ամորձատված բարեփոխումների իրականացումից հրաժարվելու հնարավորությունը:

Բարեփոխումների ծրագրի իրականացման համար հանձնակատար է ընտրվում Շաքիր փաշան, իսկ նրա տեղակալ՝ հույն Ֆեհտի Ֆրանկո բեյը, ով օսմանյան վիճակագրական գերատեսչության ղեկավարն էր³⁹: 1895 թ. նոյեմբերի 3–ին օսմա-

³⁵ 1895 թ. հոկտեմբերի 20–ի բարեփոխումների ծրագիրը տե՛ս *Turkey. No 1 (1896)*..., էջ 161-170. հայերեն թարգմանությունը՝ Լեօ, *Նշվ. աշխ.*, էջ 281-294:

³⁶ Տե՛ս Fuat Dündar, *Նշվ. աշխ.*, էջ 39:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Տե՛ս Կիրակոսյան Ա., *Նշվ. աշխ.*, էջ 321:

³⁹ Տե՛ս Fuat Dündar, *Նշվ. աշխ.*, էջ 39:

նյան կառավարության կողմից ստեղծվում է հայկական բարեփոխումների իրականացման նկատմամբ Վերահսկողության հանձնաժողովը⁴⁰:

1895 թ. վերջերին Շաքիր փաշան ուղևորվում է Արևմտյան Հայաստանի նահանգներ, որտեղ իր առաջին այցելության վայրերն են դառնում բնակչության հաշվառման տեղական գրասենյակները՝ բնակչության թվաքանակի և էթնիկական կազմի վերաբերյալ թարմ տվյալներ ստանալու համար⁴¹: Այսպես, Վանում բնակչության գրասենյակ այցելության ժամանակ օսմանյան պաշտոնյան ստանում է նահանգի մահմեդական, հայ և ասորի բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ՝ համապատասխանաբար՝ 147,623, 70,916 և 9,650 (օսմանյան վիճակագրական տվյալների իսկությանը մենք կանդրադառնանք հաջորդիվ): Դրանց հիման վրա Շաքիր փաշան սահմանում է նահանգային ժանդարմերիայի կազմը՝ 608 մահմեդականներ, 208 հայեր և 89 ասորիներ⁴²: Միաժամանակ կենտրոնական իշխանություններից ստացված կարգադրությամբ Օսմանյան կայսրության բոլոր նահանգների իշխանությունները պատրաստում և Կ. Պոլիս են ուղարկում իրենց տարածքում գտնվող բոլոր բնակավայրերի անունները, թիվը և դրանք ղեկավարող անձանց անունները պարունակող տեղեկագրեր⁴³:

1896 թ. փետրվարի 6-ին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանատների դրագոնները ներկա են գտնվում Վերահսկողության հանձնաժողովի նիստին: Դեսպանատների ներկայացուցիչներն արձանագրում են, որ տվյալ պահի դրությամբ, բացի նահանգապետների քրիստոնյա տեղակալներ նշանակելուց, որևէ այլ բարեփոխում չի իրականացվել, ընդ որում, հակառակ ստանձնած պարտավորությունների, նման նշանակումներ եղել են Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից միայն երկուսում⁴⁴:

1896 թ. մարտին Վերահսկողության հանձնաժողովը Կ. Պոլսում բրիտանական դեսպանատան ներկայացուցիչն է փոխանցում վեց նահանգների ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալները: Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարին դրանք ուղարկում է Ֆորին օֆիս՝ իր համառոտ մեկնաբանություններով հանդերձ: Դեսպանն արձանագրում էր, որ նոր տվյալների՝ նախորդ տարիներին նույն օսմանյան իշխանություններից դեսպանատան կողմից ստացված տվյալների հետ համեմատությունը ցույց է տալիս շոշափելի անհամապատասխանություններ: Այսպես, նշվում էր, որ Էրզրումի նահանգում 1890-ին օսմանյան իշխանությունները հաշվում էին 545,159 շունչ, որից

⁴⁰ Տե՛ս «Ասոշիեթեդ փրես» լրատվական գործակալության հաղորդագրությունը *“Los Angeles Herald”*, Volume 45, Number 24, 4 November 1895 (հասանելի է առցանց <http://cdnc.ucr.edu> կայքում):

⁴¹ Տե՛ս Fuat Dündar, *նշվ. աշխ.*, էջ 39:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Տե՛ս *Turkey No. 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, in Continuation of Turkey No. 2, Presented to both Houses of Parliament by Command of Her Majesty. August 1896.* London, Harrison and Sons, 1896, էջ 49:

քրիստոնյաներ՝ 113,488 կամ մոտ 21%, մինչդեռ 1895-ին՝ արդեն 669,717 շունչ, որից քրիստոնյաներ՝ 123,935 (18,5%)⁴⁵:

Վանի նահանգի պարագայում 1890 և 1895 թթ. տվյալների միջև տարբերություններն էլ ավելի շոշափելի էին՝ 1890 թ. օսմանյան պաշտոնական տվյալներ՝ 418,494 (քրիստոնյաներ՝ 32%), 1890 թ. հյուպատոս Լյոյդի տվյալներ՝ 270,988 (քրիստոնյաներ՝ 57 %), 1895 թ. պաշտոնական տվյալներ՝ 308,392 շունչ (քրիստոնյաներ՝ 32%):

Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի նահանգի տվյալների միջև տարբերությունները ներկայացվում են ստորև աղյուսակներով:

Բիթլիսի նահանգ

	Բնակչություն	Քրիստոնյաների հարաբերակցություն
Օսմանյան պաշտոնական, 1890	266,988	41%
Բրիտանացի հյուպատոս Լյոյդ, 1890	287,876	42%
Օսմանյան պաշտոնական, 1895	479,587	24%

Դիարբեքիրի նահանգ

	Բնակչություն	Քրիստոնյաների հարաբերակցություն
Օսմանյան պաշտոնական, 1890	312,444	23%
Բրիտանացի հյուպատոս Լյոյդ, 1890	392,168	22,5%
Օսմանյան պաշտոնական, 1895	462,005	18%

Խարբերդի նահանգ

	Բնակչություն	Քրիստոնյաների հարաբերակցություն
Օսմանյան պաշտոնական, 1890	381,352	21,2%
Բրիտանացի հյուպատոս Լյոյդ, 1890	293,508	30%
Օսմանյան պաշտոնական, 1895	586,303	15%

Սեբաստիայի նահանգ

	Բնակչություն	Քրիստոնյաների հարաբերակցություն
Օսմանյան պաշտոնական, 1890	892,201	17,5%
Օսմանյան պաշտոնական, 1895	971,981	17%

Ինչպես տեսնում ենք, օսմանյան կառավարության՝ 5 տարի կտրվածքով տրամադրված երկու տվյալների միջև առկա են շոշափելի տարբերություններ ոչ հօգուտ քրիստոնեադավանների: Իսկ եթե համեմատենք դրանք բրիտանացի հյուպատոս Լյոյդի՝ 1890 թ. տվյալների հետ, որոնք նույնպես թուրքական ծագում ունեն, ապա տվյալների միջև տարբերությունը և դրանով Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում թղթի վրա քրիստոնյաների հարաբերակցությունը նվազեցնելու օսմանյան վիճակագրության միտումն էլ ավելի ակնհայտ է դառնում:

⁴⁵ St'u Turkey No. 8 (1896).... էջ 98:

1896 թ. փետրվարի 26-ին Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆ. Քարին գեկուցում էր վարչապետ Սոլսբերիին. «Ամեն ինչ կարծես թե մնում է անփոփոխ: Ո՛չ Շաքիր փաշայի քրիստոնյա տեղակալներն են նշանակվել, ո՛չ էլ նահանգապետների քրիստոնյա տեղակալները: Չնայած սուլթանի կողմից շարունակաբար կրկնվող խոստումներին՝ ներկա պահի դրությամբ ինձ հայտնի չէ որևէ կյանքի կոչված բարեփոխման մասին»⁴⁶:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանատների թարգմանիչները ներկա են գտնվում նաև Վերահսկողության հանձնաժողովի ապրիլ-մայիս ամիսների նիստերին՝ իրենց գեկուցագրերում արձանագրելով բարեփոխումների իրականացման հարցում շոշափելի առաջընթացի պակասը⁴⁷: Օսմանյան կառավարությունը նշանակեց նահանգապետների քրիստոնյա տեղակալներ, որոնց գործառնությունները սահմանափակ և ձևական էին, սակայն գավառապետների ոչ մահմեդական տեղակալների և որոշ գավառակներում քրիստոնյա գավառակապետների ու գավառապետների տեղակալների նշանակումը մնաց առկալիս: Իրերի այս դրությունն արտացոլվում է Արևմտյան Հայաստանի նահանգներում Մեծ Բրիտանիայի հյուպատոսների՝ 1896 թ. ամռանն ու աշնանն ուղարկված գեկուցագրերում⁴⁸:

1897 թ. ընթացքում քրիտանացի հյուպատոսները շարունակեցին տվյալներ հավաքել հայկական բարեփոխումների իրականացման ծրագրի շրջանակներում օսմանյան պետական ծառայության մեջ հայերի և քրիստոնեադավան այլ էթնիկական խմբերի մասնակցության վերաբերյալ: Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆ. Քարիի՝ 1897 թ. հուլիսի 6-ի նամակը Մեծ Բրիտանիայի վարչապետ Սոլսբերիին⁴⁹, որտեղ դեսպանը հանրագումարի է բերում քրիտանացի հյուպատոսների հաղորդած տեղեկությունները, կարելի է պատկերավոր բնութագրել որպես հայկական բարեփոխումների ծրագրի յուրօրինակ մահախոսական:

Օսմանյան կառավարության քաղաքականությունն այդ ուղղությամբ մնացել էր ձևական և իմիտացիոն քայլերի իրականացման շրջանակներում: Արևմտյան Հայաստանի որոշ նահանգներում նահանգապետների տեղակալների պաշտոններում նշանակվել էին հայեր, որոնց, սակայն, վերապահված էին խորհրդանշական լիազորություններ, և որոնք որևէ ազդեցություն չունեին պետական կառավարման գործերում: Դեսպանն անթաքույց հեզմանքով էր բնութագրում նորանշանակ հայ պաշտոնյաների գործունեությունը. «Նրանք ակնհայտ ոչնչություններ են, բացառությամբ այն դեպքերի, երբ առանց որևէ վարանման հավանություն են տալիս

⁴⁶ Նույն տեղում, էջ 65:

⁴⁷ Տե՛ս մասնավորապես Մեծ Բրիտանիայի դեսպանատան թարգմանիչ Ադամ Բլոկի՝ մայիսի 6-ի գեկուցագիրը (նույն տեղում, էջ 164, 165):

⁴⁸ Տե՛ս մասնավորապես Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Գրեգի գեկուցագիրը (նույն տեղում, էջ 199, 200):

⁴⁹ Տե՛ս *Turkey No. 1 (1898). Further Correspondence respecting the Asiatic Provinces of Turkey*, London, 1898, էջ 207:

իրենց մահմեդական վերադասների որոշումներին և ցուցադրական եռանդով հալածանքի են ենթարկում սեփական հայրենակիցներին»⁵⁰:

Օսմանյան իշխանությունները նաև չէին կատարել ոչ մահմեդականներին ոստիկանության և ժանդարմերիայի կազմ ընդգրկելու իրենց ստանձնած պարտավորությունը՝ ընդհանուր բնակչության մեջ նրանց տեսակարար կշիռն համապատասխան: Քրիստոնյաների չափաբաժինն ուժային կառույցներում ցածր էր անգամ արհեստականորեն նվազեցված օսմանյան վիճակագրական տվյալների՝ մահմեդականների և ոչ մահմեդականների հարաբերակցության ցուցանիշներից: Այն փոքրաթիվ քրիստոնյաները, որոնք այնուամենայնիվ ընդունվել էին ուժային կառույցներ ծառայության, ընդգրկվել էին բացառապես ստորին օղակներ և ի վիճակի չէին պաշտպանելու քրիստոնյա բնակչությանը բռնություններից և չարաշահումներից: Բրիտանացի հյուպատոսներն արձանագրում էին, որ նման պայմաններում քրիստոնյաներին պետական ծառայության մեջ ընդգրկելը լավագույն դեպքում անօգուտ էր⁵¹:

Վանում վարչական պաշտոնների էին նշանակվել 41 քրիստոնյա, ոստիկանության և ժանդարմերիայի կազմում՝ 82-ը, սակայն վերջիններս 1897 թ. ամռանը դեռևս աշխատավարձ չէին ստացել⁵²:

Բիթլիսի նահանգում ոստիկանության կազմ էին ընդգրկվել 87 քրիստոնյա (հայ), որոնք, սակայն, ըստ բրիտանացի հյուպատոսի տվյալների. «...ընտրվել են ամենավատ կերպարներից, չեն վճարվում և օգտագործվում են քրիստոնյա համայնքի անդամներին լրտեսելու նպատակով»⁵³: Որևէ քրիստոնյա կայմական նահանգում չէր նշանակվել: Քրիստոնյա մուխթարների (գյուղախմբերի և գյուղերի ղեկավարներ) իշխանությունն արհամարհվում էր հարկահավաքների ու զափթիենների կողմից, որոնք գործում էին ըստ սեփական հայեցողության⁵⁴:

Էրզրումի նահանգի ոստիկանությունում նշանակվել էին 16 քրիստոնյաներ, որոնցից հինգը՝ կոմիսարներ, վերջիններից մեկն անուն էր հանել քրիստոնյաներին հալածելու իր եռանդի համար: Ժանդարմերիայում նախատեսված 218-ից իրականում նշանակվել էր 45 քրիստոնյա, որոնք 18 ամսվա ծառայության ընթացքում ստացել էին միայն իրենց 2-3 ամսվա ռոճիկը⁵⁵:

Դիարբեքիրում միայն 12 քրիստոնյա էին նշանակվել ոստիկանությունում, երբ սահմանված քանակը 70-80-ն էր: Վալիի տեղակալը և երկու կայմականներ քրիստոնյաներ էին, սակայն որևէ ազդեցությունից զուրկ: «Քրիստոնյաների նշանակումը ներկա դրությամբ չի հանգեցրել որևէ դրական արդյունքի», – նշվում էր բրիտանացի հյուպատոսի զեկույցում⁵⁶:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ St' u Fuat Dünder, *նշվ. աշխ.*, էջ 40:

⁵² St' u Turkey No. 1 (1898)..., էջ 209:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում, էջ 209, 210:

⁵⁶ Նույն տեղում:

Խարբերդի ոստիկանությունում և ժանդարմերիայում նշանակված քրիստոնյաները թողել են իրենց պաշտոնները՝ վատ վերաբերմունքի արժանանալու պատճառով: Խարբերդում Մեծ Բրիտանիայի հյուպատոսը հետևյալ կերպ էր մեկնաբանում ստեղծված վիճակը. «Թուրքական կառավարական պաշտոններում հայերի նշանակումը ներկա պահի դրությամբ անօգուտ լինելուց էլ վատ է... և կարող է հանգեցնել հայ բնակչության շահերի էլ ավելի վնասելուն, քան բարելավմանը»⁵⁷:

Հալեպի նահանգում 800 պաշտոնյաներից քրիստոնյա էին միայն 20-ը, գրեթե բոլորը՝ ստորին օղակներում, բացառությամբ Ջեյթունի գավառակապետի և Ֆոնուզի կառավարչի: Ինչպես և այլ հայաբնակ նահանգներում, Հալեպում ևս քրիստոնյաները ոստիկանությունում և ժանդարմերիայում նախատեսված քանակից քիչ էին ընդգրկված⁵⁸:

Տրապիզոնի նահանգում քրիստոնյաների չափաբաժինը ոստիկանության և ժանդարմերիայի կազմում պետք է լիներ 14%, սակայն այն փաստացի 3% էր և նվազելու միտում ուներ, քանի որ շատերը թողնում էին աշխատանքը: Նահանգի 18 կայմակամներից և ոչ մեկը չուներ քրիստոնյա տեղակալ⁵⁹:

Մեծ Բրիտանիայի դեսպանը, անուղղակիորեն նաև արձանագրելով բարեփոխումների իրականացմանն ուղղված իր երկրի բոլոր ջանքերի փաստացի ձախողումը, հետևյալ կերպ էր ամփոփում տվյալները. «...[համիդյան] կոտորածները մեծ չափով մեծացրել են այն արհամարհանքը, որով իշխող մահմեդականները վերաբերվում են զոհ ազգությանը ...և այժմ ակնհայտ է, որ և ոչ մի ծրագիր, ինչքան էլ այն խնամքով կազմված լինի, բավարար չի լինի ներկա վարչական համակարգի պայմաններում ապահովելու հավասար իրավունքներ հայ բնակչության համար: Միայն ամուր եվրոպական վերահսկողությունը տեղերում կարող է հանգեցնել արդյունքի»⁶⁰:

Բնականաբար, 1897 թ. հույն-թուրքական պատերազմում թուրքերի տարած հաղթանակից հետո⁶¹ և ռուս-բրիտանական շարունակվող հակասությունների պայմաններում նման «ամուր եվրոպական վերահսկողություն» հաստատելն Արևմտյան Հայաստանի տարածքում գործնականում անիրագործելի մի վերացական ցանկության արտահայտություն էր: Մեծ տերությունների հակասությունների վրա խաղաղով, հայ բնակչությանը փոքրամասնություն ներկայացնելով, բարեփոխումների նմանակման իր գործողություններով, հայերին կոտորածների ենթարկելով և երկրում խիստ հավածանքների ու ոստիկանական հետապնդումների ռեժիմ հաստատելով՝ Արդուլ Համիդին հաջողվեց առժամանակ լռեցնել Հայկական հարցը:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում, էջ 211:

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Նույն տեղում, էջ 208:

⁶¹ 1897 թ. հույն-թուրքական պատերազմը տևել է մոտ մեկ ամիս՝ ապրիլի 18-ից մինչև մայիսի 20-ը, և ավարտվել է Հունաստանի պարտությամբ:

Բ. Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի վերաբերյալ 1890–ական թթ. կեսերի օսմանյան վիճակագրական տվյալները

Ինչպես արդեն նշվեց, Արևմտյան Հայաստանի նահանգներում բարեփոխումների իրականացման հիմքում դրվեց էթնիկական սկզբունքը, այսինքն՝ կառավարման մարմիններում և ուժային կառույցներում քրիստոնյաների (Արևմտյան Հայաստանի տարածքում քրիստոնեադավան հիմնական էթնիկական խմբի՝ հայերի) ներկայացված լինելու աստիճանը շաղկապվեց և դրվեց ուղիղ համեմատականի տվյալ վարչատարածքային միավորում ընդհանուր բնակչության մեջ քրիստոնյա (հայ) բնակչության հարաբերակցության ցուցանիշների հետ: Դրանով օսմանյան կառավարությունը, որը դեմ էր բարեփոխումների ծրագրի իրականացմանը, օբյեկտիվորեն շահագրգռված էր այն խնդիրներով, որ հնարավորինս ցածր ներկայացնի հայերի ու քրիստոնեադավան այլ էթնիկական խմբերի թիվը և մահմեդականների նկատմամբ նրանց հարաբերակցությունը:

Այդ շահագրգռվածությունը չնայած վերացական, այլ վերածվեց գործնական քայլերի: Նախ, ինչպես արդեն նշեցինք, վերաձևվեց Արևմտյան Հայաստանի վարչական քարտեզը. բոլոր հայաբնակ շրջաններին կցվեցին հարևան առավելապես մահմեդականաբնակ տարածքներ: Դրանով սուլթանական կառավարությունը հիմքեր ստեղծեց պնդելու, որ Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում 1890–ական թթ. կեսերի դրությամբ մահմեդական ազգաբնակչությունը մեծամասնություն է կազմում: Օսմանյան կառավարության վարչական վերաձևումների քաղաքականությունը նկատվեց և արձանագրվեց եվրոպական դիվանագիտության կողմից՝ արտացոլվելով 1895 թ. Մայիսյան բարեփոխումների ծրագրում իրերի այդ վիճակն ուղղելու և առավել միատարր հայաբնակ վարչական միավոր ստեղծելու պահանջի տեսքով, որն օսմանյան կառավարության կողմից խիստ դիմադրության հանդիպեց և մերժվեց բարեփոխումների ծրագրի շուրջ բնակչությունների հենց սկզբնական փուլում:

Սակայն զուտ վարչական սահմանների փոփոխմամբ օսմանյան կառավարությունը չսահմանափակվեց: Խնդիր էր դրված հայերին և առհասարակ քրիստոնյա այլ էթնիկական խմբերին Արևմտյան Հայաստանի նահանգներում հնարավորինս աննշան փոքրամասնություն ցույց տալ: Այդ նպատակով եվրոպական դիվանագիտության ուշադրությանը ներկայացվեցին եղծված վիճակագրական տվյալներ, որտեղ հայ և քրիստոնյա այլ էթնիկական խմբերն իրականից ցածր, իսկ մահմեդական բնակչությունն իրականից բարձր էին պատկերվում: Մահմեդականների թվի ուռճացման փաստը ցայտուն երևում է ստորև բերված աղյուսակից, որտեղ ներկայացված են Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների մահմեդական ազգաբնակչության թվաքանակի՝ օսմանյան կառավարության՝ 1893-1897 թթ. վերաբերող տարբեր հաշվարկներ:

Աղյուսակ 1. Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների մահմեդական ազգաբնակչության թվաքանակն ըստ օսմանյան կառավարության տվյալների (1893-1897թթ.)

Վարչական միավոր	1893 թ. ⁶²	1894 թ. ⁶³	1895 թ. ⁶⁴	1896 թ. ⁶⁵	1897 թ. ⁶⁶
Վան	59,412	212,552	97,341	173,773	76,956
Էրզրում	445,548	559,508	509,948	509,980	513,446
Բիթլիս	167,054	366,066	237,392	365,921	224,772
Խարբերդ	300,188	423,842	477,416	477,416	380,092
Սեբաստիա	766,558	793,000	790,348	810,916	807,651
Դիարբեքիր	289,591	327,173	320,211	362,934	329,843
Ընդամենը	2,028,351	2,682,141	2,432,656	2,700,940	2,332,760

Ինչպես տեսնում ենք, տարբերությունը նվազագույն (2,028,351) և առավելագույն (2,700,940) թվերի միջև կազմում է 672,589 կամ 33%: Դրա հետ մեկտեղ, աճած մահմեդական բնակչության համեմատ, հայ և քրիստոնյա այլ էթնիկական խմբերի թիվը, ըստ նույն աղբյուրների տվյալների, մնում էր գրեթե անփոփոխ (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների մահմեդական ազգաբնակչության թվաքանակն ըստ օսմանյան կառավարության տվյալների (1893-1897թթ.)

Վարչական միավոր	1893 թ. ⁶²	1894 թ. ⁶³	1895 թ. ⁶⁴	1896 թ. ⁶⁵	1897 թ. ⁶⁶
Վան	60,448	60,448	64,629	61,933	55,051
Էրզրում	101,138	101,138	110,319	110,319	109,818
Բիթլիս	101,358	101,358	103,715	88,722	101,586
Խարբերդ	73,178	73,178	79,420	79,420	74,204
Սեբաստիա	116,545	116,266	120,222	120,379	123,204
Դիարբեքիր	289,591	327,173	320,211	362,934	329,843
Ընդամենը	499,490	499,211	524,273	505,666	510,065

⁶² Ըստ 1881/82-93 թթ. մարդահամարի արդյունքների (տե՛ս Karpat K., *նշվ. աշխ.*, էջ 148, 149):

⁶³ Օսմանյան կայսրության կառավարության կողմից պատրաստված աղյուսակ (նույն տեղում, էջ 155):

⁶⁴ Նույն տեղում, էջ 156:

⁶⁵ Նույն տեղում, էջ 158:

⁶⁶ Նույն տեղում, էջ 160:

⁶⁷ Ըստ 1881/82-93 թթ. մարդահամարի արդյունքների (տե՛ս Karpat K., *նշվ. աշխ.*, էջ 148, 149):

⁶⁸ Օսմանյան կայսրության կառավարության կողմից պատրաստված աղյուսակ (նույն տեղում, էջ 155):

⁶⁹ Նույն տեղում, էջ 156:

⁷⁰ Նույն տեղում, էջ 158:

⁷¹ Նույն տեղում, էջ 160:

Նշված վիճակագրական թռիչքները թուրք հետազոտողները բացատրում են նրանով, որ բարձր տվյալներում հավելագրվել էին քրդական այն վաչկատուն և կիսավաչկատուն աշիրեթները, որոնք բնակվում էին հաշվառումից դուրս մնացած տարածքներում. դրանք էին՝ Էրզրումի նահանգում՝ ջալալիներն ու այլ ցեղեր՝ 100,000, Բիթլիսի նահանգում՝ Սասունի, Մոտկանի և այլ ցեղեր՝ 200,000, Խարբերդի նահանգում՝ Դերսիմի սանջակի քրդական բնակչությունը՝ 100,000, Վանի նահանգում՝ Հաքյարիի գավառի քրդական բնակչությունը՝ 150,000⁷²: Նման բացատրությունը հիմնագուրկ է նախ այն պատճառով, որ վերոնշյալ թվերը խիստ մոտավոր ու ենթադրական են և դրանով ըստ երևույթին չհիմնավորված⁷³: Բացի դրանից, հարց է ծագում՝ ինչու օսմանյան կառավարությունը համապատասխանաբար չէր ավելացնում նաև հայերի թվաքանակը. նույն տարածքներում քրդերի հետ միասին առկա էր մեծ թվով հայ բնակչություն, որը նույնպես ամբողջովին դուրս էր մնացել հաշվառումից:

1893-1897 թթ. օսմանյան տարբեր տվյալների միջև տարբերությունը միանգամայն հասկանալի կդառնա, եթե նշենք, որ մահմեդական բնակչության ցածր թվաքանակով տվյալների խումբն արտացոլում էր օսմանյան իշխանությունների կողմից 1881-1893 թթ. անցկացված մարդահամարների իրական արդյունքները և նախատեսվում էր ներքին օգտագործման համար⁷⁴: Համապատասխանաբար, բարձր թվաքանակով տվյալների խումբը նախատեսված էր արտաքին լսարանի համար. դրանք սուլթանական կառավարությունը ներկայացրել էր մեծ տերությունների դիվանագետներին Հայկական հարցի համատեքստում, և դրանք հրապարակվել են դեպքերին ժամանակակից աղբյուրներում, մասնավորապես Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Կապույտ գրքերում:

Արևմտյան Հայաստանի մահմեդական բնակչության վիճակագրության տատանումներն առկա էին անգամ նույն տարվա իրավիճակն արտացոլող տարբեր տվյալներում: Այսպես, մահմեդականների թվի տարբերությունն էլ ավելի ակնառու է օսմանյան կառավարության՝ 1895 թ. կազմված երկու տարբեր ցուցակների տվյալների միջև. մեկը ներքին օգտագործման համար նախատեսված վիճակագրություն է, իսկ երկրորդը Արևմտյան Հայաստան ուղարկված Վերահսկողության հանձնաժողովի (Commission of Control)՝ մեծ տերությունների դեսպաններին տրամադրված տվյալներն են (տե՛ս Աղյուսակ 3):

⁷² Նույն տեղում, էջ 150:

⁷³ Այսպես, ըստ 1895 թ. բրիտանացի դիվանագիտական պաշտոնյա Վիլյամ Էվերեթի գեկուցագրի տվյալների, Դերսիմի քրդերի թիվը մոտ 55,000 էր, այսինքն՝ օսմանյան կառավարության թվից շուրջ երկու անգամ ցածր (գեկուցագրի մասին մանրամասն կխոսվի հաջորդիվ):

⁷⁴ Դրանք հրատարակվել են ոչ թե պատրաստման պահին, այլ արդեն XX դարի երկրորդ կեսին՝ թուրք հետազոտող Քեմալ Կարպատի կողմից:

Աղյուսակ 3. Արևմտյան Հայաստանի իսլամադավան ազգաբնակչության թվաքանակը 1895թ.⁷⁵ ըստ օսմանյան կառավարության վիճակագրական տվյալների

	Վարչական միավոր	Ներքին ցուցակ ⁷⁵	Վերահսկողության հանձնաժողով (Commission of Control) ⁷⁶	Տարբերությունը (%)
1	Էրզրումի նահանգ	509,948	545,782	7
2	Վանի նահանգ	97,341	282,582	190
3	Բիթլիսի նահանգ	237,392	352,713	48,5
4	Խարբերդի նահանգ	477,416	494,881	3
5	Դիարբեքրի նահանգ	320,211	378,253	18
	Ընդամենը	1,642,308	2,054,211	25 %

Վերոնշյալ փաստերը վկայում են, որ օսմանյան կառավարությունը 1894-96 թթ. Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում իր ձեռքի տակ միաժամանակ ունեցել է իրարից զգալիորեն տարբերվող երկու խումբ վիճակագրական ցուցակներ: Մի խումբն արտացոլում էր օսմանյան մարդահամարների բուն արդյունքները և նախատեսվում էր ներքին օգտագործման համար, մյուսը՝ հավելագրված մահմեդական բնակչության տվյալներով, տրամադրվում էր մեծ տերությունների դիվանագետներին⁷⁷:

Գ. 1890-ական թթ. արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի վերաբերյալ բրիտանական վիճակագրական տվյալները

1890-ական թթ. կեսերին հայկական նահանգներում բարեփոխումների հիմնական նախաձեռնող երկրի՝ Մեծ Բրիտանիայի դիվանագետները բնականաբար չէին կարող չանդրադառնալ Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի հարցին: Այդ անդրադարձները չսահմանափակվեցին օսմանյան կառավարության կողմից մեծ տերությունների ղեկավարներին տրամադրված վիճակագրական տվյալների մեկնաբանությամբ, կատարվեցին նաև սեփական վիճակագրական հաշվարկներ: Տվյալ հաշվարկների համար աղբյուրագիտական հիմք էին ծառայում հիմնականում օսմանյան վիճակագրական տվյալները, որոնք փոխընկերվում էին հայկական և այլ աղբյուրներից քաղված տվյալներով, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի հյուպատոսների կողմից նախորդ տարիներին՝ հիմնականում 1880-ական թթ. սկզբներին, հավաքված վիճակագրական նյութի միջոցով:

⁷⁵ St' u Karpat K., *նշվ. աշխ.*, էջ 156:

⁷⁶ Տվյալները վերցված են Ազգերի լիգայի Գերագույն խորհրդին հայկական պատվիրակության ուղարկված հիշատակագրի նախագծից, որը պատրաստվել է անվանի հայագետ Ն. Ադոնցի կողմից (տե՛ս ՀԱՍ, ֆ. 430, ց. 1, գ. 145, թ. 20, տե՛ս նաև Հովհաննիսյան Պ. Հ., Նիկողայոս Ադոնցը և Հայկական հարցը, «Պատմա-քանասիրական հանդես», 1999, №1, էջ 136): Տե՛ս նաև Turkey No. 8 (1896)...., էջ 98:

⁷⁷ Այստեղ տեղին է նշել, որ օսմանյան վիճակագրական հավաստիության վրա էապես ազդում էին նաև մի շարք առարկայական գործոններ, հատկապես նվազ հարկվելու նպատակով օսմանահպատակ հայերի՝ հաշվառումից խուսափելու ձգտումը, ինչը նույնպես հանգեցնում էր հայերի թերհաշվառմանը (դրա մասին մանրամասն տե՛ս Թաթոյան Ռ., *նշվ. աշխ.*, էջ 64-70):

Արևմտյան Հայաստանի ժողովրդագրությանը բրիտանական դիվանագիտության անդրադարձներից առանձնանում է Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության հետախուզության բաժնի ղեկավարի օգնական, գնդապետ Վիլյամ Էվերեթի՝ 1895 թ. մայիսի 11-ով թվագրված ընդարձակ (պարունակում է 37 տպագիր էջ) զեկույցը, որը պատրաստվել էր Մեծ Բրիտանիայի կառավարության համար՝ հայկական բարեփոխումների շուրջ գործընթացներում որպես տեղեկատվության աղբյուր օգտագործվելու նպատակով⁷⁸: Հեղինակը, ով 1882-1888 թթ. զբաղեցնում էր «Քուրդիստանի» հյուպատոսի պաշտոնը, ի թիվս Ասիական Թուրքիայի վիլայեթների, ներկայացնում է նաև Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ իր հաշվարկները՝ օգտվելով հիմնականում թուրքական տվյալներից և ըստ անհրաժեշտության լրացնելով դրանք Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի, ինչպես նաև ֆրանսիացի ուսումնասիրող Վիտալ Քինեի (նրա մասին հաջորդիվ) տվյալների միջոցով: Արևմտյան Հայաստանի վեց նահանգների համար Էվերեթի տվյալների համեմատությունն օսմանյան տվյալների հետ ցույց է տալիս, որ, ըստ բրիտանացի դիվանագետի, նշված տարածքում ապրում էր շուրջ 43,3%-ով ավելի հայ, քան ներկայացվում էր օսմանյան իշխանությունների կողմից (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչության թվաքանակն ըստ օսմանյան կառավարության և Վ. Էվերեթի տվյալների

	Վարչական միավոր	Օսմանյան տվյալներ, 1895 թ. ⁷⁹	Վ. Էվերեթ 1895 թ. ⁸⁰	Տարբերությունը (%)
1	Վանի նահանգ	60,448	112,536	86,1
2	Բիթլիսի նահանգ	101,358	152,398	50,3
3	Էրզրումի նահանգ	109,808	134,902	22,8
4	Դիարբեքիրի նահանգ	60,597	73,825	21,8
5	Խարբերդի նահանգ	80,276	156,356	94,7
6	Սեբաստիայի նահանգ	120,052	133,367	11
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	532,539	763,384	43,3

Քանի որ Էվերեթն իր հաշվարկների հիմքում դրել է օսմանյան կառավարության տվյալները, ապա ասել, որ դրանք արտացոլում են հայ բնակչության թվա-

⁷⁸ Զեկույցը կրում է «Փոքր Ասիայի և դեպի արևելք ընկած թուրքական նահանգների ազգաբնակչության մասին» վերնագիրը (տե՛ս CAB 37/38/26, Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward, compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, Intelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895):

⁷⁹ Տե՛ս Karpat K., *Նշվ. աշխ.*, էջ 148, 149 (օսմանյան մարդահամարների տվյալներում կաթոլիկ և բողոքական բնակչության թիվը սովորաբար տրված է առանց ազգային պատկանելությունը նշելու, մենք ավելացրել ենք դրանց տվյալները հայ առաքելադավան բնակչության թվին՝ ելնելով այն հանրահայտ իրողությունից, որ տվյալ շրջաններում բողոքականներն ու կաթոլիկները գրեթե բացառապես հայեր էին):

⁸⁰ Տե՛ս Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces..., էջ 35:

քանակի իրական պատկերը, չի կարելի, սակայն ուշագրավ է ինքնին այն փաստը, որ բրիտանացի հեղինակը կարիք է զգացել օսմանյան տվյալների համեմատ հայ բնակչության թիվը զգալիորեն բարձր ցույց տալ, իսկ մահմեդական ազգաբնակչության թիվը՝ ցածր (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների մահմեդականների թվաքանակն ըստ օսմանյան կառավարության և Վ. Էվերեթի տվյալների

	Վարչական միավոր	Օսմանյան տվյալներ, 1895 թ. ⁸¹	Վ. Էվերեթ 1895 թ. ⁸²	Տարբերությունը (%)
1	Վանի նահանգ	207,028	131,275	-36,6
2	Բիթլիսի նահանգ	352,713	133,986	-62,1
3	Էրզրումի նահանգ	545,782	505,185	-7,4
4	Դիարբեքիրի նահանգ	378,253	333,456	-11,6
5	Խարբերդի նահանգ	494,881	504,946	2,0
6	Սեբաստիայի նահանգ	801,630	731,610	-8,7
	Ընդամենը	2,780,287	2,340,458	-15,9

Օսմանյան տվյալների համեմատ Էվերեթը նաև զգալիորեն բարձր է ցույց տալիս հայաբնակ վեց նահանգներում քրիստոնյա ազգաբնակչության հարաբերակցությունը մահմեդականների նկատմամբ (տե՛ս Աղյուսակ 6): Ըստ բրիտանացի դիվանագետի՝ Վանի և Բիթլիսի նահանգներում քրիստոնյաները (ներառյալ ասորի բնակչությունը) անգամ մեծամասնություն էին կազմում, իսկ բոլոր վեց նահանգներում ոչ մահմեդականները կազմում են բնակչության 28,4%-ը (օսմանյան կառավարություն՝ 20%):

⁸¹ Տե՛ս Karpat K., *նշվ. աշխ.*, էջ 148, 149 (օսմանյան մարդահամարների տվյալներում կաթոլիկ և բողոքական բնակչության թիվը սովորաբար տրված է առանց ազգային պատկանելությունը նշելու, մենք ավելացրել ենք դրանց տվյալները հայ առաքելադավան բնակչության թվին՝ ելնելով այն հանրահայտ իրողությունից, որ տվյալ շրջաններում բողոքականներն ու կաթոլիկները գրեթե բացառապես հայեր էին):

⁸² *Shu Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces...*, էջ 35:

Աղյուսակ 6. Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում մահմեդականների և ոչ մահմեդականների հարաբերակցությունն ըստ օսմանյան կառավարության և Վ. Էվերեթի տվյալների

	Վարչական միավոր	Օսմանյան տվյալներ, 1895 թ. ⁸³		Վ. Էվերեթ 1895 թ. ⁸⁴	
		մահմեդականներ	ոչ մահմեդականներ	մահմեդականներ	ոչ մահմեդականներ
1	Վանի նահանգ	207,028 (68%)	101,264 (32%)	131,275 (41,2%)	183,873 (58,3%)
2	Բիթլիսի նահանգ	352,713 (76%)	126,874 (24%)	133,986 (46,8%)	152,398 (53,2%)
3	Էրզրումի նահանգ	545,782 (81,5%)	123,935 (18,5%)	505,185 (78,4%)	138,902 (21,6%)
4	Դիարբեքիի նահանգ	378,253 (82%)	83,752 (18%)	333,456 (74,2%)	115,888 (25,8%)
5	Խարբերդի նահանգ	494,881 (85%)	91,422 (15%)	504,946 (76,3%)	157,006 (23,7%)
6	Սեբաստիայի նահանգ	801,630 (83%)	170,351 (17%)	731,610 (80,4%)	178,970 (19,6%)
	Ընդամենը	2,780,287 (80%)	697,598 (20%)	2,340,458 (71,6%)	927,037 (28,4%)

Դ. 1890-ական թթ. ռուսական տվյալները արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի վերաբերյալ

1890-ական թթ. կեսերին Ռուսաստանի դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ամփոփված է երկրի արտգործնախարար իշխան Ա. Լոբանով-Ռոստովսկու⁸⁵ հայտնի խոսքերում, որոնք նա ասել է Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆրենկ Լասելսի հետ 1895 թ. հունիսի 4-ի և 12-ի գրույցներում. «Ռուսաստանը ցանկանում է, որ բարեփոխումներն իրականացվեն սուլթանի բոլոր հպատակների նկատմամբ, սակայն չի կարող համաձայնել իր սահմաններին մոտ տարածքների ստեղծմանը, որտեղ հայերը կարող են ունենալ բացառիկ արտոնություններ, չի կարող համաձայնել Փոքր Ասիայում մեկ այլ Բուլղարիայի ստեղծմանը»⁸⁶:

⁸³ Տե՛ս Turkey No. 8 (1896)..., էջ 98:

⁸⁴ Հաշվարկները մեր կողմից ըստ Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces..., էջ 35:

⁸⁵ Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկի (1824-1896)՝ ռուս դիվանագետ, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար 1895 -1896 թթ.:

⁸⁶ Ֆ. Լասելսի՝ 1895 թ. հունիսի 13-ի հեռագիրը և հունիսի 14-ի նամակը Մեծ Բրիտանիայի արտգործնախարար կոմս Կիմբլեյին (տե՛ս Turkey. №1 (1896). Correspondence respecting the introduction of Reforms in the Armenian Provinces of Asiatic Turkey, London: Harrison and Sons, 1896, էջ 83, 87):

Դրանից ելնելով՝ Ռուսաստանի արտգործնախարարն առիթը բաց չէր թողնում պնդելու, որ հայերն Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում փոքրամասնություն են: Այսպես, դեռևս 1895 թ. մարտի 28-ին Մեծ Բրիտանիայի դեսպանի և Ա. Լորանով-Ռոստովսկու միջև տեղի ունեցած գրույցի ժամանակ վերջինս հեզնանքով հայտարարում էր, որ Փոքր Ասիայում գոյություն ունեն միայն երեք գավառներ, որտեղ հայերը բնակչության մեծամասնությունն են կազմում՝ Բիթլիսը, Անգորան և Ալեքսանդրեթը (Կիլիկիա): Սակայն այդ շրջաններն իրարից շատ հեռու են գտնվում, և դժվար թե դրանք հնարավոր լինի մեկ նահանգի մեջ միավորել: «Հայերը ցրված են ամբողջ երկրով մեկ, ավելի ճիշտ, աշխարհով մեկ և գոյություն չունի որևէ տեղ, որը կարելի է Հայաստան անվանել», – շարունակում էր Ռուսաստանի արտգործնախարարը⁸⁷: Հայերի լոկ վերոնշյալ տարածքներում մեծամասնություն կազմելու սխալ տեղեկությունը Ա. Լորանով-Ռոստովսկուն անհրաժեշտ էր պնդելու իր այն դրույթը, որ նա ներկա իրավիճակում հնարավոր չի գտնում բարեփոխումներ իրականացնել, որոնք կգոհացնեն հայերին, եթե, իհարկե, այդ բարեփոխումները չեն իրականացվելու ամբողջ Ասիական Թուրքիայի տարածքում⁸⁸:

1895 թ. հուլիսի 3-ին հայկական բարեփոխումների հարցի շուրջ բրիտանական դեսպանի հետ գրույցում Ա. Լորանով-Ռոստովսկին կրկնելով, որ Ռուսաստանը դեմ է լինելու ցանկացած նախագծի, որը հանգեցնելու է Փոքր Ասիայում ինքնավար որևէ միավորի ստեղծմանը, նշում էր, որ վերջերս Կովկասում ծառայող և Թուրքիայի ասիական նահանգների գիտակ ոռու մի սպայի զեկուցագրի է ընթերցել, որը մեծ չափով հիմնված է բրիտանացի գնդապետ Հ. Թրոտերի⁸⁹ տվյալների վրա, և որտեղ ցույց է տրվում, որ հայ բնակչությունն այնքան էլ ստվար չէ, ինչպես նրան փորձում էին համոզել⁹⁰:

Սա ակնարկ էր ոռուական բանակի գլխավոր շտաբի գեներալ-լեյտենանտ, Կ. Պոլսի ոռուական դեսպանության նախկին գլխավոր կցորդ Ալեքսանդր Զելյոնիի «Հայկական հարցի մասին» գաղտնի զեկուցագրի վերաբերյալ (թվագրված է 1895 թ. մայիսի 9-ով), որտեղ լայն անդրադարձ կա Հայկական հարցի համատեքստում արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի հարցերին⁹¹: Հեղինակը, որը համարվում էր Թուրքիայի գործերին քաջատեղյակ անձնավորություններից մեկը, նաև հետաքրքրվում էր Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հարցերով, ինչի վկայությունն է նույն 1895 թ. նրա կազմած և բացատրական գրությամբ լույս տեսած

⁸⁷ Նույն տեղում, էջ 16:

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Հենրի Թրոտերը 1880-1882 թթ. զբաղեցրել է Էրզրումում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոսի պաշտոնը և զբաղվել է Արևմտյան Հայաստանի բնակչության թվաքանակի և էթնիկական կազմի վերաբերյալ տվյալների հավաքմամբ (մանրամասն տե՛ս Թաթոյան Ռ., *նշվ. աշխ.*, էջ 121-140):

⁹⁰ Նույն տեղում, էջ 93, 94:

⁹¹ Զելյոնիի «Հայկական հարցի մասին» զեկուցագրից մեջբերումներն ըստ Մարկոսյան Ս., *Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին*, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1968:

«Թուրքահայաստանում և Քուրդիստանում հայ բնակչության բաշխման քարտեզը»⁹²:

Ա. Զեյունին իր գեկուցագրի հենց սկզբից հայկական բարեփոխումների հարցով Մեծ Բրիտանիայի շահագրգռվածությունը պայմանավորում է բացառապես «իրական քաղաքականության» (realpolitik) շահադիտական նկատառումներով. «Հարկ չկա ապացուցելու, որ մարդասիրության և կարգուկանոնի բարձր սկզբունքների հովանավորումը չէ, ոչ էլ հայերի նկատմամբ սերը, որոնցով տվյալ դեպքում դեկավարվում է Անգլիան, այլ մեր սևծովյան նավատորմի վերածնվելը և Միջին Ասիայում Աֆղանստանի ու Հնդկաստանի սահմաններին մեր մոտենալը նրան ներշնչում են զինվել: Դրա հետևանքով Մեծ Բրիտանիան ամեն կերպ ցանկանում է խափանել վերջին պատերազմից հետո ստեղծված մեր լավ հարաբերությունները Թուրքիայի հետ. դրա համար նա ձգտում է Անդրկովկասի ստրատեգիական և կարևոր սահմանագլխին ստեղծել հայկական Բուլղարիա»⁹³:

Ըստ Ա. Զեյունիի՝ Մեծ Բրիտանիան փորձում էր Հայկական հարցը զուտ մարդասիրության և Ասիական Թուրքիայում վարչական բարելավումների հարցից վերածել քաղաքական հարցի՝ նպատակ ունենալով Օսմանյան Թուրքիայի տարածքի վրա և Ռուսաստանի անդրկովկասյան սահմանագլխին ստեղծելու հայերով բնակեցված արտոնյալ նահանգ՝ «ակներևորեն ի վնաս նշված պետությունների քաղաքական շահերի»⁹⁴:

Ռուս գետերալը նշում է, որ Ասիական Թուրքիայի «ստրատեգիական կետում»՝ Անդրկովկասի սահմաններին մոտիկ, «թեկուզ ամենափոքր տարածության վրա, թեկուզ ամենաթույլ, ամբողջ Եվրոպայի կողմից երաշխավորյալ հայերով բնակեցված նահանգի ստեղծումը» հարվածում է Ռուսաստանի շահերին: Զեյունին սրանից եզրակացնում էր, որ ռուսական դիվանագիտությունը պետք է ամեն կերպ խոչընդոտի հայկական «արտոնյալ նահանգ» ստեղծելու ծրագիրը: Սա ըստ էության նշանակում էր, որ հայկական բարեփոխումների հարցում Օսմանյան կայսրության և Ռուսաստանի շահերը համընկնում էին⁹⁵: Զեյունին ամենուրեք իր գեկուցագրում հավասարության նշան է դնում Հայկական հարցում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության շահերի միջև, անգամ կոչում դրանք «ընդհանուր շահեր»⁹⁶:

Հակառակ ռուսական դիվանագիտության նախկին դիրքորոշման՝ Զեյունին անվերապահորեն ընդունում է հայերի՝ Արևմտյան Հայաստանում փոքրամասնություն կազմելու թեզը: Այդ նպատակով նա առանց քննադատության յուրացնում է օսմանյան և օսմանյանից բխող վիճակագրական տվյալները: Հայ ուսումնասիրող Սուրեն Մարկոսյանն այդ առիթով արդարացիորեն նշում է. «...եթե 1880 թվականին

⁹² St' u Карта распределения армянскаго населенія въ Турецкой Арменіи и Курдистанъ съ пояснительною запискою Генеральнаго Штаба генералъ-лейтенанта Зеленаго и подполковника Сысоева, Санктъ-Петербургъ, Воен. тип., 1895.

⁹³ St' u Մարկոսյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 298:

⁹⁴ Նույն տեղում, էջ 299:

⁹⁵ Նույն տեղում, էջ 300:

⁹⁶ Նույն տեղում, էջ 313:

թուրքական տվյալները անվստահելի, իսկ հայկական աղբյուրներից բխողները (Կ. Պոլսի պատրիարքարանի) համեմատաբար ավելի վստահելի էին համարվում, ապա 1895 թ. տրամագծորեն հակառակ պատկերն էր ստացվում: Դրա պատճառը ոչ թե երկու աղբյուրներից բերվող թվանշանների հակասությունն էր, այլ այդ տարբեր ժամանակներում փոփոխված քաղաքական կուրսը»⁹⁷:

Այն, որ հայ բնակչության փոքրամասնություն կազմելու փաստարկը ռուսական կողմի համար զուտ պատրվակ էր բարեփոխումների ծրագիրը վիժեցնելու համար, վկայում է Ջեյոնիի զեկուցագրում ներկայացված հետևյալ սկզբունքներից մեկը, որով, ըստ զեկուցագրի հեղինակի, պետք է առաջնորդվեն ռուսական իշխանությունները. «Ոչ մի դեպքում չհամաձայնել ոչ միայն 9 կամ ավելի պակաս վիլայեթներից, այլև 2 սանջակից, նույնիսկ այդ սանջակների մեկ կազայից կազմված հայկական արտոնյալ նահանգ ստեղծելու հետ, **ինչքան էլ այդ կղզյակում հայերի թիվը գերազանցելիս լինի** (ընդգծումը մերն է – Ռ.Թ.), քանի որ ա) այդ պարտադիր չէ ըստ Բեռլինի տրակտատի, բ) բացարձակապես անարդարացի է, գ) քաղաքականապես վտանգավոր է Ռուսաստանի և Թուրքիայի շահերի համար»⁹⁸:

Ջեյոնիին ձայնակցում էր մեկ այլ ռուս բարձրաստիճան գինվորական՝ գլխավոր շտաբի գնդապետ Ֆեոդոր Գրյագնովը՝ Ռուսաստանի կառավարությանը 1895 թ. ներկայացրած իր հատուկ «Գրությունում»: Մասնավորապես Գրյագնովը փորձում է հիմնավորել հայերի՝ Արևմտյան Հայաստանի նահանգներում փոքրամասնություն կազմելու դրույթը՝ վկայակոչելով ազգությամբ ֆրանսիացի վիճակագիր Վիտալ Քինեի տվյալները. «Հայերը Ասիական Թուրքիայում ոչ միայն գերակշռող մեծամասնություն չեն կազմում, այլև նրանք ուղղակի կորչում են մահմեդականների զանգվածի մեջ, ինչպես երևում է կցված աղյուսակներից, որոնք են կազմել են Քինեի աշխատության հիման վրա: Քինեի տվյալները, իհարկե, չի կարելի բացարձակապես ճիշտ համարել, որ լիովին հասկանալի է այն միանգամայն բացառիկ պայմանների շնորհիվ, որոնց մեջ շարունակում է ապրել Թուրքիան... Բայց մի բան անպայման ճիշտ է, որ հայերը Ասիական Թուրքիայի մյուս, առավելապես մահմեդական, բնակչության կազմում ակներև փոքրամասնություն են՝ 9 վիլայեթների (վեց նահանգներ գումարած Տրապիզոնի, Ադանայի և Հալեպի նահանգները – Ռ.Թ.) 5,947,785 բնակչության ընդհանուր թվից հայերը կազմում են 847,041 մարդ կամ բնակչության ընդհանուր թվի 14%-ը»⁹⁹:

Հատկանշական է, որ 1895-1897 թթ. ընթացքում Հայկական հարցի սրման փուլում լույս է տեսնում Գրյագնովի «Ասիական Թուրքիայի ռազմական գործողությունների թատերաբեմի համայնապատկերը» աշխատանքը, որի երկրորդ հատորում հեղինակն անդրադառնում է Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հարցերին՝ կրկնելով վերոնշյալ տեսակետները և ներկայացնելով Էրզրումի, Տրա-

⁹⁷ Նույն տեղում, էջ 318:

⁹⁸ Նույն տեղում, էջ 315:

⁹⁹ Նույն տեղում, էջ 317:

պիզոնի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիի և Խարբերդի նահանգների բնակչության թվաքանակի և էթնիկական կազմի մասին տվյալներ՝ ըստ Վիտալ Քինեի¹⁰⁰:

Քանի որ և՛ Ա. Զեյյունին, և՛ Ֆ. Գրյազնովը լայնորեն օգտագործում են Վ. Քինեի տվյալները՝ որպես արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության վերաբերյալ աղբյուր, հարկ ենք համարում անդրադառնալ դրանց մի փոքր մանրամասն: Վիտալ Քինեն օսմանյան կառավարության հանձնարարությամբ 1880-ական թթ. շրջել է Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի տարածքներով, բնակչության թվաքանակի և սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրական տվյալներ հավաքել և դրանք ամփոփել քառահատոր «Ասիական Թուրքիա» աշխատության մեջ¹⁰¹: Ֆրանսիացի վիճակագիրն իր հաշվարկներում հիմնվում է օսմանյան կառավարության և տեղական իշխանություններից ստացված տվյալների վրա: Դրա հետ մեկտեղ ինքը չի հապաղում իր աշխատանքում սուր քննադատության ենթարկել օսմանյան վիճակագրական համակարգը՝ գրելով. «Պատշաճ պաշտոնական վիճակագրություն Թուրքիայում բացարձակապես բացակայում է...[Թուրքական] իշխանությունները ոչ միայն չեն ընդգրկել այսքան հետաքրքիր և օգտակար վիճակագրություն գիտությունը երկրի սովորությունների մեջ, այլև ընդհակառակը, որպես շահագրգիռ կողմ, հրաժարվում են արտոնել անգամ թեթև ուսումնասիրություններ»¹⁰²:

Հատկանշական է, որ հենց 1890-ականներին Արևմտյան Հայաստանում գործող ռուսական դիվանագիտական ներկայացուցիչներից մեկը՝ Վանում ռուս փոխհյուպատոս Վլադիմիր Մանսկին, քննելով Քինեի տվյալները Վանի նահանգի վերաբերյալ, նշում է, որ այն նշանակալից անճշտություններ է պարունակում: Մասնավորապես հեղինակը գտնելով, որ Վանի գավառակի վերաբերյալ Քինեի վիճակագրական տվյալներն իրականությունից ցածր են, ենթադրում է, որ այդ թիվը վերաբերում է միայն գավառակի գյուղերի ազգաբնակչությանը, իսկ Վան քաղաքի հետ միասին (ըստ Քինեի՝ 13,500) հայերի թիվը պետք է լինի՝ 26,000¹⁰³: Շարունակելով Քինեի տվյալների քննությունը՝ ուսումնասիրողը կասկածի է ենթարկում և Վան քաղաքի վիճակագրությունը (13,500 հայ): Վ. Մանսկին, հիմնվելով իր սեփական դիտարկումների վրա, որոնք, ըստ նրա, հաստատվում էին անգամ թուրքական պաշտոնական տվյալներով, գտնում է, որ քաղաքի հայ բնակչության թիվը կազմում է 20-25 հազար¹⁰⁴:

Ե՛վ Զեյյունին, և՛ Գրյազնովը չեն շրջանցում Քինեի աշխատանքի թույլ կողմերը՝ նրա կողմից կազմված վիճակագրական աղյուսակների համար, բացի օսմանյան

¹⁰⁰ Տե՛ս Փ. Грязнов, *Военный обзор передового театра в Азиатской Турции*, часть II, СПб, Военная типография, 1897, էջ 21-48:

¹⁰¹ Տե՛ս Cuinet V., *La Turquie d'Asie: Géographie administrative Statistique descriptive et raisonnée de chaque province de l'Asie-mineure*, tome 1-4, Paris, Ernest Leroux, 1890-1894:

¹⁰² Տե՛ս Cuinet V., *աշխ.*, հ. 1, էջ IV-V:

¹⁰³ Տե՛ս Маевский В.Т., *Ванский вилайетъ. Военно-статистическое описание*, Тифлисъ, Типъ. канцъ. Главноначальствъ. гражд. частью на Кавказѣ, 1901, էջ 89, 90:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 100, 101:

պաշտոնականից, այլ աղբյուրներ չնշելը, տվյալների կոնկրետ թվագրման բացակայությունը և այլն, եզրակացնելով, որ Քինեի թվերի ստուգությունը որոշելու համար անհրաժեշտ է դրանք համադրել և ստուգել այլ աղբյուրների միջոցով¹⁰⁵:

Հետաքրքիր է, որ Զեյոնին փորձ է կատարում շտկելու հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Քինեի տվյալները՝ օգտագործելով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1880 թ. վիճակագրությունը: Ըստ Զեյոնիի՝ դրանք հայ բնակչության թվաքանակի մասով արժանի են վստահության, քանի որ Հայոց պատրիարքարանին ավելի լավ, քան որևէ այլ կառույցի կարող էր և պետք է հայտնի լիներ իր համայնքի բնակչության թվաքանակը¹⁰⁶: Զեյոնին ավելացնում է 9 նահանգների համար (6 նահանգներ գումարած Տրապիզոն, Ադանա և Հալեպ) հայ բնակչության թվաքանակի՝ Քինեի տվյալներին 75,750, ստացած թիվը՝ 913,900, հայտարարելով վերոնշյալ տարածքում հայ բնակչության թվաքանակի համար առավել հավաստի հավանական տվյալ¹⁰⁷:

Նշենք նաև, որ արևմտահայության թվաքանակի վերաբերյալ Վիտալ Քինեի տվյալները մանրամասն՝ գավառ առ գավառ, քննության ենթարկած ուսումնասիրողները կոնկրետ օրինակների միջոցով ցույց են տալիս, որ ֆրանսիացի վիճակագիրն իրականից ցածր, խեղաթյուրված է ներկայացնում Արևմտյան Հայաստանի վիլայեթների բնակչության ազգային կազմը, մասնավորապես տարբեր նահանգներում հայ ազգաբնակչության թվաքանակը¹⁰⁸:

1890-ական թթ. կեսերին Հայկական հարցի սրման ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ տարածքների ազգաբնակչության թվաքանակը հաշվարկելու փորձ կատարվեց նաև Կ. Պոլսում ռուսական դեսպանության կողմից: Այսպես, 1897 թ. հունվարի 29-ին Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ա. Նելիդովին է ներկայացվում Հայկական հարցի մասին մի նամակ-հուշագիր՝ կից «Թուրքիայի ազգաբնակչության ազգագրական ակնարկ» գրությունը, որի միջոցով կարելի է պատկերացում կազմել արևմտահայության թվաքանակի և հայաբնակ նահանգների բնակչության ազգային կազմի վերաբերյալ ռուսական դեսպանության տեսակետների մասին¹⁰⁹:

Փաստաթուղթն առանձնանում է նրանով, որ դրանում, ի տարբերություն այլ հաշվարկների, փորձ է արվել ներկայացնելու Օսմանյան կայսրության ազգաբնակչության իսլամադավան հատվածը ոչ թե ըստ կրոնական պատկանելության,

¹⁰⁵ Տե՛ս *Карта распределения армянского населения в Турецкой Армении и Курдистанъ...*, էջ 3:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 15 (ռուսերեն՝ «армянской патриархии лучше чѣмъ кому-либо можетъ и должна быть известна числительность ея паствы»):

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 16:

¹⁰⁸ Տե՛ս Գալստյան Հ. Հ., Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը՝ ըստ Վիթալ Քինեի վիճակագրության, «*Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*», XII, *Թուրքիա*, Երևան, 1985, էջ 59-79: Քինեի տվյալների քննությանն անդրադարձել է նաև սփյուռքահայ ուսումնասիրող Սարգիս Կարայանը (տե՛ս Sarkis Y. Karayan, Vital Cuinet's La Turquie d'Asie: A Critical Evaluation of Cuinet's Information about Armenians, *Journal of the Society for Armenian Studies*, Volume 11, 2000, էջ 53-63):

¹⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց.1, գ. 565, թ. 76-101:

այլ ըստ ազգությունների՝ թուրքեր, թուրքմեններ, ղզլբաշներ, չերքեզներ, քրդեր և այլն: Դրանով ի ցույց էր դրվում Օսմանյան կայսրության ազգաբնակչության ամբողջ խայտաբղետ պատկերը¹¹⁰: Մասնավորապես, համաձայն ռուսական դեսպանատան այս փաստաթղթի, ինքնին էթնիկ թուրքական բնակչության թիվը 1890-ական թթ. կեսերին 3,020,108 էր կամ կայսրության ամբողջ՝ 22,307,108 շունչ բնակչության 13,5 տոկոսը: Օսմանյան կայսրությունում, ըստ փաստաթղթի, բնակվում էր 1,400,000 հայ՝ թիվ, որը շուրջ 40%-ով բարձր էր օսմանյան վիճակագրության կողմից հաղորդվող տվյալից (տե՛ս Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Օսմանյան կայսրության ազգաբնակչության էթնիկական կազմն ըստ 1897 թ. հունվարի 29-ի ռուսական դիվանագիտական փաստաթղթի¹¹¹

1	Սլավոններ	1,838,000
2	Հույներ	2,946,000
3	Վրացիներ	25,000
4	Ռումիներ	130,000
5	Ալբանացիներ	955,000
6	Հայեր	1,400,000
7	Դրույներ	80,000
8	Լապեր	60,000
9	Ասորիներ	556,000
10	Մարոնիներ	100,000
11	Ասորի-նեստորականներ	197,000
12	Փյունիկեցիներ ¹¹²	50,000
13	Լիկիացիներ ¹¹³	100,000
14	Թուրքեր	3,020,108
15	Թաթարներ	20,000
16	Թուրքմեններ	1,740,000
17	Արաբներ	1,732,000
18	Պարսիկներ	485,000
19	Ղալբաշներ	2,540,000
20	Չերքեզներ	183,000
21	Քրդեր	1,030,000
22	Եզդիներ	50,000
23	Հրեաներ	399,500
24	Գնչուներ	110,000
25	Այլք	2,560,500
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	22,307,108

Օսմանյան վիճակագրական տվյալներից շոշափելի բարձր են նաև Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ՝ ռուսական դիվանագիտական փաստաթղթում ներկայացված տվյալները: Բացի

¹¹⁰ Հիշեցնենք, որ մահմեդականներն օսմանյան վիճակագրության կողմից միատունավոր ներկայացվում էին որպես միատարր զանգված, ինչը թույլ էր տալիս հակադրել նրանց հայ բնակչության թվաքանակին և դրանով էլ ավելի ընդգծել հայերի փոքրամասնություն լինելը:

¹¹¹ Նույն տեղում:

¹¹² Լիբանանում քրիստոնյա մարոնիների ենթախումբ:

¹¹³ Անտիկ Լիկիայի (Օսմանյան կայսրության Կոնիայի նահանգ) տարածքի վրա ապրող ժողովուրդ: XIX դարի երկրորդ կեսի որևէ էթնիկական խմբի նկատմամբ տվյալ անվանման կիրառումը ժամանակավորություն է:

դրանից, ի տարբերություն օսմանյան վիճակագրության, Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության պատկերը ներկայացված է իր ամբողջ էթնիկական բազմազանությամբ, հատկապես առանձնացված են իսլամադավան խոշոր էթնիկական խմբերը՝ թուրքեր, թուրքմեններ, ղզլբաշներ, չերքեզներ, քրդեր (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչության էթնիկական կազմն ըստ 1897 թ. հունվարի 29-ի ռուսական դիվանագիտական փաստաթղթի¹⁴

Վարչական միավոր	Հայեր	Պարսիկներ	Ասորի-մեհաոռականներ	Թուրքեր	Թուրքմեններ	Ղզլբաշներ	Չերքեզներ	Քրդեր	Հին-ամեր	Գնչուներ	Այլք	Ընդամենը
Վանի նահանգ	-	80,000	-	100,000	-	25,000	1,000	140,000	5,000	-	39,000	420,000
Բիթլիսի նահանգ	-	165,000	10,000	3,000	50,000	50,000	-	45,000	-	-	100,000	443,625
Էրզրումի նահանգ	10,000	150,000	-	-	75,000	75,000	10,000	190,000	-	-	70,000	635,702
Դիարբեքիրի նահանգ	10,000	85,000	50,000	20,000	15,000	50,000	10,000	40,000	1,500	3,000	70,000	421,462
Խարբերդի նահանգ	1,000	70,000	-	-	50,000	200,000	10,000	100,000	-	-	90,000	575,314
Սեբաստիայի նահանգ	100,000	175,000	-	-	300,000	280,000	50,000	-	-	-	50,000	1,086,015
Ընդամենը	121,000	725,000	60,000	123,000	490,000	680,000	81,000	515,000	6,500	3,000	419,000	3,582,118

114 Նույն տեղում:

Ռուսական դիվանագիտական փաստաթղթում շոշափելիորեն տարբեր են ներկայացված օսմանյան պաշտոնական տվյալներից նաև մահմեդական և ոչ մահմեդական հարաբերակցության թվերն Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում. ոչ մահմեդականները, ըստ օսմանյան տվյալների, կազմում էին շուրջ 700,000 (20%), ռուսական տվյալներով՝ շուրջ 1, 131,500 (30,1%):

Աղյուսակ 9. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների մահմեդական և ոչ մահմեդական ազգաբնակչության թիվը և հարաբերակցությունն ըստ 1897 թ. հունվարի 29-ի ռուսական դիվանագիտական փաստաթղթի

	Վարչական միավոր	Ոչ մահմեդականներ	Մահմեդականներ	Ընդամենը
1	Վանի նահանգ	185,000 (43,0%)	245,000 (56,9%)	430,000
2	Բիթլիսի նահանգ	200,000 (44,6%)	248,625 (55,4%)	448,625
3	Էրզրումի նահանգ	200,000 (30,9%)	445,702 (69,0%)	645,702
4	Դիարբեքիրի նահանգ	196,500 (34,3%)	374,962 (65,6%)	571,462
5	Խարբերդի նահանգ	100,000 (17,4%)	475,314 (82,6%)	575,314
6	Սեբաստիայի նահանգ	250,000 (23,0%)	836,015 (76,9%)	1,086,015
	Ընդամենը	1,131,500 (30,1%)	2,625,618 (69,9%)	3,757,118

Անշուշտ, Կ. Պոլսի ռուսական դեսպանությունում պատրաստված այս վիճակագրությունը գերծ չէ թերություններից. այսպես, հստակեցված չեն, թե մասնավորապես որոնք են «այլք» բաժնում հավաքված ազգությունները, մինչդեռ Արևմտյան Հայաստանի պարագայում տվյալ բաժնի թվերը բավականին շոշափելի են: Լուրջ բացթողում է տվյալների աղբյուրներն ըստ նահանգների չտալը. հեղինակը սահմանափակվում է միայն նշումով, որ իր կողմից բերվող վիճակագրական տվյալները մոտավոր են և հիմնված ինչպես պաշտոնական տվյալների, այնպես էլ ճանապարհորդների տեղեկությունների վրա: «Մենք ստիպված էինք դիմել երկրորդ աղբյուրին այն դեպքերում, – շարունակում է հեղինակը, – երբ թուրքական պաշտոնական տվյալները կամ բացակայում են, կամ չափազանց հեռու են իրականությունից, ինչը շատ հաճախ է դիտվում»¹¹⁵:

Սրանով հանդերձ, եթե մի կողմ դնենք ռուսական տվյալների արժանահավատության հարցը, ինքնին դրանց առկայությունը վկայում է այն մասին, որ ռուսական դիվանագիտությունը չէր վստահում պաշտոնական օսմանյան վիճակագրությանը և Արևմտյան Հայաստանի ու Օսմանյան կայսրության այլ հատվածների ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ սեփական հաշվարկներ կատարելու փորձեր էր անում:

¹¹⁵ Նույն տեղում:

Ե. Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի վերաբերյալ 1890-ական թթ. Ֆրանսիական տվյալները

1890-ական թթ. կեսերին Հայկական հարցում Ֆրանսիայի կառավարող շրջանների վարած քաղաքականությունը հատկանշական է նրանով, որ պաշտոնական Ֆրանսիան հանդես էր գալիս Ռուսաստանի հետ համերաշխ՝ ընդդեմ Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի ազդեցության տարածման՝ ըստ էության պաշտպանելով արդու-համիդյան բռնակալությունը¹¹⁶։ Ֆրանսիան մտահոգված էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումով՝ իր ներդրած կապիտալի շահույթն անխափան ստանալու համար¹¹⁷։

Ելնելով գործընթացը վերահսկելու միջոցով Օսմանյան կայսրությունում իր ազդեցությունը պահպանելու և ամրապնդելու նկատառումից՝ Հայկական բարեփոխումների հարցում Ֆրանսիան միացավ բրիտանական նախաձեռնությանը, սակայն գործնական քայլերի չդիմեց բարեփոխումների հարցում սուլթանի դիմադրությանը հակազդելու ուղղությամբ։

1897 թ. Ֆրանսիայի արտգործնախարարությունը հրատարակեց «Դիվանագիտական փաստաթղթեր. Հայկական գործեր։ Օսմանյան կայսրությունում բարենորոգումների նախագծեր, 1893-1897 թթ.» ընդհանուր խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն (հայտնի է նաև «Դեղին գիրք» անվամբ՝ ըստ գրքի շապիկի գույնի), որտեղ հավաքվել էր հարցին առնչվող ֆրանսիական դիվանագիտական գրագրությունը¹¹⁸։

Ժողովածուի հենց սկզբում գետեղված է «Փոքր Ասիայի ժողովրդագրական պատկերը՝ հաշվի առնելով հայկական տարրը» խորագիրը կրող գրությունը, որը պատրաստվել էր Ֆրանսիայի արտգործնախարարության քաղաքական վարչության կողմից։ Գրությունը տվյալներ է պարունակում Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի նահանգ առ նահանգ բնակչության վիճակագրության մասին¹¹⁹։ Տվյալների ուսումնասիրության արդյունքում, սակայն, ի հայտ է գալիս, որ թվերը չունեն ինքնուրույն արժեք, այլ վերցված են Վիտալ Քինեի արդեն նշված «Ասիական Թուրքիա» աշխատությունից։ Ֆրանսիացի վիճակագիրը, իր հաշվարկների հիմքում դնելով օսմանյան վիճակագրական ծառայության («նուֆուս-իդարեսի») տվյալները, Արևմտյան Հայաստանի վեց նահանգների համար հաշվում է 665,635 հայ, այդ թվում՝ Վանի նահանգ՝ 79,998, Բիթլիսի նահանգ՝ 131,390, Էրզրումի նահանգ՝ 134,967, Դիարբեքիի նահանգ՝ 79,129, Խարբերդի նահանգ՝

¹¹⁶ Տե՛ս Սահակյան Ռ. Գ., Հայկական հարցը և Ֆրանսիան (1870—1890-ական թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1-2, էջ 140։

¹¹⁷ Նույն տեղում։

¹¹⁸ Տե՛ս France. Ministère des affaires étrangères. Affaires arméniennes: projets de réformes dans l'Empire ottoman: 1893-1897, Paris, Imprimerie nationale, 1897։

¹¹⁹ Նույն տեղում, էջ 1-8։

69,718, Սերաստիայի նահանգ՝ 170,433¹²⁰: Ինչպես արդեն նշել էինք, բազմաթիվ այլ աղբյուրների և Քինեի տվյալների համադրումը վկայում է այն մասին, որ ֆրանսիացի վիճակագրի թվերն էապես ցածր են իրական թվերից և չեն արտացոլում Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական ճշգրիտ պատկերը: Դրանով հանդերձ, անգամ իր հաշվարկների հիմքում ունենալով օսմանյան տվյալներ, Քինեն կարիք է զգացել շտկելու դրանք՝ շուրջ 100,000 –ով կամ 20%-ով ավելացնելով Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչության թիվը և համապատասխանաբար իջեցնելով, ճիշտ է աննշան չափով, մահմեդականների թիվը:

Ուշագրավ է, որ Ֆրանսիայի արտգործնախարարության գրության վերջում ներկայացվում էին ամփոփիչ տվյալներ, որոնք հայ բնակչության մասով չէին բխում՝ ավելի բարձր էին Վիտալ Քինեի թվերից: Այսպես, համաձայն գրության հեղինակների, «Անատոլիայի» (Ասիական Թուրքիա) ամբողջ տարածքում բնակվում էր 14,856,118 մարդ, որից մահմեդականներ՝ 11,801,485, քրիստոնյաներ՝ 2,760,864, այդ թվում հայեր՝ 1,475,011, հրեաներ՝ 123,947, այլք՝ 170,822¹²¹: Այսպիսով, ֆրանսիացի դիվանագետների հաշվարկների համաձայն՝ օսմանահպատակ հայերի թիվը շուրջ 50%-ով բարձր էր օսմանյան պաշտոնական տվյալներից, որոնց համաձայն ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում բնակվում էր շուրջ 1,000,000 հայ¹²²:

2. Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմի վերաբերյալ 1890-ական թթ. կեսերի օսմանյան, բրիտանական, ռուսական և ֆրանսիական վիճակագրական տվյալների համադրման արդյունքները

Բրիտանացի, ռուս և ֆրանսիացի դիվանագետները 1890-ական թթ. Հայկական հարցի սրման շրջանում Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչության թվաքանակի համար սեփական վիճակագրական հաշվարկներում հիմնվել են օսմանյան պաշտոնական կամ դրանցից ծագող (Վ. Քինե) տվյալների վրա՝ որոշ դեպքերում փոխարացնելով դրանք այլ աղբյուրների (Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, ասորի, կաթոլիկ և բողոքական եկեղեցական համայնքի ներկայացուցիչների տվյալներ) միջոցով:

Մեծ տերությունների դիվանագետները գիտակցել են օսմանյան վիճակագրական տվյալների թերությունները, այն է՝ հայ բնակչության թվաքանակի մասով իրականից ցածր, մահմեդական բնակչության թվաքանակի մասով՝ իրականից բարձր, քրիստոնեադավան և իսլամադավան ազգաբնակչությունների հարաբերակցության մասով տվյալները խեղաթյուրելը հօգուտ իսլամադավանների:

Այդ գիտակցումը հանգեցրել է նրան, որ իրենց հաշվարկներում ստիպված լինելով հիմնվել օսմանյան տվյալների վրա՝ վերոնշյալ երեք տերությունների ներ-

¹²⁰ St'u France. Ministère des affaires étrangères. Affaires arméniennes: projets de réformes dans l'Empire ottoman: 1893-1897..., էջ 5-7:

¹²¹ Նույն տեղում, էջ 8:

¹²² Եթե հաշվի առնենք, որ ֆրանսիական փաստաթղթում դուրս է թողնված Կոստանդնուպոլսի հայ բնակչությունը, ապա տարբերությունը ֆրանսիական և օսմանյան տվյալների միջև էլ ավելի մեծ է:

կայացուցիչները միաժամանակ կատարել են որոշակի ուղղումներ՝ ավելացնելով հայերի և քրիստոնեադավան այլ էթնիկական խմբերի թվաքանակները և համապատասխանաբար իջեցնելով մահմեդականների թվաքանակը:

Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչության թվաքանակների վերաբերյալ 1890-ական թթ. կեսերին վերաբերող օսմանյան կառավարության վիճակագրական տվյալների համադրումը բրիտանական, ռուսական և ֆրանսիական դիվանագիտական շրջաններից ծագող տվյալների հետ (Աղյուսակներ 11-13) ցույց է տալիս, որ բրիտանական, ռուսական և ֆրանսիական վիճակագրություններում հայ բնակչության թիվն օսմանյան պաշտոնական տվյալների համեմատ ավելի բարձր է ներկայացված՝ համապատասխանաբար՝ 35%, 28% և 18%-ով: Դրա հետ մեկտեղ բրիտանական, ռուսական և ֆրանսիական վիճակագրություններում մուսուլման բնակչության թիվն օսմանյան պաշտոնական տվյալների համեմատ ցույց է տրվել ավելի ցածր՝ համապատասխանաբար՝ 16%, 6% և 4%-ով: Այսպիսով, Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում քրիստոնեադավանների և իսլամադավանների հարաբերակցությունը բրիտանական, ռուսական և ֆրանսիական աղբյուրներում օսմանյան տվյալների համեմատ տարբերվում է հոգուտ քրիստոնեադավանների (տե՛ս Աղյուսակ 13):

Վերոնշյալը չի նշանակում, որ երեք տերությունների վիճակագրություններն արտացոլում են 1890-ական թթ. կեսերի Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ազգաբնակչության ժողովրդագրական առարկայական պատկերը, քանի որ դրանք այնուամենայնիվ իրենց հիմքում ունեն օսմանյան վիճակագրությունը:

Եվրոպական դիվանագիտությունը դեռևս Հայկական հարցի քննարկման առաջին փուլում ներկայացրել էր հակասող վիճակագրությունների պայմաններում Արևմտյան Հայաստանը բնակեցնող ազգությունների թվաքանակների վերաբերյալ առավել արժանահավատ և իրականությանը մոտ տվյալներ ստանալու ուղին, այն է՝ եվրոպական վերահսկողությամբ մարդահամար կազմակերպելու գաղափարը: 1880 թ. սեպտեմբերի 7-ին Բեռլինի պայմանագրի տակ ստորագրած եվրոպական վեց տերությունները հանդես էին եկել հայկական բարեփոխումների վերաբերյալ համատեղ նոտայով, որում, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում էին նաև Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմի վերաբերյալ գոյություն ունեցող հակասական տվյալներին: Մեծ տերությունները չէին ընդունում օսմանյան վիճակագրական տվյալները՝ որպես իրականությանը չհամապատասխանող, և կոչ էին անում Բարձր դռանը հնարավորինս կարճ ժամկետներում անաչառ հանձնաժողովի միջոցով և լիակատար անկողմնակալության պայմաններում մարդահամար անցկացնել¹²³: Այս պահանջը մշտապես արհամարհվեց օսմանյան իշխանությունների կողմից, և արդեն 1890-ական թթ. կեսերին ո՛չ Մեծ Բրիտանիան, ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ մեծ տերություններից որևէ մեկն այլևս չբարձրացրին նման մարդահամար անցկացնելու հարցը:

¹²³ 1880 թ. սեպտեմբերի 7-ի համատեղ նոտայի ֆրանսերեն բնագիրը և անգլերեն թարգմանությունը տե՛ս *Turkey No. 1 (1896)*..., էջ 2-9: Հայերեն թարգմանությունը՝ Լեօ, *Նշվ. աշխ.*, էջ 173-187:

Աղյուսակ 11. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայ ազգաբնակչության թվաքանակն ըստ օսմանյան, անգլիական, ռուսական և ֆրանսիական (Վ. Քինե) վիճակագրական տվյալների

	Վարչական միավոր	Օսմանյան (1897) ¹²⁴	Բրիտանական (1895) ¹²⁵	Ռուսական (1897) ¹²⁶	Ֆրանսիական/ Վ. Քինե (1897) ¹²⁷
1	Վանի նահանգ	61,933	112,536	80,000	79,998
2	Բիթլիսի նահանգ	111,102	152,398	165,000	131,390
3	Էրզրումի նահանգ	120,431	134,902	150,000	134,967
4	Դիարբեքիի նահանգ	57,662	73,825	85,000	79,129
5	Խարբերդի նահանգ	89,158	156,356	70,000	69,718
6	Սեբաստիայի նահանգ	125,981	133,367	175,000	170,433
	Ընդամենը	566,267	763,384	725,000	665,635

Աղյուսակ 12. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների մահմեդական ազգաբնակչության թվաքանակն ըստ օսմանյան, անգլիական, ռուսական և ֆրանսիական վիճակագրական տվյալների

	Վարչական միավոր	Օսմանյան (1895) ¹²⁸	Բրիտանական (1895) ¹²⁹	Ռուսական (1897) ¹³⁰	Ֆրանսիական/ Վ. Քինե (1897) ¹³¹
1	Վանի նահանգ	207,028	131,275	245,000	241,000
2	Բիթլիսի նահանգ	352,713	134,886	248,625	254,000
3	Էրզրումի նահանգ	545,782	505,185	445,702	500,782
4	Դիարբեքիի նահանգ	378,253	334,266	374,962	328,644
5	Խարբերդի նահանգ	494,881	504,946	475,314	505,446
6	Սեբաստիայի նահանգ	801,630	731,610	836,015	839,514
	Ընդամենը	2,780,287	2,342,168	2,625,618	2,669,386

¹²⁴ Առաքելադավան, կաթոլիկ և բողոքական հայեր (տե՛ս Karpat K., նշվ. աշխ., էջ 196):

¹²⁵ Տե՛ս Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces..., էջ 35:

¹²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց.1, գ. 565, թ. 81-101:

¹²⁷ Տե՛ս France. Ministère des affaires étrangères. Affaires arméniennes: projets de réformes dans l'Empire ottoman: 1893-1897..., էջ 5-7:

¹²⁸ Տե՛ս Turkey No. 8 (1896)..., էջ 100:

¹²⁹ Տե՛ս Report on the Population of Asia Minor and the Turkish Provinces..., էջ 35:

¹³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց.1, գ. 565, թ. 81-101:

¹³¹ Տե՛ս France. Ministère des affaires étrangères. Affaires arméniennes: projets de réformes dans l'Empire ottoman: 1893-1897..., էջ 5-7:

Աղյուսակ 13. Արևմտյան Հայաստանի վեց նահանգների մահմեդական և ոչ մահմեդական ազգաբնակչության հարաբերակցությունն ըստ սոմանյան, բրիտանական, ռուսական և ֆրանսիական վիճակագրական տվյալների

	Վարչական միավոր	Օսմանյան (1895 թ.)		Բրիտանական (1895 թ.)		Ռուսական (1897 թ.)		Ֆրանսիական/Վ. Քիմե (1897 թ.)	
		Մահմեդականներ	Ոչ մահմեդականներ	Մահմեդականներ	Ոչ մահմեդականներ	Մահմեդականներ	Ոչ մահմեդականներ	Մահմեդականներ	Ոչ մահմեդականներ
1	Վանի մահանգ	207,028 (68%)	101,264 (32%)	131,275 (41%)	183,873 (58,3%)	245,000 (56,9%)	185,000 (43,0%)	241,000 (56%)	189,000 (44%)
2	Բիթլիսի մահանգ	352,713 (76%)	126,874 (24%)	133,986 (47%)	152,398 (53,2%)	248,625 (55,4%)	200,000 (44,6%)	254,000 (64%)	144,625 (36%)
3	Էյուրումի մահանգ	545,782 (81,5%)	123,935 (18,5%)	505,185 (78%)	138,902 (21,6%)	445,702 (69,0%)	200,000 (30,9%)	500,782 (78%)	144,920 (22%)
4	Դիարբեքլի մահանգ	378,253 (82%)	83,752 (18%)	333,456 (74%)	115,888 (25,8%)	374,962 (65,6%)	196,500 (34,3%)	328,644 (70%)	142,818 (30%)
5	Խաղրեբլի մահանգ	494,881 (85%)	91,422 (15%)	504,946 (76%)	157,006 (23,7%)	475,314 (82,6%)	100,000 (17,4%)	505,446 (88%)	70,368 (12%)
6	Սեբաստիայի մահանգ	801,630 (83%)	170,351 (17%)	731,610 (80%)	178,970 (19,6%)	836,015 (76,9%)	250,000 (23,0%)	839,514 (77%)	246,501 (23%)
	Ընդամենը	2,780,287 (80%)	697,598 (20%)	2,340,458 (72%)	927,037 (28%)	2,625,618 (70%)	1,131,500 (30%)	2,669,386 (74%)	938,232 (26%)

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ.
ԿԵՍԵՐԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՍՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռոբերտ Թաթոյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրության են ենթարկվում 1890-ական թթ. կեսերին մերձավորարևելյան ճգնաժամի և Հայկական հարցի շուրջ ծավալված գործընթացների համատեքստում օսմանյան իշխանությունների, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ժողովրդագրության հարցերի, այն է՝ արևմտահայության թվաքանակի և էթնիկական այլ խմբերի նկատմամբ հայերի ու քրիստոնեադավան այլ հարանվանությունների տեսակարար կշռի հարցերի արծարծումները:

Ներկայացվել և վերլուծության են ենթարկվել Հայկական հարցի համատեքստում վերոնշյալ հիմնական դերակատարների կողմից 1890-ական թթ. կեսերին կազմված արևմտահայության թվաքանակին և Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմին վերաբերող հիմնական վիճակագրական տվյալները:

Բանալի բառեր՝ Հայկական հարց, օսմանյան վիճակագրություն, արևմտահայության թվաքանակ, վեց նահանգներ:

THE QUESTIONS OF NUMBER OF WESTERN ARMENIANS AND THE ETHNIC
COMPOSITION OF THE POPULATION OF WESTERN ARMENIA DURING THE
PERIOD OF THE AGGRAVATION OF THE ARMENIAN QUESTION IN THE MID-90^S
OF THE XIX CENTURY

Robert Tatoyan

SUMMARY

The article examines the treatment by the Ottoman authorities and by the diplomacy of Great Britain, Russia and France of the questions of number of Western Armenians and the ethnic composition of the population of the six vilayets of Western Armenia during the period of aggravation of the Armenian question and the Middle East crisis in the mid-1990s.

The key statistical data on the number of Western Armenians and the ethnic composition of the population of Western Armenia, compiled in the mid-1890s by the above-mentioned actors in the context of the negotiations over the Armenian question, are presented and analyzed.

Keywords: Armenian question, ottoman statistics, the number of Western Armenians, six vilayets.

ВОПРОСЫ ЧИСЛЕННОСТИ ЗАПАДНЫХ АРМЯН И ЭТНИЧЕСКОГО СОСТАВА
НАСЕЛЕНИЯ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПЕРИОД ОБОСТРЕНИЯ АРМЯНСКОГО
ВОПРОСА В СЕРЕДИНЕ 90-ЫХ ГОДОВ XIX ВЕКА

Роберт Татоян

РЕЗЮМЕ

В статье исследуются обращения османских властей, дипломатии Великобритании, России и Франции к вопросам численности западных армян и этнического состава населения шести вилайетов Западной Армении в период обострения Армянского вопроса и ближневосточного кризиса в середине 90-ых годов XIX века.

Представлены и проанализированы основные статистические данные о численности западных армян и этнического состава населения Западной Армении, составленные в середине 1890-х годов вышеуказанными акторами в контексте переговоров вокруг Армянского вопроса.

Ключевые слова: Армянский вопрос, османская статистика, численность западных армян, шесть вилайетов.

ՍԱՍՈՒՆԻ՝ 1894 թ. ԿՈՏՈՐԱԾԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Նարինե Հակոբյան

Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդ II-ի վարած հակահայկական քաղաքականությունն իր գագաթնակետին հասավ 1890-ական թվականներին, երբ հարյուր հազարավոր հայեր կոտորվեցին, բռնի կրոնափոխվեցին, տարագրվեցին: Նախադեպը չունեցող այդ դեպքերը չէին կարող վրիպել ժամանակակիցների ուշադրությունից: Հայերի հալածանքները համաշխարհային արձագանք ունեցան. բազմաթիվ առաջադեմ մարդիկ դատապարտեցին համիդյան վարչակարգը, եվրոպական մամուլում լույս տեսան բազմաթիվ դատապարտող հոդվածներ, ծաղրանկարներ, թուրքական վայրագությունները պատկերող գրքույկներ¹: Օսմանյան կայսրությունում ծավալվեց աննախադեպ նպաստամատույց գործունեություն, որի նպատակը համիդյան ադետի հետևանքները մեղմելն էր²:

Հայ ժողովրդի օրհասական դրությունը, բնականաբար, չէր կարող չքննարկվել և չլուսաբանվել նաև տվյալ ժամանակաշրջանի հայկական մամուլում: Ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ մամուլը մեծ տեղ է հատկացրել հայ ժողովրդի կրած տառապանքների ներկայացմանը՝ այդպիսով լուսաբանելով և փաստագրելով համիդյան սարսափները: Որպես այդ կոտորածների մեկնարկ՝ կարևոր նշանակություն ունեն Մասունում 1894 թ. ծավալված իրադարձությունները: Այս հոդվածում մենք կփորձենք քննարկել և վերլուծել արևելահայ մամուլում Մասունի՝ 1894 թ. ինքնապաշտպանության և կոտորածի լուսաբանումը: Այդ նպատակով հետազոտության են ենթարկվել «Մշակի», «Մուրճի», «Նոր Դարի» և «Արձագանքի» հրապարակումները: Այդ թերթերն էին, որ 1890-ական թվականներին եռանդուն գործունեություն էին ծավալել արևելահայ իրականության մեջ: Վերոնշյալ բոլոր

¹ Համիդյան կոտորածների վերաբերյալ Զոռյան ինստիտուտի կազմած գրականության ցանկն ասվածի խոստովանությունն է: St' u Shirinian G., The Armenian Massacres of 1894-1897: A Bibliography <http://www.zoryaninstitute.org/bibliographies/The%20Armenian%20Massacres.pdf>.

² Արևմտահայության՝ 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ եվրոպական («Գերմանական առաքելություն արևելքում», «Կանանց առաքելության աշխատողներ») և ամերիկյան (Օտարերկրյա լիազորների ամերիկյան խորհուրդ, Ամերիկյան կարմիր խաչ) մի շարք հայասիրական կազմակերպություններ զգալի աշխատանք տարան՝ համիդյան ջարդերի հետևանքները մեղմելու համար: Նրանց շնորհիվ տասնյակ հազարավոր հայ երեխաներ և այրիացած կանայք փրկվեցին վերահաս կործանումից և կարողացան նոր կյանք սկսել: Այդ մասին մանրամասն տե՛ս William E. Strong (ed.), *The Story of the American Board: An Account of the First Hundred Years of the American Board of Commissioners for Foreign Missions*, Boston: The Pilgrim Press, 1910: Բարտոն Կ., *Ջեկույց: Ամերիկյան կարմիր խաչի նպաստամատույց առաքելությունը Փոքր Ասիա*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012: Matthias Bjomlund, "Before the Armenian Genocide: Danish Missionary and Rescue Operations In the Ottoman Empire, 1900-1914," *Haygazian Armenological Review* 26 (2006), էջ 141-156: Հակոբյան Ն., Արևմտյան Հայաստանում մարդասիրական օգնության կազմակերպման հարցի շուրջ (XIX դարի վերջ և XX դարի սկիզբ), «Ցեղասպանագիտական հանդես» 2(2014), էջ 24-31:

պարբերականներն էլ արևմտահայության կյանքը ներկայացնող բաժիններ ունեին, որոնց էջերում շատ են Հայկական հարցին, ինչպես նաև համիդյան կոտորածներին նվիրված նյութերը: Հատկանշական են մասնավորապես համիդյան կոտորածներին առնչվող մի շարք կարևոր հիմնահարցերի վերաբերյալ արևելահայ թերթերի ընկալումները:

Արևելահայ մամուլը գործում էր ցարական գրաքննության պայմաններում, որի հետևանքով հայերի հալածանքների մասին բազմաթիվ նյութեր կամ չէին տպագրվում, կամ էլ պարզապես «մաքրվում» էին անցանկալի տեսակետներից: Ցարական Ռուսաստանի այս քաղաքականությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այս շրջանում ռուս-թուրքական հարաբերությունների որոշակի մեղմացում էր նկատվում: Բացի այդ, ցարական կառավարությունը վախենում էր, որ սուլթանի հակահայկական քաղաքականության դեմ արևմտահայերի ազատագրական շարժումները կարող են «ռզկուրիչ» նշանակություն ունենալ իր ենթակայության տակ գտնվող արևելահայերի համար³: Մյուս կողմից հայկական թերթերը, չունենալով թղթակիցների մեծ բանակ, հաճախ ստիպված էին լինում բավարարվել Արևմտյան Հայաստանից հասնող կցկտուր տեղեկություններով: Չնայած խոչընդոտող նման պայմաններին՝ արևելահայ խմբագիրները մեծ պատասխանատվությամբ են մոտեցել հարցին: Ասվածը լավագույնս փաստում է «Մուրճի» խմբագիր Ա. Արասխանյանի այն դիտարկումը, ըստ որի. «Մեր ներքին կեանքի ուսումնասիրության ծրագրի մէջ մեծ պակասորդ կը լինէր, եթէ Տաճկա-Հայաստանի կեանքը իւր բաժինը չ'ունենար «Մուրճ»-ում: Արդ, մենք սկզբից իսկ մտածել ենք, որ այդ խնդրի մէջ մեր առարկան պէտք է լինի բուն երկիրը իւր ժողովրդով... «Մուրճ»-ը կ'աշխատի, հնարաւոր եղածին չափ, ամեն ամիս հաշիւ տալ Տաճկա-Հայաստանի ընթացիկ կեանքի դէպքերից»⁴: Մյուս կողմից արևելահայ պարբերականները սեփական լրատվության պակասը լրացնելու համար լայնորեն օգտվել են արևմտյան և ռուսական պարբերականների հաղորդումներից: Սակայն, անշուշտ, առավել մեծ կարևորություն են ներկայացնում սեփական թղթակիցների հաղորդումները և դէպքերի գնահատականները:

Մասունի 1894 թ. կոտորածը

Մասունում հայերն ունեին կիսանկախ վիճակ, որի պատճառների վերաբերյալ տեղին դիտարկում է արվում «Մուրճ»-ի համարներից մեկում. «...Նորա լեռնաբնակ ժողովուրդը վաղուց ի վեր վայելում է կիսաազատութեան նման մի դրութիւն. բայց այդ դրութիւնը ստեղծել է ոչ թե որևէ քաղաքական արտօնութիւնների շնորհիւ, այլ միայն շնորհիւ երկրի լեռնային դրութեան, ուր բնակիչները, հայ թե քիւրդ, թերև ոչ անելի քան 15 հազար, կէսը հայ, կէսը քիւրդ, երբէք չ'ին կարող իրենց դրութիւնից օգտուել յառաջադիմութեան ճանապարհի վրայ իրանց դնելու համար, բոլորո-

³ Այդ շրջանի ռուս-թուրքական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Կիրակոսյան Զ., *Երիտթուրքերը պարսկության դարապարանի առաջ*, Երևան, «Հայաստան», 1985, էջ 69-76:

⁴ «Մուրճ», 1889, N12, էջ 1888, 1889:

վին ընդհակառակը, դա՛ անխնամ թողած տեղերից մեկ է, ուր մարդկանց վիճակը միանգամայն թողած է բնութեան բերմունքին...»⁵: Ասվածը լավագույնս բնութագրում է սասունցիների կիսանկախ վիճակը պայմանավորող երկու հիմնական գործոնները՝ աշխարհագրական դիրքը և բնակիչների համեմատաբար անբարեկեցիկ կյանքը:

Օսմանյան իշխանությունները 1890-ական թթ. առաջին կեսին մի քանի անգամ փորձել էին վերջ տալ դրան, սակայն ապարդյուն: Սուլթանի հակահայկական քաղաքականությունը հասել էր իր գագաթնակետին, օրեցօր ավելացող հարկերը, հայերի նկատմամբ թուրք աղաների և քուրդ բեկերի սանձարձակ պահվածքը ստիպում էին սասունցիներին դիմել ինքնապաշտպանության: 1893 թ. հայերի և քրդերի⁶ միջև բախումները հաճախակի են դառնում, իսկ 1894 թ. ամռանը հայերը դիմում են ապստամբության՝ կտրականապես մերժելով հարկեր վճարել: Այսպես, հարկերը երկար ժամանակ սասունցիների կողմից չվճարելը պատճառ դարձնելով, բայց իրականում Սասունը հիմնահատակ ավերելու նպատակով, 1894 թ. Մուշում կենտրոնացվել են թուրքական չորրորդ բանակի զորամասերը Զեքի փաշայի հրամանատարությամբ⁷: Հարձակումը սկսվել է Շենիք և Սեմալ գյուղերից: 1894 թ. օգոստոսի 3-ին թուրքական բանակը և նրան միացած բազմահազար քրդերը հարձակվել են Շատախի գավառակի գյուղերի վրա, որոնց բնակիչները նահանջում են Գելիեզուզան: Չնայած հերոսական դիմադրությանը՝ թուրքերը կարողանում են գրավել Գելիեզուզանը, իսկ սասունցիները կենտրոնանում են Անդոկ լեռան վրա: Օգոստոսի 13-ին թշնամին պաշարում է Անդոկը և հարձակման անցնում: Սասունցիները տալիս են 200 զոհ⁸: Թուրքական կողմն առաջարկում է բանակցություններ, այնուհետև նենգորեն հարձակվում բանակցելու համար դիրքերից իջած 200 պատվիրակների վրա. վերջիններս ընկնում են անհավասար մարտում: Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից իշխան Գրգոն օգոստոսի 15-22-ին կարողանում է լուրջ դիմադրություն ցույց տալ, որը սակայն մեծ դժվարությամբ ճնշվում է: Օգոստոսի 23-ից սկսված երկարատև ու կատաղի մարտերից հետո թուրքերն ի վերջո գրավում են Անդոկ լեռը և դաժան հաշվեհարդար տեսնում հայերի հետ: Ըստ ծնունդով սասունցի հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան Կ. Սասունու հաղորդած տվյալների՝ Սասունը տվեց 500 զոհ կոլոդներից և 1200 մարդ էլ սպանվեց խաղաղ բնակչությունից⁹:

⁵ «Մուրճ», 1894, N9, էջ 1306-1307:

⁶ Սասունի հայերի ու քրդերի հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Պողոսյան Հ., *Սասունի պարմություն*, Երևան, «Հայաստան», 1985, էջ 162-206:

⁷ Տե՛ս Թառոյան Կ., *Ժողովրդական շարժումները Սասունում*, Երևան, «Հայաստան», 1966, էջ 81:

⁸ Տե՛ս Պողոսյան Հ., *Սասունի պարմություն*, Երևան, «Հայաստան», 1985, էջ 201:

⁹ Կարօ Սասունի, *Պարմություն Տարօնի աշխարհի*, Պեյրուք, Տարօն-Տուրքերան հայրենակց. Միութ. կեդր. Վարչ., 1956, էջ 580: Ըստ պատմաբան Լեոյի՝ Սասունի հայ բնակիչների զոհերի թիվը 10 հազար էր (տե՛ս Լեո, *Անցյալից*, Թիֆլիս, Խորհրդային Կովկաս, 1925, էջ 104), իսկ «Մուրճ»-ի թղթակիցը նշում է, որ միայն զոհված տղամարդկանց թիվը 12,580 էր, տե՛ս «Մուրճ», 1895, N1, էջ 158:

Սասունի կոտորածն արդեն կատարված իրողություն էր, ուստի միջազգային հանրության ճնշումների ներքո ու Մեծ Բրիտանիայի¹⁰ առաջարկով երկար բանակցություններից հետո վերջապես որոշվեց քննիչ հանձնաժողով ստեղծել՝ Սասունի դեպքերն ուսումնասիրելու համար: Հանձնաժողովը կազմված էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիվանագետներից ու երեք թուրք ներկայացուցիչներից, որոնք թուրքական կառավարության կողմից նշանակվել էին՝ հանձնաժողովի գործունեությունը խափանելու համար¹¹: Այս հոդվածում ուսումնասիրվող պարբերականներում քննիչ հանձնաժողովի գործունեությունը հիմնականում լուսաբանվում է արևմտյան և ռուսական մամուլի հրապարակումների հիման վրա, ինչը հավանաբար պայմանավորված էր սեփական լրատվության պակաս ունենալու հանգամանքով: Այդ հաղորդումներից պարզ է դառնում, որ թուրքական կառավարությունն անընդհատ խոչընդոտում էր հանձնաժողովի գործունեությունը: Քննիչ հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու և Սասունի կոտորածների հետքերը վերացնելու համար թուրքական կառավարությունը նախ և առաջ վերացնում է կոտորածի մասին պաշտոնական փաստաթղթերը: Բարձրագույն կարգադրությամբ վերացվել է նաև Սասունի կոտորածների ղեկավար Զեքի փաշայի այն հեռագիրը, որ հաղորդում էր, թե վերջին անգամ Սասունում սպանվել էր 1720 հոգի¹²: Թուրքական կառավարությունը նաև արգելեց օտար թղթակիցների մուտքը Արևմտյան Հայաստան, ընդ որում արգելվեցին ոչ միայն չեզոք թերթերի թղթակիցների մուտքը, այլ նաև Թուրքիայի շահերը պաշտպանող թղթակիցների: Պատճառը մեկն էր. թուրքական իշխանությունները համոզված էին, որ օտար թղթակիցները դիտմամբ չեն հեղաշրջելու իրենց տեսածն ու լսածը¹³: «Մուրճի» 1895 թ. 1-ին համարում նաև նշվում է. «Ցառով սրտի յայտնում ենք, որ մեր ջերմ ու տևական ջանքերը՝ *Սասունի դեպքերն անաչառ* քննելու նպատակով մեր յատուկ թղթակցի համար Հայաստան մտնելու իրաւունք ստանալու մասին՝ ապարդիւն անցաւ»¹⁴: Որպես հանձնաժողովի գործունեության վերաբերյալ սեփական թղթակցի կողմից ուղարկված հոդված՝ առանձնանում է միայն «Արձագանքի» 1895 թ. մարտի 12-ի համարում լույս տեսած նյութը, որը թղթակիցը Մուշից խմբագրություն էր ուղարկել փետրվարի 23-ին: Հոդվածագիրը մանրամասն նկարագրում է քննիչ հանձնաժողովի ժամանելուց առաջ և հետո Մուշում ու Սասունում տիրող իրավիճակը: Հանձնաժողովի գործունեությունը խոչընդոտելուն

¹⁰ Անգլիական կառավարության ակտիվությունը Հայկական հարցում պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով. Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցով Մեծ Բրիտանիան ցանկանում էր ստիպել Թուրքիային համաձայնվել իր կողմից Եգիպտոսի օկուպացիային, բացի այդ Օսմանյան կայսրությունում ուժեղացել էր Ռուսաստանի և Գերմանիայի ազդեցությունը, որը ձեռնտու չէր Մեծ Բրիտանիային: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Kirakossian Arman J., *The Armenian Massacres 1894-1896: British Media Testimony*, Dearborn: The Armenian Research Center, 2008, էջ 40:

¹¹ Տե՛ս «Մուրճ», 1895, N 1, էջ 146:

¹² «Մուրճ», 1895, N 1, էջ 130:

¹³ «Մուրճ», 1895, N 1, էջ 133:

¹⁴ Նույն տեղում:

ուղղված թուրքերի քայլերի մասին թղթակիցը գրում է. «Դեռ նուիրակաների գալուց շատ առաջ, երբ Հօլուարդ հիւպատոսն աշխատում էր Սասուն հասնել, թիւրք պաշտօնեաները և յատկապէս պատասխանատու զինուորական հրամանատար Զէքի փաշան շտապում են ծածկել զարհուրելի կոտորածի հետքերը, որի գոյութիւնն անգամ Զէքին յամառօրէն ուրանում էր... փախստական հայերին մերթ յորդորելով, մերթ սպառնալով հարկադրում են վերադառնալ իրենց աւերակ գիւղերը և քարուքանդ տները վերաշինել. Գէլիէգուզան, Մէմալ և Շէնիկ գիւղերի շուրջը կանգնած զօրքերն անգամ հրաման են ստանում այդ գիւղերը նորոգելու և վերականգնելու, որ և նրանք մի կերպ անում են»¹⁵: Իսկ «Արձագանքի»՝ 1895 թ. մարտի 10-ի համարում նշվում է. «Տաճիկ իշխանութիւնները գործի են դնում սպառնալիքներ ու կաշառներ, որպէս զի հայերն ուղերձներ ստորագրեն և այդ ուղերձների մէջ յայտնեն, թե իրենք «շնորհակալ են բարերար խիստ միջոցներ»՝ ձեռք առնելու համար: Շատերը ստորագրում են այդ ուղերձները, բայց մեծ մասն աւելի լաւ են համարում բանտը գնալ»¹⁶: «Մշակի»՝ 1895 թ. փետրվարի 18-ի համարում հոդվածագիրը, վերլուծելով քննիչ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ եվրոպական մամուլում լույս տեսած հոդվածները, նշում է, որ սկզբում բոլոր լուրերը թուրքերի օգտին էին: Եվ դա պարզ էր, քանի որ թուրքական իշխանությունները և հանձնաժողովի թուրք անդամներն ամեն ինչ անում էին, որպեսզի ցուցմունքներն իրենց օգտին լինեին: Սակայն երբ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների պահանջով որպէս վկաներ սկսեցին կանչվել անկախ մարդիկ, քրիստոնյաներ և նույնիսկ Սասունի դեպքերի ականատեսներ, այդ ժամանակ հարցը սկսեց այլ կերպարանք ընդունել, և վերջին տեղեկությունները մեծ մասամբ փաստում են, որ քննիչ հանձնաժողովի տեղեկությունները թուրքական կառավարության համար նպաստավոր չեն»¹⁷: Այսպես, չնայած թուրքերի կողմից հարուցված բոլոր խոչընդոտներին, քննիչ հանձնաժողովն ապացուցեց թուրքական կառավարության մեղավորությունը¹⁸:

¹⁵ Տե՛ս «Արձագանք», 1895, N 29, էջ 1:

¹⁶ Տե՛ս «Արձագանք», 1895, N 28, էջ 1:

¹⁷ Տե՛ս «Մշակ», 1895, N 20, էջ 1:

¹⁸ Մասնավորապէս հաստատվեց այն տեղեկությունը, որի համաձայն. «...յիսուն հայ կոտորուցին Գելիէ-Գուզանի մօտ տաճկական բանակում և որ այլ դեպքերում տաճիկ զինուորները և քուրդերը կոտորում էին հայերին առանց հասակի և սեռի խտրութեան: Անկասկած են յայտնում միայն այն, թե արդէ՞ք կանոնաւոր զօրքերը այդ կարգի խայտառակութեանց մէջ մասնակից են, թե ոչ: Հաստատւած է նաև լուրը քսան եւ չորս գիւղեր աւերելու մասին 5.000 հոգի բնակիչներով, որոնք անտուն մնացին: Վերջապէս հաստատուել են հայերին տանջանքների ենթարկելու լուրերը: Շատ օրինակներ են բերւած տաճկական գազանութեան քրիստոնեաների վերաբերմամբ, ի միջի այլոց, անգլիական հիւպատոս Շիլլէյի հաղորդագրութիւնների մէջ: Տալուրիկում սպանւած հայերի թիւը նա որոշում է 1.000 հոգի, և վկայում է, թե տաճիկ իշխանութիւնները ոչ այնքան ջանք էին գործ դնում կարծեցեալ ապստամբութիւնը խեղդելու համար, որքան ջնջելու Գելիէ-Գուզան եւ Տալուրիկ գավառները, ուր ոչ մի տուն ողջ չմնաց, փճացրին բոլոր արտերը եւ ազգաբնակչութիւնը կատարեալ աղքատութեան է հասցրած: 12-ից օգոստոսի ց 4-ն սեպտեմբերի 1894 թ. այդտեղ որսում էին հայերի վրայ որպէս անում են վայրի գազանների նկատմամբ, կոտորում էին նոցա

Արևելահայ մամուլը Սասունի՝ 1894 թ. դեպքերի պատճառների մասին

Սասունում 1894 թ. ամռանը ծավալված իրադարձությունների վերաբերյալ առաջին հրապարակման մեջ «Մուրճ»¹⁹-ի խմբագիր Ա. Արասխանյանն ընդգծում է, որ դժվար էր կարծել, որ արևմտահայության առաջ միանգամից կծագի այնպիսի բարդ խնդիր, ինչպիսին Սասունի ապստամբությունն էր։ Ա. Արասխանյանն այստեղ ընդգծում է երկու գործոն, նախ՝ Սասունի կիսանկախ վիճակը՝ պայմանավորված աշխարհագրական դիրքով, մյուս կողմից նշում է, որ իրադարձությունների ընթացքը այլ կլիներ, եթե «...ներկայ հանգամանքներում իւր բարձրութեան վրայ կանգնած մի պատրիարք կարող էր նշանաւոր չափով ազդել գործերի ընթացքի վրայ Սասունում։ Մինչդեռ պատրիարքական տեղապահը ոչ որպէս անձնաւորութիւն, այլ որպէս դիրք՝ չի կարող այդպիսի գործերի համար անհրաժեշտ հեղինակութիւն ունենալ որ և է կերպ միջամտելու խնդրի մէջ մի երկրում, ուր միջամտութիւնը ներքին խնդիրներում ահագին դեր է խաղում։ Իսկ այդ... եղել է գլխաւոր նպատակներից մէկը տաճկական այն քաղաքականութեան, որ թելադրել է նրան հայերին առ այժմ պահել առանց պաշտօնապէս ճանաչած գլխի»²⁰։ Թերթի արդեն մյուս համարում նկարագրվում է ապստամբության սկիզբը՝ գլխավոր պատճառ նշելով սասունցիների կիսանկախ վիճակին վերջ տալու կառավարության ձգտումը²¹։

«Մշակը»²²-ը, որը Սասունի դեպքերին առաջին անգամ անդրադարձել է 1894 թ. սեպտեմբերի 10-ի համարում, նշում է, որ ապստամբության պատճառը թուրքական իշխանություններն էին, քանի որ «Մօտ օրերս կառավարութիւնն սկսած էր խստացնել իր պահանջը հարկերի նկատմամբ, և ահա այդ լեռնականների հանգիստն ալ

առանց խտրութեան հասակի և սեռի, և եթէ ամենքը չկոտորեցին, այդ միայն նրանից է որ տեղի լեռնային դիրքը կարելիութիւն էր տալիս հալածանքից թաքնւելու»։ Տե՛ս «Մուրճ», 1896, N 1, էջ 131։ Շիպլէյի և մյուս դիվանագիտական ներկայացուցիչների հաղորդագրությունները (1894 թ. հուլիսից մինչև 1895 թ. հոկտեմբեր) ամփոփվեցին 1895 թ. հունվարին լույս տեսած անգլիական Կապույտ գրքում (տե՛ս Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey: Events at Sasoon, and Commision of Inquiry at Moush, Part I, London: HMSO, 1895)։

¹⁹ «Մուրճ» հասարակական-քաղաքական, գրական ամսագիրը հիմնադրվել է 1889 թ. Թիֆլիսում տնտեսագետ Ա. Արասխանյանի կողմից։ Ամսագիրն ուներ լիբերալ ուղղվածություն։ Հրատարակվել է մինչև 1907 թ.։

²⁰ «Մուրճ», 1894, N 9, էջ 1306։ Խոսքն այն մասին է, որ Կ. Պոլսի հայոց պատրիարք Աշրգյանից հետո, նոր պատրիարք ընտրելու փոխարեն, ընտրեցին պատրիարքի տեղապահ։ Ավելին, ընտրությունը կատարեց ոչ թե Ազգային ժողովը, այլ կրոնական ու քաղաքական ժողովները։ Պատրիարքի տեղապահ ընտրվեց Դիմաքյան Տ. Հմայակ եպիսկոպոսը։ Ինչպես նշվում է «Մուրճ»-ի՝ 1894 թ. 7-8 համարում, կատարվածը պատրիարքի ընտրություն էր՝ տեղապահի ընտրության անվան ներքո։ Այս ամենը թուրքական քաղաքականության շարունակությունն էր, որը նպատակ ուներ վերացնելու արևմտահայոց սահմանադրությունը, ինչպես նաև խոչընդոտելու արևմտահայերի խնդիրների բարձրաձայնումը։

²¹ «Մուրճ», 1894, N 10, էջ 1496-1497։

²² Լիբերալ ուղղվածություն ունեցող «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթը հրատարակվել է 1872-1921 թթ. Թիֆլիսում։ Հիմնադիրն ու թերթի առաջին խմբագիրը եղել է հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Գ. Արծրունին, ով ժամանակի պատգամախոսն էր համարվում (տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն, XVII-XIX դարեր, հատոր 1, Գահիրե, 2006 թ., էջ 344)։ 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների ժամանակ թերթի խմբագիրը Ա. Քալանթարն էր, այնուհետև՝ Ա. Առաքելյանը, ապա՝ Լեոն։

վրդովելու համար առիթ մը էր»²³։ Այն բանից հետո, երբ սասունցիները դիմադրում են Մուշից այդտեղ եկած 300 զինվորին և նրանց ուղեկցող քրդերին. «...փախստական քուրդերը Մուշ գալով լուր կը տարածեն, թէ սասունցիք յարձակում պիտի գործեն քաղաքի վրա, և ահա կը սկսվի իրարանցում և փախուստ»²⁴։ Թերթի հաջորդ համարում արդեն նկարագրվում է այն եղերական դրությունը, որի մեջ հայտնվել էր Մշո դաշտի հայությունը. «Թիւրքեր իրանց վրէժ դաշտի ժողովրդէն կը լուծեն։ Մշոյ դաշտ սուգի մէջ է։ Անմեղ մարդիկ կը գոհվին, կը նեղվին, փախստական կըլլան։ Գեղեր կը թալանեն. Անթիւ, անհամար ապրանք քշած տարած են։ Ժողովրդին համբերութիւնն ալ հատաւ»²⁵։

Սասունի կոտորածներն «Արձագանք»²⁶-ի էջերում լուսաբանվեցին թերթի թղթակցի²⁷ Կարինից ուղարկված հոդվածների միջոցով։ Սեպտեմբերի 9-ին «Արձագանք»-ում լույս տեսած թերթի թղթակցի կողմից օգոստոսի 25-ի ուղարկված հոդվածը հակիրճ տեղեկություններ է հաղորդում ապստամբության պատճառների և պաշարման մեջ գտնվող Սասունի մասին. «Սասունցիների կառավարութեան մատուցուելիք հարկերը բաւական միջոցից ի վեր անվճար էին. և ահա այդ պատճառաբանութեամբ մի խումբ՝ տեղային հանգամանքներին, ճանապարհներին, կիրճներին ծանօթ քօչարի քիւրդերի առաջնորդութեամբ ուղարկեց 300 կազմ և զինեալ զինուորներ։ Սասնոյ հայ ազգաբնակչութիւնը այդ երևոյթը մի ներքին ի չար դիտաւորեայ մտքի նախադուռ ճանաչելով, կը փորձէ իրենց ազատ երկրից ու հողից թրխացել այդ անկոչ և ապականիչ հիւրերին...»²⁸։

«Նոր Դար»²⁹ թերթը մի քիչ ավելի ուշ և ավելի քիչ³⁰ է անդրադարձել Սասունի կոտորածներին։ Առաջին անգամ Սասունի դեպքերին անդրադարձ է կատարվում

²³ «Մշակ», 1894, N 104, էջ 3:

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Մշակ», 1894, N 105, էջ 3:

²⁶ «Փորձ» (1876-1881 թթ.) ազգային և գրական ամսագրի հրատարակիչը՝ հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ Աբգար Հովհաննիսյանը, 1881 թ. հարկադրված լինելով դադարեցնել ամսագրի գործունեությունը, նույն տարվա վերջին ձեռնամուխ է լինում «Արձագանք» գրական և քաղաքական եռօրյա թերթի հրատարակությանը։ Թերթը հրատարակվել է Թիֆլիսում 1882-1898 թթ. և ուներ ազգային-պահպանողական ուղղվածություն։ Տե՛ս Մխիթարյան Մ. Հ., *XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից* («Փորձ», «Արձագանք»), Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ», 1976, էջ 239:

²⁷ «Արձագանք»-ի Կարինի թղթակիցը, ում ինքնությունն անհայտ է, հետագայում զոհվում է Կարինի կոտորածների ժամանակ։ Տե՛ս Մխիթարյան Մ. Հ., *XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից* («Փորձ», «Արձագանք»), Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ», 1976, էջ 383:

²⁸ «Արձագանք», 1894, N 104, էջ 3:

²⁹ «Նոր Դար» հասարակական-քաղաքական, գրական թերթն ուներ ազգային պահպանողական ուղղվածություն։ Հրատարակվել է 1883-1916 թթ. (ընդհատումով) Թիֆլիսում հրապարակախոս Սպանդար Սպանդարյանի կողմից (տե՛ս Հայ պարբերական մամուլի պատմություն, XVII-XIX դարեր, հատոր 1, Գաիիթ, 2006 թ.):

³⁰ Թերթի՝ սեպտեմբերի 14-ի և նոյեմբերի 1-ի համարներում հոդվածագիրը նաև տալիս է Սասունի դեպքերին ուշ և ոչ հաճախակի անդրադառնալու պատճառների բացատրությունները։ Որպես ուշ անդրադառնալու պատճառ՝ նշվում է թերթի թղթակցի նախորդ հոդվածի տեղ չհասնելը

«Նոր Դար»-ի սեպտեմբերի 14-ի համարում Սասունից գնացած մի երիտասարդի հաղորդած տեղեկությունների հիման վրա³¹: Իսկ Նոր Դարի՝ նոյեմբերի 1-ի համարում լույս տեսած հոդվածը (թղթակցի կողմից Կ. Պոլսից նյութն ուղարկվել է հոկտեմբերի 22-ին) թեև ոչ մանրամասնորեն, բայց նկարագրում է Սասունում տիրող իրավիճակն ու ապստամբության պատճառը. «Սասունի ապստամբների դեմ խիստ միջոցներ է ծրագրած եղել, այսինքն բացարձակ պատերազմ մի բռն հպատակ ժողովրդի դեմ, որը համարձակուել է բարբարոս՝ կառավարիչների դեմ իւր դժգոհութիւնը գէնքով արտայայտելու»³²:

Ընդհանուր առմամբ արևելահայ պարբերականներն օբյեկտիվ գնահատականներ են տալիս Սասունի դեպքերի ծագման պատճառների մասին: Նախ «Մուրճը», քիչ ավելի ուշ նաև մյուս թերթերը քննարկում և ներկայացնում են Սասունում ծավալված իրադարձությունների իրական պատճառները՝ դրան գուցադրելով նաև քննարկվող հարցում Օսմանյան կառավարության գործողությունների հիմնական նպատակների բացահայտումը:

Մեծ տերությունների քաղաքականությունը

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում արևելահայ մամուլում մեծ տերությունների քաղաքականության ընկալումը և ներկայացումը: Պետք է նշել, որ մեծ տերություններից հատկապես քննարկվում և ներկայացվում է Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը: Այդ մասին է վկայում անգամ «Մուրճ»-ի խմբագիր Արասխանյանի այն չափազանցված դիտարկումը, որի համաձայն. «...հայկական խնդիրը ներկայումս, և ամիսներից ի վեր, դառել է անգլիական խնդիր»³³: «Մուրճ»-ի դիտարկումները Մեծ Բրիտանիայի քաղաքականության հարցում ոչ միշտ են ներկայացնում օբյեկտիվ իրականությունը: Այսպես, գլխավոր խմբագիրը Հայկական հարցի լուծման ուղղությամբ տեսնում է միայն մեկ դերակատար՝ Մեծ Բրիտանիան: «Մենք տեսանք, որ Սասունի կոտորածի խնդիրը մանաւանդ Անգլիայում յարուցեց տաճկա-հայկական խնդիրը առհասարակ: Հետևապէս Անգլիայում տրամադիր չէին քննիչ յանձնաժողով կազմելու խնդիրը վերջացնելով՝ հայկական խնդիրը վերջացրած համարել: Հրապարակ էր եկել Տաճկա-Հայաստանում բարեփոխութիւններ մտցնելու խնդիրը...»³⁴:

(տե՛ս «Նոր Դար», 1894, N 151, էջ 3): Իսկ ոչ հաճախակի անդրադառնալով բացատրվում է հետևյալ կերպ. «Սասունի դեպքերն իրաւ հետաքրքիր դեպքեր են. բայց մենք մեզ թոյլ չենք տալ «Նոր Դարի» յարգելի ընթերցողներին փողոցային լուրերով կերակրելու, որպէս անում են շատ թղթակիցներ իրենց գրածներն հետաքրքիր դարձնելու համար: Ուրեմն թո՛ղ մեր դէմ չորսնջան, որ յաճախ չենք գրում այդ մասին, մենք մեր պարտքը՝ թերթի և ընթերցողների առաջ ճանաչում ենք: Զիշտ և հաստատուն լուր ստանալու համար համբերութիւն է պէտք» (տե՛ս «Նոր Դար», 1894, N 183, էջ 3):

³¹ «Նոր Դար», 1894, N 151, էջ 3:

³² «Նոր Դար», 1894, N 183, էջ 3:

³³ «Մուրճ», 1895, N 3-4, էջ 476:

³⁴ «Մուրճ», 1894, N 11-12, էջ 1719: Գնահատականների ծայրահեղությունը երբեմն հասնում էր

«Նոր Դարում» ևս քիչ չեն հրապարակումները, որոնք անդրադառնում են Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը, ինչպես նաև Հայկական հարցը դիտարկվում է բրիտանական երկու կուսակցությունների՝ պահպանողականների և լիբերալների քաղաքականության ֆոնին: Թերթը հիմնականում դրական ակնկալիքներ է կապում Մեծ Բրիտանիայի հետ³⁵: Թերթում անդրադարձ է կատարվում նաև Ֆրանսիայի քաղաքականությանը: Այդուհանդերձ, «Նոր Դարում» չկա նույնքան ոգևորություն Ֆրանսիայի դիրքորոշման հետ կապված: Ավելին, խոսելով Հայկական հարցում Ֆրանսիայի շահի մասին, նշվում է. «Արդեօք մի ինքնավար Հայաստան, բարենորոգում հայկական նահանգներ պետական ինչ շահ պիտի ընծայէին Ֆրանսիային. նրա որ դիրքին, որ ուղղութեան պիտի նպաստէին, - ոչ մի»: Ֆրանսիայի քաղաքականության գլխավոր դրդապատճառ համարելով Անգլիային հակակշռելը՝ հնչակյան հայտնի գործիչ Ս. Սապահ-Գյուլյանն իր պոնակում գրում է, որ «... ներկայումս հայկական խնդրում Ֆրանսիայի դիրքն է՝ բռնել ռուսական ուղղութիւնը, ըստ կարելույն չըվշտացնել Թիւրքիային եւ ի հարկին հակառակել Անգլիային»³⁶:

«Արձագանք» թերթի խմբագրակազմը ևս առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Մեծ Բրիտանիային և նրա քաղաքականությանը: Տպագրված հոդվածներում նկատվում է որոշակի հույս Սասունի կոտորածի՝ Մեծ Բրիտանիայում տեղ գտած արձագանքի՝ հայերի համար ունենալիք դրական հետևանքների հետ³⁷: Այնուամենայնիվ, թերթում հետագա տարիներին արևմտահայության կոտորածի ծավալումը խմբագիրներին ստիպում է վերջնականապես հիասթափվել Եվրոպայից և նրա վարած քաղաքականությունից: Այսպես, 1897 թ. լույս տեսած մի հոդվածում կարդում ենք. «Եւ ի՞նչ եղաւ, ճշմարիտ, ի՞նչ ենք տեսնում այժմ, ո՞վ է ղեկավարում Եւրոպայի քաղաքականութիւնը, ո՞վ է կարգադրում Արևելքի գործերը: Թող տէօրիտիկները դեռ յուսան թէ կարգադրողը Եւրոպան է, բայց փաստերի օղակը ցոյց է տալիս և աղաղակում որ հրապարակի տէրը Թիւրքիան է, այդ հասարակաց անառակը, որից եւրոպական ամեն մի պետութիւն սպասում է իւր բաժինը... Հայոց երկիրն աներուեց, հարիւր հազարաւոր աշխատասէր, քրիստոնէայ, քաղաքակրթութեան ընդունակ ժողովուրդ ցիր և ցան եղաւ աշխարհի բոլոր կողմերը, ենթարկուելով վատաստեռուելու սոսկալի վտանգին, Կրետէն աներուեց, Յունաստանն ստորացաւ, Թեսաղիան աներակների և մոխրի կոյտ դարձաւ և այդ բոլորը Եւրոպայի, քրիստոնէայ Եւրոպայի բարեհաճ համաձայնութեամբ, «քաղաքակրթութեամբ» Եւրոպայի, որ ահա տարիներ շարունակ «ծրագրներ» է կազմում Թիւրքիայի բարենորոգման համար, խօսում է Թիւրքիայի բնաջինջ անելու մասին, ծրագրներ է կազ-

նրան, որ «Հայկական խնդրի գլխաւոր յարուցանող» էր համարվում անգլիական «Daily News» օրաթերթը: Տե՛ս «Մուրճ», 1895, N 1, էջ 126:

³⁵ «Նոր Դար», 1895, N 126, էջ 1: «Նոր Դար», 1895, N 121, էջ 2:

³⁶ «Նոր Դար», 1895, N 135, էջ 1-3:

³⁷ «Արձագանք», 1895, N1, էջ 1:

մում Թիրքիայի բաժանման մասին և այլն ևայլն: Եւ այդ ծրագրերից ո՞րն իրականացաւ: Եւ ոչ մէկը»³⁸:

Նմանատիպ դիտարկումներ են առկա նաև «Մշակ»-ում: Այսպես, 1894 թ. դեկտեմբերյան համարներից մեկում կարդում ենք հետևյալը. «Հիմա երևակայեցէք մեր դրութիւնը մի այնպիսի երկրում, ուր 24 գիւղ այրող և հազարաւորների անգթաբար սրի ճարակ անողները շքանշանի են արժանանում...

Եւրոպան այդ 61-դ յօդուածը դնելով և չիրագործելով, մեզ աւելի թշուառացուց: Թիրք կառավարութիւնն որպէս զի հայաբնակ գաւառներում բարեկարգութիւններ մտցնելու չը ստիպվի մի օր, սիստեմատիկաբար աշխատում է հայերը հարստահարելով, կոտորելով, գաղթեցնելով, հայերը ջնջել և այլ ևս հայաբնակ գաւառներ չունենալ...»³⁹:

Այնուամենայնիվ, արևելահայ մամուլը, խոսելով եվրոպական քաղաքականության մասին, հիմնականում դրական է գնահատում Եվրոպայի և գերակշիռ մեծամասնությամբ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: Ավելին, չափազանց կարևորվում է եվրոպական հասարակական կարծիքի դերը հայության կոտորածների թեմայի միջազգայնացման առումով:

Սասունի կոտորածին վերաբերող փաստական նյութն արևելահայ մամուլի էջերում

Առաջիններից մեկը, որ արձագանքել է Սասունի կոտորածներին, «Մուրճ» լրագիրն էր: Այս առումով պետք է առանձնացնել «Սասնոյ դէպքերը» հոդվածը, որտեղ տրվում են վիճակագրական տվյալներ ինչպես ապստամբների, այնպես էլ հարձակվող մուսուլմանների թվաքանակի վերաբերյալ. «...աներևակայելի արագութեամբ բոլոր շրջակայ կուսակալութեանց զօրքերը դիմեցին ի Մուշ, ուստի մի այլ 7869 հետևակներ, 2000-ի չափ հեծեալներ, և 150 թնդանօթաձիգներ ուղևորեցան ի Սասուն: Ռուսական և պարսկական սահմանագլուխէն սկսեալ բոլոր ցեղերը գունդ-գունդ դիմեցին այնտեղ. միայն Բայազիտի հայդարանցիք 300 հեծեալներով, որով կարելի է գաղափար կազմել այս ահեղ բազմութեան վերայ, որ մէկ ակնթարթի մէջ պաշարեցին Սասնոյ գավառը... Այստեղ գումարած քիւրդերու թիւն է մօտաւորապէս 43000, օսմանեան կառավարութենէն զէնք ու ռազմամթերք ստացած, իրենց ցեղապետներու ու շէյխերու (Շէյխ Զեւան) առաջնորդութեամբ, թորք բանակէն 12300. իսկ հայոց թիւ անյայտ, որովհետև կանայք և մանկունք էլ կըկուէին.- այսինքն որոնք որ զէնք կարենային ճարել – 304 հրացանաւորներ Տաւորիկէն՝ իւր գիւղերով, 741 Գէլիգուզանէն, 208 Շէնիկէն, 160 Սէմալէն, 180 Իշխնձորէն, 34 Հեթինքէն ու 120 Աղբենէն, 208 Ալիանց գիւղերէն»⁴⁰:

«Մուրճ»-ը հետաքրքիր տվյալներ է տալիս նաև Սասունի դէպքերի հետևանքների մասին. «Գէլի 360, Շէնիկ՝ 106, Սէմալ՝ 85, Ալեան՝ 165, Իշխնձոր՝ 78, Աղբին՝

³⁸ «Արձագանք», 1897, N87, էջ 1:

³⁹ «Մշակ», 1894, N 149, էջ 4:

⁴⁰ «Մուրճ», 1894, N 10, էջ 1497, 1498:

66 տներով կ'այրին ամբողջովին, և բնակիչները բոլոր, բացի մաս մը փախստականներէ, սրէ կ'անցին»⁴¹: Մասնո դեպքերի անմիջական հետևանքը ողջ մնացած բնակչության սոսկալի դրության մեջ հայտնվելն էր, քանի որ վարելահողերին, տներին տիրացել էին քրդերը՝ կողոպտելով ողջ ունեցվածքը, հայերի հագից խլելով վերջին շապիկը: «Մուրճ»-ի հաղորդումներից պարզ է դառնում, որ նույնիսկ Մշո դաշտի հայկական գյուղերի՝ Խզլաղաճ, Տատրագոմ, Ս. Յովհաննու վանք, Մառնիկ, Խորոնք, բնակիչները հայտնվել են ծանր դրության մեջ, քանի որ գտնվելով պաշարման մեջ՝ չէին համարձակվում անգամ դաշտ գնալ: Թալանված էր ամբողջ շրջանը, նշվում է, որ օրինակ՝ Մառնիկ հարուստ գյուղից միայն 5000 ոչխար է հափշտակվել⁴²:

«Մշակ» թերթում տպագրված «Մասունի կռիվը» հոդվածում մանրամասն նկարագրվում են ռազմական գործողությունները, ինչպես նաև կոտորածը. «...Այդ կոտորածը մեծ էր: Մի ամբողջ օրվա ընթացքում զօրքը, քիւրդը և համիդիան սրով խողխողում էին հանդիպածներին. Թէ՛ մարդ և թէ՛ կին, թէ՛ պառու թէ՛ երեխայք, առանց խտրութեան մորթվում էին... Անհնարին է այդ եղերական ժամերը մանրամասնօրէն նկարագրել: Եթէ մէկը ներկայ ժամին բարձրանայ Մասնոյ բարձրաբերձ լեռանց գագաթներուն վրա և լայն հայացքով հետախուզէ բոլոր ծակուծուկը, նրա մագերը բիզ բիզ կը կանգնեն: Մարդ սառսուռ է զգում, երբ տեսնում է՝ մայրը կտոր-կտոր յոշուված, գցել են մի ապառաժի տակ, և երկամեայ գաւալը նոյնպէս երկու մաս եղած, դրել են մօր ստինքներին խաչաձև: Ահա մի ուրիշ տեղ, իբրև հաւասարակշռող հակեր, երկու քոյրերը-միսի ծամերից կախուած միսը՝ ձգուած են կաղնի ծառոյ ճիւղերին վրա: Վերջապէս, ամենուրեք նշմարվում են սրտաճմլիկ և աղէկտուր տեսարաններ...»

Թէ՛ այսպէս, թէ՛ այնպէս, այսքան կարող եմք եզրակացնել, որ 7,000 հոգիից այժմ տասներորդը չէ մնացել...»⁴³:

Էլ ավելի համապարփակ էին «Մշակ»-ի՝ նոյեմբերի 12-ի համարում լույս տեսած «Մասունի դեպքերը» հոդվածի հաղորդած տեղեկությունները: Մասնավորապես երկու կողմերի կռիվի ուժերի թվային տվյալները համարյա համընկնում են «Մուրճ»-ի հաղորդած տեղեկություններին, մասնավորապես դեպի Մասուն-Մուշ են շարժվել 7,800 հետևակ, 2,000-ի չափ հեծյալ և 150-ից ավելի թնդանոթներ, իսկ նրանց միացած քրդերի թիվը ևս նշվում է 43.000, որոնք սուլթանական իշխանություններից զենք էին ստացել⁴⁴: Ինքնապաշտպանության դիմած հայերի ընդհանուր թիվը նշվում էր 1960⁴⁵: Ապա օրերի կտրվածքով նկարագրվում են ռազմական գործողությունները:

«Մշակը» ներկայացնում է կատարված ոճրագործության հետևանքը. «Ահա այրուող գիւղերու թիւն. Շատախ գաւառ.-Շենըք, Մեմալ, Խորալըշան, Աղբէք,

⁴¹ Նույն տեղում, էջ 1504:

⁴² Նույն տեղում:

⁴³ «Մշակ», 1894, N 129, էջ 2:

⁴⁴ «Մշակ», 1894, N 131, էջ 1, 2:

⁴⁵ Նույն տեղում:

Խըթան, Հէթինք: Սասուն գաւառ.- Գէլիէ-Գուգան, Հասել, Մխիթար, Մէրկեր, Էղկարտ, Սրդանք, Հարթք, Դուալինք, Հագման, Փուրի, Հլօղինք, Խըլիովիտ, Տալտորիկ: Խիան գաւառ.- Իշխընձոր, Արթկունք, Սէֆիտ:

Առանց այրուելու կողոպտուած ու աներուած գաւառներ.- Փասնաց գաւառի ամբողջ գիւղեր, Խիանու գիւղեր՝ Սպղուն, Փառկայ, Պահմտայ, Արս, Հեղին և Ընկուզնակ. Խուշպայ գիւղեր.- Ընձաքար, Գեշերվան, Ահարոնք, Կոկնաձոր, և այլն տեղեր, որոնք լաւ ծանօթ չենք: Այրուող գիւղերու ամբողջ եկեղեցիք այրուած են, քառասունի չափ քահանաներ կոտորուած են, իսկ մարդոց թիւը դեռ անյայտ է: Եկեղեցեաց սրբազան անօթք և գոյք քրդաց քով կը գտնուին, յայտնապէս պայուսակաց մէջ դնելով՝ գիւղ կը պտըտցնեն անտարան, խաչ, սկիհ, բուրվառ, շուրջառ և այլն բաներ...»⁴⁶:

«Արձագանքի» թղթակիցը 1894 թ. օգոստոսի 27-ին Կարինից գրում է, որ քրդերը, օգտվելով տիրող անիշխանությունից, կառավարության բացահայտ թելադրանքով դուրս եկան Սասունի և Մուշի սահմաններից և հարձակվեցին Մուշ քաղաքի մերձակա հայաբնակ գյուղերի վրա, ահ ու սարսափ տարածելով՝ հրի ու սրի մատնեցին ամեն ինչ: Այս ավերակներում է, որ դեռ շատ շատերին է սպառնում այդ մշուշոտ ապագան: Երկրի յուրաքանչյուր կողմում ահ ու սարսափ է տիրում, իսկ երթևեկությունը՝ Կարինից սկսած մինչև Մուշ, Բաղեշ, Սասուն և մյուս խորքերը, անգամ գյուղից գյուղ, դադարել է: Առանց մանրակրկիտ խուզարկության կարգադրված է չընդունել ու չհանձնել թղթածրարները: Անցաթուղթ տրամադրելը բոլորովին արգելվում է. պանդխտությունից նոր վերադարձող ամեն մի անհատ ոստիկանների խիստ և աչալուրջ հսկողությամբ պետք է հանձնվի կենտրոնական կառավարությանը: Թղթակիցը վերջում եզրակացնում է, որ այս կերպ շարունակվելու դեպքում այդ հայաբնակ գավառներն անտարակույս կվերածվեն մի անմարդաբնակ անապատի՝ զրկվելով իրենց տիրական ու տնտեսական տարրից⁴⁷:

«Նոր Դար» լրագրում 1894 թ. լույս տեսած Սասունի դեպքերը ներկայացնող «Սասունցիների ապստամբությունը» հոդվածը հիմնված է Կ. Պոլսի թղթակցի հաղորդած տեղեկությունների վրա և թեև ոչ մանրամասներով, սակայն նկարագրվում է Սասունում տիրող ծանր դրությունը⁴⁸:

Այսպիսով, չնայած ցարական գրաքննությանը, թղթակիցների սակավությանը և այլ խոչընդոտներին, այնուամենայնիվ արևելահայ մամուլը հարուստ է Սասունի կոտորածը լուսաբանող նյութերով: Ավելին, դրանցում ամփոփված փաստական նյութը կարևոր է այդ սահմոկեցուցիչ ջարդերի պատմության ուսումնասիրության համար:

⁴⁶ «Մշակ», 1894, N 133, էջ 2:

⁴⁷ «Արձագանքի» թղթակցի հոդվածը լույս էր տեսել թերթի սեպտեմբերի 11-ի համարում, «Արձագանք», 1894, N 105, էջ 3:

⁴⁸ «Նոր Դար», 1894, N 183, էջ 3:

ՍԱՍՈՒՆԻ՝ 1894 Թ. ԿՈՏՈՐԱԾԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Նարինե Հակոբյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում արևելահայ մամուլում Սասունի՝ 1894 թ. կոտորածի վերաբերյալ տեղ գտած արձագանքներին: Այդ նպատակով հետազոտության են ենթարկվել 1890-ական թվականներին արևելահայ իրականության մեջ եռանդուն գործունեություն ծավալած «Մշակ», «Նոր Դար», «Արձագանք» թերթերի և «Մուրճ» ամսագրի հրապարակումները: Քննության է ենթարկվում դրանցում Սասունի՝ 1894 թ. կոտորածի վերաբերյալ առկա փաստական նյութը: Վերլուծվում է արևելահայ մամուլում մեծ տերությունների քաղաքականության ընկալումը: **Բանալի բառեր՝** արևելահայ մամուլ, Սասունի կոտորած, Մեծ տերություններ, Օսմանյան կայսրություն, Արդու Համիդ II:

THE COVERAGE OF 1894 SASSOUN MASSACRE IN EASTERN ARMENIAN PRESS

Narine Hakobyan

SUMMARY

The current paper studies the responses of Sassoun massacre of 1894 in Eastern Armenian press. For this purpose the publications of “Mshak,” “Murj,” “Nor Dar,” and «Ardzagank» periodicals are observed, which occupied an important place in Eastern Armenian reality. The article analyzes the factual materials published in the above mentioned newspapers related to Sassoun Massacre. The perception of Great Powers’ policy in Eastern Armenian press is also analyzed.

Keywords: Eastern Armenian Press, Sassoun Massacre, Great Powers, Ottomon Empire, Abdul Hamid II.

САСУНСКАЯ РЕЗНЯ 1894 ГОДА НА СТРАНИЦАХ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ ПРЕССЫ

Нарине Акопян

РЕЗЮМЕ

В данной статье рассмотрены отклики Сасунской резни 1894 года в восточно-армянской прессе. С этой целью были проанализированы публикации журналов «Мшак», «Мурдж», «Нор-Дар» и «Ардзаганк», которые занимали важное место в восточноармянской действительности. Особое внимание уделено освещению восприятия политики великих держав в восточноармянской прессе.

Ключевые слова: Восточноармянская пресса, Сасунская резня, Великие державы, Османская Империя, Абдул Гамид II.

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Սեդա Պարսամյան

Հայոց ցեղասպանության տարիներին երիտթուրքական կառավարության կողմից իրագործված մշակութային ցեղասպանությունը ներառել է ոչ միայն հայկական նյութական և հոգևոր մշակույթի բացառիկ արժեքների ոչնչացումը, այլև առաջին հերթին այդ արժեքները կրողների, ստեղծողների և տարածողների՝ հայ մտավորականության և հոգևորականության զանգվածային ու կանխամտածված բնաջնջումը:

Հատկանշական է, որ genocide (գենոցիդ, ցեղասպանություն) հասկացության հիմնադիրն ու առաջին տեսաբանը՝ Ռաֆայել Լեմկինը, իր հիմնարար աշխատության («Առանցքի երկրների կառավարումը բռնազավթված Եվրոպայում») մեջ բնորոշելով մարդկության դեմ ուղղված ծանրագույն այս հանցագործությունը, առանձնացրեց և նկարագրեց նրա ութ բաղադրիչները, որոնք են՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական¹: Մասնավորապես մշակութային ցեղասպանության մեջ նա ներառեց խմբի ազգային ավանդույթների, լեզվի արգելքը, մշակութային արժեքների՝ հուշարձանների, արխիվների, գրադարանների ոչնչացումը, ինչպես նաև խմբի մշակույթն ու արվեստը ներկայացնող մարդկանց բնաջնջումը²: Հիմք ընդունելով Ռ. Լեմկինի սահմանած ցեղասպանության հայեցակարգը՝ 1947-1948 թթ. Միավորված ազգերի կազմակերպությունում մշակվեց «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան, որի առաջին նախագծի (Քարտուղարության նախագիծ (Secretariat draft) I հոդվածի 3-րդ կետով՝ վերնագրված «Խմբի յուրահատուկ հատկանիշների ոչնչացում», մշակութային ցեղասպանություն է համարվել նաև «...այն մարդկանց բռնի և պարբերաբար արտաքսումը, ովքեր ներկայացնում են տվյալ մշակութային խումբը»³: Չնայած այս ձևակերպումը մշակութային ցեղասպանությունը բնորոշող մյուս սահմանումների հետ կոնվենցիայի վերջնական տարբերակ չներառվեց⁴, այնուամենայնիվ դրա հեղինակը՝ Ռ. Լեմկինը, իր հուշերում և արխիվային գրագրություններում պնդում է, որ մշակու-

¹ St' u Lemkin R., *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress*, Washington: Carnegie Endowment for International Peace, 1944, pp. 82-90:

² St' u նույն տեղում, էջ 84, 85:

³ Secretariat Draft: First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447], [http://www.preventgenocide.org/law/convention/drafts/, դիտվել է՝ 19.08.2015].

⁴ Հիմնական փաստարկն այն էր, որ կոնվենցիան ուղղված է մարդկանց զանգվածային կոտորածների կանխարգելմանն ու պատժին՝ որպես միջազգային քրեական հանցագործության առանձին տեսակ, հետևաբար մշակութային բաղադրիչի ներառումը կթուլացներ փաստաթղթի ուժը որպես այդպիսին: St' u Fournet C., *The Crime of Destruction and the Law of Genocide*, UK, Ashgate, 2007, pp. 43-46:

թային խմբի կանխամտածված ոչնչացումը կարող է ենթադրել «տվյալ ազգի մահը՝ հոգևոր և մշակութային առումով», ինչը կարող է ազդարարել նաև նրա ֆիզիկական բնաջնջման սկիզբը⁵։ Հատկանշական է, որ Լեմկինի կողմից մշակույթի ոչնչացման հիմնախնդրին հատկացված ուշադրությունը և մասնավորապես ցեղասպանության հայեցակարգ մտավորականության բնաջնջման երևույթի ներառումը մեծապես պայմանավորված են եղել Հայոց ցեղասպանությամբ։ Սա պատահական չէ, քանի որ ոչ մի այլ ցեղասպանության պարագայում մշակութային խմբի կամ մտավորականության բնաջնջումն այդչափ զանգվածային և համակարգված բնույթ չի կրել՝ դառնալով ցեղասպանական ծրագրի իրագործման առաջնային փուլերից մեկը։ Ավելին, Լեմկինը, թերևս, նկատի ունենալով Հայոց ցեղասպանության օրինակը, ցեղասպանության թիրախ դարձած մշակութային խումբ իրավացիորեն ներառում է նաև հոգևոր առաջնորդներին, «ովքեր հոգևորականներ լինելուց բացի հաճախ նաև փիլիսոփաներ, գրողներ, ազգային գործիչներ են»՝ չգատելով անգամ «կրոնական ու մշակութային հաստատությունները, որոնցում մարմնավորված է տվյալ էթնոսի հոգևոր կյանքը»⁶։

Խոսել Հայոց ցեղասպանության իրագործման առաջնային փուլերից մեկի՝ հայ մտավորականության զանգվածային բնաջնջման մասին և գատել հայ հոգևորականությանը՝ մեր կողմից առավել քան սխալ կլիներ։ Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունում քաղաքական պայմանների բերումով հայկական հոգևոր հաստատությունները միաժամանակ կրթամշակութային հաստատություններ են եղել, իսկ հոգևորականները, համապատասխանաբար՝ մտավորական-հոգևորականներ, ուսուցիչներ, գրողներ, մշակույթի գործիչներ և այլն։ Հետևաբար, Օսմանյան կայսրության հայ հասարակության համար մտավորականություն⁷ կոչված հավաքական խումբ անհրաժեշտ ենք համարում ներառել նաև հոգևորականությանը։

Հայոց ցեղասպանության ընթացքում հասարակության մշակութային խումբ կազմող մտավորականության բնաջնջման անհրաժեշտությունն ու կանխամտածվածությունն արտացոլված են ինչպես երիտթուրքական վարչակարգի կողմից ընդունված որոշումներում, այնպես էլ այդ որոշումներն իրականացնելու գործողություններում։ Ստորև բերվածը, թերևս, Հայոց ցեղասպանության ընթացքում մտավորականության ոչնչացման հետ առնչվող առ այսօր մեզ հայտնի առաջին փաստաթուղթն է, որը վերաբերում է մշակույթի հետ անմիջականորեն կապված սոցիալ-մասնագիտական առանձին խմբերի՝ ուսուցիչների և քահանաների ոչն-

⁵ St' u Frieze Donna-Lee, "Genos-the Human Group": How the Concept of "Culture" Underscores Raphael Lemkin's Notion of "Genocide," *The Crime of Genocide: Prevention, Condemnation and Elimination of Consequences, Proceedings of International Conference* (Yerevan, December 14-15, 2010, MFA of Armenia, AGMI), Yerevan, 2011, pp. 166-167:

⁶ Նույն տեղում, էջ 167:

⁷ Մտավոր աշխատանքով զբաղվող, գիտության, կրթության, մշակույթի ոլորտում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող մարդկանց խումբ, որոնք հատկապես առաջատար դիրք ունեն մշակութային, հասարակական-քաղաքական շրջանակներում, այլ կերպ ասած՝ հասարակության ինտելիգենցիա (Intellectuals): St' u Աղայան Է., *Արդի հայերենի բացադրական բառարան*, հատ. 2, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, էջ 1033:

չացմանը: Այսպես, մոտավորապես 1914 թ. դեկտեմբեր-1915 թ. հունվար ամիսներով թվագրվող փաստաթղթի՝ հայտնի «10 պատվիրաններ» անունով⁸, 5-րդ կետով նախատեսվել է «իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, քահանաներին և ուսուցիչներին ոչնչացնելու նպատակով»⁹:

Ինչպես ցույց է տալիս դեպքերի հետագա ընթացքը, այս որոշումներն անմիջապես գործի են դրվել: 1915 թ. հունվարից սկսած՝ հայ մտավորականության զանգվածային ձերբակալություններ են տեղի ունեցել Արևմտյան Հայաստանի նահանգային կենտրոններում: Այսպես, հունվարին Խարբերդ և Մեզրե քաղաքներում ձերբակալվել են հայ անվանի ուսուցիչներ, գրողներ, հոգևորականներ, կուսակցական առաջնորդներ¹⁰: Մայիսին բանտարկվել են Խարբերդի հոգևոր առաջնորդ Պսակ Ծ. վրդ. Տեր-Խորենյանը, գավառի անվանի ուսուցիչներ Երովսանն ու Թվատինցին, «Եփրատ» և ֆրանսիական քոլեջների ուսուցիչներն ու պրոֆեսորները¹¹: Փետրվարին մտավորականության ձերբակալությունների ալիքը հասնում է Էրզրումի նահանգ. միայն Էրզրում քաղաքում ձերբակալվում են շուրջ 200¹², իսկ Խոտորջուրի շրջանում՝ 50-ից ավելի հայ մտավորականներ, որոնց մեծ մասը՝ ուսուցիչներ ու քահանաներ¹³: Մարտի 28-ին և հունիսի 13-ին 100-ից ավելի խմբերով ձերբակալվել են Սեբաստիայի հայ մտավորականները՝ ուսուցիչներ, ազգային-հասարակական գործիչներ, բժիշկներ, փաստաբաններ և այլք¹⁴: Դիարբեքիում հայ մտավորականության զանգվածային ձերբակալություններն սկսվել են ապրիլի 16-ից և շարունակվել մինչև մայիսի 27-ը. ձերբակալվածների թիվը հասել է 950-ի, այդ թվում՝ ուսուցիչներ, արվեստագետներ, ազգային գործիչներ, հոգևոր առաջնորդներ, քահանաներ և այլն¹⁵:

⁸ Փաստաթուղթը Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի խորհրդակցության ընթացքում ընդունված որոշումների գրառումն է: Խորհրդակցությանը ներկա են եղել ներքին գործերի նախարար Թալեաթը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ և «Հատուկ կազմակերպության» ղեկավարներ Բեհաէդդին Շաքիրը, Նազըմ բեյը, ներքին գործերի հասարակական անվտանգության վարչության պետ Իսմայիլ Ջանվոլադը, օսմանյան բանակի գլխավոր շտաբի քաղաքական վարչության պետ գնդապետ Մեյֆին: Փաստաթուղթը գրի է առել ներքին գործերի նախարարության հետախուզական վարչության պետ գնդապետ Ահմեդ Էսսադը (տե՛ս Dadrian V. N., *The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians. – Holocaust and Genocide Studies*, 1993, Volume 7, No. 2, pp. 173-201):

⁹ Նույն տեղում, էջ 174:

¹⁰ Տե՛ս Վահէ Հ., *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը*, Նիւ Եորք, 1959, էջ 1419:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության եւ իր հօրին աղէտալի 1915 տարին*, խմբագիր՝ Գալայճեան Ա., Նիւ Եորք, 1985, էջ 156:

¹³ Տե՛ս Հուլյունեան Հ. Յ., Հաճեան Հ. Մ., *Յուշամատենան Խոտորջուրի*, Վիեննա, Միսիթարեան տպ., 1964, էջ 531, 556:

¹⁴ Տե՛ս Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 104, 105:

¹⁵ Նույն տեղում, էջ 259: Դիարբեքիում ձերբակալված հայ մտավորականության թվաքանակի վերաբերյալ պոլսահայ լրագրող, հասարակական գործիչ Սեպուհ Ակունին նշում է 980 թիվը (տե՛ս Ակունի Ս., *Միլիոն մը հայերու ջարդերի պատմությունը*, Կ. Պոլիս, տպ. Յ. Ասատուրեան որդիք, 1920, էջ 64):

Համաձայն գերմանացի միսիոներ Յո. Լեփսիուսի հաղորդած տվյալների՝ չորս շաբաթ շարունակ՝ ապրիլի 21-ից մինչև մայիսի 19-ը, ներքին գավառների բազմաթիվ քաղաքներում իշխանությունները ձեռնարկել են անվանի հայ քաղաքացիների պարբերական ձերբակալություններ և աքսոր, մասնավորապես շուրջ 100-ը՝ Իզմիրում, 80-ը՝ Պարտիզակում, 40-ը՝ Բուրսայում, նույնքան՝ Բանդրմայում, 30-ը՝ Բալըքեսիրում, 80-ը՝ Ադաբազարում, 200-ը՝ Կեսարիայում և այլուր¹⁶։ Լեփսիուսի բնորոշմամբ. «...խոսքը գնում է համընդհանուր միջոցառման մասին, ինչը նպատակ ուներ հայ ժողովրդին գրկել իր առաջնորդներից և հռետորներից, որպեսզի արտաքսումները կարելի լիներ իրագործել առանց աղմուկի և դիմադրության»¹⁷։

Հայ մտավորականության զանգվածային ձերբակալությունների ալիքը կայսրության մայրաքաղաք է հասել ապրիլի վերջերին՝ իրագործվելով նախապես մշակված գործողությունների արդյունքում և խիստ գաղտնիության պայմաններում։ Գրիգորիս ծ. վարդ. Պալաքյանի¹⁸ վկայությամբ Կ. Պոլսի ոստիկանապետ Բեդրի բեյը դեռ շաբաթներ առաջ մայրաքաղաքի ոստիկանական բոլոր բաժանմունքներին ուղարկել էր կնքված ծրարներ՝ որոշված օրը բացելու և ծայրաստիճան գաղտնիության պայմաններում ճշգրտորեն գործադրելու հրահանգով¹⁹։ Կնքված ծրարները պարունակել են ձերբակալության ենթակա հայ մտավորականության ու հոգևորականության ցուցակները²⁰։ Համաձայն այդ ցուցակների՝ 1915 թ. ապրիլի 11(24)-ին՝ շաբաթ լույս կիրակի գիշերվա ընթացքում, Կ. Պոլսում ձերբակալվել են հարյուրավոր հայ անվանի մտավորականներ²¹։ Ձերբակալվածների թվում եղել են գրող-հրապարակախոսներ, երեսփոխաններ, ուսուցիչներ, երաժիշտներ, հոգևո-

¹⁶ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ Մ. Գ. Ներսիսյանի, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, «Հայաստան», 1991, էջ 469։

¹⁷ Նույն տեղում։

¹⁸ Հոգևորական, ազգային-հասարակական գործիչ, 1915 թ. ապրիլի 11(24)-ին ձերբակալված, Չանդըրը աքսորված և հրաշքով փրկված քիչ թվով մտավորականներից։

¹⁹ Տե՛ս Պալաքյան ծ. վարդ. Գ., *Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրությունէն. Պեռլի-նէն դէպի Զօր 1914-1920*, հատ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպ., 1922, էջ 76։

²⁰ Տե՛ս նույն տեղում։

²¹ Մայրաքաղաքում ձերբակալված հայ մտավորականության թվաքանակի վերաբերյալ աղբյուրները տարբեր են։ Այսպես, պոլսահայ մտավորական, գրող Թեոդիկի (Թեոդոս Լափճինճյան (1873-1928), 1915 թ. ձերբակալված, Բելեմեդիկ աքսորված, սակայն հրաշքով փրկված սակավաթիվ մտավորականներից) հաղորդած տվյալների համաձայն, ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերվա ընթացքում ձերբակալվել են 270 անվանի մտավորականներ, որոնց թիվը հետագա օրերին հասել է 800-ի (տե՛ս Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Բ տպագրութիւն, Երևան, «Նաասարդ», 1985, էջ 20-112)։ Գրիգորիս ծ. վարդ. Պալաքյանի վկայությամբ՝ «շոգենաւր լեցուեցաւ 220է աւելի ձերբակալեալներովս», որոնցից 75-ը՝ Այաշ, իսկ 150-ից ավելին՝ Չանդըրը աքսորվեցին (տե՛ս Պալաքյան ծ. վարդ. Գ., նշվ. աշխ., էջ 82, 86-90, 103)։ Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանը նշում է մոտ 500 թիվը՝ «ընդհանրապէս մտաւորական դասակարգէն, եկեղեցական, բժիշկ, խմբագիր, փաստաբան, ուսուցիչ, կուսակցական եւ այլն», որոնցից «250է աւելի անձեր աքսորուեցան Չանդըրը (Քաթթեմունի նահանգ) և Այաշ (Գաղատիա)» (տե՛ս Զաւէն Արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ*, Գա-հիրէ, տպ. «Նոր Աստղ», 1947, էջ 97, 133)։

րականներ, լրագրողներ, բժիշկներ, փաստաբաններ, ազգային-հասարակական գործիչներ և այլն²²: Վերջիններիս Կ. Պոլսի «Մեհտերհանե» կոչված կենտրոնական բանտում մեկ օր պահելուց հետո գիշերով տարել են Սիրքեհի նավամատույցը, ապա շոգենավով փոխադրել Հայդար Փաշայի կայարան, որտեղից՝ Սինճանքեօյ²³: Ապրիլի 24-ին Անկարայի նահանգ ուղարկված մի հեռագրով տեղեկացվել է, որ «ձերբակալված հայերն ուղարկվելու են Այաշ», և պահանջվել, որպեսզի Այաշի ռազմական պահեստը պատրաստվի այս իրադարձության համար²⁴: Հաջորդ օրն ուղարկված մեկ այլ հեռագրով ներքին գործերի նախարարությունը հրահանգել է ժամանելուց հետո մայրաքաղաքի շուրջ 180 ձերբակալվածներին բաժանել երկու խմբի և տեղափոխել Այաշ ու Չանդըրը²⁵: Իրականում ձերբակալվածների թիվն ավելի մեծ է եղել, քանի որ, համաձայն օսմանյան վարչապետական արխիվում պահվող փաստաթղթերի, Այաշում հսկողության տակ է առնվել 71 մարդ, իսկ Չանդըրըում՝ 155 մարդ²⁶:

Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ ներքին գործերի նախարարության վերոնշյալ հրահանգներն անմիջապես գործի են դրվել: Թեոդիկի վկայությամբ Սինճանքեօյում մտավորականների քարավանը բաժանվել է 2 խմբի. ոստիկանների ուղեկցությամբ 84 հոգու՝ Այաշ, մյուսներին՝ Գադատիայով Չանդըրըի են աքսորել, որտեղ նրանց «վիճակուեցաւ մահերուն ամենէն անգութներովը»²⁷:

Հայ մտավորականների և հոգևորականների զանգվածային ձերբակալությունները, աքսորն ու ոչնչացումը շարունակվել են նաև հունիս-հուլիս-օգոստոս ամիսներին: 1915 թ. հուլիսի 18-ին Անկարայի փոխնահանգապետ Աթոֆ բեյը Յոզղաթի մյութեսերիֆ Ջենալ բեյին ուղարկած ծածկագիր հեռագրում հետևյալն է հաղորդում. «Ձեր գաւառին մէջ բնակող Հայերէն՝ կոմիտէներու պատկանողներու կամ այդպէս կարծուածներու ներկայութիւնը, մասնաւորապէս ուսուցիչներու, դեղագործներու, բժիշկներու, կրօնականներու, վաճառականներու, փաստաբաններու, ըմբոստական գաղափարներ տարածողներու ներկայութիւնը ներկայի ապահովութեան եւ երկրին ապագայ փրկութեան վնասակար ու վտանգաւոր ըլլալով, կը խնդրեմ որ ձերբակալել տաք այդպիսի անհատները եւ զանոնք դրկէք հսկողութեան տակ Զորի կողմերը, որ մասնաւորապէս յատկացուած է այդ տեսակի մար-

²² Մտավորականների անվանացանկը տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականություն...*, էջ 10-15, իսկ ցանկն ըստ կենսագրականների տե՛ս Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականության, էջ 20-112:

²³ Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականություն...*, էջ 10, ինչպես նաև՝ Պալաքեան ծ. վարդ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 79-83:

²⁴ Ներքին գործերի նախարար Թալեաթի՝ 24 ապրիլ, 1915 թվակիր ծածկագիր-հեռագիրը, ըստ օսմանյան վարչապետական արխիվի [Başbakanlık Osmanlı Arşivi], մեջբերված է՝ Akçam T., *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton: Princeton University Press, 2012, pp. 184, 185:

²⁵ Հեռագրի մանրամասն բովանդակությունը տե՛ս նույն տեղում, էջ 185:

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականություն...*, էջ 11, 229:

դերու...»²⁸: Հուլիսի 23-ին ոստիկանները, ներխուժելով Յոզղաթի հայ առաջնորդարան, ձերբակալում և իր խորհրդականների հետ բանտ են ուղեկցում տեղի հոգևոր առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանին²⁹: Երեք օր անց՝ հուլիսի 26-ին, վերջիններիս է միանում քաղաքի՝ թվով 472/482³⁰ մտավորականների քարավանը: Այս մասին Կեսարիայի 15-րդ զորագնդի հրամանատարի փոխանորդ Շեհաբեդդինը 1915 թ. հուլիսի 27-ին հայտնում է Անկարայի 5-րդ զորաբանակի հրամանատարի փոխանորդին. տեղեկագրում ասվում է. «... Պատիւ ունիմ, ձեզի իմացնելու որ Եոզղատի զինուորագրութեան հատուածի նախագահին հաղորդագրութեան համաձայն 472 (Չորս հարիւր եօթանասուն երկու) հոգիանոց հայերու առաջին կարաւանը, Առաջնորդը, քահանաները եւ երեսելիները ի գլուխ ղրկուեցան երջանիկ պայմաններու մէջ, երէկ կէսօրէ առաջ Եոզղատ-Ջիլէ ճամբով»³¹: Մտավորականների այս խումբը աքսորվում և օգոստոսի 6-ին Սեբաստիայի կուսակալ Մուամմեր բեյի հրամանով սպանվում է Սեբաստիայից մոտ 4 ժամ հեռավորության վրա գտնվող Գարտաշլարի ձորերում³²:

Իրենց հոտի հետ խոշտանգվել ու նահատակվել են Կարինի հոգևոր առաջնորդ Սմբատ եպս. Սահատեթյանը, Բաղեշի առաջնորդ Սուրեն ծ. վրդ. Գալեմյանը, Բրուսայի առաջնորդ Պարզն ծ. վրդ. Դանիելյանը, Տրապիզոնի առաջնորդ Գևորգ ծ. վրդ. Թուրեյանը, Վանի Կտուց անապատի վանահոր տեղապահ Եղիազար ծ. վրդ. Պետրոսյանը, Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան ծ. վրդ. Հակոբյանը և բազմաթիվ այլ հոգևորականներ³³: 1915 թ. օգոստոսի 7-ին Կ. Պոլսի կենտրոնական բանտի տնօրեն Իբրահիմ Խայրին, անձամբ ժամանելով Արմաշ, կազմակերպել է տեղի Չարխափան Ս. Աստվածածին կոչված հայտնի դպրեվանքի հոգևորականության, այդ թվում և տեսուչ Մեսրոպ եպիսկոպոս Նարոյանի աքսորը³⁴:

Հայ մտավորականներն ու հոգևորականները, զանգվածաբար ձերբակալվելուց և բազմաթիվ խոշտանգումների ենթարկվելուց հետո, հաճախ մահանում էին բան-

²⁸ Գրիկեր (Գրիգոր վարդապետ Կերկերյան), *Յոզղաթի հայասպանութեան վաւերագրական պարմութիւնը*, Նիւ Եորք, 1980, էջ 187:

²⁹ Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան...*, էջ 305:

³⁰ Յոզղաթի աքսորված ու սպանված հայ մտավորականության թվաքանակի վերաբերյալ աղբյուրները տարբեր են. Թեոդիկը նշում է 482 (տե՛ս նույն տեղում, էջ 305), Գրիգոր վարդապետ Կերկերյանը՝ 472 թվաքանակը, այդ թվում՝ հոգևոր առաջնորդը, յոթ քահանաներ, տասնհինգ ուսուցիչներ, մտավորականներ, բժիշկներ, դեղագործներ և այլն (տե՛ս Գրիկեր, նշվ. աշխ., էջ 117, 185, 189, 190):

³¹ Գրիկեր, *նշվ. աշխ.*, էջ 188, 189:

³² Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան...*, էջ 305, Գրիկեր, *նշվ. աշխ.*, էջ 117, 189, 190:

³³ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում..., 1991, էջ 408, 409:

³⁴ 1889 թ. մենաստանում հաստատվել է Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի «կղերանոց»-ը, որտեղ մինչև 1914 թ. որպես տեսուչ հաջորդաբար պաշտոնավարել են Օրմանյան, Դուրյան սրբազաններն ու Թորգոմ, Բաբկեն, Մեսրոպ Ծ. վարդապետները: Արմաշի դպրեվանքում ուսանած բազմաթիվ հոգևորականներ ու կրթական գործիչներ մեծ դեր են կատարել արևմտահայ կրթական, մշակութային կյանքի զարգացման գործում: Այդ գործիչների մեծ մասը ձերբակալվել, աքսորվել ու սպանվել է Հայոց ցեղասպանության ընթացքում: Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան...*, էջ 358, 359:

տերում: Մի մասին ոչնչացնում էին բնակավայրերից որոշ հեռավորության վրա գտնվող ամայի վայրերում, մյուսներին՝ աքսորում անապատներ:

Ինչպես համիդյան կոտորածների, այնպես էլ Հայոց ցեղասպանության ընթացքում առանձնակի դաժան ու մոլեռանդ եղանակներով են սպանվել հայ հոգևորականները: Գիտակցելով եկեղեցու և հոգևորականության կարևորագույն դերը հայ ժողովրդի կյանքում՝ կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան առավել վտանգավոր էր համարում նրանց գոյությունը՝ հետևողականորեն պարտադրելով ենթակա մարմիններին ամենադաժան ձևով հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Այս առումով հատկանշական է Թալեաթի՝ Հալեպի նահանգապետին ուղղած 1915 թ. դեկտեմբերի 1-ի գաղտնագիր հրամանը, որում մասնավորապես ասվում է. «Հակառակ անոր որ ծանօթ անձնատրույթեանց (հայերու) կղերական դասակարգին գոյութիւնը ջնջելու համար ամէնէն աւելի աշխատիլ պետք է, կիմանանք որ այդպիսիներ Սուրիոյ եւ Երուսաղէմի պէս կասկածելի տեղեր կը դրկուին: Ասանկ թոյլտուութիւն մը աններելի յանցանք է: Այդ կարգի խոռվարարներուն աքսորավայրը անէութիւնն է: Կը յանձնարարեմ որ ըստ այնմ գործողութիւններ կատարէք»³⁵:

Ինչպես իրավացիորեն նկատել է արաբ իրավաբան Մուսա Բրենսը, մասնավորապես հայ մտավորականության կանխամտածված ու զանգվածային ոչնչացումը կամ «Հայ մտքի գլխատումը» երիտթուրքական կառավարության կողմից, թերևս, «ստորակայության բարդույթով» պայմանավորված վրիժառություն էր³⁶:

Երիտթուրքական կառավարությունը ձգտել է մեկուսացնել նաև հայ ժողովրդի շահերը Բարձր դռան առջև ներկայացնող և պաշտպանող ազգային-եկեղեցական կառույցն ու նրա ղեկավարին: 1916 թ. հուլիսի 28-ի՝ Օսմանյան կայսրության արդարադատության և դավանանքների նախարարության կողմից ներկայացված և սուլթանական բարձր հրամանով վավերացված որոշման համաձայն՝ միավորվեցին Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես նաև Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները³⁷: Այդ որոշման համաձայն՝ Կ. Պոլսի պատրիարքության փոխարեն նախատեսվում էր կայսրության մայրաքաղաքում ունենալ Էջմիածնի Մայր Աթոռից անկախ և Երուսաղեմի նստավայրով կաթողիկոս-պատրիարքի ներկայացուցիչ առաջնորդական տեղապահ՝ այդպիսով, փաստորեն վերացնելով մայրաքաղաքում իր հոտի շահերը ներկայացնող և նրանց պաշտպանությունն իրականացնող կառույցի գոյությունը³⁸: Այս որոշմանը հաջորդել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանի աքսորը Բաղդադ, ապա Մոսուլ³⁹: Թուրքա-

³⁵ Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը. հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա*, Երևան, «Արևիկ», 1990, էջ 102, 103:

³⁶ Մուսա Բրենս, *Անպարիժ ցեղասպանությունն մը հայասպանութիւնը*, Պէյրութ, 1969, էջ 69, 70:

³⁷ Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 192:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 193:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 197-232: Զավեն արք. Եղիայանի բոլոր տեսակի ջանքերն ու փորձերը՝ կանխելու համար արևմտահայության ցեղասպանությունը, մատնվել են անհաջողության: Մասնավորապես պատրիարքի հանդիպումները Թուրքիայի արդարադատության և դավանանքների

կան իշխանությունները նույն կերպ են վարվել նաև Սսի կաթողիկոսի հետ. Մահակ Բ Խաչապյանն աքսորվել է Բար (Հալեպի մոտ), ապա Երուսաղեմ⁴⁰:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության սկզբում երիտթուրքական կառավարության կողմից հայ մտավորականության և հոգևորականության, որոնք նաև հասարակության առաջնորդներն էին, հետևողական մեկուսացումն ու բնաջնջումը միտված էին խախտելու տվյալ խմբի սոցիալ-մշակութային համախմբվածությունը՝ այդպիսով նաև ճանապարհի հարթելով ֆիզիկական ու կենսաբանական ցեղասպանության իրագործման համար: Հայ մտավորականության, տվյալ դեպքում նաև հոգևորականության բնաջնջումը՝ որպես մշակութային ցեղասպանության կամ էթնոցիդի յուրօրինակ դրսևորում, անկասկած, պետք է համարել այս երևույթի դասական օրինակներից մեկը:

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Սեդա Պարսամյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածի շրջանակներում քննարկվում են հետևյալ հիմնական հարցերը.

- հայ մտավորականության, տվյալ դեպքում նաև հոգևորականության բնաջնջումը դիտարկել ենք որպես մշակութային ցեղասպանության (համաձայն Ռ. Լեմկինի ցեղասպանության հայեցակարգի) կամ էթնոցիդի յուրօրինակ դրսևորում և այս երևույթի դասական օրինակ:
- Հայոց ցեղասպանության սկզբում հայ մտավորականության՝ որպես հասարակության առաջնորդների, հետևողական մեկուսացումն ու բնաջնջումը դիտարկել ենք որպես տվյալ խմբի սոցիալ-մշակութային համախմբվածությունը խախտելու միտում՝ այդպիսով նաև ճանապարհի հարթելով հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման իրագործման համար:
- Հայ մտավորականության բնաջնջման անհրաժեշտության ու կանխամտածվածության արտացոլումն ինչպես երիտթուրքական վարչակարգի կողմից ընդունված որոշումներում, այնպես էլ այդ որոշումներն իրականացնելու գործողություններում:

Բանալի բառեր՝ մշակութային ցեղասպանություն, մտավորականություն, հոգևորականություն, հասարակության առաջնորդ, զանգվածային բնաջնջում, երիտթուրքական կառավարություն:

Նախարար Փիրիզադե Իբրահիմ բեյի, մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի, Երեսփոխանական ժողովի նախագահ Խալիլ բեյի, Օսմանյան կայսրության Շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քեզզմե էֆենդիի, ներքին գործերի նախարար Թալեաթի հետ մնացին լոկ հանդիպումներ (տե՛ս նույն տեղում, էջ 82, 93, 98-100, 121):

⁴⁰ Մանրամասն տե՛ս Եղիայեան Բ., *Ժամանակակից պարմություն կաթողիկոսության հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 52-57:

EXTERMINATION OF ARMENIAN INTELLIGENTSIA AND CLERGY AS AN ACT OF CULTURAL GENOCIDE

Seda Parsamyan

SUMMARY

In this article the following main issues are presented:

- Destruction of the Armenian intellectuals, in this case the Armenian clergy, as a separate manifestation and classic example of cultural genocide (according to the R. Lemkin's concept) or ethnocide;
- Isolation and destruction of the Armenian intellectuals at the beginning of the Armenian Genocide as an intention to destroy the social and cultural consolidation of the group and thereby create conditions to implement physical extermination of the Armenian people;
- Reflection of the intent to exterminate the Armenian intelligentsia in the Young Turk Government decisions and actions of those who implemented these decisions as an act of cultural genocide.

Keywords: cultural genocide, intelligentsia, clergy, leadership of the nation, mass extermination, the Young Turks.

ИСТРЕБЛЕНИЕ АРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ И ДУХОВЕНСТВА КАК ПРОЯВЛЕНИЕ ПОЛИТИКИ КУЛЬТУРНОГО ГЕНОЦИДА

Седя Парсамян

РЕЗЮМЕ

В рамках данной статьи освещены следующие основные вопросы:

- Уничтожение армянской интеллигенции и, в данном случае, армянского духовенства рассматривается как отдельное проявление и классический пример культурного геноцида (согласно концепции Р. Лемкина) или этноцида;
- Изоляция и уничтожение армянской интеллигенции в начале Геноцида армян рассматривается как намерение разрушить социально-культурную консолидацию данной группы и создание этим самым условий для осуществления физического истребления армянского народа;
- Отражение необходимости и умысла истребления армянской интеллигенции как в принятых младотурецкими властями решениях, так и в действиях исполнителей данных решений.

Ключевые слова: культурный геноцид, интеллигенция, духовенство, предводительство нации, массовое истребление, младотурки.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱՆԱՔԱՂԱՔՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ 1918-1922 ԹԹ.

Նարինե Մարգարյան

Հայոց ցեղասպանության տարիներին բազմահազար հայ գաղթականներ մասնավորապես Վասպուրական նահանգի տարբեր գավառներից հասնում են ներկայիս Իրաքի տարածք ու վրանաքաղաքներ հիմնում Բաղդադում¹, Մոսուլում², Բաքու-բայում³ և Նահիր Ալ-Օմարում:

Արդեն 1915 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ներկայիս Իրաքի տարածք էին հասնում հայ գաղթականների քարավանները: Հոդվածում ներկայացվելու են հայ գաղթականների տեղաբաշխումները ներկայիս Իրաքի տարածքում, անդրադառնալու ենք գաղթականների խնդիրներին, վրանաքաղաքներում տիրող իրավիճակին ու այն ձեռնարկումներին, որոնք իրականացրին հայկական, բարեգործական և միջազգային կազմակերպությունները՝ նրանց վիճակը բարելավելու ու անապատներում հայահավաք գործընթացներ կազմակերպելու համար: Անդրադառնալու ենք նաև նրանց՝ Խորհրդային Հայաստան տեղափոխվելու աշխատանքներին՝ ներկայացնելու վերջինիս կազմակերպման հետ կապված դժվարությունները:

Բաղդադի հայկական գաղթակայանը

Թուրքական կառավարության կողմից իրագործված տեղահանության հետևանքով բազմաթիվ գաղթականներ հասնում են Բաղդադ, որտեղ տեղի Ազգային առաջնորդարանն իր սուղ միջոցներով սկսում է օգնություն ցուցաբերել վերջիններին⁴:

1915 թ. Բաղդադի ոստիկանապետ Մուհամմադ Խալիլ էֆենդին և Ալի Սուայդ⁵ կուսակալը տեղի հայերին զերծ են պահել տարագրությունից ու կոտորածներից, ինչը չի կարելի ասել նրան փոխարինած փոխնահանգապետ Ֆաիզ բեյի մասին⁶: 1915թ. օգոստոսի 15-ին՝ Բաղդադի Ս. Թարգմանչաց վարժարանում դասաժամի

¹ Նախապատերազմյան շրջանում Բաղդադում հայերի թիվը հասնում էր մոտ հարյուրի, մեծ մասը Պարսկաստանից, մի փոքր մասն էլ Տիգրանակերտից գաղթած և իրենց ծավալած առևտրական գործունեությամբ բավականին լավ դիրք ունեին: Տե՛ս «Հայ կեդրոն», Տարեցույց, խմբ.՝ Հարություն արք. Մուշեան, Պուլնոս Այրէս, «Արարատ», 1956, էջ 198:

² Մոսուլի հայերը գաղթականների գալուց առաջ ավելի սակավաթիվ էին, հիմնականում Սղերդից, Բիթլիսից, Տիգրանակերտից՝ մոտավորապես 20-25 ընտանիք: Տե՛ս «Հայ կեդրոն» ..., էջ 205:

³ Թեոդիկն իր «Բաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմանեան կայսրության մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ» աղյուսակում Բաքուբայի հայ գաղթականների թիվը նշում է 15 000: Տե՛ս Թեոդիկ, *Ամէնուն Տարեցույցը*, ԺՋ տարի, 1922, «Մ. Յովակիմեան», Կ. Պոլիս, էջ 263:

⁴ Կէօրկիզեան Արսէն Ա., *Մեր ազգային գոյապայքարը 1915-1922ի զուլումի տարիներուն*, Պէրոյթ, Թերթօս թիւ 63, «Զարթօնք», 1967, էջ 149:

⁵ Սուայդ բեյին հայերի բնաջնջման հրամանն իրականացնելուց հրաժարվելուց հետո Դեր-Ջորից տեղափոխել էին Բաղդադ:

⁶ Զաւէն արքեպս., *Պարբիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրէ, «Նոր Աստղ», 1947, էջ 221:

ընթացքում, թուրք ոստիկանը ձերբակալել է դպրոցի ուսուցիչ Միհրան Սվաճյանին և տասը այլ բաղդադցի ազգայնականների հետ աքսորել Մոսուլ, այստեղից՝ Ռաս ուլ-Այն:

Արդեն 1918 թ. մարտին Վանից նահանջող բազմահազար հայեր տեղի իշխանության ղեկավար Կոստի Համբարձումյանի, իսկ նրա մահից հետո ֆիդայի Լևոն Շադոյանի առաջնորդությամբ, Սային Կալայումի ասորիների հետ ամիսներ շարունակ դաժան ճանապարհի անցնելով, Իրանի՝ Սալմաստ-Ուրմիա ճանապարհով հասնում են Համադան և Քերմանշահ քաղաքներ, որոնք գրավել էին անգլիական բանակի զորքերը: Այդտեղից էլ նրանք անցնում են Իրաք, ապաստանում Բաղդադում: 1917 թ. մարտին Բաղդադ է գալիս Պոլսի պատրիարք Զավեն արք. Տեր Եղիայանը⁷: Նա մոտ հինգ ամիս այստեղ մնալուց հետո Մոսուլ տեղափոխվելու հրաման է ստանում:

1917 թ. մարտին անգլիական բանակի կողմից Բաղդադի գրավումից հետո Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնը նույնպես միջոցառումներ է նախաձեռնում՝ Իրաքի հայերին օգնելու համար, վերակազմավորվում է դեռևս 1911 թ. ստեղծված մասնաճյուղը, 200 անգլիական ոսկի գումար է տրամադրվում տարագիրներին՝ որպես փրկագին կամ նպաստ: 1917 թ. հոկտեմբերի 7-ին Բաղդադի առաջնորդ Փառեն Ծ. Վ. Մելքոնյանի նախագահությամբ գումարում են առաջին ժողովը: Մինչև 1918 թ. սկիզբը Միությունը Հայ տարագրելոց պաշտպան մարմնին ուղարկում է 250 անգլիական ոսկի՝ Բաղդադի Այրիանոց-որբանոցի համար⁸: Բաղդադի Ս. Երրորդության եկեղեցուն կից որբանոց է բացվում⁹:

Բաղդադի հայ գաղթականության հետ կապված ուշագրավ մի դրվագ է ներկայացնում ցեղասպանությունը վերապրած Սահակ-Մեսրոպը: Տեղի Ազգային վարժարանում աշխատելու ժամանակահատվածում նա նշում է, որ օր օրի ավելի բազմամարդ էին դառնում քաղաք եկող բոլոր ու գլխաբաց տղաների ու դեմքին դաջվածք ունեցող աղջիկների խմբերը, ուլքեր, եթե ինչ-որ չափով հիշում էին իրենց մայրենի լեզուն, ծնողների անուններն ու իրենց հետ պատահած դժբախտությունը, ապա ավելի մանկահասակներն իրենց անունն անգամ չէին հիշում: Մոտ երկու հարյուր այդպիսի երեխաների այդ ընթացքում Սահակ-Մեսրոպը տալիս է հայկական նոր անուններ, ինչպես նաև ենթադրյալ ծննդավայրեր ու ծնողների անուններ: Աստիճանաբար հայ որբերի թիվն այնքան է մեծանում, որ Հարության տոնին ընդառաջ տեղի քահանային առաջարկում է կնքել նրանց՝ ասելով. «...Բախտի այս անժառանգներուն գոնէ անուն մը տրուէր այդ օրը»¹⁰: Մկրտության արարո-

⁷ Սուլթանի նոր կանոնագրով Պոլսի պատրիարքարանը, Երուսաղեմի և Աղթամարի նվիրապետությունները միանում են Սսի կաթողիկոսությանը, հետևաբար՝ Զավեն պատրիարքի պաշտոնը դադարում է գոյություն ունենալ:

⁸ *Ոսկեմարեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան*, Արծաթեայ յոբելեան, 1906-1931, Հ. Ա, Բաբիգ, էջ 179:

⁹ Գեորգեան Կ., *Ամենուն փարեզիրքը*, Դ Տաբի, «Մշակ», Պեյրուք, 1957, էջ 414:

¹⁰ Սահակ-Մեսրոպ, *Եղեռնի հուշարձան*, *Անոց անունը*, «Առաօտ»-ի տարեգիրքը, Կ.Պոլիս, «Արարատ», 1921, էջ 85:

ղության ժամանակ Սահակ-Մեսրոպն առաջարկում է նրանց բոլորին տալ Վրեժ անունը, և քահանայի ավանդական հարցին, թե երեխան ինչ է ուզում, նրանք «հավատ, հույս, սեր և մկրտություն» ասելուց առաջ միաբերան պատասխանում են. «Հայաստան, Վրեժ և Հաղթանակ»¹¹: Հոգվածագիրը եզրակացնում է, որ «Անոնք ... կը զգան խորհուրդն այս մկրտութեան, կ'ըմբռնեն իմաստը Հայաստան, վրեժ և հաղթանակ բառերուն»¹² և դիպուկ նկարագրում Բաղդադում տիրող այդօրյա մթնոլորտը՝ «Քրիստոսի Յարութեան հետ ցեղին վրեժը կը յառնէր Պաղատա»¹³ :

1918 թ. հուլիսին Փարիզից Բաղդադ է հասնում տեղի հայոց առաջնորդ նշանակված Մուշեղ արքեպիսկոպոսը: Նա Միջագետքում քաղաքացիական լիազորի պաշտոնակատար կապիտան Առնոլդ Ուիլսոնի հետ շուրջ երեք ամիս գաղտնի բանակցելուց հետո կարողանում է հասնել նրան, որ բրիտանական կառավարությունը շոգենավ տրամադրի, ու Դ. Լևիսի մոտ գտնվող հայ երեխաները հնարավորություն ստանան Բաղդադից Եգիպտոս տեղափոխվելու: 1918 թ. նոյեմբերի 24-ին նավը մեկնում է որբերով: Դեպքերի կապակցությամբ Մուշեղ արքեպիսկոպոսը գրում է. «Ամբողջ տարագրութեան ընթացքին առաջին անգամն է որ որբեր ու որբուհիներ իրական երջանկութեան մը ժպիտը կը ցուցադրեն: Զուարթ որբերու տողանցը կ'երկարի մինչև գետեզերք ... Օրհնութիւն մը իմ կողմէս այդ վեց հարիւր որբերի գլխուն: Աղջիկներ անգլիական ազգային երգը կ'երգեն, եւ մանչեր հայկական մարշը»¹⁴:

Բաղդադում մեծաթիվ գաղթականների առկայությունն անգլիացիների տեսանկյունից այնքան էլ նպատակահարմար չէր, ուստի նրանք գաղթականներին տեղավորելու մի քանի տարբերակներ էին մշակել: Ի վերջո, նրանք հակվում են հայերին ու ասորիներին մի տեղում կենտրոնացնել՝ ապագայում գաղթականների վերաբերյալ կարգադրություններ անելու ժամանակ դժվարությունների չհանդիպելու նպատակով¹⁵:

Բաքուբայի հայկական գաղթակայանը

Վերոնշյալ նկատառումներից ելնելով, ինչպես նաև կլիմայական և առողջապահական պայմանները հաշվի առնելով՝ որոշվում է հայ գաղթականներին բնակեցնել Բաղդադից 30 մղոն (55.5 կմ) դեպի արևեք գտնվող Բաքուբա վայրում՝ համանուն գյուղաքաղաքի շրջակայքում գտնվող անապատային գոտում:

1918 թ. Եղիշե Վարդանյանն իր հայրենակիցների հետ Վասպուրականից գաղթել էր մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Ումմ ուլ-Ատամ վայրը: Նրանց ճամբարը բաղկացած էր մոտ 500 տարագիրներից: Նրանց վիճակն այնքան վատ էր, որ հեղինակը նկատում է. «...այնքան զգուելի, այնքան արգահատելի էր մեր տեսքը,

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 86:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Սերոբեան Մ., *Դիպումներ եւ դասումներ (Էջեր օրագրէս)*, Պէյրութ, «Ազդակ», 1932, էջ 118:

¹⁵ Տե՛ս Մինասեան Վ., *Բուսիսի Գաղութը, Խոր անցեալի գաղթօճախներ*:

Տե՛ս <http://asbarez.com/arm/author/asbarezstaff/page/2226/> :

որ նույն իսկ կիսամերկ Հնդիկներու տեսքին վարժուած Անգլիացիներն անգամ, ապշահար ու պժգնանքով առլի, հեռուէն դիտելու հազիւ սիրտ ունեին»¹⁶: Մեյտոն-բերի 12-ին այս վայրից վրանաքաղաքի բնակչությանը նույնպես տեղափոխում են Բաքուրա: Այստեղ էր ժամանել դեռևս օգոստոսի 27-ին մոտ 1500-հոգանոց երկրորդ քարավանը, և «այդ օրէն սկսեալ քաղաքը մեծցաւ, շէնցաւ, ու երկու տարի շարունակ բնակավայր ու տառապավայր դարձաւ 50-60 հազար Հայ ու ասորի փախստականներու»¹⁷:

Վրանաքաղաքների ղեկավարումն ու հոգատարությունը բրիտանական կառավարությունը հանձնարարել էր Լևոն Շադոյանին, ով խուճապի ու սկզբնական տեղավորման ժամանակ մեծ գործ է արել¹⁸: Զավեն պատրիարքը նշում է, որ Լևոն Շադոյանի ղեկավարության տակ գտնվող գաղթականների հանդեպ անգլիական բանակը մարդասիրական վերաբերմունք է ցուցաբերել՝ ապահովելով նրանց փոխադրությունը, ինչպես նաև մեծաքանակ վրաններ ու հնդիկ զինվորներ է Բաքուրա ուղարկել՝ տեղում վրաններ խփելու համար:

«Կիլիկիա» թերթը 1919 թ. տպագրել է Բաքուրայում եղած Արսեն Հացագործյանի հուշերը՝ «Պաքուպայի հայ փախստականները» վերնագրով¹⁹, որտեղ նկարագրում է վրանաքաղաքների վիճակը, անգլիական կառավարության ձեռնարկած միջոցառումները հիվանդությունները կանխելու, ժողովրդին սննդով ապահովելու վերաբերյալ: Նա նշում է, որ ազնվական հայերն ու ասորիները (հիմնականում զինվորականներն ու նրանց ընտանիքները) առանձին մասնաբաժնում էին ապրում: Հողվածագիրը նշում է, որ տարագիրների թվում կային մոտ 1000-ի չափ հասնող երիտասարդներ, ովքեր մինչ այդ զինվորական ծառայության մեջ էին եղել, և նրանց ընտանիքները գտնվում էին Կովկասում: Նա անդրադառնում է նաև անապատի բնակչիմայական պայմաններին, որին Վասպուրականի, Սալմաստ-Ուրմիայի ժողովուրդը սովոր չէր, իսկ սովն ու հիվանդությունները, դրան գումարվելով, մեծամասշտաբ էին դարձնում մահացությունների թիվը²⁰:

Տարագրվածներին օգնություն տրամադրելու, տեղում կազմակերպչական աշխատանքներ իրականացնելու համար Իրաքի Ազգային իշխանությունն ակտիվացնում է դեռևս 1916թ. կազմված Տարագրելոց պաշտպան մարմին անունով հանձնախմբի գործունեությունը: Աստիճանաբար ավելացող տարագիրներին կազմակերպված օգնություն ցուցաբերելու համար հանձնախմբին փոխարինելու է գալիս Միջագետքի հայ տարագիրների հանձնախումբը²¹, ավելի մեծ լիազորություններ

¹⁶ Վարդանեան Ե., *Անապատը անապատ*, Սուրբ Ղազար-Վենետիկ, «Մխիթարեան տպարան», 1923, էջ 9:

¹⁷ Նույն տեղում, էջ 53:

¹⁸ Գեորգեան Կ., *Ամենուն փարեգիրքը*, էջ 415:

¹⁹ «Կիլիկիա», հունիս 8, Ադանա, 1919:

²⁰ Նույն տեղում:

²¹ Հիշյալ հանձնախումբը գործել է տարբեր անուններով, օրինակ՝ «Հայ ազգային աղքատախնամ մարմին» (1922-1926), «Տիկնանց աղքատախնամ մարմին» (1926-1990): Ժամանակի ընթացքում Բաքուրայի վրանավան փոխադրված գաղթականների մի մասն առաջնորդարանի

րով՝ թեմի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբյանի նախագահությամբ: Բաղդադահայ կաթոլիկ համայնքը նույնպես իր ներկայացուցիչն է ունենում հանձնախմբում: Վերջինս դիմում է Դեր-Զորում կազմված «Հոգատար Մարմին» կազմակերպությանը՝ նյութական օժանդակություն ուղարկելու խնդրանքով:

Հանձնախումբն ուներ հատուկ աշխատակիցներ, ովքեր թուրքերի տներից հավաքում էին առևանգված հայ օրիորդներին ու կանանց: Հալեպցի Միհրան Միհրանյանը «բավականին գնահատելի գործունեություն մը ցուցահանած էր անվախ կերպով թուրքերու եւ արաբներու տներ մտնելով հայ օրիորդներ ու կիներ հանելու համար»²²: Այստեղ գործել է նաև Ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունը, որը տեղում որքանոց է հիմնել, խնամել հավաքագրված չափահաս ու անչափահաս տղաներին, ինչպես նաև օրիորդներին ու կանանց²³:

Նշենք, որ այստեղ որոշակի տարածայնություններ են առաջ եկել Մուշեղ եպիսկոպոսի ու Ամերիկյան նպաստամատույցի հանձնախմբի աշխատակիցների միջև: Հեղինակը գրում է, որ եթե նրանք կարողանային համագործակցության եզրեր գտնել, որի ղեկավարն ազգությամբ հրեա դոկտոր Լևինն էր, ու միացյալ ջանքերով աշխատել, անտարակույս արդյունքն ավելի գոհացուցիչ կլիներ: Հեղինակը պատմում է, որ եպիսկոպոսը միջամտել է որբանոցի գործերին, ցանկացել որբերին իր հսկողության տակ վերցնել, բայց ամերիկյան կողմն ընդդիմացել է՝ հիմնավորելով, որ «Դրամը մերն է, խնամքն ու կառավարություն ալ մեզ կը վերաբերի»²⁴: Խնդիրն աստիճանաբար թշնամանքի է վերածվել, անգամ իրար վարկաբեկիչ նամակներ են գրել՝ մեկը՝ Նպաստամատույցի կենտրոնական գրասենյակ՝ Ամերիկա, մյուսն էլ՝ Ազգային միություն:

Նշենք, որ այդ ժամանակահատվածում Ամերիկյան նպաստամատույցը որոշակի քայլեր է ձեռնարկել և մուրհակով 100, 200, 300, անգամ 500-ական հնդկական ռուպի դրամագլուխ տրամադրել գաղթականներին, որով պետք է փոքր գործ ձեռնարկեին՝ օրվա ապրուստի գումար ապահովելու համար, սակայն այս գործընթացը երկար չի շարունակվել, քանի որ շատերն այդ գումարը չեն վերադարձրել²⁵:

Բաքուրայի վրանակետը կամաց-կամաց մեծանում էր, վրանները բաժանվում էին մասնավոր բաժինների. 2-13-ը հատկացված էին հայերին, իսկ 14-32-ը՝ ասորիներին: Յուրաքանչյուր բաժին ուներ մեկ սպա և չորս անգլիացի զինվոր, վրանաքաղաքի լիազոր պատասխանատուն էր գեներալ Ուստին: Առանձին գործում էր նաև մասնավոր հիվանդանոցի բաժինը՝ 300 խոշոր վրաններով, վարակազերծիչ վայրով, իսկ թիվ 1 բաժինը երկաթուղու կայարանի մոտ էր, հատկացված էր նորեկ գաղթականներին ժամանակավոր բնակության համար: Ամեն անգամ, երբ գաղ-

կողմից փոխադրվել է Նահր ալ-Օմարի գաղթավանդ, իսկ մի մասը տեղավորվել է Բաղդադում, մյուս մասն էլ՝ Գեյլանի քեմփում: Տե՛ս Միխայելյան Վ., *Իրաքահայ Գաղութը, Խոր անցեալի գաղթօճախներ*, տե՛ս <http://asbarez.com/arm/author/asbarezstaff/page/2226/>:

²² Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 104:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 105:

²⁵ Նույն տեղում:

թականները երկաթուղով ժամանում էին, նրանք բժիշկների կողմից մանրամասն ստուգումների էին ենթարկվում, հիվանդներին հիվանդանոց էին տանում, առողջները երեք օր կզգիացած ապրում էին այդտեղ, հետո նրանց բոլոր իրերն ախտահանվում էին, ու նրանց տեղավորում էին համապատասխան բաժիններում: Անգամ այս պարագայում մեռնողների թիվը սկզբնական շրջանում սարսափելի էր, միջին հաշվով օրական 70-80 հայ և ասորի: Հետզհետե որբերի թիվն ավելանում էր, կառավարության նախաձեռնությամբ 20 ասորի, 4-5 հայ որբեր հավաքվում են թիվ 1 բաժնում՝ հետագայում նպատակ ունենալով հավաքել և խնամել բոլոր որբերին:

Մուշեղ Եպիսկոպոսը Բաքուբայի որբերին ցուցակագրելու և տեղում զաղթականների հարցերով զբաղվելու համար 1918 թ. հոկտեմբերի 15-ին այնտեղ է ուղարկում Բաղդադի Ս. Վահան քահանա Թաճիրեանին: Նրան այդ հարցում աջակցում էր վանեցի Ս. Հովհաննես քահանա Սիմոնյանը, ով վրանաքաղաքի բաժիններով ցուցակագրում էր բոլոր որբերին, ինչպես նաև մոտ 40 կանանց, ովքեր 30-ից բարձր տարիք ունեին: Նախատեսվում էր, որ նրանք պետք է լինեին որբանոցի մայրապետները, կազմակերպվում է նաև վրանաքաղաքի կրոնական կյանքը²⁶:

Բաքուբա են հասնում նաև ամերիկյան միսիոներները և պարոն Մաքդաուլի ղեկավարությամբ սկսում են զաղթականներին օժանդակել, հագուստ բաժանել, հիմնվում է նաև արհեստանոց, մարդկանց գործով ապահովելու համար նրանց բուրդ են բաժանում՝ լվալու, մանելու համար: Արհեստանոցը միայն մի քանի ամսվա կյանք է ունենում, այն մոտ հազար հոգու համար բավականին օգտակար էր՝ առօրյա կարիքները հոգալու համար:

Նոյեմբերի 5-ին Մուշեղ Եպիսկոպոսը տարագիրների համար հատուկ կոմիտե ստեղծելու նպատակով նիստ է հրավիրում, հաստատում է կազմը և հայտնում, որ Եգիպտոսի Որբախնամը տարեկան 4000 ոսկի բյուջե է տրամադրելու Բաքուբայի որբանոցին, որից 1000 ոսկի արդեն ստացել են: Նորաստեղծ հանձնաժողովն ամեն ինչ անում էր՝ արդյունավետ գործելու համար: Շուտով հավաքվում են մոտ 300 երկսեռ երեխաներ, որոնց կենտրոնացնում են թիվ մեկ մասնաշենքում, նրանց խնամքը հանձնում են մոտ 20 մայրիկների, որբանոցի հսկողությունը հանձնվում է Ռոզ Գույումճյանին, Գասպար Խանին, Եսթեր Աճեմյանին: Եպիսկոպոսը դիմում է նաև գեներալ Ուստինին՝ մնացած ծախսերը հոգալու, աշխատողներին վարձատրելու և այլ ծախսեր հոգալու համար²⁷:

Սրբազանը նրանց համար փորձում է նաև կրթական դասեր կազմակերպել: Տարագիր 11 ուսուցիչներ Մարտիրոս Խերանյանի ղեկավարությամբ ստանձնում են այդ գործի պատասխանատվությունը: Նոյեմբերի 19-ին Սրբազանը Բաղդադից Բաքուբայի որբերի համար բերում է հագուստ, հաց թխելու համար փուռ կառուցելու անհրաժեշտ պարագաներ²⁸: Մինչ այդ կառավարությունը 32 վրաններից կազմված առանձին վայր է տրամադրում որբանոցին: Նոյեմբերի 20-ին որբանոցի

²⁶ Վարդանեսան Ե., *նշվ. աշխ.*, էջ 114:

²⁷ Նույն տեղում, էջ 119:

²⁸ Նույն տեղում, էջ 120:

սաները հանդիսավոր արարողությամբ տեղափոխվում են որբանոցի վրանային մասնաբաժին: Սրբազանը խնամակալության նոր մարմին է նշանակում վարդապետ Կանյանի նախագահությամբ, Թեհրանի եղբայրական կոմիտեի ներկայացուցիչ Արսեն Կեոքեղյանին էլ՝ որպես կառավարության մոտ միջնորդ ու տնօրեն: Կառավարությունը որբանոցի մասնաշենքին է տրամադրում մեկ սպա և 4 անգլիացի զինվոր:

Աստիճանաբար Բաքուբայի հայ գաղթականությունը հաշտվում էր իր կարգավիճակի հետ ու փորձում էր հնարավորության սահմաններում բարելավել ու տանելի դարձնել իր առօրյան: Նրանց միակ մխիթարությունն անգլիական դրոշի ներքո իրենց ապահով զգալու փաստն էր: Անգամ մի քանի վանեցիներ մեծ դժվարություններով կարողանում են բացել կոշկակարի, սափրիչի, դերձակի, ջուլիակի խանութներ, թիթեղագործական արհեստանոցներում պատրաստում էին ամանեղեն ու ինքնատեղեր²⁹: Տնտեսական կյանքը փոքր-ինչ բարելավելուց հետո նրանք մտածում են նաև հոգևոր կյանքի մասին: Եկեղեցու նման շինություն են սարքում, որտեղ եկեղեցական արարողակարգեր էին իրականացվում, բացի դրանից քահանաները հերթափոխով ժամասացություններ էին կատարում:

Մոսկվի հայ գաղթակայանը

Մոսկուում նույնպես հայ գաղթականների վրանաքաղաքներ էին հիմնվել: Քաղաքում ապաստանած հայերը հիմնականում Սդերդից ու Կարինից էին, ովքեր այստեղ էին հասել 18-20 օրվա ընթացքում՝ միայն խոտ ուտելով³⁰: Ինչպես նշում է Զավեն պատրիարքը, իրավիճակը բավականին ծանր էր, բացի հայերից քաղաքը լի էր նաև քուրդ գաղթականներով, սովը հազարավոր մարդկանց կյանք էր խլում³¹:

Բժիշկ Գ. Ասթարջյանը³² աշխատանքի բերումով ուղեկցել է Հայդար փաշային և ականատես է եղել ասորական գյուղերի բնակչության բռնագաղթին: Թըռուանշի վայրում՝ իրենց բանակած տեղից մոտ 500 մետր հեռավորության վրա գտնվող դաշտում, տեսել է մի հոծ բազմություն, որի մասին իր հուշերում գրում է. «Մերկ, բոլակ, երկար քալելն շաբաթներով բույսերով ու արմատներով սնած ոտքերնին ու դեմքերնին ուռած, հիւծած... հայերէն խօսող զանգուած մըն է, որ իր մէջ կը հաշուն 3000 հոգի»³³: Հեղինակը փորձում է օգնություն ցույց տալ, սակայն գաղթականները չեն վստահում նրան: Դրա համար, ինչպես նշում է հեղինակը, հիմնավոր

²⁹ Կեոքիզեան Արսեն Ա., *նշվ. աշխ.*, էջ 158:

³⁰ Զավեն արքեպս., *Պատրիարքական յուշերս...*, էջ 237:

³¹ Նույն տեղում, էջ 235:

³² Գրիգոր Ասթարջյանը ծնվել է 1885թ. Կիլիկիայի Մարաշ քաղաքում: Նա Պոլսից արտաքսվել է, հետո չորս տարի ուսանել է Դամասկոսի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Մասնակցել է Բալկանյան պատերազմին՝ որպես բժիշկ: 1913թ. մասնագիտական աշխատանքի է անցել Մոսկուում, եղել է տեղի կուսակալի բժիշկը, ինչի շնորհիվ զերծ է մնացել թուրքական հետապնդումներից:

³³ Ասթարճեան Գ., *Յեղատարձ ակնարկ կեանքի մը Պայքարի ինստիտուտի վրայ*, Պէյ-րուք, «Սեւան», 1975, էջ 34:

պատճառներ ունեին, քանի որ նա զինված էր ու ազատ շրջում էր, չնայած այն փաստին, որ հայերեն էր խոսում³⁴ :

Իր ղեկավար կուսակալ Հայդար փաշայի հետ բանակցելուց հետո նա առաջարկում է. «Այդ դժբախտներուն մինչեւ Մուսուլ փոխադրութիւնը ինծի վստահիլ եւ ինծի յատկացնել 15 ժանտարմ պաշտպանելու համար հաւանական յարձակումներէ, առեւանգումներէ, կողոպուտներէ»:³⁵ Արդյունքում 8 օրում կարինցի 3000 գաղթականներ նրա ու ժանդարմների ուղեկցությամբ անվտանգ հասնում ու տեղավորվում են Նինվե բլրի ստորոտում: Գ. Այթարջյանը պատմում է, որ Սայիդ Էմին էֆենդի էլ Սիֆուին քաղաքապետարանի նիստ է հրավիրում և նպաստամատույց հանձնախումբ է կազմում, որի գործունեությունը հեղինակը հետևյալ կերպ է բնութագրում. «Ոգի ի բռնի գործի լծուելով արդարացուց իրմէ ակնկալուած նպաստհաւաքման գործին լիուի յաչողեցումով»³⁶: Այսպիսով, գաղթականների այս հատվածը կարողանում է տեղում փոքր-ինչ շունչ առնել ու մինչև զինադադարն առանց ճնշումների ապրել կուսակալ Հայդար բեյի ջանքերի շնորհիվ³⁷:

Տեսնելով Միջագետքի անապատներից այստեղ հասած հայ տարագիրներին՝ Զավեն պատրիարքը որոշ քայլեր է ձեռնարկում՝ նրանց վիճակը բարելավելու համար. նա իր հուշերում՝ «Թուրքական Մուսուլի մէջ» ենթագլխում, գրում է. «... տեսնելով, որ Հայ մանուկներ եւ կիներ փողոցները կը պտտին եւ կը մուրան շատ նեղուեցայ, որովհետեւ Հայուն մուրալը չէի տեսած: ...Սիրտս չդիմացաւ տեսնելով մանուկներուն գրեթէ մերկ մուրալը, ուստի Չագմագճեանի ձեռքով սկսայ կարմիր ներկած տեղական հաստ կտաւ առնել եւ մուրալու եկող աղջիկներուն ու փոքր տղոց վերէն վար շապիկ, իսկ մէծ մանչերուն, շապիկ-վարտիկ ձեւելով յանձնել թե իբր հագուստ եւ թե իբր անկողին ծառայելու համար»³⁸:

Զավեն պատրիարքն իր՝ Մոսուլում եղած ժամանակ հանդիպել է քաղաքական կառավարիչ գնդապետ Լիչմենի հետ, խնդրել հայությանը վերադարձնել «անբարո կիները», նրանց բուժման ծախսերը հոգալու համար 2000 ռուբլի հատկացնել, ինչպես նաև տալ 1000 կիլոգրամ բուրդ, որպեսզի նրանք աշխատանք ունենան, ինչպես նաև կառավարական մթերանոցից օրական 500 կիլոգրամ ցորեն տրամադրել՝ հաց թխելու ու աղքատներին բաժանելու համար: Զավեն պատրիարքի կարևոր խնդրանքներից է եղել օգնել հավաքելու իսլամ ընտանիքներում գտնվող հայ մանուկներին ու կանանց, նշել, որ անհրաժեշտ է համարում նաև պաշտոնա-

³⁴ Նույն տեղում, էջ 35:

³⁵ Նույն տեղում, էջ 36:

³⁶ Նույն տեղում, էջ 37:

³⁷ Հետաքրքրական է, որ հեղինակը Հայդար փաշայի մասին գովեստով է խոսում, մինչդեռ նա պատմության մեջ հայտնի Մարաշի կուսակալն է, ով 1914թ. աշնանը լեռնականներին զինվորագրելու նպատակով Զեյթուն է գալիս, ձերբակալում է քաղաքապետ Նազարեթ Չաուշին, քաղաքի ժողովրդից հավաքում է շուրջ 20000, շրջակա գյուղերից՝ 15000 զենք, ձերբակալում է Զեյթունից 60, իսկ գյուղերից 30 հոգու և իր հետ տանում Մարաշ: Մանրամասն տե՛ս *Զեյթունի պայամությունը: 1904-1921 թթ.* (խմբ.՝ Հ. Մ. Պողոսյան), Երևան, «Հայաստան», 1969, էջ 384-386, «Հասկ», 1976, թիվ 1-12, էջ 83, 84:

³⁸ Զավեն արքեպս., *Պատրիարքական յուշերս...*, էջ 233:

պես ոստիկանության կողմից հրաման տրվի՝ իրենց աջակցելու համար: Զավեն պատրիարքը գրում է. «Լիչմեն բոլոր ըսածներս ընդունեց եւ հրամանագիրները գրել խոստացաւ»³⁹:

Լիչմենը Զավեն արք. խնդրանքի հիման վրա 1918 թ. դեկտեմբերի 10-ին Մոսուլի պաշտոնական «Մուսուլ» պարբերականում հայտարարություն տարածեց, ըստ որի «պատուիրուէր նահանգին ժողովուրդին, որ իրենց քով անընդունելի կերպով Հայ կին, տղայ, կամ աղջիկ ունեցողները իրեն յանձնեն»⁴⁰:

«Անընդունելի կերպով» արտահայտությունը կամայական մեկնաբանությունների առիթ է տալիս, ու ոչ ոք չի համաձայնում հայերին հանձնելու մտքին: Զավեն պատրիարքը ոստիկաններ տրամադրելու խնդրանքով կրկին դիմում է Լիչմենին, որպեսզի հայերին չհանձնելու դեպքում ոստիկանների միջամտությամբ վերցնեն մուսուլմանների մոտից: Մոտ 30 որբ է հավաքագրում, որոնց մի մասին իր տան մեջ է ապաստան տալիս, հետագայում կարողանում է տուն վարձել, մինչև դեկտեմբերի վերջին բացվում է որբանոցը:

Որոշակի տարածաշրջաններ են առաջ գալիս նաև Մոսուլի գինվորական կառավարիչ Լիչմենի և Մուշեղի միջև: Արքեպիսկոպոսը մեղադրում է Լիչմենին իսլամասիրության մեջ՝ փաստելով, որ նա անհիմն է արար ընտանիքներից իր հավաքած հայ որբերին ոստիկանների միջոցով ստիպում վերադարձնել նրանց: Այդ կապակցությամբ նա գրում է. «Մոսուլի բրիտանական կառավարությունը ոստիկան չ'ունի հայ որբերը հաւաքելու համար իսլամներու տուներէն, բայց մեր հաւաքած որբերը մենէ խլելու և իսլամներուն յանձնելու համար ոստիկան կը ստեղծէ տասնեակներով»⁴¹:

Մինչդեռ Զավեն պատրիարքը, ով ավելի հավասարակշռված էր գործում, նշում է, որ Լիչմենը չէր ուզում արաբների հետ հարաբերությունները լարել, այդ իսկ պատճառով խուսափում էր ստիպողաբար արաբների մոտից վերցնել հայ կանանց ու երեխաներին⁴²: Մուշեղի և Լիչմենի հարաբերությունները հետզհետե ավելի են վատթարանում, արդյունքում, ինչպես եզրակացնում է Զավեն պատրիարքը, տուժում է ժողովուրդը⁴³:

Արսեն Հացագործյանը նույնպես անդրադառնում է Մուշեղ եպս. Սերոբյանին՝ նշելով, որ ուղարկված լինելով Ազգային պատվիրակության կողմից, նա չարդարացրեց իր վրա դրված հույսերը և պարտականությունները, վերջում հողվածագիրը եզրակացնում է. «...շնորհիվ իր անթաքթ քաղաքականութեան ու անհատական գործերուն աւելի ևս բարդացուց գործերը ... անհրաժեշտ է փոխարինել զայն աւելի կարող և Խրիմյան հոգին կրող անձնագոհ հովիտով մը, մինչեւ որ վերջ գտնէ Միջագետքի Հայութեան բարեկոյսն տարագրութիւնը»⁴⁴:

³⁹ Նույն տեղում, էջ 247:

⁴⁰ Նույն տեղում, էջ 254:

⁴¹ Սերոբեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 122:

⁴² Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս...*, էջ 256:

⁴³ Նույն տեղում, էջ 258:

⁴⁴ «Կիլիկիա», 14 հունիս, 1919թ.:

Մինչդեռ իր հուշ-օրագրում՝ թվագրված 1919թ. փետրվարի 1-ին, Մուշեղ արքեպիսկոպոսը գրում է. «Մինակ եմ լացող պահանջներու և աղաղակող պետքերու առջև: Որքանոցը թէպետ կազմուած, ու որբերը պատսպարուած, բայց դեռ կայ ծովածաւալ տարագիրներու հեղեղը, մերկ ու անօթի: Օրական քսան ժամու աշխատանք հազիւ կը բաւէ օրուան տառապանքը մեղմելու»⁴⁵:

1919 թ. փետրվարին Մուշեղ արքեպիսկոպոսն անգամ փորձեր է կատարել հայ տարագիրներին Հալեպ տեղափոխելու, բայց նրանց առաջին քարավանը՝ 234 հոգուց բաղկացած, դեպի Բաղդադ են ուղարկել: Արքեպիսկոպոսը ոչինչ անել չէր կարող, կառավարական ծրագրերը խափանելը վեր էր նրա ուժերից, բայց և այնպես գիտակցում էր, որ տարագիրների դեպի Բաղդադ առաքումը կարծես նոր տարագրություն էր այդ դժբախտների համար, և եզրակացնում է. «Կառավարութիւնը ազատուիլ կուզէ հայերէն, հոգ չէ, թէ անոնց մահուամբ»⁴⁶:

Նրանց վիճակի բարելավման հարցերով զբաղվել է նաև Գ. Աթաբաճյանը: Նա այդ հարցում ստացել է Լիչմենի համաձայնությունը և հնարավորության սահմաններում նպաստել թաղային խորհուրդների կազմավորմանը⁴⁷: 1918-1919 թթ. Մուսուլում որպես թարգման է աշխատել նաև Համբարձում Աթեշյանը, ով 1919-1920 թթ. տեղափոխվել է Բաքուրա, եղել թիվ 1, 34, 35 բաժանմունքներում իբրև գլխավոր թարգման, հետո էլ 3-4 հազարի հասնող հայ գաղթականների վերահսկիչ⁴⁸:

Միջազգետքի հայ գաղութին հրահանգվում է Փարիզում գումարվելիք Ազգային համագումարին պատգամավոր ներկայացնել: Բաղդադի ազգային մարմնի ու Բաքուրայի տարագիրների կոմիտեի ներկայացուցիչների միջև պայքարը սրվում է, որը հանգեցնում է երկպառակության: Քվեարկության արդյունքում Բաքուրայի պատգամավորների կողմից առաջադրվում է պրոֆեսոր Խաչատուրյանը, Բաղդադի հասարակության կողմից ընտրվում է Բելգիայի հյուպատոս Տերվիշյանը⁴⁹: Այս անհամաձայնություններին է անդրադառնում նաև կոմիտեի անդամ Ա. Հացագործյանը՝ նշելով. «Այժմ Միջազգետքի հայութեան անունով երկու պատուիրակներ կան Փարիզ ... Չգիտենք թե ասոնցմէ ո՞րը օրինական ճանչուած է»⁵⁰:

1919 թ. մարտին Բաքուրայի վրանաքաղաքում քվեարկության արդյունքում կազմվում է նոր մարմին, որը կոչվում է Հայ գաղթականների կոմիտե, անդամներ՝ Լ. Շադոյան, Ս. Մեսրոպյան, Վահրամ Կանաչյան, Հայրապետ Մելքոնյան, Արսեն Հացագործյան, Արսեն Կեորկեղյան⁵¹: Կոմիտեն նախաձեռնություն էր ստանձնում կազմակերպված ձևով հայ գաղթականներին հայրենիք առաջնորդելու գործն իրականացնելու համար, ինչպես նաև որքանոցի աշխատանքները ղեկավարելու: Այս հարցերը համակարգելու համար դաշնագիր է կնքվում Բաղդադի ու Բաքու-

⁴⁵ Սերոբեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 123:

⁴⁶ Նույն տեղում, էջ 124:

⁴⁷ Աթաբաճեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 44:

⁴⁸ Աթեշեան Հ., *Յուշեր ականապետի վկայութիւններ*, Լոս Անճելլոս, Գալիֆորնիա, 1981, էջ 1:

⁴⁹ Նույն տեղում, էջ 239:

⁵⁰ «Կիլիկիա», 14 հունիս, 1919:

⁵¹ Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 247:

բայի կոմիտեների միջև, որով ստեղծված պայմաններում Միջագետքի Տարագիրների հանձնաժողովը գերակա է դառնում⁵²:

Ազգային իշխանությունը 1919 թ. հուլիսի 19-ի թվակիր գրությամբ դիմում է Գևորգ Է Ամենայն հայոց կաթողիկոսին՝ խնդրելով միջնորդել Հայաստանի կառավարությանը՝ հայ գաղթականներին հայրենիք փոխադրելու համար⁵³: Տեղի տալով խորհրդարանի արևմտահայ անդամների պահանջներին՝ դաշնակցական կառավարությունը որոշում է արևմտահայ հասարակական գործիչ Արսեն Կիտուրին՝ որպես Հայաստանի Հանրապետության հյուպատոս, ուղարկել Միջագետք՝ այնտեղի հայերին հայրենիք տեղափոխելու համար, անգամ այդ գործը կազմակերպելու համար երեք միլիոն ռուբլի ներգաղթին հատկացնելու որոշում է կայացնում, սակայն ոչ մի ձեռնարկում այդ ուղղությամբ չի իրականացվում:

Նահր Ալ-Օմարի գաղթակայանը

1920 թ. օգոստոսին, երբ Իրաքում սկսվում է ազատագրական շարժումը, գաղթականը ենթարկվում է հարձակումների: Անգլիացիները, որոշ մտահոգություններ ունենալով, որ տարագիրները կարող են աջակցել ազգայնականներին, ավելի ապահով վայր տեղափոխելու պատրվակով Բաքուրայի 12-13 հազարի հասնող հայ գաղթականներին 1920 թ. օգոստոսի 18-ին տեղափոխում են Բասրայի մոտ գտնվող Նահր Ալ-Օմար բնակավայր, որտեղ մնում են մինչև 1921 թ. հունիսը:

Նոր բնակավայրի աննպաստ կլիմայի պատճառով ժողովուրդը դժգոհ էր, նրանք կենտրոնացել էին հայրենիք վերադառնալու գաղափարի շուրջ: Միջագետքի հայ գաղթականության կոմիտեի նախագահ Լևոն փաշա Շադոյանը բազմաթիվ նամակներ, աղերսագրեր է ուղարկում պատկան մարմիններին՝ կազմակերպելու Նահր Ալ-Օմարում մնացած հայերի ներգաղթը Հայրենիք:

Հայերին Նահր Ալ-Օմարում բնակեցնելով՝ անգլիական զինվորականության նպատակն այլ էր՝ նրանց դարձնել մշտական բնակիչներ՝ մի կողմից աշխատեցնելով հարուստ նավթահանքերում, մյուս կողմից էլ՝ ամրապնդել զորքերը: Հայ գաղթականները հասկանում էին անգլիական կողմի քայլերի մարտավարությունը, որը կանկաժի տակ էր դնում նրանց՝ Հայաստան մեկնելու փաստը, ինչպես նաև իրենց անվտանգությունը, մերժում են անգլիական իշխանությունների պահանջները: 1921 թ. գարնանն անգլիական կողմը դիմում է պատժամիջոցների և վերջնագիր ներկայացնում, որտեղ տեղեկացվում էր, որ հայ որբերին այլևս օգնություն չի ցուցաբերվելու, Հայաստան մեկնելու համար միջոցներ պետք է հայթայթելին ինքնուրույն, այսինքն՝ պետք է համաձայնվելին ապրել ու աշխատել այդ երկրում շուրջ տասը տարի: Միջագետքում անգլիացի բարձրագույն կոմիսար Ռ. Ջ. Քոքսը հեռագրում է գաղութների նախարար Ուինսթոն Չերչիլին, որ չի կարելի հետաձգել

⁵² Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 254, տե՛ս նաև Կեօրկիզեան Արսէն Ա., *նշվ. աշխ.*, էջ 184, 185:

⁵³ Աբրահամյան Ա., *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, Երևան, «Հայաստան», 1967, հ. Բ, էջ 49:

վրանների քանդումը՝ հիմնավորելով այդ փաստը տարածված հիվանդություններով⁵⁴:

Կարճ ժամանակ անց, երբ Միջագետքի անգլիական իշխանությունները փորձ են անում արաբ ոստիկանների միջոցով քանդել վրանաքաղաքները, Նահր Ալ-Օմարի բնակիչները միահամուռ դուրս են գալիս ու քարկոծում նրանց: Հայերը մերժում են նաև Աբադանի նավթահանքերում ժամանակավորապես աշխատելու առաջարկը:

Գաղթականները 1921թ. ամռանը կապ են հաստատում Խորհրդային Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչների հետ՝ խնդրելով հայրենիք վերադառնալ: 1921 թ. հուլիսի 2-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմը կոչով դիմում է Համադանի, Քիրման շահի, Մոսուլի և Նահր Ալ-Օմարի հայ գաղթականական զանգվածներին, որտեղ նշվում է, որ իրենք հետևում են դեպքերի զարգացումներին, երեքուկես տարի տևող գաղթականների տառապանքներին, ուստի ամբողջովին վերջ տալու համար նրանց տառապանքներին՝ կենտկոմը կոչ է անում վերադառնալ հայրենիք ու նվիրվել աշխարհաշեն աշխատանքի⁵⁵:

1921 թ. հուլիսի վերջին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի գաղութային նախարարությունում հրավիրվում է Նահր Ալ-Օմարի գաղթականներին նվիրված խորհրդակցություն, թեև հայերի մասով որոշում չի ընդունվում: Խորհրդակցությանը մասնակցում էր ՀԲԸՄ Գործադիր ժողովի ատենապետ Առաքել Նուբարը:

1921 թ. հոկտեմբերի 7-ին ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ասքանազ Մոավյանը հատուկ նոտա է հղում Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանը, որտեղ առաջարկվում է, որ համապատասխան կարգադրություններ անեն Միջագետքի անգլիական իշխանություններին, որ դադարեցվեն նրանց տեղում ցրելու և անհարազատ հողին կապելու ձեռնարկումները, շարունակեն ցուցաբերվող օգնությունը կամ էլ միջոցներ ձեռնարկեն ու նրանց Կ. Պոլսի վրայով տեղափոխեն Բաթում, որպեսզի Հայաստանի կառավարությունը նրանց կարողանա տեղավորել իր սահմաններում⁵⁶: Ի վերջո անգլիական կառավարությունը համաձայնում է իրենց նավերով գաղթականներին տեղափոխել Բաթում: Դեկտեմբերին շուրջ 3000 գաղթականներ հասնում են Բաթում: 1921թ. դեկտեմբերի 13-ին ՀՍԽՀ ժողովմարտի նախագահությունը քննարկում է նրանց տեղավորման հետ կապված հարցերը: 1922 թ. հունվարի 10-ին Բաթում է հասնում երկրորդ քարավանը: Հետագա ամիսների ընթացքում նույնպես Միջագետքի հայ գաղթականների հոսքը Հայաստան շարունակվում է: Երկու ամսվա ընթացքում 1200 պարսկահայեր անցնում են Պարսկաստան, 8000 գաղթականներ՝ Հայաստան, 500 հայեր 1922-23 թթ. անցնում են Աբադան՝ անգլո-իրանական նավթային ընկերությունում աշխատելու համար:

⁵⁴ Մելիքսեյան Հ., Ու., *Արևմտահայերի բռնագաղթը և տիրուքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան*, Երևան, 1975, էջ 137:

⁵⁵ Մելիքսեյան Հ., Ու., *նշվ. աշխ.*, էջ 135:

⁵⁶ Նույն տեղում, էջ 139, 140:

Այսպիսով, Նահիր Ալ-Օմարում մնում են մոտ 2500 գաղթականներ, որոնց տեղափոխման համար այլևս նալ չի գալիս, ու նրանց մի մասը հարկադրված էր Բասրայի մոտակա շրջաններում գործի անցնել և այնտեղ էլ հաստատվել. «...կիզիչ արեւուն տակ կ'աշխատին իրենց համար բնակարաններ շինելու համար՝ ջանալով հաշտուիլ վայրի աննպաստ պայմաններուն հետ»⁵⁷: Մի մասը տեղափոխվելով Բաղդադ, հիմնում է նոր վրանաքաղաք, որը կոչվել է Կեյլանի Քեմփ (տեղի բարբառով Քեմփ էլ Արմեն Կեյլանի)⁵⁸, մի մասն էլ տեղավորվում է Բասրայի, Շիապայի և Ֆառսի շրջանում⁵⁹:

Հայ գաղթականները հաստատվել են նաև Զախոյում: Գրիգոր Ասթարճյանը պատմում է, որ երբ աշխատանքի բերումով 1917 թ. Զախոյում է եղել, մոտ 300 հոգուց բաղկացած աշխատանքային ջոկատ է հասել Զախո, որի մեջ են եղել նաև Ադանայի հայտնի գերդաստանի անդամ Զաքարիա Պզտիկյանը, մարաշցի Հակոբ Շամլյանը, վանեցի առևտրական Սմբատ Զիտեճյանը: Նրանց աջակցելու համար Գ. Ասթարճյանը բանակցել է հարյուրապետ Ահմեդ բեյի, թաղապետ Մուհամմադ աղա Շեմդինի հետ՝ կարողանալով աշխատավորներին ապահովել վրաններով, իսկ Զաքարիային, Շամլյանին և Սմբատ էֆենդուն տեղափոխել է գավառի կենտրոն⁶⁰: Զինադադարից հետո նրանց թիվը կազմել է մոտ 150 ընտանիք⁶¹:

Արդեն նոսրացած համայնքին 1929 թ. հոկտեմբերի 15-ին Լևոն փաշան փոխադրում է Մոսուլից 40 կմ մղոն հյուսիս՝ Հավրեզքի հողագործական շրջանը: Այս ցրումով էլ գաղութը ստանում է իր վերջնական տեսքը⁶²:

Նշենք, որ 1924թ. Իրաքի հայ առաջնորդարանը Խորհրդային Հայաստանի կառավարության Պարսկաստանի ներկայացուցչի պահանջով կազմել ու ներկայացրել է իրաքահայության վիճակագրություն, ըստ որի հայերի թիվն Իրաքում կազմել է 6539 շունչ⁶³:

Նախօրոք որոշվել էր, որ երեխաներին նույնպես պետք է տեղափոխեին Հայաստան, բայց երեխաների շրջանում տարածված կարմրուկի պատճառով մեկնումը հետաձգվում է: Բացի դրանից մտավախություն կար, որ որբերն իրաքյան սաստիկ շոգերից հետո չեն կարող դիմանալ հայաստանյան ցրտերին, ինչպես նաև հաշվի էին առնվում Հայաստանում տիրող ճգնաժամը, սովը: Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանը «... լուրը առնել է վերջ հանգստությունը կորսնցուցած էր, քաջ գիտենալով, որ այս մատաղ սերունդը այս եղանակին այս դրությամբ մեջ Հայաստան ուղարկելը հեռու է խելօքութենէ»⁶⁴:

⁵⁷ Մինասեան Վ., *Իրաքահայ Գաղութը, Խոր անցեալի գաղթօճախներ*, տե՛ս <http://asbarez.com/arm/author/asbarezstaff/page/2226/>:

⁵⁸ Գեորգեան Կ., *Ամէնուն փարեգիրքը*, էջ 416:

⁵⁹ Նույն տեղում, էջ 421:

⁶⁰ Ասթարճեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 41, 42:

⁶¹ Գեորգեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 430:

⁶² Նույն տեղում, էջ 415:

⁶³ Աբրահամյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 50:

⁶⁴ Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 477:

1921թ. նոյեմբերի 8-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովն ատենապետ Պողոս Նուբարի ու ատենադպիր Գրիգոր Մինապյանի ստորագրությամբ շրջաբերականով դիմում է իր բոլոր մասնաճյուղերին և անդամներին. «Նահր Ալ-Օմարի որբերուն եթե ձեռք չերկարենք, դէպի ստոյգ մահ պիտի դիմեն ... Ներկայ շրջաբերականը երբ ստանաք, հաճեցէք առանց բռնաբերելու կորսնցնելու ժողովի հրաւիրել Միութեան բոլոր անդամներն ու համակիրները, նույնիսկ օտար բարեկամներն ու կարելին, նույնիսկ անկարելին ըրեք ձեր մէջ որբերուն պաշտպաններ գտնելուն համար»⁶⁵: Այս շրջաբերականը նմանատիպ այլ շրջաբերականներից առանձնանում էր նրանով, որ Միությունը ստիպված էր առաջին անգամ հատուկ հանգանակության կոչ անել որոշակի թվով և որոշակի տեղում գտնվող հայ որբերին օգնելու նպատակով⁶⁶: Մինչ այդ Ազգային պատվիրակության խնդրանքով Եգիպտոսի հայ առաքելական թեմի առաջնորդ և Միության պատվո անդամ Թորգոմ Գուշակյանը Երուսաղեմի Հայոց պատրիարքի հետ քննել էր քաղաքում այդ որբերին տեղավորելու հարցը: Պաղեստինի անգլիական իշխանությունները համաձայնվում են այն պայմանով, որ կեցության անհրաժեշտ միջոցների խնդիրը բացառապես լուծելու են ՀԲԸՄ և Ամերիկյան նպաստամատույցը: Երկար բանակցություններից հետո կողմերը գալիս են համաձայնության, որ Ամերիկյան նպաստամատույցը ծախսերի կեսը վերցնում է իր վրա այն պայմանով, որ ՀԲԸՄ-ն իր վրա վերցնի կազմակերպչական ողջ աշխատանքը՝ ընդունում, տեղավորում, դաստիարակում, ինչպես նաև ծախսերի մյուս կեսը: 1921թ. դեկտեմբերին Վահան Մալեգյանը հեռագրով հայտնում է. «Նիր Իսթ եւ Բարեգործական կը վստահեցնեն Նահր Էլ-Օմարի որբանոցը խնամել Երուսաղեմի վանքին մէջ, յայտնեցէք որբանոցի մեկնման թուականը»⁶⁷:

Երեխաները, այդ թվում նաև նրանց միացած ՀԲԸ միության Մոսուլի փակման ենթակա որբանոցի 47 որբերը Երուսաղեմ հասան 1922թ. փետրվարի 11-ին, որտեղ նրանց դիմավորում են Հայոց պատրիարքը, Միության մասնաճյուղի և Խնամակալության պատվիրակները՝ Լևոն Ասատուրի գլխավորությամբ, ինչպես նաև մեծ թվով հայեր: Երուսաղեմ տեղափոխված 816 որբերից 582-ը Վանից էին, 103-ը՝ Կարինից: Երուսաղեմում հիմնվում են Արարատյան և Վասպուրականի որբանոցները⁶⁸:

Այս դեպքերին է անդրադառնում նաև «Արեւ» թերթը, որտեղ նշվում է. «Լ. Ասատուրը, երեք օրէ ի վէր Խնամակալութեան և Մասնաժողովի անդամներուն հետ ձեռք ձեռքի տուած հնարատր բոլոր կարգադրութիւնները ըրած են որբերուն հանգստութեանը համար»⁶⁹: Ազգային և կառավարական իշխանությունների օժանդակությունն ու հովանավորությունն էին նաև ստացել: Որբերին նույն օրը այցելել են նաև Ն. Վ. Հերբերթ Սամուելը և գորավար Սթորսը: Հետո որբուհիներից մեկը

⁶⁵ Մելքոնյան Էդ., *Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն*, Երևան, «Մուղնի», 2005թ., էջ 119:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Նույն տեղում, էջ 120:

⁶⁸ Նույն տեղում, էջ 122:

⁶⁹ «Նահր Օմարի որբերը Երուսաղեմի մէջ», տե՛ս «Արեւ», 24.02.1922թ.:

գորավարին նվիրեց Նահր Ալ-Օմարում գործված գորգ: Զորավարը խոստացավ կառավարությանը միջնորդել՝ գորգագործական արհեստանոց բացելու կանանց ու աղջիկներին աշխատանքով ապահովելու համար: Նա խոստացավ նաև խնդիրների լուծման հարցում հնարավորինս աջակցել որբերին⁷⁰:

Մոսուլում մնացած հայ գաղթականների համար Գ. Աթաբաջյանը նշում է, որ կյանքն աստիճանաբար կայունանում է: Նա, ստանձնելով տեղի որբանոցների առողջապահական հարցերը, օրական երկու որբանոց է այցելում: 1925թ. համար նշում է, որ Մոսուլում որբանոց չէր մնացել, իսկ հայ գաղթականների ընդհանուր վիճակի մասին գրում է. «Արաբը, ի պատիւ իրեն հայ բոլոր արհեստատուրներէն ու բժիշկները, առետրականներն ու գործի մարդիկ գնահատելու եւ միւս բոլորէն աւելի վարպետ և աւելի վստահելի նկատելով միշտ հայուն նախապատվութիւնը տալով դիմած են անոր»⁷¹:

Հայ կամավորական խմբերի ձևավորումը

Եվս մեկ կարևոր դիտարկում իրաքահայ գաղթականների վերաբերյալ, որի մասին տեղեկությունները սահմանափակ են: Որոշ տեղեկություններ հանդիպում ենք Զավեն պատրիարքի, Մուշեղ եպիսկոպոսի և Ե. Վարդանյանի հուշագրություններում: Խոսքը Իրաքի վրանաքաղաքներում տեղակայված հայկական կամավորական ջոկատների մասին է: Այժմ ՀՅԴ արխիվում է գտնվում Լ. Շաղոյանի անձնական արխիվը, որը բացվելուց հետո միայն հնարավոր կլինի ներկայացնել նոր մանրամասներ ջոկատի գործունեության և թվաքանակի մասին: Հատկանշական է, որ այն կազմվել է գրեթե նույն տարիներին, ինչ «Արևելյան լեգեոնը», և չի բացառվում, որ այն որոշակիորեն կրել է նրա ազդեցությունը և ոգևորություն առաջացրել Իրաքում տեղակայված վրանաքաղաքների գաղթականների շրջանում:

Ջոկատին մի պարբերությամբ է անդրադառնում Մուշեղ արքեպիսկոպոսը 1918 թ. նոյեմբերի 12-ի թվագրված նամակում. «Հինգ օր է ի վեր կը գտնուինք Պաքուպայի Ճերմակ քաղաքը, Վասպուրականի և Սալմաստի գաղթականներուն վրանաքաղաքը ... թշուառութիւնը աննկարագրելի է... Հայ կամատուրները կը կանչուին պաշտօնապէս, իմ կողմէս տրուած ցանկին համաձայն: Ինչ վսեմ հակադրութիւն ... Երէկի լացող տղաք, այսօր զինուորական թափորով կ'յառաջանան, երգելով Ցեղին հոգին»⁷²:

Դեռևս Համադանում Սամուել Մեսրոպյանի, Արմենակ Մաքսապետյանի ու Լևոն Շաղոյանի նախաձեռնությունն է եղել անգլիական իշխանությանը հայ զինվորներ տրամադրելու գաղափարը, որին հետևել էին նաև ասորիները: Կարճ ժամանակ անց Համադանից ոչ հեռու գտնվող Ափշինա վայրում կենտրոնացել են շուրջ 4000 հայ և ասորի զինվորականներ, որոնցից առավել տարիքով 1000 հոգու անգլիական զինվորական հրամանատարությունն ազատ է արձակել: Զորքը

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Աթաբաճեան Գ., *նշվ. աշխ.*, էջ 48:

⁷² Մերոբեան Մ., *նշվ. աշխ.*, էջ 117, 118:

բաժանվել է երեք մասի. ասորիները կազմում են Ա գունդը՝ 1500 հոգուց կազմված, 850 հոգուց կազմված Բ գնդում կենտրոնանում են վասպուրականցիները և Գ գունդը՝ 700-հոգանոց, կազմվում է սալմաստեցի, հայ և ասորի բնակչությունից⁷³: Վասպուրականցիների գնդի ղեկավարությունը հանձնվում է Լ. Շաղոյանին: Եղիշե Վարդանյանը, անդրադառնալով զինվորականների այս հատվածին, նշում է, որ այս անգամ զինվորականների տրամադրվածությունն այլ էր: Նրանք աննպատակ էին համարում իրենց գործունեությունը, քանի որ այս պարագայում նրանք չէին կռվում իրենց ժողովրդի ազատագրության համար, կարծում էին, որ անգլիացիներն իրենց գոհողության կարիքը չունեն, քանի որ արդեն իսկ շատ կորուստներ են տվել⁷⁴: Դրան ավելանում էին նաև զինվորական ծանր վարժանքները, կիզիչ արևը, որից ոչ մի ձևով չէին պաշտպանվում, անգամ զինվորական հագուստ չունեին: Միակ հուսադրող գաղափարն այն էր, որ իրենք պետք է իրենց հայրենակիցներին ուղեկցեին հայրենիք, մինչդեռ նրանց Սինա են ուղարկում: Վասպուրականցիների ջոկատն անգլիական հրամանատարությամբ կարողանում է հաջողության հասնել ու հետ մղել թուրքական բանակի առաջխաղացումն այդ ուղղությամբ: Ա. Հացագործյանը նշում է, որ Սինան մինչև զինադադար պաշտպանվել է հայ կամավորների շնորհիվ⁷⁵: Այստեղ նրանք մնում են մոտ քառասուն օր: Նրանց զորաջոկատն աստիճանաբար կանոնավոր բանակի տեսք է ստանում, անգամ զինվորական կոչումներ են ստանում: Հոկտեմբերի 10-ին բանակը Բաղդադ վերադառնալու հրաման է ստանում և 21-օրյա հյուծիչ ու դաժան ճանապարհորդությունից հետո՝ նոյեմբերի 3-ին, Բաքուրա է հասնում⁷⁶: Նրանք մեծ հույսեր ունեին Մոսկովից հայրենիք վերադառնալու, երբ անգլիական հրամանատարությունն առաջարկում է զինվորականությանը պայմանագիր ստորագրել, որի համաձայն հինգ տարի ժամկետով պիտի բանակում ծառայեն: Նոր պառակտություններ են առաջ գալիս, Լևոն Շաղոյանը հրաժարվում է ստորագրելուց, որին հետևում է ողջ զորաջոկատը:

Զավեն պատրիարքը հիշատակում է, որ Մուշեղ եպիսկոպոսը դիմել է անգլիական զինվորական կենտրոնակայան, որպեսզի Բաքուբայի մարզված հայ կամավորներն առանձին վաշտ կազմեն և հայկական անուն կրեն, սակայն նրան պատասխանել են, որ հայերը կարող են բաժին կազմել ասորական զորաբաժնում և մարզվել՝ միայն իրենց զաղթականությանը հայրենիք առաջնորդելու և այնտեղ կարգուկանոն հաստատելու համար: Զավեն պատրիարքը Բաղդադում տեղեկանում է, որ զինվորականությունից պահանջում են ստորագրել հետևյալ փաստաթուղթը. «Կ'ընդունիմ ծառայել Ասորիներու վաշտին մինչև իմ զինուորթենե՛ արձակուելս, նոյնպէս (կ'ընդունիմ) հնազանդիլ օրինական հրամանին անոնց որոնք ինձ բարձր աստիճան ունին, եւ հպատակիլ զինուորական ցամաքի ոյժերուն

⁷³ Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 177:

⁷⁴ Նույն տեղում, էջ 179:

⁷⁵ «Կիլիկիա», հունիս 8, Ադանա, 1919:

⁷⁶ Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 201:

հնդկական բանակին մեջ: Կ'ընդունին ղրկուիլ իմ երկիրս ուր Ասորական գունդը կրնայ ղրկուիլ»⁷⁷:

Հայ զինվորները հրաժարվել էին ստորագրել այս փաստաթուղթը: Զավեն պատրիարքն այցելել է հայ զորքի բանակատեղի, հանդիպել Լևոնի ու իր սպաներից մի քանիսի հետ: Հանդիպել է հայկական զորքը մարզող գնդապետ Մաքար-դիին, ով ցույց է տվել Մուշեղ արքեպիսկոպոսի նամակի պատճենը, ստորագրվելիք օրինակը, որի սկզբում ավելացված էր «Հայկական գունդ» բառերը, և խնդրել են համոզել զինվորներին ստորագրել: Նրանք հավաստիացրել են, որ դրա նպատակը միայն հայկական զորքն ավելի լավ կազմակերպելն է և հնազանդության վարժեցնելը⁷⁸: Անգլիական կողմից հավաստիացումներ ստանալուց հետո Զավեն պատրիարքը հանդիպել է հայկական զորքին: Դրա մեջ չէին մտնում Պարսկահայաստանի զինվորները, որոնք ծառայում էին ասորական վաշտերում: Զավեն պատրիարքը գրուցել է նրանց հետ, ոգևորել նրանց, քննարկել փաստաթղթի ստորագրման հարցը, հորդորել հարաբերությունները չսառեցնել անգլիական զինվորական կառավարության հետ: Սակայն, ինչպես հիշում է Ե. Վարդանյանը, զինվորականները հրաժարվել են լսել պատրիարքի հորդորները և անգլիական կողմին հայտնել են, որ իրենք շնորհակալ են անգլիական կառավարությանը, բայց որևէ թուղթ չեն ստորագրի, պատրաստ են կամավոր ծառայել մինչ հայրենիք գնալը»⁷⁹:

Զավեն պատրիարքն առաջարկել է անգամ ստորագրվող տեքստի վերջում ավելացնել «With the refugees» բառակապակցությունը: Հետագայում ընդդիմությունը շարունակվել է, անգամ անգլիական կառավարությունն առաջարկել է բազմապիսի փոփոխություններ կատարել, համաձայնվել են, որ հայկական կողմը խմբագրի բովանդակությունը, սակայն նրանք վերջնականապես մերժել են զինվորագրության հետ կապված որևէ թուղթ ստորագրել: Զավեն պատրիարքը Բաղդադում հանդիպել է Միհրան Պոյաճյանի, Հալեպցի Միհրանի, Համատանցի Սամուելի հետ, քննարկել վերոնշյալ թեման, և բոլորն էլ կիսել են Զավեն պատրիարքի այն կարծիքը, որ «...այսպիսի թուղթ ստորագրելը բնաւ նպաստաւոր չեմ գտներ, զի ասոր տակը պահուած բան մը կը տեսնեմ, որ բնաւ օգտակար չէ ո՛չ մեր ազգին եւ ո՛չ մեր զօրաց»⁸⁰:

Հայկական կողմից կտրուկ մերժում ստանալուց հետո անգլիական հրամանատարությունը՝ գնենրալ Օսթինի ղեկավարությամբ, դեկտեմբերի 25-ին բանակը զինաթափ անելու հրաման է տվել, մոտ 30 օր աշխատեցրել է, որից հետո էլ նրանց ցրել գաղթականական ճամբարով: Բանակի գործունեության վերաբերյալ Ե. Վարդանյանը գրում է. «...ահա այսպէսով վերջ կը գտնէր Վասպուրականցիներու վերջին բանակը, որն իր յիմարութեամբ կազմուեցաւ ու ապշութեամբ լուծուեցաւ, աչքառու թուով անիմաստ զոհեր մը տալէ վերջ»⁸¹:

⁷⁷ Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս...*, էջ 262, 263:

⁷⁸ Նույն տեղում, էջ 263:

⁷⁹ Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 206:

⁸⁰ Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս...*, էջ 265:

⁸¹ Վարդանեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 214:

Ա. Հացագործյանը գրում է. «Ճանապարհներն արդեն անվտանգ են և անգամ, եթե նավեր չկան, կարելի է ցամաքով տեղափոխել նրանց: «Արդյոք այս վերադարձին համար չէ՞ր, որ ան տառապեցաւ ամենախիտ մարզանքներու տակ: Ու այժմ երբ կարիքը կայ հայ զինուորի՝ ժողովուրդը ապահովաբար երկիրը դարձնելու, այդ զինվորը զինաթափ է ու չգիտի թէ ինչո՞ւ կ'ապրի, ինչ բանի կը ծառայէ այդ անապատի մէջ»⁸²: Այս ընթացքում հայ զինվորները զինաթափ արվելուց հետո իրենց հետագա անելիքները հստակեցնելու համար դիմել են Բաղդադին:

Դեռևս 1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսում Իրաքի մանդատը հանձնվում է Մեծ Բրիտանիային, և Սիրիայից Ֆեյսալ Իբն Հուսեյնն անգլիացիների առաջարկով տեղափոխվում է Իրաք, ժամանակավոր ազգային կառավարության կողմից թագավոր է ճանաչվում և 1921 թ. օգոստոսի 23-ին պաշտոնապես զբաղեցնում գահը: Նա այստեղ շարունակում է դեռևս Սիրիայից սկսած իր հայանապաստ քաղաքականությունը:

Այսպիսով, Իրաքի հայ գաղթականները նույնպես ծանր վիճակում էին գտնվում ու տարբեր առիթներով ու պատճառներով ենթարկվում նաև անգլիական իշխանությունների բազմաբնույթ շահադիտական քաղաքականությանը: Նշենք, որ գաղթականների հոծ բազմությանը մի բնակավայրից մյուսն էին տեղափոխում ու փորձում ամեն կերպ հարմարեցնել իրենց շահերին ու ծառայեցնել իրենց նպատակներին: Իհարկե, չի կարելի նաև անտեսել այն աշխատանքը, որ նրանք իրականացնում են հայ տարագիրների փրկության գործում, բայց նշենք, որ հայերը ենթարկվում են բազմակողմանի ճնշումների՝ տեղի արաբ և քուրդ բնակչության հարձակումներին ու առևանգումներին և, ինչպես նշեցինք, բրիտանական կառավարության կամայականություններին: Այս պարագայում նրանց մի տարբերակ էր մնում՝ տեղափոխվել Հայաստան, ինչը երկար բանակցությունների ու միջամտությունների շնորհիվ վերջապես հաջողվում է: Այսպիսով, չնայած բրիտանական իշխանությունների ստեղծած դժվարություններին, հայ գաղթականների հիմնական մասը տեղափոխվում է հայրենիք:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱՆԱՔԱՂԱՔՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ 1918-1922 ԹԹ.

Նարինե Մարգարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվել է Հայոց ցեղասպանության տարիներին ներկայիս Իրաքի տարածք հասած և Բաղդադի, Մոսուլի, Բաքուբայի և Նահիր Ալ-Օմարի վրանաքաղաքներում տեղակայված հայ գաղթականների վիճակը: Դրան զուգահեռ վերլուծվել են Միջագետքի հայ տարագիրների հանձնախմբի, Ազգային իշխանությունների, ՀԲԸ Միության, Ամերիկյան նպաստամատույցի՝ հայ գաղթականների իրավիճակի բարելավման ուղղությամբ իրականացրած միջոցառումները:

Անդրադարձ է կատարվել վրանաքաղաքներում տեղի ունեցող անցուղար-

⁸² «Կիլիկիա», 14 հունիս, 1919:

ձին, հայ կամավորական ջոկատների ստեղծմանը, վերլուծվել է տեղի բրիտանական ղեկավարության ունեցած դիրքորոշումը հայ գաղթականների նկատմամբ: Անդրադարձ է կատարվել նաև նրանց՝ Խորհրդային Հայաստան տեղափոխվելու աշխատանքներին, ներկայացվել վերջինիս կազմակերպման հետ կապված մանրամասներ:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Իրաք, հայ գաղթականներ, վրանաքաղաք, անգլիական իշխանություն, հայ կրոնական առաջնորդներ, տեղաբաշխում:

TENT CAMPS OF ARMENIAN REFUGEES IN IRAQ IN 1918-1922

Narine Margaryan

RESUME

The paper is describing the conditions of Armenian refugees who during the Armenian Genocide reached the territory of current Iraq and had been settled in tent cities of Baghdad, Mosul, Baquba and Nahr al-Omar. The author is also analyzing the actions of Mesopotamia's Armenian refugees' committee, National Authorities, AGBU and American Relief aimed at improving conditions of Armenian refugees.

The paper is describing the life in tent cities, the process of creation of Armenian voluntary brigades, the stance of local British leadership towards Armenian refugees has been analyzed too. The author studied the relocation of Armenian refugees into the Soviet Armenia and brought about key details of the process.

Keywords: Armenian genocide, Iraq, Armenian refugees, tent camps, British government, Armenian religious leaders, distribution.

ПАЛАТОЧНЫЕ ЛАГЕРЯ ДЕПОРТИРОВАННЫХ АРМЯН В ИРАКЕ В 1918-1922 ГГ.

Нарине Маргарян

РЕЗЮМЕ

В статье посвящено положение депортированных армян, добравшихся до территории современного Ирака и поселенных в палаточных лагерях в Багдаде, Мосуле, Бакубе и Нар аль-Омаре во время Геноцида армян. Также проанализированы меры Комиссии по вопросам армянских беженцев Месопотамии, Национальных властей, Всеармянского Благотворительного Союза (ВАБС), Американского комитета по оказанию помощи на Ближнем Востоке, нацеленные на улучшение положения депортированных армян.

Описывается повседневная жизнь армян в палаточных лагерях, проанализирована позиция британского правительства по отношению к депортированным армянам. Затронута также тема репатриации армян в Советскую Армению, представлены подробности организации данного процесса.

Ключевые слова: Геноцид армян, Ирак, депортированные армяне, палаточные лагеря, британское правительство, армянские религиозные лидеры, размещение.

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ՆՈՐ ՕՍՄԱՆՆԵՐ

Ռեզինա Գալուստյան

XV-XVI դդ. և նույնիսկ դրանից ավելի ուշ թուրքերի մոտ բացակայում էր մեկ միասնական էթնոնիմ, ընդհանուր ազգային ինքնագիտակցություն: Էթնիկական ինքնագիտակցությունն այս դեպքում փոխարինվում էր կրոնականով¹: XIX դ. Օսմանյան կայսրությունում ձեռնարկված թանգիմաթյան բարենորոգումները² երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքացիական կյանքում որևէ էական փոփոխություն չիրականացրին: Դրանց արդյունքում, սակայն, կայսրություն մուտք գործեցին եվրոպական ազատական գաղափարները, որոնցով տոգորված երիտասարդների մի խումբ սկսեց իրեն համարել հայրենասեր և ազգայնական: Նրանք հիմնականում բարձր դասակարգի ներկայացուցիչներ էին, որոնց համար մատչելի էր եվրոպական կրթությունը³: Նրանց ցանկությունը կայսրությունը քայքայումից փրկելն էր՝ օտարերկրյա միջամտություններին վերջ դնելով և ժողովրդի մեջ ազգայնական գիտակցություն արթնացնելով, իսկ մեթոդը՝ կառավարման ամենաարդիական ձևի հաստատումը:

1865 թ. Կոստանդնուպոլսում այդ երիտասարդները հիմնեցին գաղտնի «Նոր օսմանների ընկերություն» (*“Yeni Osmanli Cemiyeti”* կամ նոր օսմաններ) կազմակերպությունը⁴, որը բաժանված էր յոթ հոգուց բաղկացած օթյակների⁵: Այսպիսով, շատ արագ ստեղծվեց կազմակերպություն՝ մի քանի տասնյակ խմբակներից կազմված, որի գաղափարական դեկավարներն էին թուրք գրող Մեհմեդ Նամըք Բենա-

¹ Տե՛ս Еремеев Д. Е., *Этногенез турок*, М., 1971, էջ 159:

² Բարենորոգումների բովանդակության քննությունը մանրամասն տե՛ս Սիրունի Հ. Ճ., Թանգիմաթ և հայեր, «*Պարմարանասիրական հանդես*», № 4, 1966 թ., էջ 34-37, 65:

³ Սարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 104:

⁴ Տե՛ս Սիմոնյան Հր., *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը*, Ե., 1986, էջ 35, Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey*, third ed., Oxford University Press, 2002, էջ 152-154:

⁵ Նրանք ենթարկվում էին նախագահին («բեիս»), որը կապ էր պահպանում մյուս ինը խմբերի նախագահների հետ, բայց չգիտեր այլ խմբերի մեջ մտնող անդամներին, այսինքն՝ ծանոթ էին միմիայն իրենց ենթականերին (տե՛ս Стамбулов В., *Намык Кемаль*, М., 1935, էջ 104): Օթյակների բաժանվելու մեթոդը հատուկ էր նաև հետագայում ստեղծված «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը (մանրամասն տե՛ս Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ер., 2013, էջ 13):

ը, հրապարակախոս և գրող Աբդուլ Զիյա բեյը (ավելի ուշ՝ փաշա), սուլթանական պալատի քարտուղարության նախկին աշխատակից, կրոնական կրթություն ստացած գրականագետ Ալի Սուալի էֆենդին, գրականագետ Իբրահիմ Շինասին, գեներալ Հուսեյն Վասըֆ փաշան, ավելի ուշ՝ նաև Ահմեդ Միդհատ փաշան⁶:

Նոր օսմանների գործունեությունը խորհրդային արևելագետ Յու. Պետրոսյանը բաժանում է հետևյալ փուլերի. 1)1865-1867 թթ.՝ ստեղծումից մինչև արտաքսում, 2)1867-1870 թթ.՝ գործունեություն տարագրության մեջ (սահմանադրական գաղափարների որդեգրում, դրանց քարոզ մամուլի միջոցով), 3)1870-1873 թթ. սկիզբ՝ գաղափարների տարածում կայսրությունում⁷: Նոր օսմանները օսմանիզմի գաղափարախոսության շրջանակներում առաջին անգամ ձևակերպեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «ազգ» և «հայրենիք» (իրականում որպես «օսմանյան ազգ» և «օսմանյան հայրենիք»), որոնք որոշակի ձևափոխումից հետո կազմեցին թուրքական ազգայնականության հիմքը⁸:

Նոր օսմանների շարժումը հասկանալու համար հարկավոր է ծանոթանալ մամուլում տեղի ունեցած զարգացումներին, քանի որ շարժման ազդեցիկ անդամները հենց լրագրողներ էին, իսկ հասարակության վրա ներգործելու նրանց գործիքը մամուլն էր: Փոփոխությունների նոր շրջանը բացվեց ոչ թե քաղաքական գործիչների, այլ գրողների և խմբագիրների շնորհիվ: Բառեզրերը, որոնք նրանք հայտնաբերեցին կամ առաջ քաշեցին իրենց ստեղծագործություններում, ազգայնականների հետագա սերունդների համար դարձան գաղափարական գործիք:

Մամուլի և լեզվի բարեփոխումներ

Թուրքական ազգայնականության գաղափարի կերտումը սկսվեց թուրքերենի ստեղծմամբ⁹: Նոր օսմանները կարևորում էին մամուլի միջոցով օսմաներեն գրական լեզվի ժողովրդականացումը: Բնակչությանը կրթելու խնդիրն առաջնային տեղ էր զբաղեցնում նոր օսմանների ծրագրում¹⁰, քանի որ Օսմանյան կայսրությունը «թափալվում էր ամենախորին տգիտության մեջ»¹¹, նրանց քարոզած գաղափար-

⁶ Տե՛ս Պետրոսյան Յու. Ա., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958, էջ 35, Zürcher E. J., *Turkey, a modern history*, I. B. Tauris, 2004, էջ 69:

⁷ Տե՛ս Պետրոսյան Յու. Ա., *Նշվ. աշխ.*, էջ 69:

⁸ Տե՛ս Տաֆրասթյան Ք. Ա., *Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.)*, Ер., 1985, էջ 8:

⁹ Տե՛ս Փադеева И. Л., *Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм), XIX-начало XX в.*, М., 1985, էջ 117:

¹⁰ Տե՛ս Желтяков А. Д., *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.)*, М., 1972, էջ 75:

¹¹ Տե՛ս Սարուխան, *Նշվ. աշխ.*, էջ 105: Թվային տվյալներ XIX դ. երկրորդ կեսին թուրքերի կրթական մակարդակի վերաբերյալ գոյություն չունեն, սակայն Դ. Երեմենը նշում է, որ XX դ. սկզբին կրթված չէր թուրքերի 90%-ը, հույների՝ 50%-ը, հայերի՝ 33%-ը: Երեմենը դա կապում էր նաև թուրք կանանց կրթության բացակայության հետ, քանի որ անկիրթ և հետամնաց մայրերը շատ քիչ բան կարող էին տալ իրենց երեխաներին, բացառությամբ տարրական դաստիարակության (տե՛ս Еремеев Д. Е., *Նշվ. աշխ.*, էջ 181): Տոկոսային նման հարաբերությունը թույլ է տալիս մեզ պատկերացում կազմել այն մասին, թե ինչպիսին էր իրավիճակը XIX դ. երկրորդ կեսին:

ները թերթերի միջոցով չէին տարածվում: Գրական լեզու համարվող օսմաներենով գրված նյութերը հասկանալի էին նեղ՝ «լուսավորյալ մարդկանց», հետևաբար նրանց քաղաքականությունը մնում էր անկատար:

XV-XVI դդ. սկսած՝ Օսմանյան կայսրության պաշտոնական և գեղարվեստական լեզուն օսմաներենն էր, որը տարբերվում էր խոսակցական թուրքերենից, և հասարակ ժողովուրդն այն չէր հասկանում, իսկ կրոնի լեզուն արաբերենն էր¹²: Մինչև 1831 թ. թուրքական թերթ տպագրելու որևէ լուրջ փորձ չէր արվել: Դա հնարավոր դարձավ միայն Մահմուդ 2-րդի կողմից կայսրությունն արևմտականացնելու քաղաքականության ընթացքում¹³: Ազատ մամուլի սկիզբը համարվում է 1860 թ., երբ լույս տեսավ առաջին ոչ պաշտոնական «Թերջուման-ի ահվալ» թերթը: Թերթի ծրագրում «նորօսմանյան գրականության հայր»¹⁴ Իբրահիմ Շինասին լավագույնս արտահայտում է առաջին ազատականների գաղափարները շեշտելով, որ թուրքական մամուլ գրեթե գոյություն չունի, այն դեպքում, երբ ոչ մուսուլմաններն օգտվում են իրենց լեզվով թերթեր տպագրելու օրենքից, ավելի, քան է նրանց իրավունքը¹⁵: «Թերջուման-ի ահվալը», որը լույս է տեսել մինչև 1866 թ., հսկայական նշանակություն ունեցավ թուրքական գրականության և թուրքական լեզվի բարեփոխման մեջ¹⁶: 1862 թ. Իբրահիմ Շինասին սկսում է հրատարակել Թուրքիայում առաջին մասնավոր «Թասֆիր-ի էֆքիյար» թերթը¹⁷: Շինասիի վտարանդիության ընթացքում թերթի խմբագիրը դարձավ Նամըք Քեմալը: Իր գործունեության վաղ շրջանում Քեմալը դասական գրելաոճի կողմնակից էր, բայց աստիճանաբար հակվեց երիտասարդ գրականագետների այն խմբին, ովքեր ցանկանում էին հրաժարվել արաբա-պարսկական գրականության նմանակումից¹⁸: Նամըք Քեմալը գրում էր, որ չկա ավելի անհմատ գործ, քան «ընտրյալների» համար գրելը, իսկ Ալի Սուավին առաջարկում էր թուրքերեն թարգմանել մուսուլմանական աղոթքները¹⁹: Նոր օսմաններն առաջարկում էին օսմաներենի փոխարեն կիրառել թուրքերենը. մաքրել օսմաներենն արաբերեն, պարսկերեն փոխառություններից, դարձվածքներից և

¹² Տե՛ս Еремеев Д. Е., նշվ. աշխ., էջ 153:

¹³ Տե՛ս Ahmed Emin, *The Development of Modern Turkey as Measured by its Press*, New York, 1914, էջ 26:

¹⁴ Гордлевский Вл., *Очерки по новой османской литературе*, М., 1912, стр. 4.

¹⁵ Տե՛ս Bernard Lewis, նշվ. աշխ., էջ 148:

¹⁶ Տե՛ս Ahmed Emin, նշվ. աշխ., էջ 34, Bernard Lewis, նշվ. աշխ., էջ 147:

¹⁷ Տե՛ս Akşin Sina, *Turkey: From Empire to Revolutionary Republic, the Emergence of Turkish Nation from 1789 to the Present*, New York, էջ 32, Bernard Lewis, նշվ. աշխ., էջ 137, Zürcher E. J., նշվ. աշխ., էջ 68, Ahmed Emin, նշվ. աշխ., էջ 35: Ընդհանուր առմամբ նոր օսմանների քաղաքական գաղափարներն արտահայտող թերթերը հետևյալներն էին. «Թասֆիր-ի էֆքիյար» (գաղափարների արտահայտիչ), «Թերջուման-ի ահվալ» (իրադարձությունների մեկնաբան), «Հյուրիեթ» (ազատություն), «Մուհրիր» (թղթակից), «Իբրեթ» (լսատ), «Իթթիհադ» (միասնություն), «Իսկիյար» (հեղափոխություն), «Վաթան» (հայրենիք), «Բասիրեթ» (խորաթափանցություն):

¹⁸ Տե՛ս Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 35, Bernard Lewis, նշվ. աշխ., էջ 141:

¹⁹ Տե՛ս Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 63:

այն ավելի հասարակ դարձնել²⁰: Համաձայն Քեմալի՝ լեզուն (թուրքերենը) հանրության վրա ներգործելու հզոր միջոց է, համընդհանուր լեզուն համախմբում և ձուլում է, իսկ Սուալին առաջնորդվում էր «թուրքերեն խոսողը թուրք է» սկզբունքով²¹:

1868 թ. հունվարի 18-ի «Մուհրիբի» համարում տպագրվում է անգլիացի արևելագետ Չ. Ուիլիսի հոդվածն այն մասին, որ անհրաժեշտ է ազգային խնդիրը լուծելու նպատակով թուրքերենը դարձնել բոլոր «օսմանցիների» համար միակ և համապարտադիր լեզու՝ որպես օրինակ բերելով անգլիացիներին, որոնք անգլերենը պարտադիր դարձրին կելտերի, բրիտների, շոտլանդացիների և իռլանդացիների համար, ավելին՝ հոդվածից առաջ տրված նախաբանում Սուալին, կողմ արտահայտվելով գաղափարին, առաջարկում է բոլոր դպրոցներում ուսուցումը թուրքերենով անցկացնել²²: Այս վերջին պնդման համաձայն՝ «Հյուրիեթը» գրում էր. «Եթե լուսավորության գործը համակարգվի, ապա պաշտոնական լեզուն կտարածվի: Տարբեր միլիթների ուղեղում առկա թշնամանքը կվերացվի... Հայրենասիրության գաղափարը կնվաճի բոլոր ուղեղները»²³: Թուրքերենի կատարելագործման մեջ Նամըք Քեմալի ներդրումը հսկայական էր: Նոր գաղափարներին համապատասխան նա ստեղծեց նոր բառապաշար, դրանց հաղորդելով նաև նոր իմաստ. ֆրանսերեն *պատրիեին* համարժեք դարձավ արաբերեն *վաթանը* (*Vatan*)՝ հայրենիք իմաստով, իսկ *հյուրիեթը* (*hürriyet*) և *միլլեթը* (*millet*) փոխառվեցին ազատություն և ազգ իմաստներով²⁴: 1867 թ. Բելգրադի ամրոցը սերբերին հանձնելու վերաբերյալ «Մուհրիբում» հրատարակած հոդվածը հիմք հանդիսացավ թերթը փակելու, իսկ հեղինակներին տարատեսակ պաշտոնների նշանակելով Կոստանդնուպոլսից հեռացնելու համար²⁵: Նրանք նախընտրեցին փախչել Լոնդոն և այնտեղից վարել իրենց քարոզչությունը: Լոնդոնում լույս ընծայվող «Հյուրիեթի» առաջին համարը երկու առաջնային հոդված ուներ հետևյալ գլխագրերով. «Հայրենիքի հանդեպ սերը ճշմարիտ հավատքից է», որը քարոզում էր միասնական հայրենիքի գաղափարը բոլոր օսմանցիներին և «Եվ խորհրդակցեք նրանց հետ խնդրի վերաբերյալ» սկզբունքը: Այս վերջինը մեջբերում էր Ղուրանից, որը կոչված էր հիմնավորելու խորհրդատվական և ներկայացուցչական կառավարություն հիմնելը: Այս երկու

²⁰ Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 14:

²¹ Տե՛ս Ashmore R. D., Deaux Kay, McLaughlin-Volpe Tracy, An Organizing Framework for Collective Identity: Articulation and Significance of Multidimensionality, *Psychological Bulletin*, 2004, Vol. 130, No. 1, էջ 93, Сафрастян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 99:

²² Տե՛ս Желтяков А. Д., *նշվ. աշխ.*, էջ 110, 111: Մուհրիբի էջերում հաճախ էին հանդիպում մուսուլմանների քրիստոնյաների դեմ հրահրող հոդվածներ (տե՛ս Սարովյան, *նշվ. աշխ.*, էջ 106):

²³ Մեջ բերումը «Հյուրիեթի» 1868 թ. 24-րդ համարից է (տե՛ս Сафрастян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 101):

²⁴ Տե՛ս Zürcher E. J., *նշվ. աշխ.*, էջ 68, տե՛ս նաև Желтяков А. Д., *նշվ. աշխ.*, էջ 297:

²⁵ Տե՛ս Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 36: Հոդվածում Սուալին մասնավորապես գովերգում էր և՛ ամրոցը, և՛ նախնիներին, ամրոցի տակ նահատակված զինվորներին, որոնք գրավել էին այն և այս ամենի հետ քննադատում դիվանագետներին, որոնք հանձնել էին ամրոցը. «Մեր նախնիները արյուն թափելով, թիզ առ թիզ գրավել են այս հողերը, իսկ մենք՝ նրանց անարժան հետնորդներս, քայլ առ քայլ ամեն ինչ վերադարձնում ենք... Եթե մի տեղ հավաքենք Բելգրադի տակ ընկած մեր նախնիների ոսկորները, անանցանելի սար կգոյանա» (Гордлевский Вл., *նշվ. աշխ.*, էջ 33):

հողվածներն ընդգծում էին նոր օսմանների քաղաքական ծրագրի երկու հիմնական ուղղությունները²⁶:

1871 թ. աքսորից վերադառնալուց հետո ևս Քեմալը շարունակեց տպագրական գործը և սկսեց հրատարակել «Իրրեթը», որտեղ հիմնականում հանրայնացվում էին ազատության, սահմանադրության, ինչպես նաև հայրենիքի գաղափարները²⁷: Սակայն այնպիսի երկրում, որտեղ պետական պաշտոնյաներից բացի շատ քիչ մարդ կարող էր գրել և կարդալ, մամուլի ձեռքբերումները չնչին էին²⁸: Հասարակության գաղափարական ոլորտում այդ ձեռքբերումներից էր այն, որ հակառակ նախկինում գերիշխող կարծիքի, երբ ամբողջ թուրք բնակչությունը վստահ էր այլ ազգերի հանդեպ իր գերիշխող դիրքին, վերագրում էր դժբախտությունները բախտին և աստվածային նախախնամությանը, մամուլը բարձրաձայնում էր անխուսափելի վտանգների՝ տնտեսական խնդիրների, կրթության բացակայության և ազգային թերաբժեքության մասին²⁹: Այս շրջանում մամուլի մեջ բազմաթիվ էին ազգի գոյատևման վտանգի մասին հողվածները: Դրանք ներառում էին ինչպես **արտաքին**, այնպես էլ **ներքին վտանգի** մասին թեմաները: Վտանգի աղբյուրները մամուլում ավելի նյութական, շոշափելի և որոշակի էին դառնում:

Օսմանյան ազգ

Օսմանականությունը (osmanlilik) առաջին գաղափարական-քաղաքական ուսմունքն էր, որն առաջ էր քաշվել՝ բազմէթնիկ Օսմանյան կայսրության պահպանման և գոյատևման անհրաժեշտությունը «տեսականորեն» հիմնավորելու համար: Այն նաև կանխամտածված քաղաքական երկարաժամկետ միջոցառումների առաջին համակարգն էր՝ ուղղված կայսրության բնակչության թրքացմանը՝ անկախ ազգից և դավանանքից սուլթանի բոլոր ստորադասներից միատարր հանրույթ հիմնելու նպատակով³⁰: Մուսուլմանների և ոչ մուսուլմանների ձուլումն առաջ էր քաշվել թանգիմաթի միջոցով և քարոզվում էր Օսմանյան կայսրության մեծ վեզիրներ Մեհմեդ Էմին Ալի փաշայի և Մեհմեդ Ֆուադ փաշայի կողմից: Նրանք իրենց անձնական նամակագրություններում ընդգծում էին թուրքերի գերակա դերը նոր ստեղծվելիք այդ հանրության մեջ՝ դա կապելով թուրքերի «ոռասպական» հատկանիշների հետ³¹: Կայսրության փրկության միակ միջոց նրանք համարում էին

²⁶ St' u Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 154, 155:

²⁷ St' u Желтяков А. Д., *նշվ. աշխ.*, էջ 153:

²⁸ St' u Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 40:

²⁹ St' u Ahmed Emin, *նշվ. աշխ.*, էջ 49:

³⁰ St' u Сафрастьян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 5: Միացյալ ազգ ստեղծելու դրույթների մասին մանրամասն տե՛ս Սաֆրաստյան Ս., *Երիտասարդ Թիւրքիա*, Պարիզ, 1908, էջ 9:

³¹ St' u Davison R. H., Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality in the Nineteenth Century, *The American Historical Review*, vol. 59, №4 (Jul., 1954), էջ 851, Фадеева И. Л., *նշվ. աշխ.*, էջ 80-81, Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Եր., 2009, էջ 55, 56:

«միաձուլումը»³², որը պետք է իրականացվեր կրթության և քրիստոնյաների զինվորական ծառայությունը թույլատրելու միջոցներով³³:

Նոր օսմանների կազմակերպությունը ձևավորվել էր որպես ընդդիմություն տիրող կարգերին, մասնավորապես եվրոպական արժեքներին նմանակելուն, կոնցեսիաներին, կապիտուլյացիաների ռեժիմին, արտաքին պարտքին: Նրանք գտնում էին, որ թանգիմաթյան բարենորոգիչները երկրի ծանր վիճակը թեթևացնելու փոխարեն արագացրին նրա քայքայումը: Զիյա փաշայի խոսքերով, եթե 1592-1839 թթ. երկիրը դեպի կործանում էր գնում երկձի կառքի արագությամբ, ապա 1839-1869 թթ. սլացավ գնացքի արագությամբ³⁴: Նրանք գիտակցում էին, որ բարեփոխումները հանգեցրել էին որոշակի փոփոխությունների, սակայն այդ փոփոխությունների մեջ կային շատերը, որոնք նրանք չէին ընդունում³⁵: Համաձայն նրանց տեսակետի՝ քրիստոնյաները ստացել էին մեծ իրավունքներ, մինչդեռ մուսուլմանների իրավունքները ոտնահարվել էին³⁶: Թանգիմաթի բարենորոգիչների գաղափարներին դեմ հանդես գալու հետ, սակայն, նոր օսմանները ևս կարծում էին, որ կայսրության փրկության և դրա ամբողջականության պահպանման միակ միջոցը քրիստոնյաների «միաձուլումն» է, այդ պատճառով նրանք արդարացի համարեցին ավանդական օսմանիզմի գաղափարը՝ համարելով, որ դրա շուրջ կարելի է համախմբել կայսրության բոլոր ժողովուրդներին³⁷, գործի դնելով կրթական համակարգը, ինչպես նշում էր «Հյուրիեթը». «Եթե լուսավորության գործը համակարգվի, ապա պաշտոնական լեզուն կտարածվի: Տարբեր միլլեթների ուղեղում առկա թշնամանքը կվերացվի. հայրենասիրության գաղափարը կգրավի բոլոր ուղեղները»³⁸: Սա թերևս թանգիմաթի բարենորոգիչների և նոր օսմանների գաղափարախոսությունների միջև գոյություն ունեցող միակ ու հատկանշական նմանությունն էր՝ ստեղծել միատարր կայսրություն՝ թուրքերի գերիշխանությամբ:

Նոր օսմանների գաղափարախոսներից Նամըք Քեմալը պնդում էր, որ բոլոր նրանք, ովքեր ապրում են օսմանյան հողում, օսմանցիներ են, անկախ նրանից, թե ինչ կրոն էին դավանում կամ ինչ լեզվով էին խոսում: Սա կոչվում էր «ազգայությունների միություն», ինչպես նաև «օսմանիզմ» կամ «օսմանյան ազգայնականություն»³⁹: Ալի

³² Իր քաղաքական կտակում Ֆուադ փաշան նշում է. «Ներքին գործերի մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն դեպի մի նպատակ միայն, այն է՝ մեր ցեղերի համաձուլումը: Առանց այս համաձուլման մեր կայսրութեան միութիւնը ինձ անկարելի է թվում: Սրանից յետոյ այս մեծ կայսրութիւնը ոչ յոյներին և ոչ պալոսներին կարող է պատկանել. նմանապէս էլ ոչ այս կրօնքին և ոչ ևս այն ցեղին» («Արօր միամտեայ հանդէս», Թիֆլիս, 1910, I տարի, № 6-7, էջ 185):

³³ Տե՛ս Сафрастьян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 42:

³⁴ Մեջբերումը «Հյուրիեթի»՝ 1869 թ. 36-րդ համարից է (տե՛ս Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 172):

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 170, 171:

³⁶ Զիյայի դիրքորոշումը տե՛ս Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 139, Նամըք Քեմալինը՝ էջ 142, Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality...*, էջ 863, Желтяков, *նշվ. աշխ.*, էջ 133:

³⁷ Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 38, Սապահ-Գիլեան Ս., *նշվ. աշխ.*, էջ 68:

³⁸ Մեջբերումը «Հյուրիեթի»՝ 1868 թ. 24-րդ համարից է (Сафрастьян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 101):

³⁹ Տե՛ս Akşin Sina, *նշվ. աշխ.*, էջ 36: Դեռևս 1839 թ. Գյուլիանեի հաթթը շերիֆում առաջին անգամ «միլլեթ» բառն օգտագործվեց «ժողովուրդ» իմաստով, որպես ընդհանրական դիմելաձև՝

Մուավին պնդում էր. «Թուրքիա անվանվող երկրում գոյություն ունի միայն մեկ ազգություն (nationalité)-օսմանցի»⁴⁰: Կայսրության բոլոր ժողովուրդները կազմում են մեկ ընդհանրության բաղկացուցիչ մասեր, և էթնիկական, կրոնական, լեզվական գործոնները ստորադասվում են շատ ավելի կարևոր գործոնների, որոնք են ընդհանուր ենթակայությունը, «աշխարհագրական պայմանների» համընկնումը, «շահերի» համընկնումը, այդ թվում՝ տնտեսական, «համաօսմանական գաղափարի» առկայությունը⁴¹:

Թվում էր, թե այս քաղաքականությունը հանգում էր բոլոր ժողովուրդների իրավահավասարությանը, սակայն այն նպատակ էր հետապնդում պահպանելու թուրքերի գերիշխող դիրքը կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ⁴²: 1868 թ. հունվարի 10-ի «Մուհրիրի» համարում կարդում ենք. «...հավասարությունը չի կայանում նրա մեջ, որ ասենք՝ թո՛ղ խանութպան Մեհմեդ աղան և բեռնակիր Հակոբը հավասար լինեն բոլոր առումներով»: Դա միայն նշանակում է, որ «ցածրերը և բարձրերը» պետք է իրավահավասար լինեն շարիաթի կանոնների առաջ⁴³: Նոր օսմանները նաև առաջինը սկսեցին պնդել, որ թուրքական ռասան իր պատմական, քաղաքական, ռազմական և մշակութային կողմերով ամենաբարձրն ու ամենահինն է, որն անգնահատելի դեր է կատարել մարդկության պատմության մեջ⁴⁴: Այս համատեքստում Նամըք Քեմալը նշում էր. «Օսմանների շարքում և՛ մարդկանց թվով, և՛ ընդունակություններով առաջին տեղը զբաղեցնում են թուրքերը, որոնք ունեն այնպիսի առավելություններ, արժանիքներ և որակներ, ինչպիսիք են ճանաչողական ունակությունների լայնություն, բնատուր տոկոսություն, դիմացկունություն և հանդարտություն»⁴⁵: Այլ Մուավին պնդում էր, որ թուրքական ռասան քաղաքական, մշակութային և ռազմական առումներով ամենահին և լավագույն ռասան է, իսկ թուրքերի լեզուն աշխարհի ամենահարուստ և կատարյալ լեզուներից է⁴⁶:

Թուրքերի ընտրյալ ազգ լինելու գաղափարին զուգընթաց աճում էր քրիստոնյաների երկրորդ կարգի քաղաքացի լինելու գաղափարը, ինչը խոր արմատներ ուներ: Դա իրականում ծագում էր իսլամի հիմնադրույթներից, որոնք կազմում էին քաղաքացիական փոխհարաբերությունների, իրավունքի և օրենքի հիմքը: Մուսուլմանները «ղազի» էին՝ իսլամի՝ ճշմարիտ հավատքի ազնվական մարտիկներ, քրիս-

առանց էթնիկական և կրոնական պատկանելության խտրության: 1856 թ. արդեն պաշտոնական դիմելաձևի օրինակ էին «սուլթանի ենթականեր», «Բարձր Դռան ենթականեր» արտահայտությունները (տե՛ս Фадеева И. Л., *նշվ. աշխ.*, էջ 58, 64, Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality...*, էջ 852):

⁴⁰ Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality...*, p. 862.

⁴¹ Տե՛ս Сафрастьян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 95-97:

⁴² Տե՛ս Սիմոնյան Հր., *նշվ. աշխ.*, էջ 37:

⁴³ Желтяков, *նշվ. աշխ.*, էջ 113:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 51:

⁴⁵ Петросян Ю. А., *նշվ. աշխ.*, էջ 57:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 59:

տոնյաները՝ «գյավուր»՝ անհավատներ: Իրավահավասարությունը «անհավատի» հետ անընդունելի էր մուսուլմանի համար: Օսմանյան կայսրությունում էական քաղաքական, սոցիալական, նույնիսկ տնտեսական դասակարգում էր մուսուլմանը, զիմնին և հարբին: Եռաստիճան տարբերակումը հավատացյալի, ենթակա անհավատի և թշնամի անհավատի միջև ավելի կարևոր էր, քան ազգային տարբերակումները: Միակ հատկանիշը, որով մարդը ճանաչում էր բարեկամին և օտարին, կրոնն էր, և մուսուլմանի համար օտարերկրացի հավատակիցն ավելի մոտ էր, քան իր քրիստոնյա հարևանը⁴⁷: Ինչպես նշում է Լևոնյանը, քննելով XVI-XVII դարերի մուսուլման պատմագիրների գրվածքները. «Մուսուլմանները թալանում են, քրիստոնյաները՝ թալանվում, սա արդար և օրինական է: Երբ մուսուլմանն է մահանում, նա «մարտիրոսանում է», իսկ քրիստոնյան «կոտորվում» է: Քաֆիրի կամ գյավուրի այս գաղափարը քրիստոնյաների հանդեպ մուսուլմանների վերաբերմունքի հիմքում էր: «Գյավուրը», ինչ էլ որ լինի այդ բառի ծագումը... նշանակում է անհավատ, ստոր, ցածր, շուն, ստրուկ, սպանդի վիճակված: Այն ունի շատ ցածր սոցիալական նշանակություն»⁴⁸:

Պիտակավորման այս ձևի արմատավորված լինելու մասին է փաստում նաև 1867 թ. Մոսուլից, Բաղդադից, Դիարբեքիից և Սարանոյից Մեծ Բրիտանիայի հյուպատոսների ներկայացրած զեկուցագիրը: Դիվանագետները մասնավորապես փաստում են, որ քրիստոնյաների վիճակը բարելավվել է թանգիմաթյան բարենորոգումների արդյունքում, սակայն բոլորը միաբերան նշում են, որ դրանք չկարողացան փոխել քրիստոնյաների իրավազրկությունը երկու հիմնարար հարցում՝ քրիստոնյայի կողմից դատարանում մուսուլմանի դեմ վկայություն տալու և քրիստոնյաների պիտակավորման (գյավուր): Դիվանագետները դա կապում են իսլամի դրույթներին հակառակ լինելու և այն բանի հետ, որ, հակառակ զբաղեցրած դիրքին, հարստությանը և կրթությանը, քրիստոնյան միշտ ստորադասվում է մուսուլմանին⁴⁹: Քրիստոնյաները միշտ համարվել են երկրորդ կարգի քաղաքացիներ՝ կրոնի տարբերության և թուրքերի կողմից նվաճվելու պատճառով⁵⁰: Հասարակության մեջ արդեն իսկ գոյություն ունեցող խտրականության այս և այլ դրսևորումները խաղարկվեցին իշխող վերնախավի կողմից և՛ որպես խթանիչ, և՛ որպես արդարացում՝ Հայոց ցեղասպանության տարիներին իսլամադավան զանգվածի մասնակցությունը կոտորածին և թալանին ապահովելու համար:

⁴⁷ Տե՛ս Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 329, Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality...*, էջ 844: Քրիստոնյաների հազուսուրբ պետք է տարբերվեր մուսուլմանների հազուսուրբ, օրինակ, երբ քրիստոնյան կամ հրեան ֆես էին կրում, ապա դրան պետք է կարելին նեղ սև ժապավեն (տե՛ս նույն տեղում, էջ 845, հազուսուրբ և այլ միջոցներով քրիստոնյաներին խտրակալության ենթարկելու մասին տե՛ս Levonian L., *Moslem Mentality: a Discussion of the Presentation of Christianity to Moslems*, The Pilgrim Press, Boston, Chicago, 1928, էջ 28-30):

⁴⁸ Levonian L., *նշվ. աշխ.*, էջ 18:

⁴⁹ Տե՛ս *Reports Received from Her Majesty's Consuls Relating to the Conditions of Christians in Turkey: 1867*, Presented to the Both Houses of Parliament by Command of Her Majesty, London, 1867, էջ 1-7:

⁵⁰ Տե՛ս Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality...*, էջ 855:

Օսմանյան հայրենիք

Ընդհանրապես թուրքական ազգայնականության ծագման մեջ մեծ նշանակություն է ունեցել թուրքերի շփումը եվրոպացիների հետ: Թանգիմայայան բարենորոգումների արդյունքում մեծանում է կրթություն ստանալու նպատակով Եվրոպա մեկնող թուրքերի քանակը: Այս կերպ դրվում են եվրոպական մշակույթին ծանոթ թուրքական մտավորական խավի հիմքերը: Դրանով է բացատրվում այն, որ նոր օսմանների գաղափարները ծագել են հիմնականում Եվրոպայից, նույնիսկ թանգիմայի շրջանի նրանց քննադատությունն ազդվել է եվրոպացի մտածողներից⁵¹: Նոր ծագող օսմանյան ազգայնականությունը ևս հիմնված էր արևմտաեվրոպական ազգայնականության վրա, որը որպես ազգի տարբերական հիմք ընդունում էր շոշափելի չափանիշներ՝ տարածքը և ինքնիշխանությունը: Հենց այս հայրենասիրությունը և ոչ թե ազգայնականությունն էր, որ ազդել էր նոր օսմանների գաղափարների ձևավորման վրա⁵²: Նոր օսմանների որդեգրած օսմանիզմի դրույթը ելնում էր այն գաղափարից, որ Օսմանյան կայսրությունն այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների «հայրենիքն» է, և այդ գաղափարը հակադարձվում էր քրիստոնյա փոքրամասնությունների ազգային-ազատագրական պայքարին⁵³:

Հատկանշական է, որ պետության «Թուրքիա» անվանումն ընդհուպ մինչև XX դարի սկիզբը օգտագործվում էր եվրոպացիների կողմից: XIX դարի վերջին թուրք քաղաքական գործիչ և պատմաբան Ահմեդ Ջևդեթն օգտագործում էր «Դևլեթի Թյուրքիե» (թուրքական պետություն), որը նոր ծագող ազգայնականության դրսևորումներից էր⁵⁴: Մինչև նոր օսմանները Օսմանյան կայսրությունում պետության անվանումից և էթնոսիմից բացի չկար նաև հայրենիքին հավատարիմ լինելու գաղափարը: «Հավատարմությունը» որպես այդպիսին հայտնի էր, բայց հավատարմություն գյուղին, նահանգին, ոչ թե երկրին⁵⁵: Օսմանյան պատմության այս փուլից առաջ որևէ անձի երկիրն այն վայրն էր, որտեղ նա ծնվել էր կամ որտեղ ապրում էր, այսինքն՝ նրա քաղաքը կամ գյուղը: Մարդիկ իրենք իրենց մասին խոսում էին որպես անկարացի կամ պոլսեցի, բայց ոչ որպես Օսմանյան կայսրու-

⁵¹ Տե՛ս Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 173:

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 334, 335:

⁵³ Տե՛ս Петросян Ю. А., *նշվ. աշխ.*, էջ 57:

⁵⁴ Տե՛ս Фадеева И. Л., *նշվ. աշխ.*, էջ 16: Եվրոպայում ամենածանր բռնատիրության պայմաններում երկրները տիրող դինաստիայի անվանում չէին կրում (Ռուսաստան, Պրուսիա, Ֆրանսիա), այն դեպքում, երբ Օսմանյան կայսրությունը կրում էր Օսմանի անունը: «Թուրքիա» անունը ծագել է Եվրոպայում և ընդունվել թուրքերի կողմից շատ ավելի ուշ (տե՛ս Akşin Sina, *նշվ. աշխ.*, էջ 35): XIX դարի կեսերին նոր օսմանները, եվրոպական ազդեցությամբ, ցանկություն ունեցան խոսելու իրենց երկրի մասին՝ որպես Թուրքիայի և սկսեցին օգտագործել «Թուրքեստան» բառը («թուրքի երկիր» պարսկերենով), ինչպես օրինակ՝ Նամըք Քեմալն է գործածում 1873 թ. գրած իր առաջին ողբերգության մեջ (տե՛ս Гордлевский Вл., *նշվ. աշխ.*, էջ 19), սակայն այնուհետև հրաժարվեցին դրանից, քանի որ այդ անունն արդեն իսկ օգտագործվում էր Կենտրոնական Ասիայի համար: Այդ իսկ պատճառով սկսեց գործածվել Թուրքիա՝ եվրոպական ձևով, որն էլ 1923 թ. դարձավ պետության պաշտոնական անվանումը (տե՛ս Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 332, 333):

⁵⁵ Տե՛ս Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 330:

թյան քաղաքացի: Ամբողջ հողը համարվում էր սուլթանի սեփականությունը⁵⁶, մարդիկ ենթակա էին ոչ թե երկրին, այլ սուլթանին, և անհրաժեշտության դեպքում պետք է պայքարեին նրա կամ իրենց կրոնի համար, բայց ոչ երբեք պետության⁵⁷: Դա արդեն հավատարմություն էր կրոնին՝ իսլամին⁵⁸, և դրանից բխում էր քաղաքական հավատարմությունը իսլամական պետության օրինական ղեկավարին՝ սուլթանին:

Նամըք Քեմալը, ով հետագայում հռչակվեց «հայրենիքի և ազատության երգիչ», իր ստեղծագործությունների միջոցով ընդլայնեց և խորացրեց *վաթանի* պատկերացումը: Նա քարոզում էր, որ որևէ մեկի հայրենիքը ոչ միայն հողի կտոր է, այլև թանկագին վայր, որի համար պետք է զոհողությունների գնալ⁵⁹: Քեմալը քարոզում էր նաև այն գաղափարը, որ հայրենիքը սրբազան գաղափար է. «Հայրենիքը բաղկացած չէ քարտեզի վրա թրով կամ գրողի փետուրով տարված ենթադրյալ գծերից: Դա սուրբ գաղափար է, որը ծագում է բազմաթիվ վեհ զգացմունքների միությունից, ինչպիսիք են ազգը, ազատությունը, եղբայրությունը, բարեկեցությունը, ունեցվածքը, ինքնիշխանությունը, նախնիների հանդեպ հարգանքը, ընտանիքի հանդեպ սերը, երիտասարդների հիշողությունը»⁶⁰: Հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը Քեմալը և բոլոր նոր օսմանները դիտում էին որպես խոչընդոտ «հայրենիքի» ամբողջականության պահպանմանը, իսկ նրանց կողմից լույս ընծայվող թերթերը, քարոզելով օսմանիզմը, ժխտում էին հպատակ ժողովուրդների ինքնորոշման և անկախ պետականություն ունենալու իրավունքը⁶¹: Դա հատկապես երևաց Կրետե կղզու հույների 1866-1869 թթ. ազատագրական պայքարի ժամանակ: «Մուհեբիրը» նշում էր, որ ապստամբության բարեհաջող ճնշումից էր կախված «օսմանյան պետության անկախությունը», իսկ Նամըք Քեմալը «Թասֆիր-ի էֆքյարի» էջերից կոչ էր անում դիմել «կոպիտ ուժի սկզբունքին» և բացառում էր քրիստոնյաներին զիջելու հավանականությունը⁶²: Իրենց անկախության համար պայքարող սերբերին և չեռնոգորցիներին Ջիյան անվանում էր «ավազակներ»: Նոր օսմանները քննադատում էին կառավարությանը՝ եվրոպական երկրների ճնշման ներքո Մոլդովային, Վալախիային և Սերբիային անկախություն տալու պատճառով⁶³: Նրանք լիովին ծանոթ չէին ժամանակակից ազգայնական հոսանքներին և այդ շարժումների պատճառ համարում էին դժգոհությունը ներքին խնդիրներից, օտարերկրյա սադրանքները կամ դրանք դիտարկում էին որպես հասարակ ապստամբություններ: Դա նաև արտահայտում էր մուսուլման բնակչության տրամադրությունները, օրինակ՝ հակաքրիստոնեական

⁵⁶ Մանրամասն տե՛ս Levonian L., *նշվ. աշխ.*, էջ 33-35:

⁵⁷ Տե՛ս Akşin Sina, *նշվ. աշխ.*, էջ 34:

⁵⁸ Տե՛ս Սարուխան, *նշվ. աշխ.*, էջ 112:

⁵⁹ Տե՛ս Akşin Sina, *նշվ. աշխ.*, էջ 34:

⁶⁰ Մեջբերումը «Իբրեթի»՝ 1873 թ. մարտի 22-ի համարից է (Bernard Lewis, *նշվ. աշխ.*, էջ 337):

⁶¹ Տե՛ս Желтяков, *նշվ. աշխ.*, էջ 297:

⁶² Տե՛ս Сафрастьян Р. А., *նշվ. աշխ.*, էջ 84:

⁶³ Տե՛ս Петросян Ю. А., *նշվ. աշխ.*, էջ 55:

քարոզչությունը բուլղարների ապստամբության (1876 թ. գարուն) և Սերբիայի ու Չեռնոգորիայի դեմ պատերազմի (1876 թ. հուլիս-նոյեմբեր) ժամանակ նորսմանական «Սարահ» թերթին մեծածավալ շրջանառություն ապահովեց⁶⁴: Քրիստոնյաների ապստամբությունները և ազատագրական պայքարը մյուս կողմից որոշ թուրքերի մեջ առաջացրին զգացումներ, որոնք օսմանյան էին և հայրենասիրական, բայց հետագայում կդառնան թուրքական և ազգայնական⁶⁵:

Հայրենիքի իր քարոզն աքսորից վերադառնալուց հետո Քեմալը շարունակեց թատրոնի միջոցով, որը համարում էր ժողովրդի վրա բարոյական ներգործություն ունեցող «օգտակար գվարճանք»⁶⁶: 1873 թ. ապրիլին Գետիկ փաշայի թատրոնում ցուցադրվեց Քեմալի «Հայրենիք կամ Սիլիստրիա»⁶⁷ (Vatan Yahut Silistra) ողբերգությունը, որում ներկայացվում էր այն, որ ժողովուրդն իրավունքներ ունի իր հայրենիքի հանդեպ, և դրա հպատակը լինելն այլ բան է, քան սուլթանի հպատակ լինելը⁶⁸: Ողբերգության գլխավոր դերակատար Իսլամ բեյը բացականչում է. «Եթե մենք կորցնենք Դանուբը, մեր հայրենիքը կդադարի գոյություն ունենալ: Մեր հայրենիքը Դանուբն է»⁶⁹: Ողբերգության մեջ լսվում էին թուրքերի համար տարօրինակ հայրենիքը սիրելու և պաշտպանելու կոչեր: Ներկայացումն առիթ հանդիսացավ հեղինակին Կիպրոս արտաքսելու համար, որտեղից նա վերադարձավ միայն 1876-ին⁷⁰: Հետաքրքրական է այն փաստը, որ որպես հայրենիքի պաշտպանության խորհրդանիշ ընտրվել է Թուրքիայի բուն տարածքից դուրս գտնվող ամրոց, որը պարբերաբար պաշտպանվում էր Ռուսաստանից: Վերջինս էլ նոր օսմանների կողմից մարմնավորվում էր որպես «բնական թշնամու» կերպար:

Սահմանադրությունը որպես ելք

Տարագրության տարիները զգալի ազդեցություն ունեցան նոր օսմանների գաղափարախոսության՝ հատկապես սուլթանի ինքնակալ իշխանությունը սահմանադրությամբ սահմանափակելու դրույթի ձևավորման վրա⁷¹: Նոր օսմանների առաջնորդները համոզված էին, որ բոլոր դժբախտությունների աղբյուրը տիրող

⁶⁴ Տե՛ս Желтяков, նշվ. աշխ., էջ 163:

⁶⁵ Տե՛ս Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim Equality...*, էջ 856:

⁶⁶ Տե՛ս Гордлевский Вл., նշվ. աշխ., էջ 25:

⁶⁷ Սիլիստրիան թուրքական ամրոց է Դանուբի վրա, որը մի քանի անգամ պաշարվել է ռուսների կողմից դեպի Բալկաններ կատարած արշավանքի ժամանակ: Ամրոցը գրավվել է 1808 թ., սակայն վերադարձվել է հաշտության պայմանագրով: Անհաջող պաշարվել է 1828 և 1856 թթ.: Այս պաշարումներից որն է ընտրել Քեմալն իր ողբերգության համար՝ հայտնի չէ (տե՛ս Стамбулов В., նշվ. աշխ., էջ 160-161, Гордлевский Вл., նշվ. աշխ., էջ 20-22): Ողբերգության պրեմիերայի մասին հայտարարությունը դրվել է «Իբրերթի» մարտի 30-ի համարում, որից հետո թերթը փակվել է (տե՛ս Желтяков, նշվ. աշխ., էջ 155):

⁶⁸ Տե՛ս Akşin Sina, նշվ. աշխ., էջ 34, Bernard Lewis, նշվ. աշխ., էջ 158:

⁶⁹ Стамбулов В., նշվ. աշխ., էջ 162.

⁷⁰ Տե՛ս Bernard Lewis, նշվ. աշխ., էջ 141:

⁷¹ Տե՛ս Сафрастьян Р. А., նշվ. աշխ., էջ 89:

վարչակարգն է, հետևաբար՝ լուծումը սահմանադրության ընդունումն է⁷²: Նրանց մոտեցման համաձայն՝ Համայնքների պալատ հրավիրելը և ոչ մուսուլմանների մուտքն այնտեղ թույլատրելը կնպաստեր բոլոր «օսմանցիների» միասնությանը⁷³: 1873 թ. կառավարությունը փաստացի դադարեցրեց նոր օսմանների գործունեությունը: Շարժման առաջնորդներն աքսորվեցին կայսրության ծայրամասերը⁷⁴, սակայն 1876 թ. հոկտեմբերին Քեմալը և Զիյան ընդգրկվեցին Միդհատ փաշայի կողմից ստեղծված սահմանադրական հանձնաժողովի կազմ, որտեղ իրենց գործունեության ընթացքում նրանք առավելագույնս արտահայտեցին իրենց գաղափարները: Նրանք կարծում էին, որ քրիստոնյաներին նույնիսկ սահմանափակ ինքնորոշման իրավունքներ տրամադրելը կուժեղացնի նրանց կենտրոնախույս ձգտումները⁷⁵:

Նոր օսմանների շարքերում գոյություն ունեին նաև գաղափարական տարաձայնություններ՝ կապված Օսմանյան կայսրության սահմանադրական բարեփոխումների հետ: Զիյան ավելի պահպանողական էր, քան Քեմալը: Նա համոզված էր, որ պառլամենտը պետք է ունենա սահմանափակ իրավունքներ, լինի ընդամենը «խորհրդատվական պալատի» նմանվող ինչ-որ հաստատություն, որի խնդիրը պետք է լինի սուլթանին շահամոլ պաշտոնյաներից հեռու պահելը: «Հյուրիեթում» տպագրած իր հոդվածներից մեկում Զիյան գրում էր, որ պատգամավորների պալատում տեղեր կհատկացվեն նաև այլ դավանանքի ներկայացուցիչներին, թեև պնդում էր, որ ոչ մուսուլմանները չպետք է ունենան հավասար իրավունքներ մուսուլմանների հետ: Տարաձայնություններ կային աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարանջատման հարցում: Ալի Սուալին կարծում էր, որ այդ տարանջատումն անհրաժեշտ է, իսկ Նամըք Քեմալը և Զիյան դրան դեմ էին⁷⁶:

Ալի Սուալին ընդհանրապես արմատական մուսուլման էր: Սուալին 1860-ականների վերջերից սահմանադրական կարգերի հաստատման մոլի կողմնակից էր: Նա, սակայն, առաջնորդվելով իսլամի այն դրույթով, որ հասարակական խնդիրները լուծվում են հասարակական քննարկման միջոցով, պնդում էր, որ այդ հասարակական քննարկմանը ոչ մուսուլմանները չեն կարող մասնակցել: Մամուլի միջոցով Սուալին քարոզում էր, որ քրիստոնյայի մուտքը դատարան՝ որպես վկա, չսկսված բան է: Տարագրությունից մայրաքաղաք վերադառնալով՝ նա 1876 թ. նշանակվեց Գալաթասարայի լիցեյի տնօրեն, և առաջին բանը, որ արեց, 95 ոչ թուրք ուսանողներին հեռացնելն էր⁷⁷:

⁷² Տե՛ս Սարուխան, *նշվ.* աշխ., էջ 107, 108:

⁷³ Տե՛ս Сафрастьян Р. А., *նշվ.* աշխ., էջ 98:

⁷⁴ Տե՛ս Петросян Ю. А., *նշվ.* աշխ., էջ 70:

⁷⁵ Տե՛ս Сафрастьян Р. А., *նշվ.* աշխ., էջ 107:

⁷⁶ Տե՛ս Петросян Ю. А., *նշվ.* աշխ., էջ 56, 63, Zürcher E. J., *նշվ.* աշխ., էջ 69:

⁷⁷ Տե՛ս Фадеева, *նշվ.* աշխ., էջ 102: Գալաթասարայում քրիստոնյաները մուսուլմանների հետ սովորելու իրավունք են ստացել 1867 թ. (տե՛ս Davison R. H., *Turkish Attitudes Concerning Christian-Muslim equality...*, էջ 848):

Նոր օսմանների գաղափարները մեծապես ազդեցին սահմանադրական շարժման շարունակման և դրա բովանդակության վրա: 1876 թ. հռչակվեց սահմանադրությունը, որի վրա պակաս չազդեցին նաև կայսրության արտաքին քաղաքական ծանր պայմանները: Մեծ տերությունները պատրաստվում էին միջամտել և սուլթանին ստիպել սահմանափակ ինքնավարություն տրամադրել բալկանյան ժողովուրդներին⁷⁸: Վախենալով նման ելքից՝ Միդհատ փաշան կառավարության այլ անդամների հետ 1876 թ. մայիսի 30-ին պետական հեղաշրջում իրականացրեց, և սուլթան Աբդուլ Ազիզը գահին կեց արվեց: Նրան հաջորդած Աբդուլ Համիդ 2-րդը ստիպված ընդունեց Միդհատի և Նամըք Քեմալի մշակած սահմանադրության նախագիծը, որը հռչակվեց 1876 թ. դեկտեմբերի 23-ին⁷⁹:

Սահմանադրության առաջին հոդվածը հռչակում էր Օսմանյան կայսրության ամբողջականությունը՝ «որոց ոչ մէկ մասը չը կրնար երբեք անջատիլ ինչ պատճառաւ և լինի»⁸⁰: Կայսրության բոլոր հպատակներն առանց կրոնական պատկանելության հռչակվում էին օսմանցի (հոդված 8): Բոլոր «օսմանցիները» ստանում էին հավասար իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև կրոնական անձեռնմխելիություն (հոդված 17), պետական լեզու հռչակվում էր թուրքերենը, որի իմացությունը պարտադիր էր՝ պետական պաշտոններ զբաղեցնելու համար (հոդված 18, 57, 68): Բոլոր կրթօջախները դրվում էին պետական իշխանության վերահսկողության տակ (հոդված 16)⁸¹:

Այսպիսով, սահմանադրությունն ամբողջությամբ ներկայացնում և օրենքով ամրագրում էր նոր օսմանների գաղափարները Օսմանյան կայսրության իրերի դրության և դրանում ազգային փոքրամասնությունների տեղի վերաբերյալ:

Արդյունքներ

Նոր օսմաններին գործունեությունը տևեց մոտ հինգ տարի: Չնայած անդամների միջև եղած գաղափարական հակասություններին՝ նրանց ազդեցությունը հսկայական էր Օսմանյան կայսրության սահմանադրական շարժման, 1876 թ. սահմանադրության բովանդակության և 1878 թվականից հետո բռնատիրական կարգերի դեմ

⁷⁸ Տե՛ս Խառատյան Ա., 1876 թ. օսմանյան սահմանադրությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ (1870-ական թթ.), «Պատմաքաղաքական հանդես», № 4, 1981, էջ 110, *История дипломатии*, том II дипломатия в новое время 1871-1914, автор тома Хвостов В. М., М., 1963, էջ 107:

⁷⁹ Տե՛ս “The Illustrated London News”, No 1956, vol. LXX, January 6, 1877, էջ 7: Միդհատի և սուլթանի միջև հիմնական տարբերությունն այն էր, որ Միդհատը սահմանադրությունը համարում էր օտարերկրյա խնամակալության դեմ գործիք, իսկ Աբդուլ Համիդը ընդհակառակը գերտերությունների մեջ տեսնում էր սահմանադրության դեմ աջակիցների (տե՛ս Стамбулов В., *նշվ. աշխ.*, էջ 234): Ինչպես նշում է “The London Illustrated News”-ը, օսմանյան պառլամենտը բացվել է սուլթանի կողմից անձնապես: Թերթը գրում է, որ գահի անունից ընթերցված ճառը հասկանալի էր եվրոպացի պաշտոնյաներին, բայց ոչ սուլթանի անկիրթ հպատակներին: Այն ավելի շատ ձևի, քան թե բովանդակության համար էր և ուղղված էր մեծ տերություններին, այլ ոչ թե այն մարդկանց, ում վրա սուլթանի բռնապետական իշխանությունը տարածվում էր (տե՛ս “The London Illustrated News”, No 1967, vol. LXX, March 24, 1877, էջ 266):

⁸⁰ Տե՛ս Թովիչեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 137:

⁸¹ Սահմանադրության ամբողջական տեքստը տե՛ս Թովիչեան Ե., *նշվ. աշխ.*, էջ 137-160:

ծավալված պայքարի վրա: Նրանք ամուր էին Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու իրենց ցանկության մեջ և այդ պատգամը փոխանցել են հետագա սերունդներին: Նրանց գաղափարները, օրինակ՝ Նամըք Քեմալի փորձը միավորելու եվրոպական ազատականությունը իսլամական ավանդույթների հետ ընդօրինակեցին իսլամական մոդեռնիստները XIX դարի վերջերին: Նրանք առաջինն էին, որ իրենց ստեղծագործությունների միջոցով գիտակցված փորձում էին կազմավորել հասարակական կարծիք⁸²:

Նոր օսմաններն իրականում «Միություն և առաջադիմություն»⁸³ կուսակցության հոգևոր հայրերն էին և Թուրքիայի Հանրապետությունը հռչակողների նախահայրերը⁸⁴: Երիտթուրքական մամուլում Քեմալը հռչակվում էր որպես սահմանադրության և պառլամենտի «արարիչ», ազատության համար պայքարի նախահայր⁸⁵, իսկ Ալի Սուալին՝ «հեղափոխական գաղափարների մունետիկ», «ազատության մեծ մարտիկ»⁸⁶: Նոր օսմանների աշխատություններում են բարձրացվել թուրքական ինքնության, թուրքական ազգայնականության գաղափարները, որոնք հետագայում փոխակերպվեցին պանթուրքիզմի գաղափարախոսության:

Երիտասարդ թուրքերը կարողացան հետևություններ անել նաև նոր օսմանների «ձախողումներից»: Ընդհուպ 1908 թ. հեղափոխությունը երիտթուրքերը հավատարիմ էին օսմանիզմի քաղաքական դոկտրինային⁸⁷. չէին ճանաչում ոչ թուրք ժողովուրդների քաղաքական իրավունքները, բացի «օսմանյան ազգի» անդամ լինելու և «համընդհանուր հայրենիքը» պաշտպանելու պարտականություններից: Հեղաշրջումից հետո հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների բռնկումից, տարածքային կորուստներից հետո նրանք աստիճանաբար հանգեցին

⁸² Տե՛ս Zürcher E. J., *նշվ. աշխ.*, էջ 70:

⁸³ 1889 թ. ֆրանսիական հեղափոխության հարյուրամյա տարեդարձին Կոստանդնուպոլսի ռազմական բժշկության դպրոցի հինգ ուսանողներ հիմնեցին գաղտնի կոմիտե՝ Օսմանյան ընկերության միություն: Դրա հայտնի հիմնադիրներից էին Աբդուլա Ջևդեթը և Իբրահիմ Թեմին: 1895 թ. նրանք կապ հաստատեցին Փարիզում Միմեդ Ռիզայի հետ, ով նրանց տվեց իրենց «Միություն և առաջադիմություն կոմիտե» (İttihat ve terakki Cemiyeti, CUP) անվանումը (տե՛ս Akşin Sina, *նշվ. աշխ.*, էջ 45):

⁸⁴ Մուստաֆա Քեմալն իր ոճը ձևավորել է Նամըք Քեմալի ձևով և իր հայտնի Ճառը գրել է՝ նմանակելով նորօսմանյան այդ գործչին (տե՛ս Zürcher E. J., *The Young Turk Legacy and Nation building from the Ottoman Empire to Atatürk's Turkey*, I. B. Tauris, London, New York, 2010, էջ 8):

⁸⁵ Տե՛ս Желтяков А. Д., *նշվ. աշխ.*, էջ 258:

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 284:

⁸⁷ «Օսմանականությունը (Օսմանլըլըք) մի սկզբունք է, որ Թուրքիայի ներքին քաղաքականության տիրող ուղղություններից մեկն է համարում: Այդ սկզբունքի իրագործմանն են հետապնդել, մասնատրապես անցնալ դարու 30-ական թուականներից, ո՛չ միայն թուրք պետական ղեկավարիչ անձնատրոփիները և «Ծերունիներ»-ը, այլև «Երիտասարդ Թուրքեր»-ը (ընդգծումն իմն է՝ Ռ. Գ.) Այդ նկատմամբ ընդհանուր համաձայնություն է եղել և ամենքը անխտիր, առելի ու նուազ սաստկությամբ, ազգային այդ քաղաքականութեան շուրջն են դարձել: Օսմանեան Կայսրությունը իր ամրապնդումը և կայունությունը կը գտնէր միայն այն ժամանակ, երբ նրա մեջը բովանդակուած ազգութիւնները բոլորը օսմանցիներ կդառնային կամ օսմանցիներ լինելու գաղափարը կընդունէին վերջնականապէս, — սա էր ղեկավարիչ սկզբունքը» (Սապահ-Գիլեան Ս., *նշվ. աշխ.*, էջ 58):

օսմանիզմի քաղաքականապես անհեռանկարային լինելու գաղափարին և սկսեցին թուրքական ազգայնականության մշակումը⁸⁸։ Ինչպես Զիյա Գյոքալփին է գրում. «Օսմանցիները գտնում էին, որ բոլոր մարդիկ Օսմանյան կայսրությունում կազմում են ազգ։ Խոր սխալմունք էր մտածել, որ կայսրության ժողովուրդները կազմում են ազգ, քանի որ այս մարդկանց հավաքականության մեջ առկա էին մշակութապես անկախ ազգություններ»⁸⁹։ Ս. Սապահ-Գուլյանը գրում է, որ կայսրության քրիստոնյա հպատակ ազգություններն այնքան էին զարգացել, որ այլևս անկարելի էր նրանց «խորտակել, կլանել և ձուլել»⁹⁰։ Դա իհարկե չէր վրիպում նաև երիտթուրքերի աչքից։ Կայսրության մեջ միաձուլման միջոցով միատարր հանրության ձևավորման ծրագրի ձախողումը հաշվի առնելով՝ երիտթուրքերը հանգեցին նրանց ոչնչացման մեթոդին։

Նոր օսմանների գաղափարախոսության որոշ հիմնադրույթներ, որոնք ընդօրինակվեցին երիտթուրքերի կողմից, այն է՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը ցանկացած գնով պահպանելը, թուրքերենի անադարտության, թուրք ռասայի հինավուրց լինելու և թուրքերի տեղաբնիկության մասին դրույթները, քրիստոնյա փոքրամասնություններին օտարերկրյա շարունակական միջամտությունների հիմնական պատճառ դիտելը, կայսրության մոտալուտ փլուզման, «թուրքերի անելանելի վիճակի», «ընդդեմ թուրքերի համաշխարհային դավադրության» թեզերը, կործանարար հետևանք ունեցան կայսրության քրիստոնյաների համար։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ՆՈՐ ՕՍՄԱՆՆԵՐ

Ռեզինա Գալուստյան

ԱՄՓՈՓՈՒՄ

1865 թ. ձևավորված նոր օսմանների կազմակերպությունն օսմանյան քաղաքական վերնախավի առաջին ժամանակակից հոսանքն էր։ Նոր օսմաններն էին, որ առաջինը ձևակերպեցին «ազգ» և «հայրենիք» հասկացությունները, որոնք որոշակի ձևափոխումից հետո կազմեցին թուրքական ազգայնականության հիմքը։ Նրանք հսկայական ազդեցություն ունեցան Օսմանյան կայսրության սահմանադրական շարժման և 1876 թ. հռչակված սահմանադրության բովանդակության վրա։ Նոր օսմանների գաղափարախոսության որոշ հիմնադրույթներ, որոնք հետագայում ընդունվեցին երիտթուրքերի կողմից, այն է՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը ցանկացած գնով պահպանելը, թուրքերենի անադարտության և թուրք ռասայի տեղաբնիկության մասին դրույթները, քրիստոնյա փոքրամասնություններին օտարերկրյա շարունակական միջամտությունների հիմնական պատճառ դիտելը, կործանարար հետևանք ունեցան կայսրության քրիստոնյաների համար։

⁸⁸ Տե՛ս Желтяков А. Д., *նշվ. աշխ.*, էջ 290:

⁸⁹ Ziya Gokalp, *Turkish Nationalism and Western Civilization*, New York, 1959, p. 136.

⁹⁰ Տե՛ս Սապահ-Գուլյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 73:

Բանալի բառեր՝ նոր օսմաններ, մամուլ, *վաթան*, ազգ, թանգիմաթ, քրիստոնյա փոքրամասնություններ, երիտօրորներ:

AT THE ROOTS OF TURKISH NATIONALISM: YOUNG OTTOMANS

Regina Galustyan

RESUME

The organization of the Young Ottomans (New Ottomans), founded in 1865, was the first modern movement of the Ottoman political elite. The Young Ottomans were those who formulated the concepts of “nation” and “fatherland”, which after certain modification formed the basis of the Turkish nationalism. They had a huge impact on the constitutional movement in the Ottoman Empire and on the content of the constitution declared in 1876. The basic points of Young Ottoman ideology were keeping the integrity of the Ottoman Empire at any cost, the concepts of the purity of the Turkish language, the indigeneity of Turkish race, considering the Christian minorities as the main reason for foreign negative interference. These concepts, which were later adopted by Young Turks, had destructive consequences for the Christians of the Empire.

Keywords: Young Ottomans, press, *vatan*, nation, *Tanzimat*, Christian minorities, Young Turks.

У ИСТОКОВ ТУРЕЦКОГО НАЦИОНАЛИЗМА: НОВЫЕ ОСМАНЫ

Регина Галустян

РЕЗЮМЕ

Созданная в 1865 году организация новых османов была первым модернистским движением Османской политической элиты. Новые османы были первыми турецкими политическими мыслителями, сформулировавшими понятия «нация» и «родина», которые после определенной модификации легли в основу турецкого национализма. Они оказали огромное влияние на конституционное движение в Османской империи и на содержание конституции, объявленной в 1876 году. Некоторые тезисы идеологии новых османов, которые впоследствии были приняты младотурками, такие как сохранение целостности Османской империи любой ценой, понятия чистоты турецкого языка и автохтонности турецкой расы, а так же восприятие христианских меньшинств в качестве основной причины иностранного вмешательства, имели разрушительные последствия для христиан империи.

Ключевые слова: Новые османы, пресса, *ватан*, нация, *Танзимат*, христианские меньшинства, младотурки.

ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԻՍԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շուշան Խաչատրյան

Հայոց ցեղասպանության իրագործման մեջ կրոնական գործոնի անհերքելի առկայության մասին է խոսում բռնությունների ընթացքում կրոնական ենթատեքստի դրսևորումը: Կրոնական տեքստերի գործածումը, իսլամադավան հոգևորականների կոչերի ազդեցությունն առավելագույնս հանգեցրին չպատերազմող, խաղաղ և անզեն բնակչության հանդեպ կրոնական երանգավորում ունեցող բռնությունների, որոնք վայրագություններն իրականացնողի աչքին բնավ բռնություններ չէին, այլ կա՛մ միսիոներություն, կա՛մ ծառայություն սեփական աստծուն¹:

Հայոց ցեղասպանության ընթացքում սպանությունները կատարվում էին առանձնահատուկ դաժանությամբ՝ կոտանքների ուղեկցությամբ՝ դրանց հաղորդելով ծիսականություն, հաճախ կիրառելով «քրիստոնեական» ենթատեքստ՝ խաչելով, սպանելով եկեղեցիների խորանների վրա և այլն: Դաժան բռնությունների էին ենթարկվում հատկապես քրիստոնյա հոգևորականները: Այն դեպքերում, երբ հայերը մահվան սպառնալիքով կրոնափոխ էին լինում, թուրքերի համար դադարում էին *գյափուր* լինելուց, իսկ իսլամադավանին սպանելը մեղք է համարվում ըստ Դուրանի, որը չնայած ոչ միշտ էր հաշվի առնվում կրոնափոխ եղածների պարագայում²:

Հայերի կոտորածներին ծիսականություն հաղորդելու միտումը երևում է այն վկայություններում, որտեղ հատուկ բառեր, կոչեր, կանչեր կամ ձայնարկություններ են օգտագործվում: Յակոբ Կյունցլերն իր հուշագրության մեջ ասում է. «Կրակոցների ընթացքում լսեցինք նաև արար կանանց ուժգին «**լիլիլիլիլի**» **գոչյունները....** Մուսուլման կանայք սովորություն ունեն այդպես ոգևորել իրենց ամուսիններին քրիստոնյաներին սպանելիս»³: Ծիսականացված սպանությունների ու բռնությունների մասին հաղորդվում է նաև համիդյան կոտորածների վերաբերյալ ականա-

¹ Հայերի կոտորածն իսլամական ֆատալիզմին բնորոշ ներկայացվում է որպես ալլահի կամքը. «Տիկին Էհմանը վալիին կնոջ քով գացած էր որպեսզի հետաձգեր քանի մը հիւանդներու մեկնիլը: Վալիին կինը պատասխանած էր.

– Երբ Ալլահը որոշած է որ անոնք մեկնին Շաբաթ օր, չկրնար փոխուիլ:

Վալիին կինը աւելցուցած էր նաև որ,

– **Ալլահը որոշած է նաև որ այս տարի ջուրի տեղ արինս պիտի հոսի:**

Ուրեմն դիմումը անօգուտ էր» (Ջեյքբյաքը Մ., *Օրագրություն*, 1907-1919, թարգմ. Ներսես եպ. Բախտիկեան, Միհրան Միմոնեան, Անթիլիաս, 1979, էջ 113): Մեջբերումներում կատարված այս և տեքստում առկա մյուս ընդգծումները մերն են:

² Ասվածի վկայությունն է հետևյալ օրինակը. «....ասկյարներն սպանեցին իմ փոքրիկներին՝ **նրանց գլուխներն իրար խփելով:** Նրանք բռնաբարեցին Շիրինին, հետո կտրեցին նրա կրծքերը: Նա տանջամահ լինելով հոգին ավանդեց իմ աչքի առջև, իսկ ինձ կենդանի թողեցին՝ ասելով. «**Դու կրոնափոխ ես եղել, դու մուսուլման ես**» (Գեյթս Հ. Լ., *Հռչարված Հայաստան*, ՀՑԹԻ, Երևան, 2015, էջ 69): Հմնտ. Гүайта Дж., *Шейх Файез эль-Гусейн о геноциде армян: “Ислам непричастен к их деяниям!”*, ФАМ, Москва, 2007, сс. 213-214:

³ Կյունցլեր Յ., *Արյան և արցունքների երկրում*, ՀՑԹԻ, Երևան, 2011, էջ 33:

տեսների վկայություններում. ծիսականացված սպանության այդպիսի մի խոսուն դրվագ է ներկայացնում Լորդ Քինրոսը. «Երբ երիտասարդ հայերի մի մեծ խումբ բերվեց շէյխի առջև, նա հրամայեց նրանց գցել իրենց մեջքերի վրա և բռնել ձեռքերից և ոտքերից: Ապա, ակնատեսի բառերով, **նա սկսեց արտասանել Դուրանից տողեր և կտրեց նրանց կոկորդները զոհաբերվող խոյի մասին մեքքայական ծեսից հետո**»⁴:

Հենրի Մորգենթաուն հաղորդում է, որ Մեծ եղեռնի գլխավոր ծրագրողներից մեկը Թալեաթը, ատում էր կրոնները: Սակայն նրա հետևյալ երկու մտքերից պարզ է դառնում, որ ամենից շատ ատում էր քրիստոնյաների կրոնը. «Ես անձամբ կարող եմ հավաստել, որ իսլամը նրան բոլորովին չէր հուզում, քանզի իր կուսակցության բազում առաջնորդների նման նա էլ էր արհամարհանք տաժում ցանկացած դավանանքի հանդեպ: Մի անգամ նա ասաց ինձ. **«Ատում եմ բոլոր քահանաներին, րաբբիներին ու խոջաներին»**⁵, և **«Անգլիացիները ոմբահարել են Դարդանելը և սպանել երկու թուրքի,- հետո ավելացրեց,-ամեն մի սպանված մահմեդականի դիմաց մենք երեք քրիստոնյա կսպանենք»**⁶: Իսկ հետևյալ հատվածից երևում է, որ Թալեաթն ատում է քրիստոնյաներին, իրեն հոգեհարազատ է զգում իսլամին և իր ինքնությունը ներկայացնում որպես իսլամական. «-Ինչո՞ւ եք այդքան հետաքրքրվում հայերով. դուք հրեա եք, այդ մարդիկ՝ քրիստոնյա: **Մահմեդականներն ու հրեաները միշտ լավ հարաբերություններ են ունեցել միմյանց հետ:** Հրեաներին **մենք** լավ ենք վերաբերվում: Ինչի՞ց եք բողոքում: Ինչո՞ւ եք **մեզ** խանգարում **այդ քրիստոնյաների** հետ անել այն, ինչ ցանկանում ենք»⁷:

Թուրքերը և քրդերը կողոպտում էին քրիստոնեական եկեղեցիները, պղծում դրանք, կապկում էին եկեղեցական ծիսակատարությունները, ծաղրում քրիստոնյաներին. «...ծեծում էին տերտերներին ու հասցնում անգիտակից վիճակի՝ ձևացնելով, թե իբր նրանք խռովության կազմակերպիչներն են»⁸:

Կրոնաժխական երանգավորում ունեցող բռնություններն ու սպանությունները Հայոց ցեղասպանության իրագործման մեջ կրոնական գործոնի առկայությունն ապացուցող փաստերի համախումբ են՝ իրենց բաղկացուցիչ տարրերով: Ցեղասպանական գործողություններն սկսելուց առաջ ընդունված էր կրոնական օրհնություններ ստանալը: Հայերին տեղահանելու և ոչնչացնելու շատ որոշումներ տրվում էին մզկիթներում. «Այսօր բոլոր մզկիթներէն կը յայտարարուէր թէ բոլոր հայերը պիտի աքսորուէին: Հայերը չորս օր միայն ժամանակ ունէին իրենց ինչքերը ծախսելու...»⁹: Քրիստոնյաների կոտորածը համարվում էր Ալլահին մատուցվող հատուկ տուրք, զոհաբերություն, քանի որ ընդունված էր Ալլահին աղոթել և

⁴ Lord Kinross, The Ottoman Centuries, *The rise and Fall of the Turkish Empire*, New York, Morrow Quill, 1977, p. 560.

⁵ Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը, ՀՅԺԻ, Երևան, 2012, էջ 21:

⁶ Նույն տեղում, էջ 114:

⁷ Նույն տեղում, էջ 249:

⁸ Նույն տեղում, էջ 229, 230:

⁹ Ճեյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 107:

օրինանք խնդրել՝ սպանդի գործը սկսելուց առաջ. Հենրի Մորգենթաուի ընկալման համաձայն՝ այդ ամենը կրոնական ֆանատիզմ էր, որով իրենք ծառայում էին Ալլահին. «Եթե ավելի վաղ անցյալում կատարված բոլոր ջարդերը համեմատենք թուրքերի արածի հետ, ապա կնկատենք՝ դրանց հատուկ է մի հատկանիշ, որը կարելի է հիշատակել որպես գրեթե արդարացում. **դրանք կրոնական ֆանատիզմի հետևանք էին, և այն հրահրող կանանց ու տղամարդկանց մեծ մասն անկեղծորեն հավատում էր, որ իրենք այդպես ծառայում են Արարչին**: Անկասկած, կրոնական մոլեռանդությունը նաև թուրք ու քուրդ խուժանի հիմնական մղիչ ուժն էր. **նրանք հայերին գլխատում էին որպես ալլահին մատուցվող ծառայություն**, սակայն նրանք, ովքեր մտահոգվել էին հայերի կոտորածը, նման շարժառիթ չունեին: Իրականում նրանք բոլորն աթեիստ էին, որ իսլամը հարգում էին ոչ ավելի, քան քրիստոնեությունը, և նրանց դրդող միակ շարժառիթը սառնասիրտ ու հաշվարկված պետական քաղաքականությունն էր»¹⁰:

Լեւոն Դևիսը պատմում է, թե ինչպես թուրքերը Խարբերդի հյուպատոսարանի դիմացի հրապարակում նամագի էին հավաքվում, և լսվում էր, թե ինչպես են Ալլահին խնդրում օրինել քրիստոնյաներին բնաջնջելու իրենց ջանքերը¹¹:

Այն, որ հայերի կոտորածն իսլամադավան լայն զանգվածի կողմից ընկալվում էր կրոնական պարտք, բարեպաշտական արարողություն և, ավելին, զոհաբերություն, վկայում են հալածիչների խոսքերը: Նրանք հայերին կոչում էին դուրբան, դուրբանացու, այսինքն՝ զոհաբերություն, և ուղարկում էին այլ իսլամադավանների՝ կրոնական էյֆորիա ապրելու համար. «Հայտե՛... ձեզ ալ Արաբներուն դուրպանցու կը ղըրկենք. քիչ մըն ալ անոնք թող զարնեն-ձգեն, առեւանգեն»¹²:

ա) Հոգևորականների հանդեպ բարբարոսության դրսևորումները

Առանձնահատուկ դաժանությամբ առաջին հերթին սպանվում էին քրիստոնյա հոգևորականները: Զավեն պատրիարքը հոգևոր սպասավորներից «առաջին նահատակ» է դիտում Սահակ վրդ. Օդաբաշյանին, որը Սեբաստիայից դուրս գալուց երկու օր հետո սպանվում է Սուշեհիրի մոտ՝ Սեբաստիայի կուսակալ Մուամմերի թիկնապահ չերքեզ Զելալի ու նրա ընկերների կողմից¹³:

Հայ հոգևորականությանը ոչնչացնելու մի հատուկ հրահանգ-ծածկագիր ենք գտնում Արամ Անտոնյանի «Մեծ ոճիրը» գրքում, որտեղ հրամայվում էր հատկապես ջանասիրությամբ աշխատել հոգևորականներին ոչնչացնելու ուղղությամբ. «Հակառակ անոր որ **ծանօթ անձնաւորութեանց (հայերու) կղերական դասակարգին գոյութիւնը ջնջելու համար ամէնէն աւելի աշխատիլ պէտք է**, կ'իմանանք որ

¹⁰ Դեասյան Հենրի Մորգենթաուի պատմությունը..., էջ 241: Հմմտ. Հայերի կոտորածը՝ որպես ծառայություն Ալլահին՝ Գաբրիելյան Կ., Եղեռնապարտ Փոքրուն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924, էջ 524, 525:

¹¹ Դևիս Լ. Ա., Սպանդի նահանգը, Ե., 2001, էջ 145:

¹² Գաբրիելյան Կ., նշվ. աշխ., էջ 168:

¹³ Տե՛ս Զաւեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 82:

այդպիսիներ Սուրիոյ եւ Երուսաղէմի պէս կասկածելի տեղեր կը դրկուին: Ասանկ թոյլտուութիւն մը աններելի յանցանք է: Այդ կարգի խռովարարներուն աքսորավայրը անէութիւնն է: Կը յանձնարարեն որ ըստ այնմ գործողութիւններ կատարէք: 1 Դեկ. 915. «Ներքին Գործոց Նախարար» ԹԱԼԵԱԴ»¹⁴:

Արամ Անտոնյանը հոգևորականներին սպանելու այս հրամանի շուրջ հետևյալն է գրում. «Այս հեռագրին հետ կ'արժէ յիշատակել որ գաւառներու խմբական ջարդերու միջոցին ամէնէն զարիւրելի չարչարանքներով սպաննուողները եղան կրօնաւորները, առաջնորդ, վարդապետ, քահանայ, եւ այլն: Ընդհանրապէս կտոր կտոր ըրին զանոնք, օրերով բանտերու մէջ տանջելէ ետքը: Նոյն իսկ Պօլսոյ Պատրիարքը, երբ Պաղտատ աքսորեցին, պիտի սպաննէին միեւնոյն կերպով, բայց Անէի գայմաքամին պատասխանատուութեան վախը փրկեց զինքը»¹⁵:

Կաթոլիկ միաբան Եասենթ Սիմոն սպանությունների առնչությամբ ասում է, որ ամեն ինչ կատարվելու էր որպէս Ղուրանի հրահանգ¹⁶: Նա գրում է, որ իր տեսած բռնագաղթվածների քարավաններում «40 հոգիէ բաղկացող իրաքանչիւր խմբակին մէջ քահանայ մը կար: Կը կարծէին այսպէս արատաւորել քահանային սքեմը, զայն խառնելով ոճրագործ սեպուած մարդոց մէջ...»¹⁷: Եասենթ Սիմոնի այս վկայությունն ավելի շատ ծիսականացման դրվագ է, քան քահանայի սքեմը արատավորելու ջանք. նպատակն էր «գլխավորների» խմբերի կազմը ձևավորել այնպէս, որ ներկա գտնվեն տվյալ կրոնի հոգևոր առաջնորդները, որոնք, իրենց հոտի գլուխը լինելով, ընկալվում էին որպէս գլխավոր հանցավորներ՝ ընդդէմ իսլամի: Իսլամադավանների կառավարական հովանու ներքո ապրող ոչ իսլամադավանները դեռևս միջնադարից եկած մտայնության համաձայն ընկալվում էին որպէս Իբլիսի՝ սատանայի խաբէություններին հեշտությամբ ենթարկվող խմբեր, և նրանց հանդէպ սպանող իրականացնելու հրահանգները կարող էին ներկայացվել որպէս Ալլահի պայքար Իբլիսի դէմ¹⁸:

Ցեղասպանությունը վերապրած Վերոնիկա Բերբերյանի հուշերում ևս նկարագրվում է, թէ ինչպէս են Բողազլյան քաղաքում թուրքերն իր պապին՝ Հակոբ քահանային, եկեղեցի գնալու ճանապարհին ձերբակալում և ապա Քելլերի ձորում գլխատում ու կտրված գլուխը՝ որպէս խաղի օրյէկտ, գլորում փողոցներով: Վերապրողը գրում է. «Մարմինը գցում են ձորը, իսկ գլուխը հանձնում են երիտասարդներին, որոնք ծաղրի համար փողոցներում գլուխը գլորում են մի քանի օր»¹⁹:

¹⁴ Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը*, Ե., 1990, էջ 102, 103:

¹⁵ Տե՛ս նոյն տեղում, էջ 103, թ. 12 հղումը:

¹⁶ Տե՛ս Եղբայր Եասենթ Սիմոն, *Մարտին. հերոս քաղաք*, Ջունիե, 1991, էջ 40:

¹⁷ Նոյն տեղում, էջ 59:

¹⁸ Տե՛ս ավելի մանրամասն James J. Reid, “Philosophy of State –Subject Relations, Ottoman Concepts of Tyranny, and the Demonization of Subjects: Conservative Ottomanism as a Source of Genocidal Behaviour, 1821-1918” in *Studies in Comparative Genocide*, edited by Levon Chorbajian and George Shirinian, New York, 1999, pp. 62-65:

¹⁹ ՀՅԹԻ ֆոնդեր, ք. 8, ֆ. հ. 81(1), թպ. 242, էջ 4:

Հոգևոր սպասավորների հանդեպ իրականացրած խոշտանգումների թվում բազմիցս հիշատակվում է մորուքի մազերը հատ-հատ պոկելու կտտանքը, որին հետևում էր սպանությունը՝ այն դեպքում, երբ հոգևորականը հրաժարվում էր կրոնափոխ լինել²⁰։ «Ամբողջ երեք քառորդ ժամ, քահանան նշառակ կը դարձնեն գազանային մոլուցքին հնարած տեսակ տեսակ լուտանքներուն, անպատուութիւններուն ու ծաղրին։ **Մօրուքին թելերը մեկ մեկ կը փրցնեն ու գետին կը ծածկեն.- «քու Տիրոջդ պէս...»**։ Աշակերտն ալ կը փորձէ իր Տիրոջ նմանիլ լռելով, աղօթելով, ներելով...»²¹։ Մուշեղ քահանա Մուշեղյանի «**Մօրուքը կը փետեն**, եղունգները կ'աքցանեն, բանտի բակը՝ ջուրի մէջ մերկ կը պառկեցնեն ժամերով, ափին մէջ հասկիթ կը խաշեն՝ ձեռքին տակ կրակ վառելով, մինչ իր միսերը կ'այրէին եւ մարմինը կը գալարուէր ցաւի նոպաներուն տակ, ուր ուրեմն աւանդելով հոգին՝ **Քրիստոսի պէս խաչուելով**»²²։ Թեոդիկը պատմում է Կ. Պոլսի կաթողիկ առաջնորդի՝ Միքայել Խաչատուրյանի մահվան մասին. «... **նախ անոր մօրուքը կը փետեն**, յետոյ ձեռքերը ետեւ կը կապեն եւ նախատալից հրմշտուքներով գետափ կը տանին զինք։ Երբ ակոսները խլելուն կուգայ կարգը, տարաբախտ եկեղեցականը կը փութայ հանել կեղծ ատամնաշարքը՝ ցականք մը պակաս կրելու յոյսով։ Այդ յոյսն ալ ի դերեւ կ'ելլէ սակայն, վասնզի բիրտ թաթեր սկսած էին արդէն անխնայ բզբտել լինտերը։ Այնուհետեւ կը մերկացնեն զինք եւ վիզին խաչն ու եպիսկոպոսական մատանին կորզելէ ետք՝ հրաման կ'ընեն զինուորներուն, որ իրենց մոյկերով կոխկոտեն անոր մարմինը։ Կատաղութիւնսին չի կասիր հոն։ **Խար ու խոի կը ցանեն անոր ջախջախ կուրծքին վրայ եւ բռնկցնելով՝ սուրճ կ'եփեն հոն**, մինչ ուրիշ մը ականջները կը կտրէր եւ կրակը կը ձգէր զանոնք։ Ծերունագարդ Գերապայծառին այլեւս անճանաչ դին կը փոխադրուի հուսկ ուրեմն աղբակառք, նետուելով մօտակայ գոհիի մը մէջ...»²³։ Գրեթէ նոյն կտտանքները կատարվում են Տիգրանակերտի Մկրտիչ վարդապետ Զղախյանի հետ. նրան պտտեցնում են փողոցից փողոց, թքում վրան, **մի խոջա առաջանում է և ասում, թող նրա Աստվածը փրկի իրեն**, որ իրենք տեսնեն, իսկ **ուլեմաները՝ իսլամ գրագետները նվազելով խեղկատակ թատրոն են ցույց տալիս, ոստիկանապետը մորուքն է փետում**, ատամները քաշում, հրաշեկ երկաթ դնում քունքին, մարմինը մորթազերծ է անում և արդեն դիակը պտտեցնում է և քարյուղով վառում²⁴։ Թեոդիկը նաև պատմում է քահանայի մորուքը արտաթորանքով պատելու մի արարքի մասին²⁵։

Քրիստոնյա հոգևորականներին նաև հրամայվում էր կատարել նվաստացուցիչ աշխատանք. «... կառավարութիւնը այս կղերականները բանտ նետելով, ուզեց նուաստացնել Քրիստոսի քահանայութիւնը։ Քահանաները գործածուեցան որպէս

²⁰ Տե՛ս Թաուգճեան Տ. Ներսէս Աւագ քնյ., *Տառապանքի օրագիր*, խմբ.՝ Թ. Թորանեան, Պէյրութ, 1991, էջ 123։

²¹ Եղբայր Եսենյո Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 86։

²² Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 340։

²³ Նույն տեղում, էջ 341։

²⁴ Նույն տեղում, էջ 360։

²⁵ Նույն տեղում, էջ 599։

ուստիկանատան ծառաներ. բակը ավելցին, իրենց կոնակներուն վրայ աղբ շակեցին, մէկ խօսքով՝ որպէս հանրային անվաճումներ ծառայեցին: Բայց անոնք այնքան յօժարութեամբ եւ գուարթամտութեամբ կատարեցին այն գործը, որ պետական պաշտօնեաներուն հիացումը խլեցին.-Խէրն անիծած, կը գոչէր անոնցմէ մին, զիրենք երբ խոնարհեցնէք, կարծէք թէ իրենց բարիք մը կ'ընէք»²⁶:

Քրիստոնեությունը նվաստացնելու համար երբեմն հոգևորականներին անարգանքի էին ենթարկում իրենց եկեղեցիներում, իսկ երեցկանանց բռնաբարում հենց սրբավայրերի մեջ²⁷:

Ներսէս եպս. Դանիելյանը՝ Յոզղաթի հայ առաքելական վերջին առաջնորդը, կացնահարվեց²⁸: Մկրտիչ քահանա Գալեոնճյանին «...հրկիզելէ առաջ, դահիճները վերջընթեր հաճոյք մըն ալ ըմբռնանա՞ծ են՝ աշուրները փորելով...»²⁹:

Մարտիրոսի պսակի է արժանանում նաև Մարդինի հայ կաթողիկէ եպիսկոպոս Իգնատիոս Մալոյանը, որը 2001թ. դասվեց Կաթողիկէ եկեղեցու երանելիների շարքում՝ Հովհաննէս Պողոս II պապի կողմից: Նրան քանիցս առաջարկում են կրոնափոխ լինել, սակայն նա հրաժարվում է³⁰. «Մոլեռանդ մահմետական մը կ'ընէ Մալոյեան Գերապայծառին մասին, թէ **«անոր եպիսկոպոսական մարմինը երկուքի պիտի բաժնէր»**³¹:

Կտտանքները հոգևորականների հանդեպ հիմնականում իրականացվում էին ստահող մեղադրանքների պատճառով. Լիբանանի կապուչին միսիոներ հայր Լեոնար Պասպտացին³², որը Հիսուսի Թանկագին Արյուն եղբայրության վարիչն էր, ամբաստանվեց իր եղբայրության անվանման պատճառով. «Մամտուի պէյ «թանկագին արիւն» բառերուն մէջ ակնարկութիւն մը գտաւ մահմետական արիւնին, որուն առատ հեղումին իբր թէ քաջալերողն ու հրահրիչն էր սոյն միսիոնարը: ... Ու Հայր Լեոնարը ծածկեցին անարգանքներով, նախատեցին, վրան թքին ու հարուածեցին: Բայց անկկա զվերջ անյողողող մնաց: Որքան քափուչինը ուժաքամ կը դառնար, այնքան նահատակը կը հրճուէր անոր մէջ»³³: Մեկ այլ դեպքում ատելության առարկա էր ֆրանցիսկյան հոգևորականների գոտին՝ «Ֆրանցիսկոս» կոչվելու պատճառով. «Չարչարանքներուն յաջորդեց խոնարհեցումը: Ո՛չ ոք զերծ չմնաց նուաստացումներէն, ո՛չ ոքի խնայեցին: Բանտարկեալներէն ոմանք իրենց մէջքին շուրջ Ս. Ֆրանսիսկոսի պարանը կապած ունէին: Մամտուի պէյի աչքին՝ այդ գոտին, «Ֆրանսիսկոս» անունը կրելուն պատճառով, խորհրդանիշ մըն էր Ֆրան-

²⁶ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 71:

²⁷ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 361:

²⁸ Ներսէս եպս. Դանիելեան, *Կաթիլ մը ջուր այրած սրբերու*, Հալէպ, 2010, էջ 21:

²⁹ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 192:

³⁰ Տե՛ս Իգնատիոս Մալոյեան՝ *Մարդը եւ նահապտակը*, Զմմառ, 2001, էջ 44:

³¹ Նույն տեղում, էջ 77:

³² Հոգևորականի անունը պահպանել ենք արևմտահայերեն ուղղագրությամբ:

³³ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 59:

սայի հետ գաղտնի կապի մը եւ նշան մը՝ յեղափոխական կուսակցութեան պատկանելիութեան»³⁴:

Անարգանքներից գերծ չեն մնում անգամ մահացած հոգևորականների դիակները: Զավեն պատրիարքը պատմում է Ներսես եպիսկոպոսի՝ Մշո Ս. Կարապետ վանքի միաբանի մասին, որը 1915-ին հիվանդանում է և վախճանվում Մուշում. «Մուշի իսլամները անոր մարմինը գերեզմանէն հանելով փողոցները կը քաշկոտեն բարբարոսաբար»³⁵: Թեոդիկը պատմում է Հովհաննես ավագ քահանա Դերձակյանի մասին, որի դիակը հանում են գերեզմանից ու, որովայնը պատռելով, փորձում այնտեղ պայթուցիկ գտնել³⁶:

բ) Բռնությունները և սպանությունների ծիսականացումը

Դեսպան Մորգենթաուն մի հետաքրքիր ակնարկ ունի այն մասին, թե ինչպես էին հնարվում կոտանքները. «Մի անգամ ես քննարկում էի իրավիճակը մի թուրք բարձրաստիճան պաշտոնյայի հետ, ով մանրակրկիտ նկարագրում էր կիրառվող կոտանքները: Նա չէր թաքցնում, որ դրանք կազմակերպված են կառավարության կողմից, և թուրք այլ պաշտոնյաների նման նա էլ էր խանդավառությամբ արտահայտվում դրանք անիծյալ ժողովրդի հանդեպ կիրառելու մասին: Այդ պաշտոնյան ինձ ասաց, որ ամեն ինչ՝ բոլոր մանրություններով, քննարկվել է գիշերային խորհրդակցությունների ժամանակ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գլխավոր գրասենյակում: Տանջելու յուրաքանչյուր նոր մեթոդ թուրք պաշտոնյաները ողջունում էին որպես փայլուն հայտնություն, գիշերային խորհրդակցությունների մասնակիցները մշտապես տքնում էին՝ կոտանքի նոր մեթոդներ հայտնագործելու համար: Նա խոստովանեց, որ **իրենք նույնիսկ խորացել են իսպանական ինկվիզիցիայի և պատմական այլ հաստատությունների՝ տանջահար միջոցներին վերաբերող արխիվների մեջ և որոշ մեթոդներ վերցրել այնտեղից**: Նա ինձ չասաց, թե ով է այդ գազանային մրցակցության հաղթողը, սակայն Հայաստանով մեկ տխրահոգակ առաջնությունը պատկանում էր Ջևդեթ բեյին՝ Վանի վալիին... հայտնի էր որպես «Բաշկալեի պայտողը»³⁷:

Կրոնական նրբերանգը և բռնություններին ծիսականացում հաղորդելու մի առանձնահատկություն է դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենի վկայությունն այն մասին, որ տեղահանությունների համար միշտ ընտրվում էր կիրակի օրը՝ քրիստոնյաների սուրբ օրը. «Թուրքերը որպեսզի աւելի դժուարացնէին իրենց

³⁴ Եղբայր Եասենթ Սիմոն, նշվ. աշխ., էջ 56:

³⁵ Զաւէն արքեպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 18: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 104. «Աղէտի նախօրէին, իր թարմ գերեզմանը բացած եւ օծեալ մարմինը դուրս հանելով՝ խուժանը գետնէ գետին քաշկոտած է զայն, ոտքերուն չուան կապած, թունդ հայրենասէր նկատուող ու տարիներէ ի վեր ազգային իրաւանց դէմ ոտնձգութեանց առթիւ իր հօտին շահերը պաշտպանողի համբաւ վայելող հոգեւորականի դիակէն, իսկ վրէժ լուծած եւ Քրիստոնէութիւնը նախատած ըլլալու այն դիւային երանութեամբ, որ Միալիմանին յատուկ է սոսկ: Դիակը յետոյ նետուած է մօտակայ առու մը, պատանքը պատառ պատառ... »:

³⁶ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 334:

³⁷ Դեսպան Հենրի Մորգենթաունի պատմությունը..., էջ 231:

մտադրած սոսկալի գործը, միշտ Կիրակի օրերը կ'ընտրեին որովհետև անոնք գիտեին թե քրիստոնեաները այդ օրը հանգիստ կ'ընեն եւ սուրբ կը նկատեն»³⁸:

Ադանայի ողջակիզումը վերապրած եւ Եղեռնի սարսափներից երկրորդ անգամ տուժած որբը՝ Երվանդ Փոստալջյանը, իր հուշերում հաղորդում է Ադանայի նախկին ամերիկյան որբանոցի հայ սաներին բռնի կրոնափոխության ենթարկելու, մկրտության դրոշմը ջնջելու ծիսակատարության մասին. «Գալիս էին թուրք մարդիկ ու խանումներ, նախ և առաջ երեխաներին բաղնիք տանում **շան կեղտով լվանում, նրա համար, որ մեռոնից ու կրոնքից դուրս գան**, դառնան իսկական թուրք: Հետո կնքահայրը գրկում էր երեխային, և քիթվեն դիոլ-գուռնայի հնչյունների տակ *սունեթ* էին անում (թղպատում): Ոմանց տանում էին հոգեգավակ»³⁹:

Ծիսականացման տարրերից էր տարբեր երաժշտական գործիքների կամ երգերի կատարումը սպանությունների ժամանակ: Խարբերդում և Մեզրեում «Որպեսզի մարդիկ չսեին ճիչերն ու չիմանային տանջանքների մասին, այս ամբողջն արվում էր գիշերը, բանտերի շուրջ կանգնած զինվորները թմբկահարում էին ու շեփոր փչում»⁴⁰: Բողոքական միսիոներուհին՝ Ալմա Յուհանսոնը, փոքր-ինչ կոնտեքստից դուրս է մեկնաբանում երաժշտությամբ ուղեկցվող բռնությունը. զինվորները թմբկահարում ու շեփոր էին փչում ոչ թե որպեսզի սքողեին արարքը (ինչը բնորոշ չէր ի բաց գործող ոճրագործներին), այլ որպեսզի ծիսականացնեին այն:

Հաճախ քրիստոնեական սրբավայրերում էին կատարում սպանությունները. «Թուրք ժանդարմների համար ոչ մի սրբություն չկար. թաքնված զենք փնտրելու պատրվակով նրանք **կողոպտում էին եկեղեցիները, լկտիաբար պղծում խորանն ու սրբազան առարկաները, հայերին ծաղրելու համար նույնիսկ քրիստոնեական ծիսակատարություններ էին կատարում**»⁴¹:

Կրոնափոխության առաջարկը՝ ըստ վերապրողների հաղորդած տեղեկությունների, սովորաբար կատարվում էր մահվանից անմիջապես առաջ՝ դրանով նպատակ ունենալով հայերին կանգնեցնել դժվար ընտրության առջև. «Ջաբիթը սուրը քաշում է, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»: Մեզ կրկնել կուտային այդ խոսքերը»⁴²: «...որպես դաւաճաններ Օսմանեան հայրենիքին, դուք բոլորդ կը դատապարտուիք մահուան: Սակայն եթե ձեզմէ մէկը իսլամանայ, պատիւներով եւ ողջ առողջ Մարտին պիտի վերադարձնենք: Մեռնելու մէկ ժամ ժամանակ ունիք: Պատրաստուեցե՛ք, ձեր վերջին աղօթք-

³⁸ Ճէյքրապըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 117:

³⁹ Հայերենը գրական դարձնելու և կապակցված միտք հաղորդելու համար հուշի այս հատվածը որոշ քերականական խմբագրման ենթ ենթարկել. Արշալույս Փոստալջյան-Ռամազյան, *Հուշեր իմ հայրիկից (Երվանդ Փոստալջյանի մասին)*, ձեռագիր-հուշ, ՀՅԹԻ ֆոնդեր, ֆ. հ. 129, ք. 8, թ. 93, էջ 24:

⁴⁰ Յուհանսոն Ա., *Արսուրյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պայքարությունից*, Ե., 2008, էջ 43, 44:

⁴¹ *Դեսպան Հենրի Մորգենթաուի պապմությունը...*, էջ 229, 230:

⁴² Սվազյան Վ., *Հայոց ցեղասպանություն: Ականաչեա վերապրողների վկայություններ*, Ե., 2011, էջ 245:

ները ըրէ՛ք»⁴³: Կրօնափոխության առաջարկի մասին Ալմա Յուհանսոնն ասում է. «Եվ երբ նստել ու լսում ես բազում փորձությունների մասին նրանց պատմածները, պարզ է դառնում, որ, իրոք, **բոլոր հայերն ընտրության առջև էին դրվել՝ մեռնել կամ ուրանալ Քրիստոսին**, և որ նրանցից շատերը կարող էին խուսափել սարսափելի տանջանքներից, եթե ուզեին մահմեդական դառնալ: Բայց նրանք հավատարիմ մնացին իրենց Աստծուն մի այնպիսի նվիրվածությամբ, որը նրանց տվել էր իրենց աննկուն հավատը: Այդ հավատը նրանց ուժ էր տալիս»⁴⁴:

Փաստորեն հայերին կոտորելը շատ հաճախ կրոնական սխրանք էր համարվում և, հետևաբար, որքան ավելի դաժան կատարվեր այն, ավելի մեծ կլինեին մոլեռանդ ոճրագործի սխրանքը: Լեւիլի Դևիսի հաղորդմամբ. «**Գիշերները թուրքերը երկինք աղոթք էին հղում**, իսկ ցերեկները իրականացնում էին իրենց արյունոտ գործը»⁴⁵: Այս ամենը կատարվում էր «**Ղուրանի վրայ կատարուած երդումով՝ քաղաքին միւս քրիստոնեաներէն գաղտնի պահել սպանողներուն արարքները եւ սպանուածներուն ճակատագիրը**»⁴⁶:

Հաճախ օտարերկրյա միսիոներները հայերի կրած տառապանքները համեմատում են Ներոն կայսեր ժամանակ տարածված քրիստոնյաների հալածանքների հետ. «...Մենք **կ'ապրինք Ներոնի ժամանակ երբ քրիստոնեաները կը հալածէր...**»⁴⁷: Թուրքերն ու քրդերը նույնիսկ փորձում էին նմանակել Ներոնին. Էնվեր փաշայի պատվին իրականացված հայերի ողջակիզման թատերականացման մի տեսարան է նկարագրում վերապրող Մարի Գրիգորյանը՝ այս անգամ ևս հիշատակելով Ներոնի անունը. «Օր մըն ալ ահա լուր տարածուեցաւ թէ պատերազմական նախարար՝ Էնվէր Փաշան Ռաս-Իլ-Այնէն պիտի անցնի Պաղտատի ճակատը երթալու համար: Չեմ կրնար երեւակայել՝ թէ ո՛վ յղացաւ այդ դիւային ծրագիրը. **հաւաքել տալ բոլոր ջարդուածներու մարմինները եւ պարզել ներոնական տեսարան մը՝ այրել տալով զանոնք**, երբ Էնվէր Փաշան ժամանէր հոս: Ականատեսները ըսին որ՝ ան իր կառքին մէջ ոտքի կեցած անտարբերօրէն դիտած է իրկիզուող մարմինները»⁴⁸:

Մարիա Յակոբսէնը պատմում է մի դերվիշի մասին, որ տապարով 223 հայ էր սպանել, և դա ներկայացվում էր որպես կրոնական սխրանք⁴⁹:

⁴³ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 62:

⁴⁴ Յուհանսոն Ա., *նշվ. աշխ.*, էջ 30, 31:

⁴⁵ Դևիս Լ. Ա., *նշվ. աշխ.*, էջ 145:

⁴⁶ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 40:

⁴⁷ Ճէյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 303:

⁴⁸ Մարի Գրիգորեան, *Արանայէն Մարտինի թրքական որբանոցը 1909-1918*, խմբ.՝ Բիւզանդ Եղիայեան, 1989, էջ 68. ՀՅԹԻ ֆոնդեր, Բ-8, թպ. 248:

⁴⁹ Ճէյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 353:

Թեոդիկը գրում է Գրգքեսելյան 3 եղբայրների ծիսական սպանության դեպքը, որոնց «... կապեցին և տարին մորթել Թուրքի մը գերեզմանի վրայ»⁵⁰: Ավելին՝ կան դեպքեր, երբ սպանում էին եկեղեցու խորանի վրա⁵¹ կամ մզկիթների դիմաց⁵²:

Արժանահավատ համարելով Հ. Մորգենթաուի խոսքերը⁵³, պետք է նշենք, որ հնարավոր է՝ այսպիսի ծիսական սպանությունների նկարագրությունները գրականությունից և արխիվներից դուրս էին բերվել վերին օղակների կողմից ու հրահանգների թվում տրվել սպանություններն անմիջականորեն իրականացնողներին:

գ) Խաչի հանդեպ անարգանքը, մարդկանց խաչելը և Հիսուս Քրիստոսի անունը շահարկելը

Առանձնահատուկ ատելության նկարագրությունների կարելի է հանդիպել, երբ խոսքը վերաբերում է քրիստոնեական կարևորագույն խորհրդանշանին՝ խաչին: Կոտանքի տարածված ձևերից էր քրիստոնյաներին խաչելը: Թուրքական որբանոցում դասավանդող մի ուսուցիչ նույն որբանոցի հայ որբերին հաճույքով պատմում է, թե ինչպես է տեղի ունեցել հետևյալ խաչելությունը. «... շատ յախոռն էր եւ ինչ մեծ ախորժակով չէր պատմեր մեզի՝ **Տիգրանակերտցի հայ առաջնորդին խաչելությունը** եւ շնականօրէն կ'ըսէր թէ ոտքերուն եւ ձեռքերուն եղունգները աքցանով քաշելէ վերջ, միսերն ալ կտրտելով քիչ առ քիչ՝ մեռցուցած են»⁵⁴: Կամ՝ «... պատ. Պետրոսը որ Չնքուշ կը գտնուէր, չարչարանքի ենթարկուած էր ու բանտին մէջ ալ մեռած էր: Ան շատ ազնիւ մարդ մըն էր... Տեղ մը **թուրքերը 13 հոգի խաչեր են:** Անոնց ձեռքերէն, ոտքերէն ու կուրծքերէն գամ գամած են: **Սեւերեկի պատուելին ալ խաչած են**»⁵⁵:

Խաչելու ընթացքում նաև հիշատակում էին Հիսուս Քրիստոսին. «Որոշ դեպքերում ժանդարմները նրանց **ձեռքերն ու ոտքերը մեխում էին փայտի կտորներին՝ ակնհայտորեն նմանակելով խաչելությանը**, իսկ երբ գոհը հոգեվարքի մեջ էր ընկնում, գոռում էին. «**Դե՛ հիմա քո Քրիստոսը թող գա ու փրկի քեզ**»⁵⁶: Զարմանալով այն փաստի վրա, թե ինչու են հայերը քրիստոնյա, թե ինչու է նրանց Աստվածը բռնի մահվան ենթարկվել, ինչ պատճառ կա այդպիսի «անգոր» էակի հավատալու, թուրքերն ու քրդերը հայերին ենթարկում էին նույն չարչարանքին, ինչ Քրիստոսն էր կրել: Շվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնը գրում է. «Սա իսլա-

⁵⁰ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 638, 639:

⁵¹ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 92, 93:

⁵² Քրիստոնեություն ընդունած մի թուրքի (մուսուլմանական անունը՝ Փաթլագզադե Մեհմեդ, քրիստոնեական անունը՝ Արամ Փաթլագյան) Մեծ եղեռնի ժամանակ ևս ենթարկում են ծիսականացված սպանության՝ քարշ տալով նրան դեպի մզկիթ և մզկիթի դռան առջև անարգանքներով նրան կտոր-կտոր են անում. տե՛ս Գր. Հ. Գալուստեան [Կիլիկեցի], *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն*, Լոնկ Այլընտ Սիթի, Նիւ Եորք, 1988, էջ 784:

⁵³ Տե՛ս թ. 37 հղման տեքստը:

⁵⁴ Մարի Գրիգորեան, *Արանայէն Մարտինի թրքական որբանոցը 1909-1918*, խմբ.՝ Բիզանդ Եղիայեան, 1989, էջ 77. ՀՅԹԻ ֆոնդեր, Բ-8, թայ. 248:

⁵⁵ Ճեյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 97:

⁵⁶ *Դեսպան Հենրի Մորգենթաուի պապմոթյունը ...*, էջ 230, 231:

մի զարթոնքն է: Նրանք իրականացրեցին իրենց ծրագիրը դիվային հնարամտությամբ: Շատ անգամ նրանցից կարելի է լսել. «**Հիմա թող ձեր Հիսուսը ձեզ օգնի**», և այլն, և այլն: Հաճախ հայերին խաչում էին գյուղերում»⁵⁷, կամ՝ «Հազի ոտքի կանգնելու ուժ ունեցող տարաբախտ քահանան պատին կը կոթնեցնեն: Իրաքանչիւր բազուկէն պարան մը կ'անցընեն, պարանն ալ պատին ագուցուած երկաթէ երկու օղակներու մէջ կը սահեցնեն: Հազի պարանէն կը քաշեն, մեր ագնուասիրտ չար-չարեալը օդ կը բարձրանայ, գետնէն 10 սանթիմէթ եւ բազուկներէն կախուած կը մնայ: **Խաչելութեան չարչարանքն է այս**»⁵⁸:

Կարապետ Գաբրիկյանի հաղորդմամբ Քեմախի կիրճի մոտ ժանդարմները 6 տարեկան մի տղայի են խաչում. «**Փայտէ խաչի մը վրայ գամեցին աչքերէն, ձեռքերէն ու ոտքերէն**. յետոյ ժողովուրդին ցուցադրելով պօռացին. **Ահա ձեր Քրիստոսը եւ խաչը. Թող ձեզ ազատէ**»⁵⁹:

Բռնությունների ընթացքում Հիսուս Քրիստոսի անունը հիշատակելը և քրիստոնյաներին, նրանց կրոնն ու Աստծուն ծաղրելը դարձրել էին համատարած և սովորական երևույթ. դա նպատակ ուներ և՛ թուլացնել զոհերի կրոնական հաստատակամությունը, և՛ մյուս կողմից չհետապնդելով որևէ կոնկրետ նպատակ՝ ցուցադրում էր այն հանգամանքը, որ քրիստոնյաների Աստվածը «անկարող» է փրկել, և քրիստոնեությունն էլ «անպիտան» կրոն է՝ ի տարբերություն իսլամի.

«Խարբերդի մէջ շատ մը թուրքեր հայերուն կ'ըսեն.

– **Եթէ ձեր Յիսուսը Աստուծոյ որդին է, ինչո՞ւ համար ձեզ չ'ազատեր մեր ձեռքէն, դուք որ Անոր կը հաւատար:**

– Ո՛հ, կը պատասխանեն հայերը: Մեր կրօնքը ամենէն լաւն է: Զինքը ուրանալը աւելի դժուար է քան թէ մտրակոյիլը»⁶⁰:

Խոստուն դրվագ է, թե ինչպես են ոճրագործները պատասխանում մի հայ կնոջ այն հանդիմանանքին, թե ինչու են այդքան դաժանությամբ վարվում իրենց հետ. ոճրագործությունը կատարողների պատասխանը կապված է լինում այն հանգամանքի հետ, որ իրենք կրոնական իրավասություն էին ստացել հայերին կոտորելու համար. «*Գահպէ՛ւ սէնի...* կ'ըմբերանեն. դեռ խօսելու լեզո՞ւ ալ ունիք. Ալլահն ալ, Մարգարէն ալ, Սուլթանն ալ ձեզի պէս *խըյանէթ միլլէթի* մը *ղահր* ըրած են. ձեր նամուսն ալ, ձեր պատին ալ, ինչք ու ստացուածք, ձեր կեանքն ալ մեր ձեռքը մատնած են. դուք այլեւս ձեր անձին տէրը չէք. Ալլահը մերն է, դուք Աստուած չունիք, մենք ենք ձեր ալլահը, ձեր Աստուածը, ձեր Քրիստոսը. եթէ անոնք ունին զօրութիւն մը, թող գան ազատեն զձեզ մեր *փէնչէներէն...*»⁶¹:

Անգամ միջականացում էր կատարվում և սիմվոլիկ կերպով համեմատվում էին Մուհամեդի և Քրիստոսի կերպարները՝ որպես հայի ու իսլամադավանի պահապան

⁵⁷ Յուհանսոն Ա., *նշվ. աշխ.*, էջ 53, 54:

⁵⁸ Եղբայր Եասեյո Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 86:

⁵⁹ Գաբրիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 507: Խաչելության դեպքեր՝ հատուկ դաժանությամբ կատարված, տե՛ս նույն տեղում, էջ 521, 522:

⁶⁰ Ճեյքըպըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 103:

⁶¹ Գաբրիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 149:

գորություններ, ստեղծվում էին ապոկալիպտիկ լեգենդներ, ինչպիսին հետևյալն է. «...Եւ միշտ կը պատմէի գալիք դատաստանի սոսկալի դէպքերու մասին, սակայն թուրքերը կ'ըսէին թէ **ինչպէս որ Յիսուս չի փրկեց հայերը այս չարչարանքներու ժամանակ, նոյնը պիտի պատահի նաեւ դատաստանին օրը: Այդ օրը հայերը դուրսը պիտի մնան: Մուհամմէտ մեծ ծառի մը տակ պիտի կենայ եւ Մուհամմէտ զանոնք պիտի առաջնորդէ, երկինք պիտի մտնեն:** Անոնք կ'ըսէին նաեւ թէ պատերազմէն ետք բոլորը մուհամմետական պիտի դառնային»⁶²: Այս հատվածից պարզ երևում է, որ հայերի կոտորածը ապագայի երկու տեսիլ էր հետապնդում: Նախ, հայերին կոտորելով, թուրքերը կարծում էին, որ մահմեդականությունը հաղթանակելու է քրիստոնեության նկատմամբ, մահմեդականները պատերազմը հաղթելու են, և իրենց «միսիոներությունը» (հավանաբար նկատի ունենալով և՛ սպանությունները, և՛ կրոնափոխությունը) հասնելու էր իր նպատակին: Երկրորդը կրոնական վախճանաբանության ոլորտից է, դատաստանի օրը հետմահու երանության արժանանալու համոզվածությամբ:

Խարբերդում և Մեգրեում մարդկանց խոշտանգելու ժամանակ թմբկահարում էին և ծնծղահարում. Ալմա Յուհանսոնը պատմում է. «Հարկ չկա կրկնել, որ շատ մարդիկ այդ խոշտանգումներից մահանում էին: Իսկ այդ ժամանակ զինվորները բղավում էին. **«Դե թող հիմա ձեր Քրիստոսն օգնի ձեզ»**⁶³:

Չեթեներն իրենց սպանելու կարողությունը, մարդկանց ճակատագրեր որոշելը համարում էին ալլահից տրված մի երևույթ, իսկ իրենց զգում էին հայերի նկատմամբ որպես հայերի կյանքն ու մահը տնօրինողներ. «մենք ենք ձեր ալլահը. եթէ ձեր Աստուածը ունի զօրութիւն մը թող գայ մեր ձեռքէն ազատէ»⁶⁴: Նույնի մասին են վկայում Պոլսից Նիկոմիդիա ուղարկված Մեհմետ Ալի անունով մի իթթիհատականի խոսքերը. **«Դուք Աստուած չունիք. ես եմ ձեր Ալլահը, ձեր Աստուածը, ձեր Քրիստոսը եթէ ունի զօրութիւն մը թող գայ ազատէ ձեզ իմ ձեռքէս»**⁶⁵: Նա այս խոսքերով եկեղեցում հավաքված հայերին է կոտորում:

դ) Կրոնական հայիոյանքները, անարգանքը, պիտակավորումները, կոչերը և այլն

Համատարած երևույթներից էր պիտակավորումը. «գյավուր», «շուն», «շուն քրիստոնյա» և այլն: Ահա մի քանի վկայություն այս առնչությամբ. «Թուրքերը քրիստոնյաներին սովորաբար կոչում են մեկ բառով՝ **«շներ»**, և դա նրանց համար զուտ այլաբանական հասկացություն չէ. նրանք իսկապես իրենց եվրոպացի հարևաններին ընկալում են որպես շատ ավելի անարժան արարածներ, քան ընտանի կենդանիներն են»⁶⁶: Կոտորածները դեռ չսկսած՝ «Թուրք պաշտօնատարներ, անգամ երեսփոխաններ, սկսան շրջիլ քիւրտ ցեղախումբերու մօտ եւ, բանակին համար

⁶² Ճեյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 170:

⁶³ Յուհանսոն Ա., *նշվ. աշխ.*, էջ 43, 44:

⁶⁴ Գաբիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 180:

⁶⁵ Նույն տեղում, էջ 452, 453:

⁶⁶ *Դեհապան Հենրի Մորգենթաուի պարամությունը...*, էջ 209:

ուղտեր հաւաքելու պատրուակին տակ, սկսան քարոզել անոնց միակ հասկցած լեզուն. **մա'հ կիավորներուն....**»⁶⁷:

Քիւրտեմիք գյուղում «...նոյնիսկ իրենց պզտիկ տղաքը, ինքզինքնուն հասուն մարդու ձեւեր կու տային ու մեր ետեւէն կը պոռային.

– **Կեավոր, քրիստոնեայ շուն...**»⁶⁸:

Կամ՝ «...Քահանան ետ կը կանգնեցնեն.– **Քրիստոնեայ շա'ն լակոտ**, կը պոռան երեսին, հիմա ալ **քեզ քու Տիրոջդ պէս պիտի ընենք**»⁶⁹:

Պիտակավորումը և թշնամանքը տարածված էին նաև մուսուլմանների երեխաների մէջ, որոնք ավագներից սովորել էին «գյավոր» ոչնչացնելը սեփական պարտքը համարել. «Հովհաննեսը մի դուռ ծեծեց՝ ողորմություն խնդրելու: Բաց արին դուռը, երկու թուրք տղաներ Հովհաննեսին քարշ տալով ներս տարան ու ծեծում էին ասելով. «**Գյավոր, քեզ պիտի սպանենք**»...»⁷⁰:

Հետաքրքիր է, որ թուրքական «մանկավարժությունն» արգելում էր թրքացման և իսլամացման ենթարկվող հայ երեխաներին կոչել գյավոր. «...մեզ կոչեցին **մէօհ-դէտի, բայց կեավոր** բառը խստիւ արգելուած էր...»⁷¹:

ե) Քրիստոնեական սրբությունների և սրբավայրերի հանդեպ կրոնական վանդալիզմի դրսևորումները

Անարգանքը քրիստոնյաների սրբավայրերի հանդեպ երևում է այն դեպքերից, երբ եկեղեցիները նպատակադրված վերածում էին հասարակաց տների՝ աղջիկներին բռնությամբ ենթարկելով սեռական ստրկության⁷²: Հայտնի են հայկական եկեղեցիները որպէս հայերից խլված ապրանքը պահելու վայր գործածելու⁷³, եկեղեցիների վրա թուրքական դրոշակ պարգելու⁷⁴, եկեղեցիների զանգերի փոխարեն շներ կախելու մասին վկայություններ⁷⁵: Եկեղեցիների մետաղներն օգտագործում էին փամփուշտներ պատրաստելու⁷⁶, իսկ քարերը՝ զինվորական շենքեր ու փողոցներ սալարկելու համար⁷⁷, վաճառում էին ծիսական թանկարժէք առարկաները, Ս.

⁶⁷ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 36:

⁶⁸ Ճէյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 171:

⁶⁹ Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 86: Մաթթա Քրմո վարդապետին կոչում են «շուն քրիստոնյա», կոտանքների ու ֆալախայի են ենթարկում (Եղբայր Եասենթ Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 84, 85):

⁷⁰ Արշալույս Փոստալյան-Ռամազյան, *Հուշեր իմ հայրիկից (Երվանդ Փոստալյանի մասին)*, ձեռագիր հուշ, ՀՅԹԻ ֆոնդեր, ֆի 129, ք. 8, թպ. 93, էջ 24:

⁷¹ Մարի Գրիգորեան, Ատանայէն Մարտինի թրքական որբանոցը 1909-1918, խմբ.՝ Բիւզանդ Եղիայեան, 1989, էջ 72, Բ-8, ՀՅԹԻ ֆոնդեր, Բ-8, թպ. 248:

⁷² Անտոնեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 111:

⁷³ Գաբրիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 563:

⁷⁴ Ճէյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 70:

⁷⁵ Ակունի Ս., *Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը*, Կ. Պոլիս, 1920, էջ 166:

⁷⁶ Ճէյքըպսըն Մ., *նշվ. աշխ.*, էջ 141:

⁷⁷ Գաբրիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 562:

Սեդանի վրայի սպասքը, իրերն ու կտավներն օգտագործվում էին կենցաղային այլևայլ նպատակներով:

Թեոդիկը հաղորդում է բազմաթիվ դեպքեր սրբավայրերի, քրիստոնեական աստվածապաշտության պարագաների հանդեպ անարգանքի վերաբերյալ. «Մեր մենաստաններուն նահատակ եկեղեցականները ցուցակագրումի ընթացքին, անլորդ չըլլայ յիշատակել նաեւ անոնց ծառայած սրբատեղիները, որոնք պղծուեցան ու թալանի մատնուեցան իրենց թանկարժէք հնութիւններով: Գլակայ վանքը, զոր օրինակ, ամէնէն հարուստներէն մին կը նկատուէր, ուր ձեռագիր հին մատեաններէ զատ՝ կային բազմաթիւ արծաթ եւ ոսկի մասունքներ, սկիւններ, խաչեր, սաղաւարտներ, եւ այլն, մեծ մասամբ գոհարակոտ եւ սրբազնաստուրք նշխարներով, նաեւ ոսկեղիպակ շուրջառ, վարագոյր եւ շուշիայ, իրենց դարաւոր պահուածքին մէջ անեղծ եւ առարկայ ելրուպացոց խոր հիացումին: Ատոնք **բոլոր ապշուպուեցան վանտալի ձեռքերով եւ մկրատուելով՝ ծառայեցին իբր շալվար եւ կեղտաշոր Քիւրտ գեղջկուհիներու: Մագաղաթեայ գրչագիր Աւետարաններու էջեր պատառ-պատառ նետուեցան կոյանոց եւ խել մը անստգիւտ հնութիւններ արժանագին խլուելով ձեռքէ ձեռք՝ լեցուեցան սնտուկներու մէջ, զորս Պալքանցուկը հեւիհեւ կրեց աւագակներու որջը՝ Գերմանիա, հայապատկան այդ գօղոններով պետական թանգարաններ ճոխացնելու համար... Ս. եկեղեցականաց շիրիմներ քակուեցան անխնայ եւ իրենց վրայի մետրոպեան տառերը տաշուելով՝ գացին զարդարել «գօնագ»-ներու (ապարանքների-Շ. Խ.) բակեր ու ճեմիշներ (զուգարաններ-Շ. Խ.), միշտ իբր նախատինք Քրիստոնեութեան»⁷⁸:**

Քեմալիի եկեղեցում օրերով պահվելուց հետո հայ երիտասարդներ. «... միահաղոյն սուրէ անցուեցան: Էրզրումցի խուժանը՝ տաճարներէ շոպած մեր խաչերուն ու Աւետարանին հանդէպ ցոյց տուաւ այն միեւնոյն անոպայ ընթացքը՝ զոր այլուր ունեցեր էին ազգակիցներ, **հեթանոսաբար նախատած ըլլալու համար Քրիստոնէութիւնը**, այսինքն՝ կոտորել, պատռտել ու կոխկոտել զանոնք եւ նետել աղբիւսքի մէջ՝ հայհոյալից բացագանչութիւններով, մահատազնապ անձկութեան մատնուած Հայութեան աչքին առջեւ»⁷⁹:

Բազմաթիվ էին նաև քրիստոնեական գրականության հանդեպ անարգանքի դրսևորումների մասին. «Դաշտին երեսը, աղիւսներու մէջ բազմաթիւ Հայերէն գրքեր ալ – մասնաւորապէս Աստուածաշունչ գիրք եւ Աւետարան. Ցանուցիր, բզրքտուած: Թուրք, քիւրտ լաճեր կեավուրի այդ **քիթապները կը զարնեն գետնոց-գետին, ցեխերու մէջ աղբիւսէ աղբիւս կը խօթեն, կ'ոտնահարեն, պատառքնծիկ ըրած՝ հովին կուտան:** Հայ քաղաքակրթութիւնը, Հայ միտքը, Հայ հանճարն է, որ նախատինքներու, թուքի, մուրի կ'ենթարկուի»⁸⁰:

⁷⁸ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 143, 144:

⁷⁹ Նույն տեղում, էջ 215:

⁸⁰ Գաբրիկեան Կ., *նշվ. աշխ.*, էջ 233:

Այն ամենը, ինչ կապված էր քրիստոնյաների հետ, բնաջնջման ենթակա էր, անգամ նրանց պատկանող կենդանիները⁸¹:

գ) Հայերի կրոնածիսական վարքի դրսևորումներ

Դժվարին իրավիճակում՝ թե՛ կրոնափոխության և թե՛ մահվան սպառնալիքի ժամանակ հայերը ցուցաբերում էին յուրահատուկ կրոնահոգեբանական վարք, որոնց բացատրությունը պետք է գտնել ամենատարբեր գիտակարգերի օգնությամբ: Կան բազմաթիվ վկայված դեպքեր, երբ հայերը կյանքի սահմանային իրավիճակներում կրոնածիսական իմիտացիաներ են անում: Մարդիկ թուրքական որբանոցի հայ որբերը իսլամացման պայմաններում էլ կարողանում են գտնել քրիստոնեական ծեսերի, սրբազան արարողությունների սիմվոլիկ փոխարինումը: Մասնավորապես, շատ խոստում է նրանց կողմից Ս. Հաղորդության խորհրդի հետևյալ իմիտացիան՝ նմանակումը. «Ու տարօրինակ կերպ մըն էր նաեւ մեր հաղորդութիւն առնելը: Ագապին, որ Խատիժէ կը կոչուէր, ելաւ մեր որբանոց-եկեղեցիի Ս. Խորանի պատէն ծեփի կտոր մը փրցուց, փշրեց, վրան «Յանուն Հօր եւ Որդւոյ...» արտասանեց ու բաշխեց մեզի, ու **մենք այդ փշրանք մասերով հաղորդուեցանք, զորացանք**»⁸²:

Առանձնահատուկ ուշադրություն է գրավում հոգևորականների կողմից հողը որպես վերջին հաղորդություն օգտագործելու ֆենոմենը. այս արարք-խորհուրդը հոգևորականները կատարում են գուցե միմյանցից օրինակ վերցնելով, գուցե ակամա: Ներսես եպս. Դանիելյանն իր «Կաթիլ մը ջուր այրած սրտերու» գրքի մեջ պատմում է Տ. Պետրոս քահանա Քեչիշյանի մասին, որին առաջարկում են իսլամ ընդունել, որ ազատվի մահից, սակայն 80 տարեկան ծերունին ասում է, որ «...նախամեծար կը համարի այս գուլումի ու զալմի երկրէն երկինք փոխադրուիլ մահուամբ, քան կրօնափոխ ըլլալ...ու հազիւ քահանան ծնրադրած, գետինէն **քչիկ մը հող առնելով բերանը՝ իբր հաղորդութիւն, վերջին աղօթքը կ'արտասանէ**, արդէն մեր «հայրենասեր», բայց հակասահմանադրական զինուորները տեղն ու տեղը գնդակահար կ'ընեն զայն ու ստով ալ չգոհանալով՝ կամ մոլեռանդ կրքերնին չյագեցնելով կը սկսին սուինով ծակծկել անոր անշնչացած մարմինը, որուն արիւնոտ ու սուինահար Մաշտոցը ինձ յանձնուեցաւ յետոյ»⁸³: Նույնը պիտի անեն Ներսես եպիսկոպոս Դանիելյանը Եղեռնի ժամանակ. «Եռզղատի 472 երեւելի հայերէ բաղկացած առաջին կարաւանը ճամբայ կը հանուի 26 Յուլիս 1915ին՝ Եռզղատ-Զիլէ ուղիով: Այս կարաւանին մէջ էին Եռզղատի առաջնորդներ՝ Ներսէս Եպս. Դանիելեան, քահանաներ, ուսուցիչներ, մտաւորականներ, բժիշկներ, դեղագործներ, վաճառականներ եւ այլ երեւելի հայեր: ...Ճանապարհին հէք առաջնորդը կը խնդրէ կարաւանը վարող թուրք ոստիկանէն, թոյլատրել վայրկեան մը կանգ առնել աղօ-

⁸¹ «Կեավորին հակիթն ալ ջախջախեցէք, ոտնահարեցէք, կ'ըսէին, չըլլայ որ մէջէն արաղաղ ելլէ, արու արմատ դուրս գայ» (Գաբիկեան Ա., *նշվ. աշխ.*, էջ 248):

⁸² Մարի Գրիգորեան, *Արանայէն Մարտինի թրքական որբանոցը 1909-1918*, խմբ.՝ Բիւզանդ Եղիայեան, 1989, էջ 97, ՀՅԹԻ ֆոնդեր, Բ-8, թպ. 248:

⁸³ Ներսէս եպս. Դանիելեան, *նշվ. աշխ.*, էջ 58, 59:

թելու համար: **Գետինէն քիչ մը հող առնելով, իբր հաղորդութիւն բերանը կը դնէ ու իր վերջին աղօթքը կ'ընէ»⁸⁴**: Թեոդիկի հաղորդմամբ այս արարքը կատարում է նաև Աշոտ քահանա Ավետյանը⁸⁵:

Կաթողիկէ եկեղեցու երանելիների շարքում դասված մարտիրոս Իգնատիոս եպիսկոպոս Մալոյանի տարագրության վերաբերյալ հետևյալն է պատմվում. «Եւ երբ Մամտուի Պէյի զինուորները կը հեռանան, Առաջնորդը եւ հաւատացեալները կ'աղոթեն Աստուծոյ պաղատագին, օգնութիւն աղերսելով Անկէ, որ նահատակութեան շնորհքը ընդունին: Ապա **Մալոեան Գերապայծառը կը սրբագործէ հացը, քահանաները սուրբ մասնիկները կը բաշխեն հաւատացեալներուն:** Այս երկնային արարողութեան դէպքին ականատես զինուորները կը պատմեն, թէ լոյսի թանձր ամպ մը ծածկեց Քրիստոսի մարտիկներու փաղանգը, զանոնք ամբողջովին թաքցնելով զինուորներուն աչքերէն: Անուշահոտ բուրմունք մը տարածուեցաւ բոլորին վրայ: Ամէնքը հիացան տեսնելով հրճուանքի, ուրախութեան եւ խաղաղութեան նշանները, նահատակութեան պատրաստ այս մարդոց դէմքերուն վրայ»⁸⁶:

Հետևյալ դեպքը վերաբերում է ոչ թե հաղորդությանը, այլ խաչափայտի մասունքին, որ փոխարինում է Հաղորդության Հացին: Խոսքը Տեր Գաբրիել Քաթմարճյանի մասին է. «Ողբացելալ օր մ'առաջ, նախագգալով իր մօտալուտ վախճանը, **ս. Խաչի մասունքը**, գոր իր վրան կը կրէր, **մանր մանր ըրած էր եւ կուլ տուած էր**, ամէն սրբապղծութեան առաջքը առնելու համար»⁸⁷:

Հողը որպէս վերջին կերակուր գործածելու օրինակ է հայ ուսուցիչ Կարապետ Ավագյանի վերջին խնդրանքը. նա խնդրում է ոչ թե իրեն հաց տալ, այլ մի պտղունց հող՝ իբրև սրբություն, քանի որ ինքը տեսավ հայի խաչելությունը և ապա երանի է տալիս նրանց, ովքեր կտեսնեն հայի հարությունը ապագայում⁸⁸:

* * *

Վերը ներկայացվածով բոնությունների ու սպանությունների կրոնական երանգավորում ունեցող վկայությունները չեն սահմանափակվում. Հայոց ցեղասպանությանն առնչվող հուշագրություններում, վավերագրերում ու փաստաթղթերում դրանք բազմաթիվ են: Հավաքվեցին և թեմատիկ դասակարգման ենթարկվեցին մի շարք խոսուն օրինակներ, որտեղ երևում է կրոնական գործոնի դերակատարությունը՝ որպես Եղեռնն իրագործող զանգվածների կարևոր մղիչ ուժ:

⁸⁴ Ներսէս եպս. Դանիէլեան, *նշվ. աշխ.*, էջ 20:

⁸⁵ Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 226:

⁸⁶ *Իգնատիոս Մալոյեան. մարդը եւ նահապտակը...*, էջ 47:

⁸⁷ Եղբայր Եսաենք Սիմոն, *նշվ. աշխ.*, էջ 73:

⁸⁸ Կարապետ առաջ քահանայ Գալֆաեան, *Գիրք Ելից հայոց*, Պէյրութ, 1955, էջ 236:

ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԻՍԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԵԾ
ԵՂԵՌՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շուշան Խաչատրյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուսումնասիրությամբ վեր է հանվում Հայոց ցեղասպանության ընթացքում տեղի ունեցած բռնությունների և սպանությունների ծիսականացման երևույթը: Ծիսականացումը դիտարկվում է որպես Հայոց ցեղասպանության իրականացման կրոնական գործոնի խոսուն օրինակ: Հիմնականում անդրադարձ է կատարվում հոգևորականների հանդեպ բարբարոսության դրսևորումներին, բռնությունների ծիսականացմանը, ծիսական սպանություններին, Եղեռնի ժամանակ խաչն անարգելուն, մարդկանց խաչելուն, Հիսուս Քրիստոսի անունը շահարկելուն, կրոնական հայիոյանքներին, անարգանքին, պիտակավորումներին, կոչերին, քրիստոնեական սրբավայրերի հանդեպ կրոնական վանդալիզմին: Առանձին ուշադրության նյութ է հանդիսացել հայերի կողմից իրականացված ծիսական արարքների վերհանումը, մասնավորապես Հաղորդության խորհրդի իրականացում-նմանակումը Մեծ եղեռնի ժամանակ:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, կրոնական գործոն, բռնություն, կոտանքներ, ծիսականացում, զոհաբերություն:

RITUALIZATION OF VIOLENCE AND MURDERS DURING THE ARMENIAN
GENOCIDE

Shushan Khachatryan

SUMMARY

This study is about the ritualization of violence and murders during the Armenian Genocide. Ritualization is regarded as one of the most vivid components of the religious factor of the Armenian Genocide. The key points to which reference is made are as follows: the outbursts of barbarism towards Armenian Clergy, the ritualization of violence, ritual murders, the cross during the Armenian Genocide (insults against the cross, crucifixion of the Armenians), speculation of the name of Jesus Christ, religious oaths, insults and appeals, labelings, acts of vandalism against Christian religious sites and shrines. Separate attention is put on the reaction of persecuted Armenians in the form of ritual acts, particularly - the phenomenon of imitation of the Sacrament of Holy Communion.

Keywords: Armenian Genocide, religious factor, violence, tortures, ritualization, sacrifice.

РИТУАЛИЗАЦИЯ НАСИЛИЙ И УБИЙСТВ ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА АРМЯН

Шушан Хачатрян

РЕЗЮМЕ

В данном исследовании изложены некоторые проявления феномена ритуализации насилий и убийств во время Геноцида армян. Ритуализация рассматривается как один из наглядных примеров религиозного фактора в осуществлении Геноцида армян. Рассматриваются случаи зверств в отношении армянского духовенства, насилия и ритуализации, ритуальных убийств, осквернения креста, распятия армян, ругани в адрес Иисуса Христа, религиозных оскорблений, акты вандализма в отношении христианских святых мест и святынь. Отдельное внимание уделяется реакции преследуемых армян в виде ритуальных действий, в частности - имитации Таинства Причащения.

Ключевые слова: Геноцид армян, религиозный фактор, насилие, пытки, ритуализация, жертвоприношение.

**ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՔԱՉԱՓ (BOOK-LENGTH) ՁԵՌԱԳՐԻ «ՄՊԱՆԵԼՈՒ ՄՏԱԴ-
ՐՈՒԹՅՈՒՆ: Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ» ԵՆԹԱԲԱԺՆՈՒՄ**

Նարեկ Պողոսյան

Ռաֆայել Լեմկինի թողած հսկայական գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Հայոց ցեղասպանության թեմայով նրա ուսումնասիրությունները: Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի գրած նյութերից ամենածավալունը «Հայկական կոտորածների վերաբերյալ զրքաչափ ձեռագիր» (այսուհետ՝ Գրքաչափ ձեռագիր) անվանումը ստացած ձեռագիրն է: Այն բաժանված է հետևյալ 7 ենթաբաժինների՝ 1. Հայերը, ընդհանուր պատկեր, 2. Հարկում, 3. 1890-ականների կոտորածները, 4. 1909թ. Ադանայի կոտորածները, 5. 1915-1916թթ. կոտորածները և տեղահանությունները, 6. Սպանելու մտադրություն: Ո՞վ է մեղավոր, 7. Արձագանքներն արտասահմանում: Այս ձեռագրում Լեմկինը, օգտվելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստերից և մեջբերելով ականատեսների վկայությունները, ուշագրավ դիտարկումներ է անում Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառների շուրջ: Այս խնդրին Լեմկինը մասնավորապես անդադադառնում է Գրքաչափ ձեռագրի «Սպանելու մտադրություն: Ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում:

Հոդվածում քննության է առնվում Ռաֆայել Լեմկինի Գրքաչափ ձեռագրի այն ենթաբաժինը, որը նա վերնագրել է «Սպանելու մտադրությունը, ո՞վ է մեղավոր»: Այս ձեռագրում Լեմկինը կարևոր դիտարկումներ է անում ինչպես Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառների շուրջ, այնպես էլ, օգտագործելով փաստական տվյալներ, ներկայացնում է, թե ով է կրում Հայոց ցեղասպանության իրագործման պատասխանատվությունը: Հատկանշական է, որ ինչպես արտացոլված է նաև վերնագրում, Լեմկինը փորձել է ապացուցել Օսմանյան կայսրությունում հայերին ոչնչացնելու մտադրության առկայությունը: Ցեղասպանության հանցագործության իրագործման համար մտադրության առկայության հանգամանքն անհրաժեշտ պայման է, որի մասին նշված է նաև 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի¹ երկրորդ հոդվածում, որում նշված է, թե ցեղասպանություն նշանակում է հոդվածի ներքո առանձնացված 5 գործողություններից ցանկացածը՝

¹ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիա, 1948թ. դեկտեմբերի 9 (http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf):

կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ:

Ռաֆայել Լեմկինը Գրքաչափ ձեռագրի այս ենթաբաժնում օգտվել է Հայոց ցեղասպանության և դրա իրագործման հետ կապված բազմաթիվ փաստական նյութերից՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ: Առաջին աղբյուրը, որից օգտվել է Լեմկինը, Հենրի Հարիս Ջեսսափի «Մահմեդական միսիոներական խնդիրը»² (The Mohammedan missionary Problem) գիրքն է: Հենրի Հարիս Ջեսսափը պրեսբիտերական միսիոներ էր Սիրիայում, աստվածաբանության դոկտոր և Բեյրութում Ամերիկյան համալսարանի հիմնադիրը³: Նրա այս գիրքը մահմեդականության և մահմեդական միսիոներական խնդիրների մասին է: Ղուրանի դրույթների վերաբերյալ Լեմկինը տեղեկություններ է քաղել Ջորջ Սեյլի «Ղուրանի նախնական դիսկուրսը» (The preliminary discourse to the Koran)⁴ գրքից, ապա վերլուծել, թե ինչ ազդեցություն են դրանք ունեցել թուրքական քաղաքականության վրա: Անգլիացի արևելագետ և թարգմանիչ Ջորջ Սեյլը 1724թ. կատարել է Ղուրանի անգլերեն թարգմանությունը և գրել բազմաթիվ նոթեր: Նրա հեղինակած «Նախնական դիսկուրս»-ը պարունակում է խորացված գիտելիքներ արևելյան սովորությունների, բարքերի, ավանդույթների և օրենքների մասին: Հետաքրքրական է, որ Սեյլը իսլամը չի դնում քրիստոնեության հետ հավասար մակարդակի վրա: Լեմկինը Սասունի կոտորածների վերաբերյալ փաստեր է ներկայացնում Ֆրեդերիկ Դևիս Գրինի «Հայկական ճգնաժամը Թուրքիայում» (The Armenian Crisis in Turkey)⁵ գրքից: Այս գրքի բովանդակությունը վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված բռնություններին և կոտորածներին ու միջազգային դիվանագիտության ասպարեզում Հայկական հարցի արծարծմանը: Որպես հարուստ փաստական աղբյուր՝ Լեմկինն օգտագործել է բրիտանացի հայտնի պատմաբաններ Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոմսի «Հայերի վիճակը Օսմանյան կայսրության մեջ 1915-1916թթ.» (Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916) փաստաթղթերի («Կապույտ գիրք») ժողովածուն⁶, որտեղ գետեղված են բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ հայկական կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ, և մեջբերել Ջ. Բրայսի կատարած վերլուծություններից: «Գերմանիան, Թուրքիան և Հայաստանը» (Germany Turkey and Armenia) անունը կրող և Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված բռնություն-

² H.H. Jessup *The Mohammedan Missionary Problem*, Presbyterian Board of Publication, Philadelphia, (1879).

³ “Rev. H.H. Jessup Dead,” *New York Times*. 1910-04-29. (<http://query.nytimes.com/mem/archive-free/pdf?res=9F07E1DE1530E233A2575AC2A9629C946196D6CF>).

⁴ George Sale, *The preliminary discourse to the Koran*, F. Warne (1921).

⁵ Frederick Davis Greene, *The Armenian Crisis in Turkey*, G. P. Putnams Sons, The Knickerbocker Press, London, 1895.

⁶ Viscount Bryce, *Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916*, G. P. Putnams Sons, The Knickerbocker Press, London 1916.

ներին վերաբերող գերմանական և այլ աղբյուրների ապացույցների ընտրանին⁷ ևս իր ուրույն տեղն է գտել օգտագործված աղբյուրների շարքում: Լեմկինն արժեքավոր տեղեկություններ է քաղել Հերբերտ Ադամս Գիբբոնսի «Ժամանակակից պատմության սև էջը» (*The Blackest Page of Modern History*) գրքից⁸: Գիբբոնսը «Նյու Յորք Թայմս» թերթի արտասահմանյան թղթակիցն էր և իր վաղ կարիերան անցկացրել է Թուրքիայում: Իր այս գրքում նա իրական փաստերի հիման վրա նկարագրել է հայերի բռնազաղթը և ցեղասպանությունը: Լեմկինն օգտվել է նաև Մկրտիչ Գաբրիելյանի «Հայաստանը՝ մի նահատակ ազգ» (*Armenia: A Martyr Nation*) գրքից⁹, որում հեղինակը համառոտ շարադրում է հայոց պատմությունը վաղ շրջանից և հասցնում մինչև համիդյան ջարդերն ու երիտթուրքերի կողմից Հայոց ցեղասպանության իրականացում: Ձեռագրի այս ենթաբաժնում օգտագործվել են նաև մամուլի հրապարակումներ¹⁰ և այլ աղբյուրներ:

Ալաբամայի համալսարանի պրոֆեսոր Սոփվեն Ջեկոբսն իր «*Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը*» հոդվածում, ուսումնասիրելով Գրքաչափ ձեռագիրը, ներկայացրել է իր բնորոշումը ենթաբաժնում տեղ գտած որոշ դիտարկումների մասին: Ջեկոբսը մասնավորապես նշել է. «Լեմկինը ձեռագրի «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» վերնագրով հատվածում անողորմ և զայրալից քննադատության է ենթարկում թուրքերին ու գերմանացիներին: Նա խիստ պախարակում է նաև Ղուրանը»¹¹:

Լեմկինը հետևյալ խոսքերով է սկսում ձեռագրի այս ենթաբաժինը. «Հայերի հետապնդումը՝ որպես ուժեղ քրիստոնյա տարր՝ մահմեդական տարածաշրջանի սրտում, անխուսափելի էր, քանի որ Ղուրանի հիմնարար սկզբունքները ուղղակի հակառակ էին Քրիստոսի ուսմունքին»¹²:

Այա Լեմկինն անդրադառնում է Ղուրանի սկզբունքին, թե մահմեդականությունից բացի մյուս կրոնները պետք է ոչնչացվեն, և ներկայացնում է մի աղոթք, որն օգտագործվում էր Թուրքիայում և Կահիրեի Ազհար համալսարանում տասը հազար մահմեդական ուսանողների կողմից. «Օ՛, Ալլահ, ոչնչացրու անհավատներին ու բազմաստվածներին, քո թշնամիներին և կրոնի թշնամիներին: Օ՛, Ալլահ, դարձրու նրանց երեխաներին որբեր, պղծիր նրանց բնակավայրերը, և կարող ես

⁷ *Germany, Turkey and Armenia*, J.J Keliher and Co., London 1917.

⁸ Herbert Adams Gibbons, *The Blackest Page of Modern History*, G. P. Putman's Sons, New York and London 1916.

⁹ M. C. Gabrielyan, *Armenia: A Martyr Nation*, London, 1918.

¹⁰ *Gochmag*, New York, september 4, 1915, *Frankfurter Zeitung*, October 9, 1915, New York Herald, October 6, 1915, և այլն:

¹¹ Steven L. Jakobs, *Raphael Lemkin and the Armenian Genocide*, Richard Hovhannisyan, *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*, p.130.

¹² Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 85, (<http://digifindingaids.cjh.org/?pID=10920>).

սայթաքեցնել նրանց ոտքերը, ու նրանց հարստությունը որպես ավար տուր մահ-մեղականներին»¹³:

Ղուրանի որոշ ուսմունքներ, ըստ Լեմկինի, ազդեցություն են թողել թուրքերի արարքների վրա: Ձեռագրում հատվածներ են բերվում Ղուրանից, որոնցում առկա են անհավատների դեմ պատերազմելու և նրանց սպանելու դրույթներ. «Օ՛, իրական հավատացյալներ պատերազմ եք սկսել այնպիսի անհավատների դեմ, որոնք որ մոտիկ են ձեզ, և թույլ տվեք նրանց խստություն գտնել ձեր մեջ» (զլուխ 5): «Օ՛, մարգարե, պատերազմ սկսիր անհավատների դեմ և անողոր եղիր նրանց նկատմամբ և նրանց բնակարաններում կլինի դժոխք» (զլուխ 9): «Տեր ոչնչացրու հրեաներին և քրիստոնյաներին», - Մուհամեդի վերջին աղոթքը նախքան իր մեռնելը»¹⁴:

Ձեռագրի ենթաբաժնում Ղուրանից արված այս մեջբերումներից պարզ է դառնում, որ Լեմկինն այն կարծիքին էր, թե Օսմանյան կայսրության կողմից հայերի կոտորածների և Հայոց ցեղասպանության իրագործման հիմքում ընկած են առավելապես կրոնական դրդապատճառներ, և հետևաբար՝ պատահական չէ նրա հետևյալ միտքը. «Մահմեդականության պատմությունը անընդհատ պատերազմ է քրիստոնեության դեմ. հայերը կոտորվում և հետապնդվում էին քրիստոնեություն ընդունելու պահից: 1890-ական թվականների կոտորածները կրոնական էին իրենց բնույթով, չնայած սուլթանը բավականին խելացի էր իր քրիստոնյա հպատակների դեմ բացահայտ պատերազմ մղելու հարցում՝ իր մարտավարության համար առանց արտաքին աշխարհում արդարացում փնտրելու: Եվրոպական և քրիտանական կառավարությունների համար հարմար էր ընդունել սուլթանների՝ հայերի դեմ ուղղված մեղադրանքները և ձևացնել, թե հավատում են նրանց ապստամբությանը, քան ընդունել, որ նրանք հալածվում են միայն կրոնական պատճառներով»¹⁵:

1890-ական թթ. հայերի կոտորածները Լեմկինը պայմանավորում է նաև այն հանգամանքով, որ Աբդուլ Համիդ II-ը կարողացավ օգտվել ստեղծված բարենպաստ միջազգային իրավիճակից՝ այն ծառայեցնելով հայերի կոտորածներ կազմակերպելու իր մտադրության իրականացմանը. «Սուլթան Աբդուլ Համիդ II-ը համոզված էր, որ չկա համաձայնություն տերությունների միջև: Եռյակ միությունը, որը կազմում էին Իտալիան, Ավստրո-Հունգարիան և Գերմանիան, չեն ընդդիմանա իր քաղաքականությանը: Գերմանական մամուլն այնպիսի տպավորություն էր ստեղծել, որ թուրքական կառավարությունը հայերի կողմից գահընկեց լինելու եզրին է, և սուլթանը պարզապես փորձում է փրկել կայսրությունը»¹⁶: Գերմանական մամուլում հայերի կոտորածների մասին իրականությունը թաքցնելու խնդրի վերաբերյալ Լեմկինը ներկայացնում է Յոհաննես Լեփսիուսի այն միտքը,

¹³ Jesup, "The Mohammedan Missionary Problem," Presbyterian Board of Publication, Philadelphia, p. 31.

¹⁴ Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 86 (<http://digifindingaids.cjh.org/?pID=10920>).

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 87:

թե գերմանական մամուլը կողմնակալ տեղեկություններով էր լցված, և Օսմանյան կայսրության կողմից ցեղասպանական գործողություններն անհայտ էին Գերմանիայում¹⁷։ Որպես լրացուցիչ փաստարկ՝ նա դիտարկում է 1895թ. հունվարի 7-ին Թուրքիայից ուղարկված մի նամակ,¹⁸ որում նշվում է, թե մեկ տասնամյակ է՝ թուրքական վայրագությունները շարունակվում են, և թուրքական ղեկավարությունը նպատակ ունի ոչնչացնելու կայսրության քրիստոնյա բնակչությանը։

Մեկ այլ տեսանկյունից հայերի կոտորածները Լեմկինը համարում էր օսմանյան կրոնաքաղաքական համակարգին բնորոշ տարր, որտեղ քրիստոնյաները գրկված էին իրենց անհրաժեշտ իրավունքներից. «Անհերքելի է, որ Օսմանյան կառավարությունը կրոնաքաղաքական համակարգ էր։ Թուրքական բանակը բացառապես մահմեդական բանակ էր, ազգային տոները մահմեդական տոներ էին, օրենքները հիմնվում էին Ղուրանի և մահմեդական ավանդույթի վրա, դատավորները մահմեդականներ էին, և երբեմն վկայություն տալու գործընթացը կրոնական գործողություն էր։ Քրիստոնյաներին թույլատրվում էր ցուցմունք տալ, սակայն դա չէր նշանակում, որ նրանց վկայությունը համարվում էր վավերական»¹⁹։

Լեմկինի համոզմամբ սուլթանի քաղաքականությունը հայերի նկատմամբ նպատակ ուներ ազատվելու կայսրությունում ապրող ոչ մահմեդական տարրից, որը վնասում էր կայսրության միատարրությունը, և միշտ ճնշումների դիմել չէր կարելի։ Սուլթանի «թևավոր» խոսքերը՝ «Հայկական հարցից ազատվելու ճանապարհը հայերից ազատվելն է», կատարյալ կիրառության մեջ դրվեցին, ինչի արդյունքներն աղետալի էին հայերի համար²⁰։

Շարունակելով իր միտքը՝ Լեմկինն այն խնդրի շուրջ, թե ինչով էր պայմանավորված, որ սուլթանը սկսեց քրդերին օգտագործել հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելիս, հետևյալ դիտարկումն է անում. «Արդուլ Համիդը այն տեսությունն է առաջ քաշում, որ իր կայսրության բոլոր մեջ տարբեր ազգերի պահելու համար ամենալավ մեթոդը պետք է լինի այն, որ նրանք մեկը մյուսին կոտորեն։ Վախենալով, որ խելացի և ակտիվ հայերը կարող են ձգտել անկախության, ինչպես բուլղարացիները՝ նա մշակեց նոր եղանակներ նրանց ճնշելու համար քրդերի զինվորագրման միջոցով, ում մշտապես զայրացնում էին հայերի լավ մշակված արտերը, ովքեր ներխուժում էին իրենց արոտավայրեր իրենց ոչխարներով և այծերով»²¹։

Հաջորդ դրվագում Լեմկինը տեղեկություններ է ներկայացնում 1890-ական թթ. Արդուլ Համիդի սանձազերծած ջարդերի մասին, ապա անդրադառնում է երիտթուրքերի իշխանության գալու հանգամանքին և ներկայացնում նրանց քաղաքականությունը հայերի նկատմամբ. «Երիտթուրքերը ցանկանում էին ունենալ հայ

¹⁷ Նույն տեղում, էջ 88:

¹⁸ *The Armenian Crisis in Turkey*, Frederick Devis Greene, New York, London. pp. 33-35.

¹⁹ Նույն տեղում, էջ 89:

²⁰ Նույն տեղում, էջ 90:

²¹ Նույն տեղում:

քնակչության ոչնչացման փառքը: Նրանք ընտրեցին հարմար պահ, քանի որ ընդունակ էին պատասխանատվությունը թողնել տապալված սուլթանի վրա»²²:

Ըստ Լեմկինի՝ պատահական չէ, որ թուրքական կառավարությունը պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո և նախքան հայերի կոտորածները սկսելը սրբազան պատերազմ (ջիհադ) հայտարարեց՝ նպատակ ունենալով զրգռել մահմեդականների կրքերն ամբողջ աշխարհով ընդդեմ այն տերությունների, որոնք կովում էին թուրք-գերմանական դաշինքի դեմ²³:

Թուրքական իշխանությունների ինքնավստահ կեցվածքը Լեմկինը պայմանավորում է Գերմանիայի՝ որպես հուսալի և հզոր դաշնակցի առկայությամբ. «Թուրքական կառավարությունը զգում էր, որ Գերմանիայի հետ՝ որպես իր դաշնակցի, առանց ապագայի նկատմամբ վախ ունենալու կարող է իրականացնել ամբողջական ոչնչացման պլանը, և համոզված էր, որ (Գերմանիան) հաղթելու է պատերազմում ու պաշտպանելու է Թուրքիային Արևմտյան տերությունների և Ռուսաստանի վրեժխնդրությունից»²⁴:

Լեմկինը հավաստում է, որ թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ իրականացված հանցագործությունը մշակված էր, համակարգված, և ապացույցներ կան դրանց իրականացման 50 վայրում նույնական ընթացակարգի վերաբերյալ: «Միայն երկու դեպք է հայտնի, երբ պաշտոնյաները հրաժարվեցին իրականացնել կառավարության հրահանգները, և այդ երկու պաշտոնյաները փոխարինվեցին կառավարության քաղաքականության փութաջան աջակիցներով»²⁵:

Հայերին ոչնչացնելու վերաբերյալ թուրքական իշխանությունների ծրագրի վերաբերյալ Լեմկինը փաստում է, որ երիտթուրքերը նախապես մտածել էին, թե ինչպես կարելի է մեղադրել հայերին ապստամբություն բարձրացնելու մեջ. «Երիտթուրքերը խրախուսում էին հայերին ընկերակցություններ կազմակերպելու և հրազեն ունենալու խնդրում, որը նախապես մտածված ծրագիր էր, ինչը և իրականացվեց 1915թ., երբ հայերին սկսեցին մեղադրել ապստամբություն բարձրացնելու հարցում, իսկ հայերի կողմից հրազենի տիրապետումը դրա ապացույցը համարվեց»²⁶: Լեմկինն այս ամենի շուրջ ներկայացնում է նաև Նյու Յորքում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի արած հայտարարությունը. «Որքան էլ որ ցավալի լինեն այս տանջալից իրադարձությունները, վերջին հաշվով մենք կարող ենք ասել, որ հայերը պետք է միայն իրենց մեղադրեն»: Գլխավոր հյուպատոսն իր հայտարարության մեջ բացատրում է, որ հայերը հեղափոխություն են ծրագրել և սպանվել են թուր-

²² Նույն տեղում էջ 90, 91:

²³ Նույն տեղում էջ 91:

²⁴ Նույն տեղում, էջ 92:

²⁵ Arnold Toynbee, *Armenian Atrocities: The Murder of a Nation, with a speech delivered by Lord Bryce in the House of Lords*, Hoddehr & Stoughton, New York, London, Toronto, 1915, p. 29.

²⁶ Նույն տեղում, էջ 93:

քական զինվորների կողմից այն բանից հետո, երբ բռնվել են «անձնական զենքերը ձեռքներին օրինական իշխանություններին դիմադրելիս»²⁷ :

Լեմկինը տեղեկացված էր Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած դերակատարությունից և բնորոշ հատկանիշներից, ուստի նա գրում է. «Հայերը ստիպված էին հիմնվել իրենց մտավոր ունակությունների և ունեցած հմտությունների վրա՝ գոյատևելու համար մի երկրում, որը նրանց տրամադրում է այնքան քիչ իրավունքներ, և նրանք, թուրքերի մեջ լինելով, գրեթե մենաշնորհ էին ձեռք բերել առևտրում, ինչի արդյունքում վաստակում էին Թուրքիայի հարստության մեծ մասնաբաժինը»²⁸: Ապա նա մեջբերում է անում գերմանական «Frankfurter Zeitung»-ի 1915թ. հոկտեմբերի 9-ի համարից, որում նշվում է, թե հայերը, ունենալով բարձր ինտելեկտ և գերազանց առևտրային ունակություններ, փող էին կուտակում իրենց գրպաններում, մինչդեռ թուրքերի աղքատությունը աճում էր: Դա է պատճառը, որ հայերը ամենաատելի մարդիկ էին Արևելքում, շատ դեպքերում ոչ արդարացիորեն, և անարդար ընդհանրացման միջոցով²⁹:

Հետաքրքրական է, որ Լեմկինը զուգահեռներ է տանում Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի միջև՝ հայերի դրությունն Օսմանյան կայսրությունում համեմատելով Գերմանիայում հրեաների դրության հետ. «Հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում շատ նման էր հրեաների դրությանը Գերմանիայում: Հայերը կայսրության աշխատասեր քաղաքացիներն էին, արհեստի և մտավոր ունակությունների տաղանդով: Նրանք առևտրի մեջ ունեին նույն ձիրքը, ինչ հրեաները, և Ասիական Թուրքիայում հայերն էին, ովքեր հմուտ աշխատասեր և բիզնեսի մարդիկ էին: Անատոլիայի յուրաքանչյուր քաղաք ուներ իր բարեկեցիկ հայկական թաղամասը, տեղական վարպետության, մտավոր կյանքի և առևտրի, ինչպես նաև Կոստանդնուպոլսի և Եվրոպայի հետ քաղաքի առևտրական հարաբերությունների կենտրոնը»³⁰ :

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության իրագործման հարցում Գերմանիայի մեղսակցության խնդրին՝ Ռաֆայել Լեմկինը նշում է, թե ապացույցներ կան այն մասին, որ հայերի հալածանքներն աջակցություն էին գտնում Գերմանիայում: Այս հարցում գերմանական քաղաքականությունը տպավորիչ ձևով բնորոշելու համար նա մեջբերում է Հերբերտ Ադամս Գիբբոնսի հետևյալ մտքերը. «Հայերը էական գործոն էին Փոքր Ասիայում... Նրանք կարծես թե խոչընդոտ էին գերմանական գերիշխանության հաստատման համար: Որպես Փոքր Ասիայի առևտրական և գյուղատնտեսական ներքին տարր՝ հայերը ընդունակ էին կանգնել եվրոպացի

²⁷ Herbert Adams Gibbons, *The Blackest Page of Modern history*, Ney York, 1916, p. 30-31.

²⁸ Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 94, (<http://digifindingaids.cjh.org/?pID=10920>).

²⁹ Arnold Toynbee, *Նշվ. աշխ.*, էջ 115:

³⁰ Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 93 (<http://digifindingaids.cjh.org/?pID=10920>).

գաղութարարների ներթափանցման դեմ և կանգնած էին Անատոլիայի գերմանացման ծրագրերի ճանապարհին»³¹:

Հայոց ցեղասպանության իրագործման հարցում Գերմանիայի մասնակցության վերաբերյալ փաստերի ուսումնասիրության արդյունքում Լեմկինը եզրակացնում է, որ Գերմանիան հնարավորություն ուներ կանխելու թուրքական իշխանությունների կողմից իրականացված վայրագությունները, սակայն դրա փոխարեն ոչ միայն չկանխեց, այլև ավելի էր խրախուսում հայերի կոտորածները. «1915թ. վայրագությունները սկսելուց 4 ամիս հետո Գերմանիայի կանցլերը դիմել է Ռայխսստագին շնորհավորելու իր հայրենակիցների՝ «Թուրքիայի չքնաղ վերածննդին» առիթը: Երբ Թուրքիան պատերազմի մեջ մտավ, իրեն Գերմանիայի իշխանության տակ դրեց և կախված էր իր դաշնակցի զինամթերքից և ռազմական ղեկավարությունից: Եթե Գերմանիան ցանկանար, կարող էր կանգնեցնել վայրագությունները՝ պարզապես Թուրքիային զրկելով աջակցությունից»³²:

Ապա անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության իրականացման հարցում Գերմանիայի ծրագրերին, և ներկայացվում է «Կոչնակի» (Gotchnag) սեպտեմբերի 4-ի համարում տեղ գտած մի հոդված. «Օտարերկրյա թղթակիցը հաղորդում է, որ տեղական նահանգապետերը, ովքեր քաջություն չունեին կատարելու հայերի արտաքսման հրամանը, խնդիրը իրենց վրա էին վերցնում գերմանացի պաշտոնյաները: Վերջիններս մասնակցում էին արտաքսման ծրագրին և կրկնապատկում դրա դաժանությունը: Թղթակիցն այդպիսի փաստերի հիման վրա հայտարարում է, որ հայերի ոչնչացման ծրագիրը մտածվել էր գերմանացիների կողմից և իրագործվել նրանց խորհուրդներով»³³: Նույնիսկ նմանատիպ մտադրությունների պարագայում Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Կոմս Բերնսդորֆը ընդհանրապես հերքում էր վայրագությունների իրականացումը. «Ենթադրյալ վայրագությունները Օսմանյան կայսրությունում թվում են որպես պարզ հորինվածքներ»³⁴:

Ձեռագրի այս ենթաբաժնի վերջնամասում Ռաֆայել Լեմկինը նշում է, որ թուրքական կառավարությունը նույնիսկ հրաժարվում էր հայերին օգնություն տրամադրելու առաջարկներից. «Համաձայն Նյու Յորք Թայմսի 1915թ. հոկտեմբերի 19-ի համարի՝ թուրքական կառավարությունը տեղեկացրել է Պետքարտուղարությանը Վաշինգտոնում, որ ամերիկյան Կարմիր խաչին չի թույլատրվում ուղարկել վիրաբույժներ և բուժքույրեր ուղարկել Օսմանյան կայսրությունում հայերին օգնելու համար: Թուրքերը ոչ միայն արգելեցին Ամերիկյան կարմիր խաչի վիրաբույժներին, բուժքույրերին և օգնության գործակալներին, այլև բոլոր չեզոք օտարերկրացիներին»³⁵:

³¹ Herbert Adams Gibbons, *իշլ. աշխ.*, էջ 62, 63:

³² Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 95 (<http://digifindingaids.cjh.org/?pID=10920>).

³³ Նույն տեղում, էջ 96:

³⁴ Arnold Toynbee, *իշլ. աշխ.*, էջ 115 (հայտարարությունը տպագրվել է «New York Herald»-ում):

³⁵ Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, Manuscript on the Turkish Massacre of Armenians, p. 98 (<http://digifindingaids.cjh.org/?pID=10920>).

Վերը նշված փաստերից ելնելով՝ քիչ կասկած կարող է լինել, որ ոչնչացման ծրագիրը լավ մտածված էր, և իրագործեց թուրքական կառավարությունը Գերմանիայի կողմից ամբողջովին ճանաչման և աջակցության պայմաններում³⁶:

Ամփոփելով նշենք հետևյալ եզրակացությունները.

- Ռաֆայել Լեմկինը Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառվող հալածանքները պայմանավորում է հիմնականում կրոնական պատճառներով, քանի որ, ըստ նրա, Ղուրանի հիմնարար սկզբունքները հակասում են քրիստոնեության ուսմունքին:
- Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ վարվող քաղաքականությունը Լեմկինի պատկերացմամբ նպատակ ուներ բնաջնջելու կայսրությունում ապրող ոչ մահմեդական ժողովրդին, որոնք վնասում էին կայսրության միատարրությունը: Օսմանյան իշխանություններն իրենց նպատակին հասնելու համար մահմեդականներին գրգռում էին հայերի դեմ և նախապես ծրագրել էին իրենց գործողությունները:
- Հայերի կոտորածների անպատիժ կազմակերպումը Լեմկինը պայմանավորում է արտաքին նախադրյալների առկայությամբ, որը հմուտ ձևով օգտագործվեց օսմանյան իշխանությունների կողմից:
- Լեմկինի դիտարկմամբ Օսմանյան կայսրության կողմից Հայոց ցեղասպանության իրագործումը տեղի է ունեցել հիմնականում Գերմանիայի մեղսակցության և աջակցության պայմաններում:
- Լեմկինը գտնում է, որ Օսմանյան կայսրությունում հայերի՝ առևտրում և այլ ոլորտներում ձեռք բերած հաջողությունները կայսրությունում հայերի նկատմամբ թշնամության առաջացման հիմքեր ստեղծեցին: Իսկ Գերմանիան հայերին դիտարկում էր որպես խոչընդոտ Օսմանյան կայսրությունը գաղութացնելու հարցում:
- Ըստ Լեմկինի՝ Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը մշակված և համակարգված գործընթաց էր, այսինքն՝ առկա էր հայերին ոչնչացնելու մտադրությունը, իսկ 1948թ. դեկտեմբերի 9-ի «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի համաձայն՝ մտադրության առկայությունն անհրաժեշտ բաղադրիչ է ցեղասպանության հանցագործությունը բնորոշելու համար:

³⁶ Նույն տեղում, էջ 98:

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐՔԱՉԱՓ (BOOK-LENGTH) ՁԵՌԱԳՐԻ «ՍՊԱՆԵԼՈՒ
ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ո՛Վ Է ՄԵՂԱՎՈՐ» ԵՆԹԱԲԱԾՆՈՒՄ

Նարեկ Պողոսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի գրած «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագրի» «Սպանելու մտադրությունը, ո՛վ է մեղավոր» ենթաբաժինը, որում հեղինակն ուշագրավ դիտարկումներ է անում Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառների մասին և նշում, թե ովքեր են այդ հանցագործության իրագործման պատասխանատուները: Լեմկինը Հայոց ցեղասպանության իրագործումը պայմանավորում է Օսմանյան կայսրության իշխանությունների՝ կայսրությունում ապրող ոչ մահմեդական հայերին բնաջնջելու մտադրությամբ և արտաքին նախադրյալների առկայությունը հմուտ ձևով օգտագործելու հանգամանքով: Լեմկինը մատնանշում է, որ Հայոց ցեղասպանության իրագործումը տեղի է ունեցել Գերմանիայի մեղսակցության և աջակցության պայմաններում:

Բանալի բառեր՝ Ռաֆայել Լեմկին, Գրքաչափ ձեռագիր, Ղուրան, Աբդուլ Համիդ II, հայերի կոտորածներ, Գերմանիա, երիտթուրքեր, ցեղասպանական գործողություններ:

RAPHAEL LEMKIN OBSERVATIONS ON THE SUBSECTION «INTENT TO
KILL- WHO IS GUILTY?» OF “TURKISH MASSACRE OF ARMENIANS -
BOOK-LENGTH MANUSCRIPT”

Narek Poghosyan

SUMMARY

The article considers the subsection “Intent to kill- Who is guilty?” of Raphael Lemkin’s “Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript”, dedicated to the topic of the Armenian Genocide, in which the author reveals interesting remarks on the causes of the Armenian genocide, and indicates those, who are responsible for this crime. The reasons for committing genocide Lemkin determines the objectives of the authorities of the Ottoman Empire, which included the extermination of the non-Muslim Armenians of the Ottoman Empire as well as flexible usage of the foreign political circumstances. Lemkin indicates that the Armenian genocide occurred in circumstances of the complicity and support of Germany.

Keywords: Raphael Lemkin, Book-length manuscript, Koran, Abdul Hamid II, massacres of the Armenians, Germany, Young Turks, genocidal acts.

НАБЛЮДЕНИЯ РАФАЭЛЯ ЛЭМКИНА В «НАМЕРЕНИЕ УБИЙСТВА:
КТО ВИНОВАТ?» В ПОДРАЗДЕЛЕ РУКОПИСИ «РУКОПИСЬ КНИЖНОГО
ФОРМАТА ОБ АРМЯНСКОЙ РЕЗНЕ»

Нарек Погосян

РЕЗЮМЕ

В статье анализируется подраздел «Намерение убийства: кто виноват?» рукописи Рафаэля Лэмкина «Рукопись книжного формата об армянской резне», посвященный теме Геноцида армян, в котором автор делает интересные наблюдения о мотивах Геноцида армян и указывает на тех, кто несет ответственность за осуществление преступления. Осуществление Геноцида армян Лемкин связывает с намерением уничтожить не мусульманских армян, живущих в Османской империи. В деле уничтожения армян сыграло свою роль и умелое использование внешнеполитической ситуации. Лемкин указывает на то, что Геноцид армян имел место при поддержке Германии.

Ключевые слова: Рафаэль Лемкин, рукопись книжного формата, Коран, резня армян, Абдул Хамид II, Германия, младотурки, акты геноцида.

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԿԻԼԻԿԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասեան

1909-ի կիլիկեան կոտորածները ունեին աշխարհագրական ընդարձակ տարածք, որ կ'ընդգրկեր Ատանայի ամբողջ նահանգն ու անոր սահմանակից Հալեպ նահանգին կարգ մը շրջանները:

1909-ին, Այնթապ քաղաքի մեծաթիւ հայութիւնը թէւ ուղղակիօրէն չէ ենթարկուած կոտորածի, բայց եւ այնպէս բոլորովին ալ անմասն չէ մնացած դէպքերու ընդհանուր հոլովոյթէն, եւ նոյնիսկ տուած է որոշ թիւով զոհեր եւ անցուցած վախի ու սարսափի օրեր, որոնք բարեբախտաբար չեն վերածուած համընդհանուր կոտորածի, ինչպէս որ պատահած է Ատանա քաղաքի կամ վերոնշեալ զոյգ նահանգներու այլ ասաններուն մէջ:

Այնթապի հայութիւնը ջարդի ու թալանի փորձութիւն մը ապրած էր Համիտեան կոտորածներու ընթացքին, երբ 4 Նոյեմբեր 1895-ին թուրք խուժանը յարձակած էր տեղոյն հայկական թաղամասերուն վրայ եւ ամբողջ 36 ժամ թալանի ու կոտորածի ենթարկած էր տեղոյն բնակչութիւնը, որուն հետեւանքով քաղաքի ու շրջակայքին մէջ ոչնչացած էին մօտաւորապէս 300 հայեր ու թալանուած՝ 600 տուններ ու խանութներ¹:

Կիլիկեան կոտորածներու սկզբնաւորութենէն միայն երկու օր ետք, 3 Ապրիլ 1909-ին, փորձ մը կատարուած է Այնթապի հայութիւնն ալ ենթարկելու Ատանայի հայութեան ճակատագրին: Այս մէկուն ամենախօսուն փաստը, որ միաժամանակ Այնթապի նորագոյն պատմութեան կարեւորագոյն դրուագներէն մէկն է եւ ծանօթ է «Քէլլէճը»ի «Գլուխ կտրողի» կամ «Մորթուած գլուխի դէպք» անուններով, հետեւեալն է. իրթիհատական թուրք մը փայտեղէն ատաղձ վաճառելու պատրուակով իր տունը հրաւիրած է արհեստակից այլ թուրք մը, ուրագով սպաննած է զայն ու մարմինը կտորներու վերածելով թաղած է իր տան մէջ, ապա՝ գլուխը մարմնէն անջատելով, նետած է իր տունէն շատ հեռու գտնուող հայ կաթոլիկներու եկեղեցիին բակը: Առաւօտուն, եկեղեցի գացող հայ մը, գտնելով գլուխը, նետած է զայն մօտակայ «Պօքլու Պօսթան» անունով ծանօթ պարտէզը: Թուրք կնոջ մը կողմէ կտրուած գլուխը յայտնաբերուելով՝ թուրքերու մօտ մեծ յուզում առաջացած է, թէ հայեր սպաննած են թուրք մը: Այս պատրուակով, խուժանը սկսած է պատրաստութիւններ տեսնել հայկական թաղամասերը ներխուժելու եւ ժողովուրդը կոտորելու: Բարեբախտաբար կարելի եղած է շուտով յայտնաբերել իսկական ոճրագործը, որ թուրք մըն էր, ու կիրքերը մասամբ հանդարտած են: Այսպիսով, Այնթապի հայութիւնը փրկուած է հաւանական կոտորածէ մը. թէպէտ տեղոյն դաշնակցական ու

¹ Գեորգ Ա. Սարաֆեան (աշխատասիրեց ու խմբագրեց), «Պատմութիւն Այնթապի Հայոց», հրատարակութիւն՝ Ամերիկաբնակ Այնթապցիներու միութեան, Ա. հատոր, Լոս Անճելէս, 1953, էջ 923:

հնչակեան երիտասարդները, դիրքերու մէջ ամրապնդուելով, իրենց կեանքի գնով նախապատրաստուած էին ինքնապաշտպանութեան²:

Կիլիկեան կոտորածներու այնթապցի զոհերէն են հայ աւետարանական համայնքի տասնեակ մը ծանօթ դէմքեր, որոնք Այնթապէն ճամբայ ելլելով՝ կը մեկնէին Ատանա, մասնակցելու 4/17 Ապրիլին գումարուելիք «Հոգեւոր պետերու Կիլիկեան Միութեան տարեկան ժողով»ին: Երբ կոտորածներուն անտեղեակ Այնթապի ու Մարաշի 17 պատուելիներն ու աշխարհական պատուիրակները կը հասնին Օսմանիէ ու կ'իջեւանին վերի թաղի հայ աւետարանական եկեղեցին, թորք խուժանը կը մտնէ ներս, սուրէ կ'անցընէ այնտեղ ապաստանած ժողովականներն ու ժողովուրդը եւ կ'այրէ շէնքը: Այդ նահատակներուն մէջ եղած են Այնթապի Կեդրոնական Թորքիոյ գոլէճի նշանաւոր դասախօսներէն Վեր. Փրոֆ. Սարգիս Լեւոնեանն ու ուրիշներ:

Յիշենք նաեւ որ կիլիկեան կոտորածներուն սպաննուած են քաղաքէն դուրս գտնուող 30-ի չափ այնթապցի հայեր եւս, որոնք իրենց ետին ձգած են առաքելական համայնքին պատկանող 20 որբեր ու 26 այրիներ³:

Աւելի ետք, 1 Հոկտեմբեր 1909-ին, Կիլիկիոյ Ռրբախնամ Կեդրոնական Յանձնաժողովը, Այնթապի մէջ հիմնած է որբանոց մը: Այս առիթով, առաջնորդական փոխանորդ Տէր Յարութիւն քահանայ Մելքոնեան ղրկուած է Անտիոք եւ այնտեղէն ու շրջականերէն որբեր հաւաքելով տեղափոխած է որբանոց: Որբանոցը ունեցած է 10 պաշտօնեայ: Հոն ապաստանած են 102 որբ եւ 83 որբուհի, ընդամենը 185 հոգի⁴:

* * *

Կիլիկեան կոտորածներուն վերաբերող անտիպ փաստաթուղթերու մեծարժէք հաւաքածոյ մը կը պահուի Բերիոյ (Հալէպի) թեմի Ազգային Առաջնորդարանի դիւանատան մէջ, որմէ ընտրովի հրատարակութեան կու տանք Այնթապի վերաբերող չորս փաստաթուղթեր, որոնցմէ մէկը գրուած է վերեւ յիշատակուած նոյն ինքն «Քէլլէճը»ի դէպքին պատահած օրը, իսկ միւսները՝ անոր յաջորդող քանի մը օրերուն: Անոնք կը նկարագրեն այդ օրերուն պատահած դէպքերն ու քաղաքին մէջ տիրած վախի ու սարսափի մթնոլորտը:

Փաստաթուղթերը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց ոեւէ միջամտութեան, պահելով անոնց լեզուական եւ ուղղագրական առանձնայատկութիւնները: Մեր կողմէ աւելցուած քանի մը բառերը առած ենք փակագծերու մէջ []:

² «Քէլլէճը»ի դէպքին մասին մանրամասնութիւններ տրուած են Այնթապի պատմութեան նութիւնում հարուստ գրականութեան մէջ, ինչպէս՝ Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 951-952, 979-980, 1005-1006, «Հայ Անթէպ», Պէյրութ, Ե. տարի, թիւ 4 (16), 1964, էջ 22-23, եւ այլն:

³ Կիլիկիոյ Ռրբախնամ Կեդր. Յանձնաժողով, «Տեղեկագիր 1909 Օգոստոս 7-1910 Դեկտեմբեր 31», Կ. Պոլիս, տպագրութիւն Օ. Արզուման, 1911, էջ 90, «Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի 1910 Սեպտ. 11-1912 Սեպտ. 11. Յանդուած Տեղեկագիր Քննիչ-Պատուիրակ Պ. Ժազ Սայապալեանի», Կ. Պոլիս, տպարան Շանթ, 1912, էջ 26:

⁴ «Տեղեկագիր 1909...», էջ 13, 18:

Փաստաթուղթերուն կցած ենք անհրաժեշտ ծանոթագրություններ, ուր սակայն առանձին-առանձին չենք յիշած 1915-ին հոս յիշատակուող բնակավայրերու հայութեան վերապահուած ճակատագիրը, որովհետեւ այն բոլորի պարագային ալ նոյնն է՝ արքոր, կոտորած եւ զինադադրին տասանորդուած վերապրողներու վերադարձ հայրենի աւան:

Ամփոփ ծանոթություններ Այնթապի մասին.

Պատմական բերդաքաղաք դաշտային Կիլիկիոյ մէջ, օսմանեան Հալէպ նահանգի Այնթապ գաւառի կեդրոնը, Հալէպէն հիւսիս-արեւելք, մօտ 100 քմ. հեռաւորութեան վրայ: Յիշուած է 10-րդ դարէն սկսեալ: Շրջան մը մաս կազմած է Եդեսիոյ խաչակրաց իշխանութեան, ապա գայն գրաւած են մէմլուք եգիպտացիները: 1404-ին աւերած է գայն Լէսկ Թիմուրը եւ հոսկ 1516-ին քաղաքը գրաւած են օսմանցի թուրքերը:

20-րդ դարասկզբին, տեղւոյն հայ առաքելական համայնքը ունեցած է վեց եկեղեցի, իսկ հայ աւետարանական համայնքը՝ երեք եկեղեցի: Հայ կաթոլիկ համայնքն ու լատինները եւս ունեցած են իրենց եկեղեցիները: Հայերը միասնաբար ունեցած են 17 դպրոց, ընդ որում՝ աղջկանց եւ մանչերու բարձրագոյն վարժարաններ, Աստուածաբանական Ճեմարան, որբանոցներ, տպարաններ, մշակութային միություններ եւ այլն. նշանաւոր էր մանաւանդ ամերիկացի միսիոնարներու հիմնած Կեդրոնական Թուրքիոյ գոլէճը:

Այնթապի մէջ տպուած են մօտ 30 հայատառ գիրքեր եւ նոյնքան ձեռագիր ու տպագիր թերթեր:

Քաղաքը եղած է վաճառականական, տնտեսական, արհեստագործական եւ մշակութային կարեւոր ոստան մը ամբողջ տարածաշրջանին համար, ուր զարգացած էին մանաւանդ պղնձագործութիւնը, կտաւագործութիւնն ու կաշեգործութիւնը:

1914-ին ան ունեցած է 80 հազար բնակիչ, որուն մօտ 36 հազարը հայեր էին⁵:

1915-ին Այնթապի հայութեան մէկ մասը արքորուած է սուրիական անապատ ու մեծ մասամբ ոչնչացած, մինչ ուրիշներ հասած են Սուրիոյ Համա քաղաքն ու մօտակայ Սալամիէ աւանը եւ շատեր զոհ գացած են սովի ու համաճարակի:

Զինադադարին, վերապրած այնթապցիներ եւ Արեւմտեան Հայաստանի այլեւայլ շրջաններէն փախստական հայեր, ընդամենը մօտ 18 հազար հոգի հաստատուած են Այնթապ ու կրկին շէնցուցած գայն:

Այնթապահայեր, 1 Ապրիլ 1920-8 Փետրուար 1921-ին ինքնապաշտպանական հերոսական մարտեր մղած են քէմալական հրոսակներուն դէմ, սակայն ֆրանսացիներուն Կիլիկիայէն հեռանալով՝ անոնք եւս զանգուածային ձեւով գաղթած են քաղաքէն ու ապաստանած՝ Հալէպ եւ այլուր:

⁵ Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 87:

* * *

1 –

Առաջնորդարան Հայոց
Համար.....

Այնթապ 20 [Մարտ]/3 Ապրիլ 1909

Գերաշնորհ

Տ. Շահէ Վարդապետ Գասպարեան⁶

Առաջնորդական Տեղապահ հայոց
Հալէպ

Գերաշնորհ Ս. հայր

Քաղաքիս կացութիւնն որ մի քանի օրէ ի վեր աստիճան մը բարոյքած էր, այսօր իրական վտանգ մը անցուց հետեւեալ պատճառով: Այս առաւօտ հայ հռովմէականներու եկեղեցիին գտնուած փողոցին դէմը գտնուող պօսթասին⁷ մէջ, մարդու մը գլուխը գտնուեցաւ սարսափելի կերպով կտրատուած եւ անճանաչելի դարձած, անոնք որ փափաք ունէին Այնթապի մէջ երկրորդ Ատանա մը յառաջ բերել իսկոյն տարածայնեցին թէ քրիստոնեայք մահմետական մը յօշոտած եւ գլուխը հոն նետած էին, բարեբախտաբար կառավարութեան եւ Իթթիհատի միացեալ ջանքերով սպանեալին ինքնութիւնն երեսն հանուեցաւ որ իրօք մահմետական մ'է, եւ գոհին մայրը երեսն հանեց նաեւ ոճրագործը որ նմանապէս մահմետական մ'է եւ որոյ կինը կատարեալ խոստովանութիւններ ընելէ յետոյ իր տունէն ալ գտնուած են կացինը որով ոճիրը գործած է, սպանեալին հագուստները եւ վերջապէս իրանը կտոր կտոր եղած: Ոճրին գործուած թաղը Շօհրէքիստի գլուխին գտնուած տեղէն շատ հեռու է, հետեւաբար քրիստոնեայ թաղերուն մօտ այդ գլուխը անպատճառ դիտումնաւոր կերպով ձգուած է, եւ կը շեշտէ սա պարագան թէ՛ Այնթապի մէջ կոտորած մը յառաջ բերելու համար գործող ձեռքեր կան, եւ որոնք ինչպէս այսօր, ուրիշ առթիւ ալ տարբեր պատրուակներով միշտ վտանգ կ'սպառնան քաղաքիս

⁶ Ծնած է Այնթապ 1882-ին: Աշխարհական անունով՝ Հմայեակ Փիլաճեան: Ուսումը ստացած է ծննդավայրի Ներսէսեան եւ Վարդանեան վարժարաններէն, ապա՝ տեղոյն Կեդրոնական Թուրքիոյ գոլէճէն, զոր կիսաւարտ ձգելով՝ 1898-ին անցած է Արմաշի դպրեվանք եւ 1905-ին Եդիշէ Արք. Դուրեանէն ձեռնադրուած է վարդապետ: Տարի մը ետք որպէս առաջնորդական փոխանորդ մեկնած է Մերսին, միաժամանակ ստանձնած է տեղոյն Ազգ. Վարժարանի տեսչութիւնը: 1908-1911 վարած է Հալէպի առաջնորդական տեղապահի պաշտօնը, իսկ 1911-1913՝ եղած է Ատանայի առաջնորդ, որմէ ետք, համալսարանական ուսման համար անցած է Միացեալ Նահանգներ եւ 3 տարի ետք ստացած է Պսակաւոր Աստուածաբանութեան տիտղոսը: 1917-ին նշանակուած է Պոսթոնի հոգեւոր հովիւ ու այդ պաշտօնին վրայ մնացած է մինչեւ 1930, երբ իրեն վստահուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորաբաց Դպրեվանքի տեսչութիւնը, զոր վարած է հինգ տարի: 1931-ին, Բաքէն աթոռակից կաթողիկոսէն ձեռնադրուած է եպիսկոպոս, ապա ուխտով մեկնած է Հայաստան, ուր եւ վախճանած է 25 Նոյեմբեր 1935-ին (Մարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 403-407, ուր կայ նաեւ իր գրական գործերուն ցուցակը, Վարդան Եպիսկ. Տէմիրճեան, «Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեանց», Ա. հատոր, Անթիլիաս, 1980, էջ 292):

⁷ Արաբերէն՝ պարտէզ:

ապահովության, կը խնդրենք որ անմիջապես հարկ եղած դիմումներն ընէք, եւ այս ամէնը հասկցնելով որոց որ անկ է, անմիջապես ազդու եւ կտրուկ տնօրինութիւն մը ընել տաք քաղաքիս անդորրութիւնն երաշխաւորելու համար:

Մասնաւոր նամակներէ կը տեղեկանանք թէ Հալէպի մէջ հայ եւ թուրք մասնախումբ մը կազմուելու վրայ է կառավարութեան կողմէ առեւանգուած հայ կիներն ու աղջիկները, աւարները եւայլն հետապնդելու եւ ձեռք անցնելու համար: Մենք ալ շրջականներէն մեր ստացած լուրերուն վրայ, հոս այսպիսի դիմում մը ըրինք, կառավարութեան տրամադրութիւնը լաւ է, բայց ոչ պաշտօնեայ ունի եւ ոչ հեծեալ ոստիկան, միֆրէզէի⁸ համար գայմագամը Հալէպ դիմում ըրաւ հետեւանք չ'ունեցաւ, սա կէտն ալ յիշենք որ արդէն քաղաքիս ապահովութեանը համար հոս բաւականաչափ զօրք չ'կայ, իսկ տեղացի իիթիյաթը⁹ կամ րէտիֆը¹⁰ գէնքի տակ առնելը ոչ միայն ապահովութեան համար մագի չափ օգուտ չ'ունի, այլ վտանգաւոր իսկ է դիրահասկնալի պատճառներով:

Մատուցանելով մեր յարգանաց հաւաստիքը, մնամք եւայլն եւայլն:

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

ատենադպիր

ատենապետ

նախագահ

Ն. Մանուշակեան¹¹

Գ. Յ. Նիզիպլեան

Յարութիւն Քնյ. Տ. Մելքոնեան¹²

Յիշեալ ոճրագործին կախաղան հանուիլը գայմագամը, Իթթիհատը կ'ուզեն եւ դիմած են, ազգերու կրօնական պէտերու ալ դիմեցին նոյն ոճով դիմումներ ընելու

⁸ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ զինուորական ջոկատ:

⁹ Արաբերէն՝ պահեստ, հոս՝ պահեստի զօրք:

¹⁰ Արաբերէն՝ պահեստի զինուոր:

¹¹ Նազարէթ Մանուշակեան: Ծնած է Այնթապ 1874-ին: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Վարդանեան Վարժարանէն, զոր աւարտած է 1890-ին: Համիտեան կոտորածներուն, 1895-ին հեռացած է Այնթապէն եւ մօտ չորս տարի ապրած է Կիպրոս, ապա վերադարձած է ծննդավայր ու երկար տարիներ մաս կազմած է ազգային այլեւայլ մարմիններու՝ Գաւառական եւ Քաղաքական ժողովներու, Ոսումնական խորհուրդի, Վարդանեան եւ Հայկանուշեան վարժարաններու հոգաբարձական կազմերու, պետական Առեւտրական դատարանի եւ այլն: 1915-ին արքայութեան է Այնթապէն եւ կրցած է խուսափիլ Տէր Զօր զրկուելէ ու մնալով Հալէպ վարած է տեղւոյն «Իմալէթիսանէ»ին՝ պետական աշխատանոցին փոխ տեսուչի պաշտօնը: Քինադադարին կը վերադառնայ ծննդավայր, բայց քաղաքի հայաթափումով կրկին կ'ապաստանի Հալէպ, ուր եւ կը մահանայ 15 Յունուար 1933-ին (Սարաֆեան, նշ. աշխ., Բ., Լոս Անճելըս, 1953, էջ 767-768, Գրիգոր Պողարեան, «Այնթապականք», Բ. հատոր, «Մահարձան. Մահագրութիւններ, Դամբանականներ եւ Կենսագրական Նօթեր», Պէյրութ, տպարան Ատլաս, 1974 (տիտղոսաթերթին՝ 1975), էջ 536-539):

¹² Ծնած է Այնթապ, 1866-ին: Աւագանի անունով՝ Յարութիւն: Նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Ազգային Ներսէսեան Վարժարանէն, ապա շարունակած է Կեդրոնական Թուրքիոյ գոլէճին մէջ: Քահանայ ձեռնադրուած է Ուրֆա, 1896-ին:

Տարի մը Էհնէշի մէջ քահանայագործելէ ետք, վերադարձած է ծննդավայրը ու անձնուիրաբար քահանայագործած՝ երկար տարիներ:

1907-1915 վարած է Այնթապի առաջնորդական տեղապահի պաշտօնը: Եղած է տեղւոյն Կրթասիրաց միութեան առաջին նախագահը եւ 18 տարի նոյն պաշտօնը վարելով՝ միութեան համաւուն վարժարանը հասցուցած է նախանձելի դիրքի:

1915-ին, ընտանիքի միւս անդամներուն հետ, արքայութեան է Տէր Զօր, ուր եւ նահատակուած է 1916-ին (Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 353, Պողարեան, նշ. աշխ., էջ 504-508):

համար, եթե միֆթին¹³ եւ իլէմաներ¹⁴ ստորագրեն միասին մենք ալ պիտի ստորագրեմք դիմումի հեռագիր մը¹⁵:

* * *

2 –

Առաջնորդարան Հայոց

Այնթապ 26 [Մարտ]/9 Ապրիլ 1909

Համար 134

Հոգեշնորհ

Տ. Շահէ Վարդապետ Գասպարեան

Առաջն. տեղապահ Հայոց

Հալէպ

Հոգեշնորհ հայր

Ուրֆայի¹⁶ Խալֆէթի¹⁷ գազային ենթակայ երկու հայ գիւղեր կան մին Էհնէշ¹⁸

¹³ Իսլամական օրէնքներու սկզբունքներուն հիմամբ վճռատու իսլամ կրօնաւոր:

¹⁴ Եզակին՝ ալէմ- արաբերէն՝ գիտուն, որ ընդհանրապէս կը գործածուի իսլամ օրէնսգիտութեան մասնագէտի իմաստով:

¹⁵ Կ. Պոլսէն եկած հրահանգի մը վրայ, ոճիրէն երկու ամիս ետք, յիշեալը կախաղան բարձրացուած է Այնթապի մէջ ու մարմինը կախաղանին վրայ ձգուած է առաւօտէն մինչեւ կէսօր (Մարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 952):

¹⁶ Կամ Եղեւիա: Պատմական քաղաք, համանուն անկախ գաւառին կեդրոնը: Հայկական Միջագետքի գլխաւոր ոստաններէն, որ միջնադարուն եղած է հայ եւ ասորի մշակոյթներու կարեւորագոյն կեդրոններէն մէկը: Քաղաքը հարուստ էր իր պատմական յուշարձաններով՝ բերդի մնացորդներով, հնադարեան եկեղեցիներով, մզկիթներով եւ այլն: Յիշենք որ, Եղեւիոյ մէջ է որ տեղի ունեցած է հայերէն գիրերու գիտը:

Համիտեան կոտորածներու ժամանակ, տեղոյն հայերը դիմած են իքնապաշտպանութեան, բայց յիսունօրեայ հերոսական դիմադրութենէ ետք, թրքական զօրքը մտած է հայկական թաղերը ու կոտորած՝ մօտ 10 հազար հայեր, որոնց շուրջ 3500-ը ողջ-ողջ այրուած են եկեղեցւոյ մէջ (Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւն, «Հայկական Հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 450): Տեղոյն հայերը ունեցած են Սբ. Աստուածածին եկեղեցին եւ Սբ. Սարգիս վանքը, մինչ հայ աւետարանականները ունեցած են երկու, իսկ կաթողիկէները՝ մէկ եկեղեցի: Հայեր ունեցած են նաև 15 դպրոց, աղջկանց բարձրագոյն վարժարան, որբանոցներ, մշակութային եւ քարտիչական կազմակերպութիւններ, թերթեր, գրադարաններ եւ այլն: 1915-ին, քաղաքի շուրջ 100 հազար բնակիչներէն 35 հազարը եղած են հայեր (Արամ Մահակեան (աշխատասիրեց), «Դիցագնական Ուրֆան Եւ Իր Հայորդիները», Պէյրութ, տպարան Ատլաս, հրատարակութիւն Ուրֆայի Յուշապատումի Յանձնախումբին, 1955, էջ 612), իսկ ըստ այլ աղբիւրի, ունեցած է 32.600 հայ բնակիչ (Raymond H. Knvorkian, Paul B. Paboudjian, «Les Arméniens dans l'empire Ottoman a la veille du génocide», Փարիզ, հրատարակիչ՝ ARHIS, 1992, էջ 325):

Հայոց ցեղասպանութեան շրջանին, տեղոյ հայերը, 29 Սեպտեմբեր-23 Հոկտեմբեր 1915, դիմած են ինքնապաշտպանութեան, որ սակայն ունեցած է ողբերգական աւարտ, երբ թրքական բանակը յաջողած է մտնել հայկական թաղերը ու կոտորել բնակչութեան մեծ մասը:

Նոյն տարիներուն, Եղեւիան եղած է Արևմտեան Հայաստանէն քստորուած հայերու համակեդրոնացման կարևոր կայքերէն մէկը, ուր հաւաքուածները աւելի ետք քստորուած են Ռաս Իլ Այնի ու Ռազգայի անապատները:

Ջիւնադադարին, Հոկտեմբեր 1919-ին, ֆրանսացիներ կարճ ժամանակով գրաւած են քաղաքը, որմէ ետք հոն հաւաքուած են փոքրաթիւ համաքաղաքացիներ եւ այլ շրջաններէ ապաստանած վերապրող հայեր, ընդամենը մօտ վեց հազար հոգի: Աւելի ետք, ֆրանսացիներու հեռանալով, 1923-ին, անոնք եւ լքած են քաղաքը՝ ինքնապաշտպանական կարճատև մարտեր մղելէ ետք թրքական ուժերուն դէմ:

¹⁷ Խալֆէթի գաւառակը կ'իյնար Ուրֆա անկախ գաւառին մէջ, իսկ անոր կեդրոն համանուն ամանը կը գտնուէր Այնթապ քաղաքէն հիւսիս-արեւելք, Եփրատի ձախ ափին: 19-րդ դարավերջին ունեցած է մօտ 2000 բնակիչ, որուն 500-ը՝ հայ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, «Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան», Բ. հատոր, Երևան, 1988, էջ 628):

¹⁸ Պատմական յիշատակարաններով հարուստ գուտ հայաբնակ գիւղ՝ Ուրֆա անկախ գաւառի Խալֆէթ

եւ միւսը Ճիպին¹⁹, մեր Էհնէշէն ստացած նամակը կը ներփակենք, խնդրելով որ հաճիք կարեւորութիւն տալով հարկ եղած կարգադրութիւնները ընել եւ ապահովել անոնց վիճակը: Մեր ստացած մասնաւոր տեղեկութիւններն ալ կը հաստատեն թէ անպատճառ պէտք կայ այդ կողմերը անդորրութիւնը երաշխաւորելու համար կարգ մը միջոցներ ի գործ դնել:

Հաճեցէք ընդունիլ մեր յարգանաց հաւաստիքը

Մնամք եւայլն եւայլն

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Ատենադպիր

ատենապետ

նախագահ

Ն. Մանուշակեան

Գ. Յ. Նիզիպլիեան

Յարութիւն Քհ. Մելքոնեան

Յ. Գ.- Բշ. օրուան խնդիրը տեղեկագրած էինք, ոճրագործին դատաւարութիւնը Շէրիով²⁰ լմնցաւ, «Գըսասով»²¹ մահուան դատաւարտուեցաւ եւ վճռին գործադրութիւնը կառավարական ժողովներու եւ զինուորական մարմնոյն կողմէ հեռագրաւ խնդրուեցաւ Պոլսէն²²:

Նոյն

գաւառակին մէջ, Եփրատի աջ ափին, Այնթապ քաղաքէն հիւսիս-արեւելք, 48 քմ. հեռաւորութեան վրայ եւ Հոռովկայէն 5 մղոն հարաւ: Կառուցուած է հին քաղաքի մը ավերակներուն վրայ: Կոչուած է նաեւ 'Ներսէս' Ս. Ներսէս Շնորհալիի անունով: 1915-ին ունեցած է 100 տուն՝ 700 բնակիչ, որոնք զբաղած են առաւելաբար պիստակի մշակումով:

Էհնէշը 1895-ին ունեցած է 60 հայ ընտանիք՝ մօտաւորապէս 400 անձ, որոնք կոտորածներէն փրկուելու համար կրօնափոխ եղած են եւ որոնք շնորհիւ տուած են նուազագոյն թիւով զոհեր, իսկ կիլիկեան կոտորածներու ժամանակ, շնորհիւ գիւղի զինեալ երիտասարդութեան ձեռք առած միջոցառումներուն՝ փրկուած են կոտորածէ:

Տեղւոյն հայերը ունեցած են Ս. Աստուածածին վիմափոր եկեղեցին եւ Ազգ. Ներսէսեան վարժարանը, որ 1903-ին ունեցած է 42 աշակերտ: Գիւղին մօտակայքը գտնուած են քանի մը հին եկեղեցիներ եւ ուխտատեղիներ (Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 606-620, Երուանդ Պապայեան, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Գ. հատոր, Լոս Անճելըս, 1994, էջ 1124-1126): Ըստ այլ աղբիւրի, Էհնէշը 1914-ին ունեցած է 900 հայ բնակիչ («Հայ Ձայն», Ատանա, 4 Յունիս 1920, թիւ 343, էջ 2):

10 Մայիս 1920-ին, Մեծ եղեռնէն վերապրած ու հայրենի գիւղ վերադարձած 164 էհնէշցիներ սոսկալի տանջանքներով կոտորուած են շրջակայ թուրք զիւղացիներուն, ոստիկաններուն եւ տեղւոյն գաւառապետին կողմէ:

¹⁹ Հայաբնակ գիւղ Ուրֆա անկախ գաւառի Խալֆէթ գաւառակին մէջ, Այնթապ քաղաքէն հիւսիս-արեւելք ու Խալֆէթ գիւղէն մօտ 10 քմ. արեւելք:

Մեծամասնութիւն կազմող հայերու կողքին, գիւղը ունեցած է նաեւ թուրք եւ քիւրտ բնակչութիւն, ինչպէս նաեւ «կէս-կէս» կոչուած իսլամացած հայեր, որոնք կրօնափոխ եղած էին համիտեան կոտորածներու շրջանին, 1895-ին:

Տեղւոյն հայերը ունեցած են երեք համայնքներուն պատկանող մէկական եկեղեցի ու դպրոց (Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 77, 603-605):

²⁰ Իսլամական օրէնք:

²¹ Արեան փոխարէն արին՝ մահապատիժ:

²² Մարդասպան թուրքին դատաւարութեան ներկայ եղած են բազմաթիւ այնթապցի հայեր ու թուրքեր: Ան կախաղան բարձրացուած է իր գործած ոճիրէն երկու ամիս ետք, Այնթապի մէջ: «Պատմութիւն Անթէպի Հայոց» հատորին մէջ կայ կախաղանի վրայ անոր լուսանկարը (Ա., էջ 1005):

* * *

3 –

1909 Ապրիլ 11 Այնթապ

Հոգեշնորհ

Տէր Շահէ Վ. Գասպարեան

Առաջնորդական տեղապահ Հալէպի հայոց եւ վիճակաց
Հալէպ

Սիրելի հայր սուրբ,

Երկուշաբթիէն ի վեր ճգնաժամ մը կ'անցընենք: Այսօր անդորրութիւն է մեծ մասամբ: Անցեալ շաբթուան մէջ Կ. Պոլիսէն «ողջ ենք» հեռագիրները եկան, վախ ինկաւ մեր մէջ, բայց ոչ այնչափ, բայց երբ Կիրակի իրիկուն եւ Երկուշաբթի առտուն Ատանայի շրջականներէն եկողներ պատմեցին այդ կողմերը պատահող ջարդը, թալանը եւ հրդեհը, այն ատեն վախը սարսափի փոխուեցաւ եւ արդիւնքը եղաւ սոսկալի խուճապ: Տեղույս կառավարութիւնը ամէն ջանք թափեց համոզելու զմեզ թէ քաղաքիս համար երկիւղ մը չկայ եւ եթէ բան մը պատահի կառավարութիւնը խիստ տնօրինութիւններ ըրած է չարագործները պատժելու եւ որ եւէ դէպքի մը առջեւը առնելու համար: Սակայն Ատանայի եւ շրջականներու վրայ օր ըստ օրէ հասած գէշ լուրեր կառավարութեան այդ ջանքը անգոր կ'թողէին: Երէկ մանաւանդ այնպէս եղաւ որ բոլոր քրիստոնեաներ շուկայ չ'եկան: Այնթապու շրջակայ թաղերը, արդէն, քանի օրէ ի վեր եկեղեցւոյ թաղը փոխադրուած են մեծ մասամբ եւ բոլոր ժողովուրդը ահ ու դողի մէջ խոնուած էր եկեղեցիին բակը: Երէկ ամբողջ օրը մտաւանջութեամբ եւ վախով անցուցինք: Այս գիշեր «Իթթիհատ»ի անդամները գումարուելով իրենց առած ստոյգ լուրերու վրայ սրտապնդած անգամ մը եւս ծանր երդումներ կ'ընեն քաղաքի անդորրութեան մասին հսկելու եւ Աստուած մի արասցէ եթէ երբեք բռնապետութեան կուսակիցներ գտնուին եւ փորձեն բան մը ընել անոնց դէմ կռուելու եւ մեռնելու համար: Եւ 33 անդամներ՝ 20 իսլամ եւ 13 քրիստոնեայ, երեք խումբ քաղաքին մէջ իբր տէվրիյէ²³ պտտելու եւ ժողովուրդը սրտապնդելու որոշումը կու տան: Ասոր համեմատ այս առտու պատարագի միջոցին եկեղեցի եկան, երբ անոնք կ'նստէին գաիմնագամ²⁴ եւ գոմիսէր²⁵ պէյերն ալ եկան: Պատարագէն ետքը նախ կարդացուեցաւ մէշիխէթէն²⁶ եւ բարձր դրան միջոցաւ «հեյէթի իլմիյէյ»էն²⁷ եկող հեռագիրները (կարդացուեցան), ետքը «Իթթիհատ»ի կողմէն խօճա²⁸ մը եւ Հիւսէյին Շէմիլ էֆ. խօսեցան, մեր կողմէն Տէր Կարապետ²⁹ եւ

²³ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ շարժական քննիչ խումբ:

²⁴ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ գաւառակի կառավարիչ:

²⁵ Ոստիկանապետ:

²⁶ Շէյխուլիսլամի՝ իսլամներու մեծաւորի դուռ, գրասենեակ:

²⁷ Ուլամներու՝ իսլամ օրէնագիտութեան մասնագէտներու յանձնաժողով, մարմին:

²⁸ Կամ հօճա, արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ ուսուցիչ, դաստիարակ:

²⁹ Նկատի ունի Տէր Կարապետ Քհնյ. Կիլիկեանը, որ ծնած է Մարաշ 1850-ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի ձեմարանին մէջ: Քահանայ ձեռնադրուած է Մարաշի համար բայց

ես խօսեցանք, «Իթթիհատ»-ն Զէնոք խօճա³⁰ դարձեալ խօսեցաւ: Բոլոր խօսումներով շեշտուած կէտը սա էր. երկրին մէջ եւ մանաւանդ հիմա մեր քաղաքին մէջ անդորրութիւնը խանգարող պատճառներուն առջեւը առնելու համար համերաշխութեամբ եւ գործակցութեամբ պէտք է որ աշխատինք, որպէսզի չարամիտներու չար գործերը չյաջողին: «Իթթիհատ»-ի կողմէն խօսողները սա կէտը շեշտեցին թէ Ատանայի եւ շրջականներու մէջ պատահող դէպքերը Եղլորդի³¹ քանի մը օրուան համար ձեռք անցուցած մէկ առիթէն օգտուելուն արդիւնքը եղած է: Տեղական կառավարութեան եւ Իթթիհատի շնորհակալութիւններ մատուցինք եւ ժողովուրդը յորդորեցինք որ ամէն ոք իր գործին երթայ: Գրեթէ բոլոր ժողովուրդը շուկայ իջաւ այսօր: Ժամը չորսին դատաւորն ալ առաջնորդարան եկաւ եւ «Շեյթի իմիյէ»-յէն եկող հեռագիրը կարդաց պաշտօնապէս բոլոր քահանայական դասուն ներկայութեամբ եւ փափաք յայտնեց որ անդորրութիւնը հաստատելու համար գործակցինք: Հետեւաբար այսօր քաղաքի ժողովուրդը մեծ մասամբ ուրախ է եւ հանգիստ եւ սկսաւ դուրսէն առած վերքերուն ցաւը զգալ: Փրոֆ. Լեւոնեան³² իր եօթը ընկերներով, որոնք Ատանա գացած էին «Միութեան» մասնակցելու համար, կ'յսենք թէ մեռած է: Ատանա չ'հասած Օսմանիյէի³³ մէջ փորձանքի մը հանդիպած են, ամբողջ

աւելի ետք իր բեմբասացութեան շնորհիւ, հրաւիրուած է Այնթապ, ուր 1890-1904 վարած է տեղւոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը: Նահատակուած է ցեղասպանութեան ընթացքին (Գր[իգոր] Հ. Գալուստեան, «Մարաշ Կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն», հրատարակութիւն Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան, Նիւ Եորք, տպարան Կոչնակ, 1934, էջ 623, Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 11, 352):

³⁰ Զէնոք խօճա՝ ուսուցիչ Զէնոք: Նկատի ունի Փրոֆ. Զէնոք Պէզնեանը: Ծնած է Այնթապ, 1862-ին: Զաւակն է Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ գոլէճի նշանաւոր դասախօսներէն Փրոֆ. Ալեքսան Պէզնեանի:

Զէնոք խօճա նախակրթութիւնը տեղւոյն վարժարաններուն մէջ ստանալէ ետք, ուսումը շարունակած է վերոյիշեալ Գոլէճին մէջ ու շրջանաւարտ եղած է անկէ 1880-ին: Երեք տարի նոյն Գոլէճին մէջ դասախօսելէ ետք անցած է Կ. Պոլիս, ուր 1883-1884 հետեւած է իրաւաբանական ճիւղին եւ ապա երեք տարի, Փարիզի Սորպոնի համալսարանին մէջ շարունակելով նոյն ճիւղը, վերադարձած է ծննդավայր եւ 1887-էն դասախօսած է Գոլէճին մէջ մինչեւ 1915, երբ ընտրուելով հայ անտարանական համայնքի ազգապետ, մեկնած է Կ. Պոլիս եւ հայ ժողովուրդի ճակատագրական այդ տարիներուն, վարելէ ետք այդքան պատասխանատու յիշեալ պաշտօնը, 1928-ին հրաժեշտ տուած է Կ. Պոլսին ու անցած է Սուրիա-Լիբանան: Մահացած է Պէյրութ, 1933-ին (Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 860-861, Պողարեան, նշ. աշխ., էջ 253-256):

³¹ Սուլթանական պալատ: Նկատի ունի գահընկեց սուլթան Ապտուլ Համիտ Բ-ը:

³² Նկատի ունի Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ գոլէճի նշանաւոր դասախօս Վեր. Փրոֆ. Սարգիս Լեւոնեանը: Ծնած է Այնթապ, 1851-ին: 1870-ին մտած է Մարաշի Աստուածաբանական ճեմարանը, զոր աւարտած է 1873-ին եւ մասնագիտական ուսումը շարունակած է Միացեալ Նահանգներու Ելչի համալսարանին մէջ: 1883-ին վերադարձած է Այնթապ ու երկար տարիներ դասախօսած է տեղւոյն Կեդրոնական Թուրքիոյ գոլէճին մէջ: Նահատակուած է 1/14 Ապրիլ 1909-ին (Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 859):

³³ Գիւղաքաղաք՝ Կիլիկիոյ մէջ, Ատանա նահանգի Եարփուզ (Ճէպէլ Պէրէքթ) գաւառին մէջ, Օսմանի գաւառակին կեդրոնը, Սեւ լեռներուն վրայ, Ատանա քաղաքէն հիւսիս-արեւելք:

Ամանոսեան լեռնաշղթայի արեւմտեան դուռն է ան, ուրկէ կը սկսի երկաթուղիի փապուղին: Տեղւոյն առաքելական եւ անտարանական համայնքները ունեցած են իրենց առանձին եկեղեցիները:

1909-ի կիլիկեան կոտորածներու նախօրեակին, Օսմանիէն ունեցած է 1.000 տուն բնակիչ, որուն 200-ը հայեր էին, մեծամասնութեամբ՝ հաճընցիներ (Յակոբ Յ. Թերզեան, «Կիլիկիոյ Աղէտը», Կ. Պոլիս,

շաբաթ մը անցաւ տակաւին ամենափոքր լուր մը իսկ չ'առնուեցաւ թէ այս ութը մարդիկ ի՞նչ եղան, ո՞ր եւ ինչպէ՞ս մեռան: Ոմանք կ'կարծեն թէ, արդեօք տեղ մը պահուած չէ՞ն կրնար ըլլալ, սակայն երբեք յոյս ներշնչող նշան մը չկայ:

Քաղաքիս անդորրութեան համար որչափ որ տեսանք, թէ՛ տեղակալի եւ թէ՛ գոմիսէրի ջանքերը գովելի են, «Իթթիհատ»-ն ալ պարապ չկեցաւ: Սակայն, սիրելի հայր սուրբ, իմ անձնական կարծիքով, այս՝ անցեալ շաբաթ փչող խորշակէն, ուրիշ ատեն եւ տարբեր տեղերու վրայ ալ կրնայ փչել: Ես այնպէս կը վախնամ թէ՛ այս բոլորը սկիզբն երկանց է, ներքին քաղաքական կռիւներ անպակաս պիտի ըլլան, ներկայ այլ եւ այլ փոփոխութիւններու պիտի ենթարկուի եւ միշտ տուժողը մենք հայերս պիտի ըլլանք: Արդեօք ասոր առջեւը առնելու համար ի՞նչ պէտք ենք ընել: Ես կ'կարծեմ թէ թուրք ժողովրդեան մէջէն անկեղծ եւ բանիմաց հայրենասէրներու հետ միանալ եւ սահմանադրութեան հաստատութեան, ազատութեան տեւականութեան համար գործնական ջանքեր ընելու ենք: Եթէ մինակ մնանք կշռող ուժ մը երբեք չպիտի ունենանք եւ անգոր պիտի մնանք: Ըսել չեմ ուզեր թէ անպատճառ «Իթթիհատ»-ի անդամակցինք, թէեւ անիկա կերպ մըն է, այլ անպատճառ անկեղծ թուրքերու եւ մեր մէջ պէտք է որ հասկացողութիւն մը ըլլայ, բայց ծրագրուած ձեւով եւ գործակցութեան սկզբունքի վրայ:

Այս մասին դուք ի՞նչ կ'խորհիք:

Քաղաքիս անդորրութիւնը հաստատուելու վրայ է, այսօրուրնէ սկսեալ, բայց չենք գիտեր թէ վերէն՝ կեղորոնէն, ի՞նչ տեսակ հովեր պիտի փչեն եւ ի՞նչ պիտի լատահիլ վաղը կամ միւս օրը: Վերջապէս ասանկ ատեն մը քաղաքի մը կամ կուսակալութեան մը գործերուն ընթացքը, անոր անմիջական վարիչներուն տրամադրութենէն կախում ունի: Կ'լսենք թէ կուսակալը³⁴ լաւ տրամադրութիւններով օժտուած

տպագրութիւն Յ. Ասատուրեան եւ Ռոդիք, 1912, էջ 195): Ըստ այլ աղբիւրի, նոյն թուականին, ան ունեցած է 150 տուն հայ բնակչութիւն, որմէ՛ նոյն տարուայ կոտորածներուն զոհուած են աւելի քան 500 հայեր («Տեղեկագիր Այրիալանամ...», էջ 61), որոնք ապաստանած էին եկեղեցի ու դիմադրած էին թուրք խուժանին, բայց աւելի ետք, տեղի տալով՝ ենթարկուած էին ընդհանուր կոտորածի: Բացի պատանիներէն, հայ տղամարդ չէր մնացած ասանկ մէջ:

Ըստ Յակոբ Թէրզեանի, «Օսմանիէի մէջ գործուած վայրագութիւնները Կիլիկիոյ եղեռնին զլուխ գործոցն է»: 1909-ին Օսմանիէի մէջ նահատակուած բնիկ եւ հոն ապաստանած հայերուն ընդհանուր թիւը եղած է մօտաւորապէս 1500 (Թէրզեան, նշ. աշխ., էջ 199, 202), իսկ ըստ այլ աղբիւրի, հոն նահատակուած են 1111 հայեր (Յակոբ Պապիկեան, «Ատանայի Եղեռնը», հայագուց՝ Յակոբ Սարգիսեան, Բ. տիպ, Հալէպ, 2009, էջ 61), որոնք ձգած են 262 հայ առաքելական եւ 4 հայ աւետարանական համայնքի որբեր («Տեղեկագիր 1909...», էջ 82, 85):

Ցեղապանութեան տարիներուն, քաղաքը եղած է հայ քաղաքականներու համակեդրոնացման գլխաւոր կայքերէն մէկը, ուր տեղակայուած էին 50 հազար քաղաքականներ (Ara Sarafian (compiled with an introduction), "United States official records on the armenian genocide 1915-1917", Gomidas Institute, Princeton and London, 2004, էջ 380), որոնցմէ՛ կոտորուած է 11.110 անձ («Հայաստանի եւ Յարակից...», Ե. հատոր, 2001, էջ 487):

Նոյեմբեր 1915-ին, Օսմանիէ գտնուած վերապրող Պօղոս Տիլավարեանի վկայութեամբ, համաճարակէն հոն մահացած են օրական 100-150 հայ քաղաքականներ (Հայաստանի Ազգային արխիւ, ֆոնտ 1388, ցուցակ 1, գործ 78, թերթ 6բ):

³⁴ Նոյն թուականին Հալէպի նահանգապետն էր Ռաշիտ Պէյ, որ պաշտօնը ստանձնած է 5 Հոկտեմբեր 1908-ին ու շարունակած է զայն մինչեւ 1909-ի Սեպտեմբերի վերջերը, երբ հալէպցիներու

անձ մըն է եղեր: Հալէպի գումանտանի³⁵ մասին ալ աղէկ բաներ կ'իստուին: Տեղւոյս գոմիսէրը արդէն կանուխէն գիտէինք թէ լաւ էր, տեղակալն ալ այս շաբթւոյան մէջ բարի տրամադրութիւններ ցոյց տուաւ: Միայն մեր գումանտանին համար կ'ըսեն թէ թոյլ եւ անկարող է եւ հին ըէժմի օրով հայատեաց քաղաքականութեան հետեւող եղած է: Ասոր տեղ ուրիշ կարող եւ ազատախոհ մէկուն ըլլալը փափաքելի է միշտ, սակայն եթէ անկարելի է այդ, արդեօք կարելի չէ՞, ասանկ ճգնաժամի մը առթիւ աւելի կարող, գործօն եւ ազատամիտ գումանտանի մը հոս դրկուիլը գէթ ժամանակի մը համար: Ասոնց հետ միասին, սա ալ ըսեմ որ, այս օրերս սիրտ չ'կոտրելու քաղաքականութիւնը կը տիրէ, մասնաւորապէս որ այս շաբթւոյան վախճում օրերուն, տեղւոյս գումանտանի մասին, որեւէ գէշ բան մըն ալ չ'լսեցինք, հետեւաբար եթէ կարելի է բան մը ընել ջանացէք ի սէր Այնթապոյ հայ ժողովուրդեան, բայց սոյս սապունա տէյիւրմէյէրէք³⁶: Որովհետեւ այս օրերուն ո՛չ խնդիր հանելու ի վիճակի ենք եւ ո՛չ ալ գումանտանի վրայ առարկելի բան մը ունինք ըսելու: Այսօր, կարգ մը պաշտօնական մարդոց մէջ, գումանտանին՝ Աշէր էֆէնտիին ալ պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնելու գացին ազգին կողմէ:

Ձեր սիրելութեան Ապրիլ 2 թուակիրը առի փոսթով, Ապրիլ 9ին Եշ. օրը: Մր. Փարֆիթ հոս եկաւ, Ապրիլ 4 Շաբաթ օրն ալ զիս գտաւ: Բայց զարմանալի բան մը կար, Մր. Փարֆիթ զիս փնտրած է իբր Գրիգոր Թափուզճեան³⁷ եւ իր թուղթին վրայ այնպէս գրուած էր, իբր թէ դուք տուած էք այդ անունը: Մր. Փարֆիթ ինծի նախ չ'ըսաւ թէ Ձեր կողմէ յանձնարարուած եմ եւ Ձեր հայրութեան հետ ի՞նչ նիւթերու վրայ խօսած է, գացած պահուն միայն իմացուց այդ բոլորը: Սակայն շատ զարմանալի է, երբ Ձեր նամակը առի, տեսայ թէ նոյն առաջարկները ըրած եմ եւ, ինչ որ դուք ըրած էք հոն անգլիկան եկեղեցւոյ նկատմամբ եւ պատգամաւորական ժողովի մասին: Այնուամենայնիւ զուր ջանք եւ անօգուտ վաստակ: Հոս եկեղեցւոյ բանալիները առաւ, եւ առանց մէկուն տալու միասին տարաւ: Եկեղեցին՝ լսարան ընելու

բողոքներուն վրայ պաշտօնական եղած է (محمّد فؤاد عنتابي ونجوى عثمان), «حلب في مئة سنة 1850-1950», Բ., Հալէպ, 1993, էջ 71, 79):

³⁵ Նոյն թուականին Հալէպի զինուորական հրամանատարն էր Հասան Պահրի փաշան: Կոտորածներէն անմիջապէս ետք, անոր յղած մէկ հեռագրին մէջ ըստուած է թէ Ատանայի հայոց կոտորածը օրեր առաջ նախապատրաստուած էր տեղւոյն իշխանութիւններուն կողմէ, եւ թէ անոր մէջ մեծ եղած է զինուորականութեան դերակատարութիւնը, որոնք պահեստանոցներէն գէնք կողոպտելով միացած են ամբոյսին:

Պահրի փաշայի այս հեռագիրը Օսմանեան խորհրդարանի 18 Ապրիլ/1 Մայիս 1909-ի նիստին կարդացած է երեսփոխան Գրիգոր Զօհրապ (Միմոնեան, նշ. աշխ., էջ 246):

³⁶ Նախադասութիւնը թրքերէն է՝ «Օճառը ջուրին չդպցնելով»: Թեւատր խօսք որ կը գործածուի հարցերը չմեծցնելու, պղպշակ յառաջ չբերելու իմաստով:

³⁷ Թափուզճեան քահանայի աշխարհական անունը եղած է Գրիգոր:

համար Եկեղեցասիրացի³⁸ յանձնուելու մասին շատ խօսեցայ, բայց անօգուտ, կ'առարկէր որ երկու ժողովուրդի մէջ երկպառակութիւն կ'ըլլայ եւ այլն³⁹:

Այս առթիւ կ'խնդրենք նաեւ Ձեր հայրութենէն, որ ասկէ ետքը միշտ նոր տեղեկութիւն մը եթէ առնէք, անմիջապէս հաղորդէք մեզ արապաճի⁴⁰ մը կամ այլ միջոցով մը, այսինքն առանց սպասելու փութային: Մանաւանդ եթէ երկրի կացութեան մէջ կարեւոր փոփոխութիւնը պատահի, կանուխէն գիտնալ այդ բանը շատ օգտակար կրնայ ըլլալ մեզի: Սէտայը Շէհպան⁴¹, անցեալ շաբաթ հոս եկաւ, օրինակի համար, ճամբորդի մը միջոցաւ փութայէն առաջ, որովհետեւ ասանկ ժամանակի մէջ, որեւէ լուրի մը օր մը առաջ հասնիլը, պայմանով որ այդ լուրը ստոյգ ըլլայ, մեծ դեր կրնայ կատարել, անմիջական կարգադրութիւն մը կրնայ ըլլալ, որ որեւէ ըլլալիք մէկ բանը քանի մը օր կրնայ ուշացնել եւ անկէ ետքն ալ կացութիւնը կրնայ փոխուիլ: Հաճեցէք այս մասին մեզի ծառայութիւն մը ընել երբ հարկ տեսնէք անշուշտ:

³⁸ Այնթապի Հայ Եկեղեցասիրաց Ընկերութիւն: Հիմնուած է եկեղեցասիրաց երկու ընկերութիւններու միաձուլումով, որոնցմէ առաջինը 1887-ին Վարդանեան Կրթարանի բարձագոյն կարգի աշակերտութեան կողմէ հիմնուած Կրօնասիրաց ընկերութիւնն է, որ նպատակ ունեցած է սատարել հայ եկեղեցիին ու պատրաստել զարգացած եկեղեցականներ: Անոր նիւթական միջոցներով, Երուսաղէմի ու Արմաշի մէջ եկեղեցական կրթութիւն ստացած են ապագայ Բաբգէն աթոռակից Կաթողիկոսն ու Փառէն Եպսկ. Մելքոնեանը: Երկրորդը, 1897-ին հիմնուած Կղերասիրաց ընկերութիւնն է, որ իր կարգին Արմաշ դրկած է ապագայ Շահէ Արք. Գասպարեանը:

Այս երկու ընկերութիւններու միաձուլումով, 1899-ին ծնունդ առած է Եկեղեցասիրացը, որ օգտակար եղած է Այնթապի եկեղեցիներուն: Անոր անդամներուն թիւը հասած է 800-ի, որոնք իրենց նուիրատուութիւններով սատարած են տեղոյն եկեղեցական ու կրթական կեանքին, և որոնք մեծագոյն ապացոյցն է Կիլիկեան Ճեմարանի հիմնադրութեան գործին մէջ անոր ունեցած որոշիչ ու անգնահատելի դերը (Պողարեան, նշ. աշխ., էջ 15, Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 889-892):

³⁹ Անկիւքան կամ Եպիսկոպոսական եկեղեցին Այնթապի մէջ հիմնուած է հայ առաքելական եկեղեցոյ դաւանափոխ առաջնորդ Մկրտիչ Եպսկ. Շահանեան-Սէմէրճեանի կողմէ, որ անձնական հաշիւներէ մղուած, հեռանալով մայր եկեղեցիէն, յարած է անկիւքան եկեղեցիին: Ամուսնացած է հալէպահայ աղջկայ մը հետ եւ քանի մը անգամ մեկնած է Անգլիա ու նուիրատուութիւններ հաւաքած՝ Այնթապի մէջ կառուցանելի եկեղեցոյ շէնքին համար, բայց եկեղեցիին շինութիւնը մնացած է կիսաւարտ, որովհետեւ հանգանակուած գումարով Սէմէրճեան գնած է տուն մը եւ քանի մը կալուածներ՝ «իբրեւ թէ եկեղեցոյ տարեկան ծախքերն ապահովելու համար»: Այս նոյն եկեղեցոյ կիսաւարտ շէնքն է, որ հայ եկեղեցոյ ներկայացուցիչները փափաքած են ստանալ ու օգտագործել որպէս լսարան ([Աբգար Գուլամիրեանց], «Կիլիկիա. Փորձ Աշխարհագրութեան Արդի Կիլիկիոյ», Մատենաշար «Արաքս»ի, Սան Պետերբուրգ, տպարան Ի. Լիբերմանի, 1894, էջ 360, Սարաֆեան, նշ. աշխ., Ա, էջ 348-351):

⁴⁰ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ կառապան:

⁴¹ «Սատա Ալ Շահպալ». բառացիօրէն՝ «Արձագանգ Շահպալի [Հալէպի]»: Հալէպ հրատարակուած օրաթերթ, որ սկսած է լոյս տեսնել 1 Հոկտեմբեր 1908-ին: Ունեցած է չորս էջ, երկուքը՝ արաբերէն իսկ միւս երկուքը՝ օսմաներէն լեզուներով: Թերթէն հրատարակուած է 520 թիւ (محمد فؤاد عنتابي ونجوى عثمان, նշ. աշխ., էջ 68):

Հասանալեյլի⁴² մասին այսօր Տօթթ. Շէփըրթ⁴³ հեռագիր առած է, որուն մէջ կ'ըսուէր թէ 20-30 մեռեալ հազիւ ունեցած է: Իսկէնտէրունէն եկող հեռագիրը, Տէօթթ. Եօլի⁴⁴ մասին կ'ըսէ թէ «Հաշտարար ժողով մը գնաց, կը յուսանք թէ բարի ելք մը կ'ունենայ»: Ատանայի մասին դեռ ստոյգ լուր մը չ'առիւնք:

Մնամ յարգանք եւ սիրով

Ներսէս քինյ. Ն. Թափուզնեան⁴⁵

⁴² Հայաբնակ մեծ գիւղ Ատանայի նահանգի Եարփուզ գաւառին մէջ, Օսմանիէ քաղաքէն հիւսիս 25 քմ. հեռաւորութեան վրայ, Կիլիկիոյ հարաւ-արեւելքը:

Ասանը ունեցած է հայ առաքելական եւ աւետարանական համայնքներու մէկական եկեղեցի: Տեղոյն ազգային զոյգ վարժարանները 1908-ին ունեցած են 150 աշակերտ եւ 80 աշակերտուհի: Հայ աւետարանականները եւս ունեցած են իրենց դպրոցը:

1909-ին ունեցած է 385 տուն, որուն 300-ը՝ հայ առաքելական, 65-ը՝ աւետարանական եւ 20-ը՝ մահմետական: Տեղոյն հայոց ընդհանուր թիւը եղած է 2190 (Միմոնեան, նշ. աշխ., էջ 133-134), իսկ ըստ այլ աղբիւրի, Առաջին աշխարհամարտէն առաջ ունեցած է աւելի քան 800 հայ տուն (Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան, «Հայ Գողգոթան. Դրուագներ Հայ Մարտիրոսագրութենէն. Պեղիւնէն Դէպի Քօր 1914-1920», Վիեննա, Միսիթարեան տպարան, 1922, Ա. հատոր, էջ 373):

Կիլիկեան կոտորածներու միջոցին, 3 Ապրիլ 1909-ին, 10 հազարանոց թուրք խուժանը յարձակած է գիւղին վրայ: Տեղացիք դիմադրած են քաջաբար: Ցաջորդ օր սակայն, բարձրացած է խուժանին թիւը, մինչ հայեր կրցած են ապաստանիլ մօտակայ լեռները եւ մասամբ փրկուիլ ընդհանուր կոտորածէն: Թուրքերը գիւղ մտնելով այրած են եկեղեցին եւ 500 տուններ ու սպաննած են աւելի քան 700 հայեր, ընդ որում՝ 3 քահանայ հայրեր: Կոտորածին հետեւանքով, Հասան Պէյլին ունեցած է 423 որբ եւ 187 այրի (Թէրզեան, նշ. աշխ., էջ 208, 253):

Տեղասպանութեան տարիներուն, աւանը եղած է աքսորական հայերու համակեդրոնացման վայրերէն մէկը, ուր գտնուած են գաղթականներու քանի մը հարիւր վրաններ:

Ջինաղաղարէն ետք, ինչ հաւանական է վերաբնակները ամիսներով հեռուաբար դիմադրած են միլիական չէթներու յարձակումներուն, բայց ի վերջոյ նահանջելով՝ ապաստանած են Հալէպ:

⁴³ Նկատի ունի ամերիկացի միսիոնար, Այնթապի նշանաւոր բժշկապետ Ֆրէտ Շէփըրթը, որ իր տիկնոջ՝ Միսիս Ֆէնի Շէփըրթի հետ Այնթապ եկած է 1882-ին, որպէս տեղոյն բժշկական համալսարանի դասախօս եւ Ազարիա Սմիթի ամերիկեան հիւանդանոցի բժշկապետ: Ան ամբողջ 33 տարի անմնացորդ ծառայած է տեղոյն բնակչութեան՝ կատարելով հազարաւոր վիրաբուժական գործողութիւններ եւ բժշկելով բազմաթիւ հիւանդներ: Դասաւանդած է նաեւ վերոյիշեալ համալսարանին մէջ: Մահացած է Այնթապ, 5/18 Դեկտեմբեր 1915-ին, թիֆուս (Սարաֆեան, նշ. աշխ., Բ., էջ 666-671, Պողարեան, նշ. աշխ., էջ 730-737):

⁴⁴ Հայկական անուանումով՝ Չորք Մարգպան: Հայաբնակ քաղաք Ատանա նահանգի Եարփուզ գաւառի Չորք Մարգպան գաւառակի կեդրոնը, Ատանայէն հարաւ-արեւելք, Սեւ լեռներու փեշերուն:

Տեղոյն ժողովուրդի տնտեսական կեանքը հիմնուած էր առաւելաբար նարնջենիներու մշակման վրայ: Ունեցած է Սր. Աստուածածին եւ Սր. Գրիգոր Լուսաւորիչ (Սր. Փրկիչ) եկեղեցիներն ու Սր. Սարգիս վանքը, ինչպէս նաեւ աւետարանական համայնքի մէկ եկեղեցի եւ երկու վարժարան, նաեւ՝ Կեդրոնական Վարժարանը եւ կիլիկիոյ կոտորածներու որբերուն համար հաստատուած Սիսուան եւ Քեյեկեան որբանոցները:

Տեղոյն հայերը 1895-ի համիտեան կոտորածներու ժամանակ, ութօրեայ ինքնապաշտպանական մարտերու շնորհիւ փրկուած են կոտորածէ: Նոյնը պատահած է 1909-ին, երբ անոնք 13 օրեայ հերոսական դիմադրութենէ ետք, համեմատաբար քիչ կորուստներ տալով փրկուած են համընդհանուր ջարդէն, սակայն թուրքեր յաջողած են հրկիզել հայերու հարիւրաւոր տուններ ու ամառանոցներ:

1908-ին, Չորք Մարգպանը ունեցած է 8 հազար իսկ ցեղասպանութեան նախօրեակին՝ 12300 հայ բնակիչ («Հայաստանի եւ Յարակից...», Բ., էջ 140), մինչ ուրիշ աղբիւրի մը համաձայն, 1912-ին ան ունեցած է հազար տուն զուտ հայ բնակչութիւն, որուն 20-ը՝ աւետարանականներ իսկ մնացեալները առաքելականներ էին («Տեղեկագիր Այրիալիսում...», Մայապալեանի Տեղեկագիրը, էջ 57):

⁴⁵ Ծնած է Այնթապ, 1870-ին: Ուսումը ստացած է տեղոյն Ներսէսեան, ապա՝ ֆրանչիսկեաններու վարժարաններէն: Շրջան մը հետեւած է Կեդրոնական Թուրքիոյ գոլէճի դասընթացներուն, իսկ 1901-ին մտած է Արմաշի Դպրեվանք: 1904-ին, Սիսի մէջ, Սահակ Բ. Խապայեան

Ահա կ'ներկայենք նաև փոխառ⁴⁶ մը, չորս ոսկինոց չէք մը, հաճեցէք փոխարէնը գանձել, Հալէպի մէջ բանտարկեալ Ներսէս Կէտիկեանին յանձնել:

Նոյն

* * *

4 –

ՀՐԱՆՏ Գ. ՍԻԻԼԱՀԵԱՆ

ԱՅՆԹԱՊ

Այնթապ 6/19 Յունիս 1909

HRAND K. SULAHIAN

Aintab

Գերապատիւ Տ. Շահէ վարդապետ Գասպարեան

Առաջն. տեղ. Հալէպի վիճակին

Հալէպ

Ստացայ Ձեր գրութիւնն՝ եւ Տ. Արսէն⁴⁷ հօր ապահովագրութեան ստացագիրն, զորս ներկայեալ կը վերադարձնեմ ձեզ: Ապահովագրական ընկերութենէն սոյն գումարը առնելու համար պէտք է.

Կաթողիկոսէն քահանայ ձեռնադրուած է և երկար տարիներ պաշտօնավարած է իր ծննդավայրի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ:

Կիլիկեան կոտորածներու ժամանակ, Սահակ Բ. Կաթողիկոսին կողմէ գործուողուած է աղէտեալ շրջանները՝ Աստիոք եւ Սուէտիա, նպաստ բաժնելու: Տարի մը ետք, կրկին մեկնած է նոյն վայրերը որպէս առաջնորդական փոխանորդ, ուր մնացած է չորս ամիս՝ մեծ ծառայութիւններ մատուցելով տեղոյն աղէտեալներուն:

Յեղասպանութեան տարիները անցուցած է Սուրիոյ մէջ, առաւելաբար Սալամիէ, ապա արտորուած է Պուսէյրա: Զինադադարին վերադարձած է ծննդավայր ու նշանակուած տեղոյն կաթողիկոսական փոխանորդ: Յիշատակելի մասնակցութիւն ունեցած է տեղոյն հերոսամարտին ու դարձած է անոր գլխաւոր երեք ղեկավարներէն մէկը:

Այնթապի հայաթափումէն ետք, ապաստանած է Հալէպ, ուր քահանայագործած է մինչեւ իր եղեռական մահը՝ 5 Յուլիս 1934, երբ զոհ գացած է եղբայրասպան գնդակի (Սարաֆեան, նշ. աշխ., Ա., էջ 469-472, Պողարեան, նշ. աշխ., էջ 563-570):

Թատուզճեան քահանայ պատահական աշխատակցութիւն ունեցած է հայ մամուլին: 1991-ին լոյս տեսած է իր օրագրութիւններու մեծարժէք հատորը՝ «Տառապանքի Օրագիր» խորագրով (խմբագրեց՝ Թորոս Թորանեան, Պէյրութ, 408 էջ), որ կ'ընդգրկէ անոր 1909-1933 տարիներու գրառումները:

⁴⁶ Փոխանակագիր:

⁴⁷ Նկատի ունի Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն Տէր Արսէն շուշտակ վարդապետ Յարութիւնեանը:

Ծնած է Այնթապ, 1864-ին: Աշխարհական անունով՝ Գրիգոր: Հետեւած է ծննդավայրի Ամերիկեան գոլէճի դասընթացքներուն, իսկ բարձրագոյն ուսումը ստացած է Մարաշի Աստուածաբանական ճեմարանէն: Ուսուցչական պաշտօն վարած է Այնթապի Վարդանեան եւ Աղենական կրթարաններուն մէջ: 1896-ին, Ուրֆայի մէջ քահանայ ձեռնադրուելով, մօտ 4 տարի ծառայած է Այնթապ, Էհնէշ, Ճիպին ու Հալէպ:

1903-1904 եղած է Հալէպի առաջնորդական փոխանորդ, միաժամանակ դասաւանդած է տեղոյն Ազգային Ներսէսեան վարժարանէն ներս:

1906-ին յատուկ առաքելութեամբ մեկնած է Աստիոք եւ Ճըսըր Շուդուր, իսկ 1908-ին՝ Պէլլան եւ Ալեքսանդրէթ:

1- – Հանգուցելոյն օրինաւոր ժառանգորդներուն մանչ աղջիկ քանի հատ եւ որոնք ըլլալին վկայել՝ Առաջնորդարանիդ կողմանէ:

2 – Անտիոքի⁴⁸ շարդին մէջ մեռած ըլլալը եւ ո՞ր օր, ուրտն՞դ մեռած է՝ վկայագիր մը մահուան եւ պարագաներու մասին:

3 – «Հեօճէթի շէրի»ով⁴⁹ վասի⁵⁰ մը նշանակել որբերուն՝ որ կարող ըլլայ՝ ի հաշիւ որբերուն այդ դրամը պահանջել:

Ցարդ իմ ձեռօքս նմանօրինակ պահանջ մը եղած չէ, բայց Պոլիս եղած ատենս՝ այս մասին տիրէգթօրին⁵¹ խօսածները վերոյիշեալ թուղթերն էին, եւ խոստացաւ դրամը տալ:

Սunionի⁵² Հալէպի գործակալը Ֆիլիփ Խապպասն է՝ կրնաք ընդարձակ տեղեկութիւն ստանալ:

Երեցկնոջ մահէն ետք, 20 Յունուար 1909-ին, Սոյ Մայրավանքին մէջ, Սահակ Բ. Խապպեան Կաթողիկոսէն օծուած է շուշտակ վարդապետ ու նշանակուած՝ Անտիոքի առաջնորդական տեղապահ: Նոր պաշտօնատեղին հասնելէ շատ կարճ ժամանակ անց՝ 6/19 Ապրիլ 1909-ին, սպաննուած է եկեղեցիին մէջ, կիլիկեան կոտորածներու ընթացքին: Թուրք խուժանը, իր ու իր հետ նահատակուած երկու եկեղեցականներուն դիակները քաշկոտելով՝ պտտցուցած է Անտիոքի փողոցներուն ու շուկաներուն մէջ, հրաւիրելով ժողովուրդը որ մասնակցի կոտորածին (Թէրզեան, նշ. աշխ., էջ 255, Յուսիկ Ա. Քինյ. Սեդրակեան, «Տ. Արսէն Քինյ. Յարութիւնեան (1865-1909)», «Գանձասար», Հալէպ, Յունիս Բ. 2007, էջ 15):

⁴⁸ Պատմական քաղաք Հալէպ նահանգի Անտիոք գաւառի կեդրոնը, Հալէպի հիւսիս-արեւմուտքը, անկէ մօտ 110 քմ. հեռավորութեան վրայ, Որոնդէս գետի ափին: Կառուցուած է Սելեւկիոս առաջին Նիքադոր Կայսրին կողմէ՝ Ն. Ք. 301 թուականին: Ան կարճ ժամանակով մաս կազմած է Տիգրան Մեծի հայկական կայսրութեան:

Անտիոքի մէջ է որ Յիսուսի հետեւորդները առաջին անգամ ստացած են «Քրիստոնեայ» անուանումը:

Քաղաքը եղած է հելլենիստական մշակոյթի մեծագոյն կեդրոններէն մէկը, իսկ անդի ետք՝ քրիստոնէութեան գլխաւոր օրրաններէն եւ 4-րդ դարուն հռոմէական կայսրութեան 4 պատրիարքութիւններէն մէկուն նստավայրը:

1909-ի կիլիկեան կոտորածներուն, Անտիոքի հայերը տուած են անդի քան 190 զոհ, որոնք իրենց ետին ձգած են 326 առաքելական եւ 14 անտարանական համայնքի որբեր («Տեղեկագիր 1909...», էջ 89, 94):

Տեղոյն հայերը ունեցած են Սր. Աստուածածին անունով եկեղեցի մը: Հայ անտարանական համայնքը ես ունեցած է իր եկեղեցին: Հայեր ունեցած են նաեւ ազգային վարժարան մը:

1905-ին, քաղաքը ունեցած է 23 հազար բնակիչ, որուն մօտ 5 հազարը՝ հայեր, 4 հազարը՝ յոյներ, 300-ը հրեաներ, իսկ մնացեալները՝ թուրքեր, արաբներ ու ասորիներ (Հ. Ս. Էփրիկեան, «Պատկերագրող Բնաշխարհիկ Բառարան», Ա. հատոր, Բ. տպագրութիւն, Վենետիկ- Ս. Ղազար, 1903, Ա., էջ 220):

Անտիոքը 1939-ին, ֆրանսերէքական համաձայնագրով, Ալեքսանտրէթի ամբողջ գաւառին հետ Սուրիայէն խլուելով՝ բռնակցուած է Թուրքիոյ:

⁴⁹ Շէրիի՝ իսլամական կրօնքի հիմունքներով տրուած մուրիակ:

⁵⁰ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ խնամակալ:

⁵¹ Ֆրանսերէն՝ տնօրէն:

⁵² Նկատի ունի կեանքի ու հրդեհի ֆրանսական համանուն ապահովագրական ընկերութիւնը, հիմնուած Փարիզ 1828-ին, եւ որ գրասենեակներ ունեցած է Օսմանեան կայսրութեան բոլոր մեծ քաղաքներուն մէջ:

Իմ մասին ես կը խորհիմ որ Արժ. Տ. Գարեգինը⁵³ վասի ընեն՝ որով եւ որքերուն դրամը մեր ձեռամբ ապահով տեղ մը տոկոսի տրուի եւ երբ մեծնան այն ատեն զանձեն:

Անտիոք Տ. Ներսէս⁵⁴ հօր գրած էի եւ խօսած, մահուան վկայագրին համար յուսամ թէ կը շինէ:

Մնամ համբուրելով Ս. աշղ

Հ. Գ. Սիլահեան⁵⁵

⁵³ Նկատի ունի Այնթապի քահանաներէն Տէր Գարեգին Ա. Քինյ. Պողարեանը: Ծնած է Այնթապ, 13/25 Փետրուար 1867-ին: Աւագանի անունով՝ Գրիգոր: Յաճախած է Վարդանանց Մեսրոպեան Սանուց վարժարանը, ապա հետեւած է Վարդանեան գիշերային դպրոցի դասընթացքներուն: 1883-1893 աշխատած է մանուսագործ ու հաշուակալ: 1904-ին Ստյ մայրավանքին մէջ Սահակ Կաթողիկոսէն ձեռնադրուած է քահանայ:

Երկար տարիներ մաս կազմած է Այնթապի Կրօնական ժողովին, կրօնագիտութիւն դասաւանդած է տեղոյն վարժարաններուն մէջ եւ անդամակցած՝ քանի մը վարժարաններու հոգաբարձական կազմերուն:

1915-ին աքսորուած է Սուրիոյ Սալամիէ աւանը, ուրկէ ժամանակաւորապէս դրկուած է Պուսէյրա:

Զինադադարին անցած է Այնթապ ու մասնակցած տեղոյն հայութեան ինքնապաշտպանական մարտերուն, ապա քաղաքի հայաթափումով, 1922-ի Դեկտեմբերին ապաստանած է Հալէպ, եւ երկու տարի Ճիւնիի (Լիբանան) մէջ քահանայագործելէ ետք վերադարձած է Հալէպ եւ 1926-1946 քահանայագործած է անդ. միաժամանակ մաս կազմելով կրօնական եւ կրթական բազմաթիւ մարմիններու (Գարեգին Ա. քինյ. Պողարեան, «Ինքնակենսագրութիւն», տես՝ Պողարեան, նշ. աշխ., էջ 9-22):

Վախճանած է 12 Փետրուար 1946-ին:

Պողարեան քահանայ հայրն է ծանօթ բանասէր Գրիգոր Պողարեանի (1897-1975) եւ ձեռագրագետ Նորայր Արք.ի (Ծովական, 1904-1996):

⁵⁴ Նկատի ունի Տէր Ներսէս Քինյ. Թաւուզեանը:

⁵⁵ Հրանդ Գ. Սիլահեան: Ծնած է Այնթապ, 1871-ին: Յաճախած է Մեսրոպեան Սանուց վարժարան, ապա՝ Վարդանեան կրթարան, զոր ւարտելէ ետք 1890-ին մեկնած է Կ. Պոլիս, ուր կարճ շրջան մը բանտարկուելէ ետք վերադարձած է ծննդավայր ու անդամակցած հնչակեան կուսակցութեան ու դարձած անոր ատենապետն ու Այնթապի 1895-ի ինքնապաշտպանութեան ղեկավարներէն մէկը:

Լայն մասնակցութիւն ունեցած է տեղոյն ազգային գործերուն մէջ. եղած է տեղոյն Քաղաքական ժողովի ատենապետ, Կիլիկեան ճեմարանի հոգաբարձութեան ատենադպիր, եւ այլն:

1915-ին աքսորուած է Հալէպ, Դամասկոս, ապա վերադարձուած է Այնթապ, ապա՝ կրկին Հալէպ եւ որպէս «վնասակար» տարր՝ դատաւարտուած է մահուան ու բանտարկուած է մօտ երկու տարի, բայց մահավճիռը չէ գործադրուած:

Զինադադարէն ետք մնացած է Հալէպ, ուր եւս մասնակցած է ազգային գործերու:

1936-ին ընտրուած է անդամ Սուրիական Խորհրդարանին, իսկ 1939-ին տեղափոխուած է Միացեալ Նահանգներ, ուր է մահացած է 15 Յունիս 1949-ին:

Ունեցած է գրական շնորհ: Պարապած է նաև նկարչութեամբ եւ երաժշտութեամբ (Սարաֆեան, նշ. աշխ., Բ., էջ 758-760, Պողարեան, նշ. աշխ., էջ 338-346):

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ԿԻԼԻԿԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ
ԱՅՆԹԱԲԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայ յղուածով նախ անդրադարձ կատարուած է 1909-ի կիլիկեան կոտորածներու շրջանին Այնթապի հայութեան վիճակին մասին, թէ ինչպէս փորձեր եղած են իոն եւս համընդհանուր կոտորած յառաջ բերելու եւ կրկնելու Ատանայի մէջ պատահածը, ապա խօսուած է այդ 1909-ին Այնթապի հայութեան ունեցած կորուստներուն մասին, որմէ ետք հրատարակութեան տրուած են նոյն օրերուն Այնթապէն գրուած չորս անտիպ փաստաթուղթեր, ուր նկարագրուած են քաղաքին մէջ պատահած «Բէլլէճի»ի դէպքը իր բոլոր մանրամասնութիւններով, տեղւոյն հայութեան մօտ տիրող վախի ու սարսափի մթնոլորտը, կոտորածը կանխելու համար ձեռք առնուած միջոցառումները, եւ այլն:

Հրատարակուող փաստաթուղթերուն կցուած են համապատասխան ծանօթագրութիւններ:

Բանալի բառեր՝ 1909 թ. Կիլիկեան կոտորածներ, Այնթապ, փաստաթղթեր:

UNPUBLISHED DOCUMENTS ABOUT THE CONDITION OF AINTAB ARMENIANS
ON THE DAYS OF CILICIA MASSACRES

Mihran Minasyan

SUMMARY

This article presents materials concerning the situation of the Armenians of the town of Aintab during the massacre in Cilicia in 1909. In particular, attempts were being made to organize a general massacre in Aintab, following the example of the massacre in Adana. After assessing the losses of the Armenians in Aintab in 1909, four previously unpublished documents from Aintab are presented, depicting the events that took place in these days: the atmosphere of fear and horror prevalent among the local Armenians, measures taken to prevent large-scale massacres, etc.

Documents are provided with relevant references.

Keywords: Cilician massacres of 1909, Ayntab, documents.

НЕОПУБЛИКОВАННЫЕ ДОКУМЕНТЫ О ПОЛОЖЕНИИ АРМЯН АЙНТАБА В ДНИ
КИЛИКИЙСКОЙ РЕЗНИ

Мигран Минасян

РЕЗЮМЕ

В настоящей статье представлены материалы, касающиеся положения армян города Айнтаб во время резни в Киликии 1909 года. В частности освещены попытки местного мусульманского элемента организовать общую резню в Айнтабе по примеру резни в Адане. После рассмотрения потерь армянства в

Айнтабе в 1909 г., представлены четыре ранее неопубликованных документа из Айнтаба, в которых подробно описываются имевшие место в эти дни события: атмосфера страха и ужаса, царившая в среде местных армян, предпринятые по предотвращению широкомасштабной резни меры и т.д.

Документы снабжены соответствующими примечаниями.

Ключевые слова: Киликийская резня 1909 г., Айнтаб, документы,

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Տաթև Արշակյան

Հայոց ցեղասպանության ամենասոսկալի դրվագներից մեկը Յոզդաթի հայ բնակչության կոտորածն էր: Ի տարբերություն Օսմանյան կայսրության այլ բնակավայրերի հայության, որոնց տեղահանում էին և տարագրում դեպի Միջագետքի անապատները, Յոզդաթի հայությունը տեղում ոչնչացվեց: Յոզդաթի Բողազլյան գյուղաքաղաքի հայության զինաթափման, ոչնչացման և վերապրողների ճակատագրի մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդերում պահվող Բերբերյանների ընտանեկան հուշերը¹, լուսանկարները², ինչպես նաև Հայոց ցեղասպանության վերապրող Վերոնիկա Բերբերյանի տեսագրությունները³: ՀՅԹԻ-ին մեծ կարևորություն ունեցող այս հուշերը հանձնել է Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներ Ալեքսան Մկրտչյանի և Վերոնիկա Բերբերյանի որդին՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ներսես Մկրտչյանը, ով իր մոր, հոր, քեռու՝ Հարություն Բերբերյանի վկայություններն ամփոփել է «Կյանքի և մահվան սահմանագծում. սպանդանոցից մազապուրծների հուշերը (1915-1923)» անվանումը կրող հուշագրության մեջ⁴: Առանձնահատուկ տեղ է գրավում Վերոնիկա Բերբերյանի վկայությունը, ով հանգամանորեն գրի է առել իրենց ընտանիքի, Բողազլյանի հայ բնակչության ազգային ավանդույթների և հայերի կոտորածների մասին պատմություններ⁵, Բողազլյանի բարբառով պատմվածքներ⁶ և ասացվածքներ⁷, ինչպես նաև հայրենասիրական երգեր և բանաստեղծություններ⁸:

Բերբերյանների հուշերում տեղ գտած պատմությունները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ խաղաղ ժամանակահատվածի պատմություններ՝ Բողազլյան գյուղաքաղաքը, հայրենի տունը, ընտանիքը և տեր Հակոբ քահանայի կերպարը, այնու-

¹ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 81, թպ. 242:

² ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 1, թպ. 627:

³ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 4, ֆ.հ. 12, 13, 14:

⁴ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, «Կյանքի և մահվան սահմանագծում. սպանդանոցից մազապուրծների հուշերը (1915-1923) »:

⁵ Մանրամասն տե՛ս ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, թպ. 81, ֆ.հ. 100, «Վերոնիկա Բերբերյանի հուշերը Գամիրքի Բողազլյան քաղաքից, 1905-1999», բժ. 8, թպ. 81, ֆ.հ. 101, «Կյանքի և մահվան սահմանագծում. սպանդանոցից մազապուրծների հուշերը», բժ. 8, թպ. 242, ֆ.հ. 386, 387, «Կյանքի և մահվան սահմանագծում. սպանդանոցից մազապուրծների հուշերը», բժ. 4, ֆ.հ. 12, 13, 14, «Վերոնիկա Պերպերյան», Վ. Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն. Ականապես վերապրողների վկայություններ*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2011, էջ 366-373, *Պարամազիր Եղգկապի եվ Շրջակայից (Գամիրք) Հայոց*, Պէյրուք, 1988, էջ 547-552:

⁶ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 100, թպ. 81, էջ 149-164:

⁷ Նույն տեղում, էջ 59, 60:

⁸ Նույն տեղում, էջ 65-82, 140-146:

հետև՝ զանգվածային կոտորածի մանրամասներ, Բողազլյանի կայմական Քեմալի գործունեությունը, ջարդերից խուսափելու նպատակով հայերի գործողությունները, ինչպես նաև դրացի թուրքերի վարքագիծը հայերի բնաջնջման ժամանակ: Հարկ է նշել, որ Վերոնիկյան պարբերաբար անդրադարձել է իր մեծ հորեղբոր՝ Հարությունի գործունեությանը, ով փրկել է տասնյակ հայերի կյանք:

Խաղաղ ժամանակահատվածի պատմություններ՝ Բողազլյան գյուղաքաղաքը, Բերբերյանների տունը և տեր Հակոբ քահանան

1915 թ. նախօրեին Բողազլյանն ուներ 700 հայկական և 400 թուրքական տուն⁹: Վերոնիկյան պատմում է, որ այն բաղկացած էր երկու մասից՝ հայկական և թուրքական թաղից, հայերի տները քարից էին շինված, երկհարկանի էին¹⁰: Բողազլյանում 1865 թ. ավարտվում է Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը¹¹: Եկեղեցու քահանան էր տեր Հակոբը (Ներսես), ով Բերբերյանների տոհմի նահապետն էր և Վերոնիկյայի պապը: Նա հուշերում ներկայացվում է որպես իմաստուն և աստվածավախ անձնավորություն, հարգված ինչպես հայերի և թուրքերի, այնպես էլ իշխանությունների կողմից: Ներսեսը ծնվում է, երբ նրա հայրը՝ Գասպարը, արդեն 80 տարեկան էր: Որպես Աստծո կողմից պարզև՝ երեխային նվիրում են եկեղեցուն: Հետագայում Ներսես Բերբերյանն ընտրվում է Ս. Աստվածածին եկեղեցու քահանա՝ ստանալով Հակոբ եկեղեցական անունը: Քահանայի գերդաստանը շատ մեծ էր. տեր Հակոբ և Նարիկ Բերբերյանները, ում Վերոնիկյան իր հուշերում հաճախ կոչում է «իրիցկին», ունեին հինգ զավակ՝ Գասպարը¹², Հարությունը¹³, Խաչերը¹⁴, Աննան¹⁵ և Նազելին¹⁶: Գասպար Բերբերյանի և նրա կնոջ՝ Ֆլորայի դուստրն էր Վերոնիկյան (ծնվել է 1905 կամ 1906 թվականին Բողազլյանում, մահացել՝ 1999 թ. Երևանում, ամուսնացել է Հայոց ցեղասպանության վերապրող սիվրիհիսարցի Ալեքսան Մկրտչյանի հետ): Իր ընտանիքի խաղաղ օրերի մասին հիշելիս Վերոնիկյա Բերբերյանը գրում է. «Մեր տան հյուրերն անպակաս էին, ինչպես թուրք պաշտոնյաներն, այնպես էլ հայոց դպրոցի ուսուցիչներ, թաղային խորհրդի անդամներ, այլ զավառներից ժամանած հյուրեր... Քահանա պապիկս ինձ շատ էր սիրում իմ ուշիմության համար և ծնկներին նստեցրած՝ 2-3 տարեկանից սկսած սովորեցնում էր մեր ազգային երգերը ... Մեր ընտանիքում գրագետ էին տղամարդիկ,

⁹ *Պատմագիրք Եղեղևարի եվ Շրջակայից (Գամիրք) Հայոց*, խմբ.՝ Դարեան Ա., Երկանեան Ա., Պեյրուք, 1988, էջ 83:

¹⁰ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, քժ. 4, ֆ.հ. 12:

¹¹ *Պատմագիրք Եղեղևարի եվ Շրջակայից (Գամիրք) Հայոց*, էջ 84:

¹² Գասպար Բերբերյանը եղել է տեր Հակոբ քահանայի ավագ որդին, ծնվել է 1890 թ. Բողազլյանում և մահացել է 1928 թ. Նախիջևանում:

¹³ Հարություն Բերբերյանը ծնվել է 1894 թ. Բողազլյանում, մահացել է 1978 թ. Երևանում: Բողազլյանում աշխատել է որպես վարսավիր, իր արհեստի շնորհիվ կարողացել է փրկվել կոտորածից:

¹⁴ Խաչեր Բերբերյանը ծնվել է 1901 թ. Բողազլյանում, մահացել է 1960-ական թ.թ. Բեյրութում:

¹⁵ Աննա Բերբերյանը ծնվել է 1892 թ. Բողազլյանում, մահացել է 1960-ական թ.թ. Կ.Պոլսում:

¹⁶ Նազելի Բերբերյանը ծնվել է 1898 թ. Բողազլյանում, մահացել է մինչև 1915 թ.:

սակայն կանայք՝ ոչ: Հայրս քեմանի (ջութակ) էր նվագում, հորեղբայրս վարսավիր էր (բերբեր)»¹⁷: Մինչև 1914թ. Բողազլյանում իգական դպրոց չկար, այդ պատճառով Վերոնիկայի կրթությամբ զբաղվում էր տեր Հակոբը: «Մի օր պապս մի գրություն մեկնից ինձի, յիս կարօղացա կարդալ նրա գիրը, պապս շատ ուրախացավ և խօստացավ ինձի ուսում տա, մինչև ուսուցչուհի լինիմ: 1914 թվին արդին իգական սիոնի դպրոց բացվից, գնում էի արաջին խումբ, լավ էի սովորում, բայց ավաղ սկսից կօտորածը: Ոչ դասատու մնաց, ոչ էլ պապս մնաց, բոլորին կոտորիցին: Այդպիս էլ յիս մնացի անգրագետ, բայց գիրը չի մօրացա»¹⁸: Իր հոր՝ Գասպարի մասին Վերոնիկան պատմում է, որ Բալկանյան պատերազմի ժամանակ (1912-1913թթ.) նրան զորակոչում են բանակ, որտեղից վերադառնալուց մի քանի ամիս անց՝ Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես նորից զորակոչվում է բանակ: Գասպար Բերբերյանը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Դարդանեղի առաջին հիվանդանոցի գլխավոր բժշկի քարտուղարն էր¹⁹: 1920 թ. նա Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի զորքի կազմում էր, որն արշավում էր դեպի Արևելյան Հայաստան: Խույս տալով զինվորական ծառայությունից՝ Գասպար Բերբերյանը հաստատվում է Նախիջևանում: Այստեղ անցնում է աշխատանքի որպես գրագիր և թարգմանիչ՝ այլևս երբեք չվերադառնալով Թուրքիա²⁰:

Վերոնիկան հայտնում է, որ Բերբերյանների ընտանիքը երկու պատճառով է փրկվել կոտորածից: Առաջինը՝ որպես օսմանյան զորաբանակում ծառայող բարձրաստիճան անձի ընտանիք՝ տան դարպասին փակցրել էին «Պահպանվում է պետության կողմից» հրամանը: Եվ երկրորդ՝ հրաման տրվեց, որ արհեստավորներին ողջ են թողնում: Ինչպես նշվեց, Հարություն Բերբերյանը հմուտ վարսավիր էր, և նրա ծառայություններից էին օգտվում նաև տեղի թուրք պաշտոնյաները: Այսպես Բերբերյանները կարողանում են փրկվել, սակայն ջարդի հենց առաջին օրերին զոհ է գնում ընտանիքի մեծը՝ տեր Հակոբ քահանան:

Զանգվածային կոտորածի տեսարանները և Բողազլյանի կայմական Մեհմեդ Քեմալի գործունեությունը

1914 թ. հոկտեմբերին Յոզդաթի և շրջակա հայությանը հայտարարվում է, որ հայրենիքի պաշտպանության համար 18-45 տարեկան տղամարդիկ զորակոչվում են բանակ²¹: 1915 թ. գարնանը Բողազլյանի կայմական (գավառակապետ) է նշանակվում Մեհմեդ Քեմալը²²: 1915 թ. օգոստոսի 6-ից մինչև սեպտեմբեր ամսվա վերջը՝ շուրջ յոթ շաբաթ Քեմալը նաև Յոզդաթի մութասարիֆի (գավառապետ) տեղակալն

¹⁷ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 10-11:

¹⁸ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 100, թպ. 81, էջ 83:

¹⁹ Պապրմագիրք Եոզկարի եւ Շրջակայից (Գամիրք) Հայոց, էջ 547:

²⁰ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 11:

²¹ Ա. Երկանեան, *Եոզկարի եւ Շրջակայքի Հայութեան Միասոր Սպանդը, Յուշամարեան Մեծ Եղեռնի, Զարթոնք, Պէյրութ, 1965*, էջ 320:

²² V. Dadrian, T. Akcam, *Judgment at Istanbul*, Berghahn Books, New York, p. 110.

էր²³: Քեմալի մասին հիշելիս Վերոնիկան գրում է. «Նա նշանակվել է իթթիհատականների կողմից՝ հայերի կոտորածը տեղում իրականացնելու համար: Մեկ շաբաթ անց Իբրահիմ Բեյը և գայմագամ Քեմալը մեր տուն հարգանքի այցելության եկան: Սակայն դա ոչ թե հարգանքի, քաղաքավարության այց էր, այլ՝ հետախուզության ... Նրանք մտովի արդեն արական սեռի չափահասների ցուցակն էին կազմում»²⁴: Երբ կայմականը հեռանում է Բերբերյանների տնից, տեր Հակոբն անհանգստացած ասում է. «Այսպիս ճահիլ գայմագամ չէր յիկիլ, վիրջ բարին ըլլա»²⁵:

1915 թ. հուլիսին Բողազլյան գյուղաքաղաքում սկսվում են հայ տղամարդկանց հավաքագրումը և սպանությունները: Այս դեպքերի մասին Հարություն Բերբերյանը գրում է, որ թաքցրած զենքերի բռնագրավման պատրվակով սկսվում են հայ տղամարդկանց ձերբակալություններն ու խոշտանգումները²⁶: Նրանց հավաքում են ոչ միայն փողոցներից, այլև հանդերից և դաշտերից, իսկ երեկոյան բոլորին կապկաված ձեռքերով տանում են քաղաքից դուրս՝ Ղարակոչ կոչվող ձորը: Վերոնիկա Բերբերյանը գրում է, որ սպանելուց առաջ մարդկանց մերկացնում էին, կողոպտում նրանց մոտ եղած դրամն ու զարդերը, ապա սկսում էին նրանց սպանել մանգաղներով, մսի մեծ տապարներով, դաշույններով, կացիններով, սվիններով և անգամ քարերով՝ ջախջախելով գանգերը²⁷: Բողազլյանի կայմական Քեմալի հրահանգով ձերբակալությունները շարունակվում են գիշեր ու ցերեկ: Հիշելով հայ տղամարդկանց ձերբակալությունները՝ Վերոնիկան գրում է. «Մունետիկները հայտարարում էին փողոցներում 18-60 տարեկաններին կառավարության շենքի մոտ հավաքվելու մասին, միաժամանակ ոստիկաններն էլ տներից գալիս և տանում էին բոլորին անխնա... Բանակ կանչվողների մեջ հաշմանդամներ կային ... Շատ խորհրդավոր և զարմանալի էր այս գորահավաքը»²⁸: 1915 թ. հուլիսի 5-ին Բողազլյանում ձերբակալվում է 350 տղամարդ, հաջորդ օրը՝ ևս 300-ը, որոնց մեջ էր նաև քահանա Հակոբ Բերբերյանը: Պապի ձերբակալության և սպանության մասին Վերոնիկան պատմում է. «Կիրակի առավոտյան պապս գնաց եկեղեցի պատարագ անելու, և ինչ իմանար խեղճ մարդը, որ դա նրա վերջին պատարագն է լինելու ... Նրան նույնպես տարան, և նա այլևս չվերադարձավ տուն՝ սուգի մատնելով նաև մեր ընտանիքը ... Մի թուրք ասում է պապիկիս,– Փափա՛գ էֆենդի, մոտիկացավ վերջին ժամդ, ի՞նչ ունիս ըսելիք: –Պապիկս ծունկ կշոքե, կաղոթե: Անտեղեն թուրք գինվոր մը կացինով կհարվածե, պապիկիս գլուխը կգլորվի գետին: Կսկսին ֆուտբոլ խաղալ իմ խելացի պապիկիս գլխուն հետը»²⁹: Տեր Հակոբ քահանայի սպանության մասին Հարություն Բերբերյանը գրում է. «Կը ձերբակալեն շուրջ 300 այր, որոնց մեջ էր

²³ Նույն տեղում:

²⁴ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 16, 17:

²⁵ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 100, թպ. 81, էջ 2:

²⁶ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 140:

²⁷ Նույն տեղում, էջ 19, 20:

²⁸ Նույն տեղում, էջ 17, 18:

²⁹ Վ.Սվազլյան, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2011, էջ 370:

հայրս՝ Տ. Յակոբ Ա. Քահանայ Պերպերեանը: Ասոնք ալ կը ջարդեն ձորին մեջ... ասոնց հետ բաւական ժամանակ կը զուարճանան ծաղր ու ծանակ ընելով խեղճ գոհերը: Թոյլ կու տան, որ վերջին գոհը՝ Տէր Յակոբ աղօթք մը մրմնջէ, եւ պահպանիչ մը կարդայ դիակներուն վրայ...»³⁰:

Թուրք ջարդարարները ցուցակագրել էին հայ տղամարդկանց, հաջորդ օրերին նրանք ամենուր որոնում էին թաքնված անձանց: Բերբերյանները որոշում են թաքցնել 20-ամյա Հարությունին: Թաքստոցը պատրաստվում է տան ներսում. մարագի պատի մեջ փոս է փորվում, ապա քարերը դարձյալ հետ են դրվում պատի շարվածքի մեջ: Տան պատերն անտաշ քարերից էին, ուստի թաքստոցի տեղը նկատելի չէր: Այսպես Հարություն Բերբերյանը շուրջ 50 օր մնում է իր թաքստոցում՝ խույս տալով ձերբակալություններից: Շուտով թուրքերը դիմում են խորամանկության՝ հայտարարելով, որ հայերին այլևս վտանգ չի սպառնում: Ջարդարարները սկսում են նաև թաքստոցներից դուրս եկածների սպանդը: Հարությունի մայրը գնում է իրենց ծանոթ թուրք հազարապետի մոտ՝ խնդրելով խնայել իր որդուն: Հազարապետը խոստանում է օգնել նրանց, և շնորհիվ այն հանգամանքի, որ Հարությունը տիրապետում էր արհեստի, նա ողջ է մնում:

Բողազլյանում ջարդերի երկրորդ ալիքը սկսվում է 1916 թ. փետրվարին³¹: Տղամարդկանց հետ հաշվեհարդար տեսնելուց հետո սկսվում է անպաշտպան բնակչության սպանդը: Կանանց և երեխաներին լցնում են սայլերի մեջ և տանում մոտակա Քելլերի ձորը³²: Կայմակամի հրամանով բնակչությունից նախապես բռնի ուժով հավաքել էին ոսկեղենն ու գոհարեղենը, բազմաթիվ կանայք և երեխաներ բաժանվում են չերքեզներին և քրդերին, իսկ մնացածները կոտորվում են³³:

Յոգդաթի հայությանը ոչնչացնելու համար Մեհմեդ Քեմալն օգտագործում է ոչ միայն իր տրամադրության տակ գտնվող մարդկանց, այլև կոչ է անում բոլոր թուրքերին ոտքի կանգնել³⁴: Վերոնիկան Բողազլյանի կայմակամի մասին ասում է, որ 1916 թ. մարտին վերջինս հրամայեց. «Մեկ կիլոգրամ հայու միս ողջ չափտի մնա, բոլոր հայերին պիտի կոտորեք»³⁵: Անդրադառնալով Բողազլյանի կայմակամ Քեմալի գործունեությանը՝ Հարություն Բերբերյանն իր հուշերում մեջբերում է նրա ճառը՝ ուղղված թուրքերին. «Ո՛վ Մոհամմետի ընտրեալներ, այսօրուրն է կը սկսինք կեավուրներու կիներուն եւ մանուկներուն ոչնչացման: Ձեզի կը հրահանգեմ չխնայել ոչ մէկուն, ո՛չ ծերերուն, ո՛չ երիտասարդներուն, ո՛չ մանուկներուն, ո՛չ իսկ ծծկեր երեխաներուն: Ատոր փոխարէն Մոհամմետը ձեզ պիտի վարձատրէ իր երանաւէտ դրախտով: Այն թուրքը որ հեռու կը մնայ այս սրբազան պարտականութենէն, դժոխքի բաժին կը դառնայ... Բացի այդ, հնազանդ կ'ըլլաք Ներքին Գոր-

³⁰ Պատմագիրք Եոզկատի եւ Շրջակայից (Գամիդք) Հայոց, էջ 539:

³¹ Յուշամատենան Մեծ Եղեռնի, էջ 324:

³² ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 387, թպ. 242, էջ 5:

³³ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 387, թպ. 242, էջ 6:

³⁴ Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1988, էջ 23:

³⁵ Վ.Սվազլյան, նշվ.աշխ., էջ 370:

ծոց նախարար՝ Թալեաթ փաշայի սրբազան հրամանին, որ է – հայերէն մէկ օխս միս չձգել»³⁶։ Հուշերում հիշատակվում է Մեհմեդ Քեմալի կողմից արված մէկ այլ արտահայտություն ևս. «Ես Բողազլանի հայերին կոտորել տվեցի և բարձրացա մյութեսարըֆի փոխանորդության, հոս ալ (Յոզղաթի մեջ) կը կոտորեմ և կը բարձրանամ մյութեսարըֆի կամ վալիի պաշտոնին»³⁷։

Հարկ է նշել, որ 1919 թ. Կ.Պոլսի թուրքական իշխանությունների կողմից սկսվեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և պատասխանատուների՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամների, շրջանային պաշտոնյաների դատավարությունը։ 1919 թ. ապրիլի 8-ին Կ.Պոլսի ռազմական արտակարգ ատյանի կողմից քրեական օրենսգրքի 170 և 171-րդ հոդվածների հիման վրա Մեհմեդ Քեմալը ճանաչվեց մեղավոր Բողազլանում հայ բնակչության հանդեպ իրականացված զինված հարձակումների, կոդուպուտի և կանխամտածված սպանությունների մեջ³⁸, երկու օր անց՝ ապրիլի 10-ին, նա Ստամբուլի Բեյազիդ հրապարակում կախաղան բարձրացվեց³⁹։ Ինչպես Վերոնիկան է նշում իր հուշերում, մահվանից առաջ արտասանված ճառում Մեհմեդ Քեմալն ասում է, որ ինքն անմեղ է՝ արժանի հուշարձանի, այլ ոչ թե կախաղանի⁴⁰։

Պատմություններ ջարդերից խուսափելու նպատակով հայերի գործած ինքնասպանությունների մասին

Այդ օրերին Բերբերյանների տանն ապաստանել էին բազմաթիվ հայեր՝ հույս ունենալով փրկվել ջարդերից։ Հարությունին է այցելում ոստիկանության պետը և ասում, որ նրանց տունը խնայել են ջարդերից, սակայն իրենց հարկի տակ պատուպարված մարդկանց պետք է դուրս հանել, այլապես Բերբերյաններն էլ կսպանվեն։ Սրան հետևում է Հարությունի կտրուկ պատասխանը. «Բոլորն էլ իմն են»⁴¹։ Վերոնիկան պատմում է. «Ասել էին, որ առավոտյան սայլերը գալու են մնացած հայերին տանելու։ Երբ դարպասից տեսանք, որ սայլերը մոտեցան հարևան տներին, լացն ու ողբը սկսվեց մեր տան մեջ։ Միայն աղջիկներն ու հարսները թվով 25 հոգի էին՝ չհաշված աղջնակները, իսկ տղամարդիկ ընդամենը երկու հորեղբայրներս էին»⁴²։ Հարությունը վճռեց իր ընտանիքն անպատիվ մահից փրկելու համար իր ձեռքերով թունավորել իր կնոջը, երեխաներին ու մյուսներին։ Կապույտ քարը (պղնձարջասպ) ծեծելով և խառնելով խաշխաշի (կակաչ) յուղին՝ նա թույն պատրաստեց և հրամայեց անմիջապես ընդունել բոլորին։ Առաջինը թույնը խմեցնում է իր կնոջը։ Մի քանի րոպե անց փողոցից բացականչություններ են լսվում, որ հայերին կառավարությունը ներում է շնորհում։ Տեսնելով, որ սայլերն արդեն չէին մոտե-

³⁶ Պատմագիրք Եոզկատի եվ Շրջակայից (Գամիրք) Հայոց, էջ 542։

³⁷ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, քժ. 8, ֆ.հ. 387, թպ. 242, էջ 5։

³⁸ V. Dadrian, T. Akçam, *Judgment at Istanbul...*, p. 111.

³⁹ T. Akçam, *The Young Turks' Crime Against Humanity*, Princeton University Press, 2012, p. 212.

⁴⁰ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, քժ. 8, ֆ.հ. 387, թպ. 242, էջ 1։

⁴¹ Նույն տեղում։

⁴² ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, քժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 25, 26։

նում տներին, Հարությունն արագ հակաթույն է պատրաստում: Նա, ձվի դեղնուցը հարելով, խմեցնում է կնոջը: Վերոնիկան գրում է. «Մենք գնացինք բակի կողմը՝ մեզ մոտ ապաստանած բարեկամների վիճակն իմանալու, և ինչ տեսարան բացվեց մեր առջև: Նրանք նույնպես որոշել էին ինքնասպան լինել, սակայն ոչ թե թույն խմելով, այլ կախվելով՝ մտածելով, թե այսպես ավելի արագ կլինի մահը: Նրանց տատիկը իր ձեռքով առաստաղի գերաններից պարաններ էր կապել և երեխաներին, հարս-աղջիկներին հերթով կախել էր: Մայրը՝ երեխաներին, տատը մայրերին էր կախել: Մեծ մայրիկը վերջինն իրեն վիզն էր գցել օդակը, բայց պարանը, ձգվելով նրա ծանրության տակ, եկել հասել էր գետնին: Եվ այսպես մաքառում էր նա կյանքի և մահվան միջև կիսախեղդված վիճակում... Լուրը հասավ ժանդարմներին, սրանք բերին սայլերը և մեղադրելով պառավին՝ լցրին դիակները սայլերը, և մի պարան էլ պառավի ոտքին կապելով՝ տարան»⁴³:

Տանջանքներից և անպատվությունից խուսափելու համար ինքնասպանության են դիմում նաև Գասպար Բերբերյանի քեռու՝ Սուքիասի աղջիկն ու թոռնուհին՝ Փրլանդին ու Եսթերը: Վերոնիկան գրում է. «Թուրք բեկի կինը գալիս է Սուքիաս քերու տունը և տանում է 14 տարեկան Փրլանդին և Յիսթերին: Կանանց կոտորածը սկսվում է, այս աղջիկները մտածում էն իրինց հարազատներին կը կոտորին և իրինց կը թուրքացնին: Իրինց մօտ պահած թույն էն ունինում և խմում էն յիրկուսով: Էլմաս խանումը սպասում է, սրանք քնից չին վիր կինում, գալիս է, վիրմակը բացում ինչ տիսնի. յիրկուսով միրած են»⁴⁴:

Մեկ այլ դրվագ է Հաջի Գրիգորի ընտանիքի ճակատագիրը: Իր հուշերում Վերոնիկան պատմում է, որ Հաջի Գրիգորն ուներ երեք երեխա: Մեծը Շահանիկն էր, ում հետ Վերոնիկան հասակակից էր, իսկ մյուս երկուսը տղաներ էին: Կոտորածի առաջին օրը ընտանիքի հորը սպանել էին: Մի ոստիկան գալիս է նրանց տուն՝ խոստանալով, որ կնոջն ու նրա երեխաներին ինքը կպահի: Մայրը համաձայնում է, չնայած թուրքի տված խոսքին չի հավատում: Ժանդարմի դուրս գնալուց հետո կինը թույն է խմում: Մի թուրք, իմանալով եղելությունը, գալիս, տան ապրանքը և երեխաներին վերցնում տանում է: Որոշ ժամանակ անց երկու փոքրերին դուրս է հանում տնից, իսկ Շահանիկին պահում տանը որպես ծառա⁴⁵:

Այս երեք պատմություններն առանձնակի տեղ են զբաղեցնում Վերոնիկա Բերբերյանի հուշերում: Նախ՝ ակնատես ենք լինում այն երևույթին, որ հայ կանայք կոտորածների տարիներին գերադասում էին մեռնել, ինքնասպանություն գործել, քան թե ընկնել թուրք ջարդարարի ձեռքը: Սա է թերևս պատճառը, որ հայերը, կանխագգալով դեպքերի նմանատիպ ընթացքը, իրենց տներում ունեցել են թույներ և հոգեպես պատրաստ են եղել անհրաժեշտության դեպքում դա ընդունել: Երկրորդը բոլոր այս դեպքերը պատմելիս Վերոնիկան շեշտում է, որ հայերը ինքնասպանություն են գործում նույն տեսակի թույնն ընդունելով: Հուշերից պարզ է

⁴³ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 26, 27:

⁴⁴ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 100, թպ. 81, էջ 21, 22:

⁴⁵ Նույն տեղում, էջ 130, 131:

դառնում, որ թույնի այս եղանակի մասին Բողազյանի հայերը տեղյակ էին, գիտեին նաև, թե որն է հակաթույնը: Տանը տեղի ունեցած կանանց ինքնասպանության և հենց իրենց՝ Բերբերյանների ինքնասպանության փորձը նկարագրելիս Վերոնիկան նշում է, որ հենց իրենք և տանն ապաստանած հարազատներն էին, որ հուշեցին Հարությունին այդ թույնի գոյության մասին. «Նրանք հորեղբորս ասացին, որ կապույտ քարից, որով խաղողի վազերն էինք ներկում, և խաշխաշից թույն պատրաստի»: Երբորդ պատմության մեջ Հաջի Գրիգորի կինը նույնպես ընդունում է այդ թույնը: Վերոնիկան պատմում է, որ երբ Հաջի Գրիգորի դուստրը՝ Շահանիկը, տեսավ մորը մահամեծձ, վազելով եկավ իրենց մոտ՝ օգնություն խնդրելու: Վերոնիկայի տատիկը նրան հակաթույն՝ ձվի դեղնուց է խմեցնում, սակայն արդեն ուշ էր, և կինը մահանում է:

Դրացի թուրքերի վարքագիծը հայկական կոտորածների ժամանակ

Բերբերյանների հուշերում բազմաթիվ են տեղի թուրք բնակչության՝ հայկական կոտորածներին մասնակցության մասին պատմությունները: Ընդ որում նրանք աչքի են ընկնում իրենց դաժանությամբ և կրոնական մոլեռանդությամբ: Այսպես Վերոնիկան, անդրադառնալով Եսթերի և Փրլանդի պատմությանը, հավելում է. «Բեկին կինը դուռը կբանա, կտեսնա, որ Սուքիասին աղջիկները փրփուրը բերանին փոված են: Բեկին կնիկը անտարբեր կըսե. – Դարթ գյավուր էին. թուրքություն չընդունեցին՝ մեռան, տարե՛ք, տվեք շներուն, թող հոշոտեն»⁴⁶:

Յոզղաթի հայության սպանդի մասին Վերոնիկան պատմում է, որ մարդկանցով և նրանց ունեցվածքով բեռնավորված սայլերը կանգ են առնում Քելլերի գյուղի ձորի մոտ, հանդիսավոր մի գորգ են փռում գետնին և հրամայում բոլորին մերկանալ, հանել զարդեղենը և դնել գորգի վրա: Ապա թուրք խուժանի պարագլուխը կատարում է առաջին «մատաղը». կտրում է մի հայի գլուխ և դիմում թուրքերին, – «Դե՛՛ առյուծներս, որքան շատ հայ կոտորեք, այնքան շուտ դրախտ կերթաք»: Վերոնիկան գրում է. «Այս խոսքերին էին սպասում արյան ծարավ մարդասպանները, որոնք ոչ միայն սկսեցին մորթել, այլև զոհերի փորոտիքներում ոսկի և դրամ էին որոնում»⁴⁷: Իր հուշերը շարադրելիս Վերոնիկան նշում է. «Հարևան թուրքերն առաջարկում էին հայերին մեկ երեխա որդեգրել ու պահել, եթե ծնողը իր տունն ու ունեցվածքը կտար նրանց»⁴⁸:

Թուրքական դաժանություններին և կրոնական մոլեռանդությանն է անդրադառնում նաև Հարություն Բերբերյանը: Նա նշում է, որ անգամ զառամյալ թուրքերը, որ անգոր էին ջարդերին մասնակցելու, դրախտին արժանանալու համար ցանկանում էին գեթ մեկ–երկու հոգու սպանել⁴⁹: Դարակոչ գյուղի բնակիչ 85–ամյա Էլիֆ Օղլին իր թոռներին ասում է. «Սայլը լծեք, ինձ տարեք ջարդի վայրը, որպեսզի

⁴⁶ Վ.Սվազյան, նշվ. աշխ., էջ 371:

⁴⁷ ՀՅԹԻ–ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 55, 56:

⁴⁸ Նույն տեղում, էջ 23:

⁴⁹ Նույն տեղում, էջ 165:

մասնակցեմ այդ սուրբ գործին»: Քանի որ ինքը ծեր էր և սայլից իջնել չէր կարող, թոռները ձեռքերը կապկպած երկու հայի բերում պառկեցնում են սայլի վրա, և ծերուկը կտրում է նրանց գլուխները⁵⁰:

Հարությունը բերում է մեկ այլ օրինակ ևս, թե ինչպես կայմական Քեմալը տեսնելով, որ թուրք հոջաներն անտարբեր նստած են, ոգևորում է նրանց՝ ասելով, որ յուրաքանչյուր հավատացյալ թուրքի պարտքն է մասնակցել «սուրբ գործին» և դրա համար նրանք կարժանանան հավիտենական դրախտի⁵¹:

Վերոնիկյան և Հարությունը գրի են առել Բողազլանի միակ բժշկի՝ Գրիգոր Էֆենդու պատմությունը: Տեղի մեծահարուստ Իբրահիմ բեյի աղջիկը տեսնելով, որ բժիշկը նույնպես դատապարտված է մահվան, հիշեցնում է հորը, որ նա քսան օր իր անկողնուց չի հեռացել, երբ վերջինս ծանր հիվանդ է եղել, և փրկել է իր կյանքը: Գրիգոր Էֆենդուն տանում են կայմականի մոտ, վերջինս նրանից պահանջում է իր համար դեղատոմս գրել: Բժիշկը, ում աչքի առջև վայրկյաններ առաջ դաժանաբար մարդկանց էին սպանում, չի կարողանում ո՛չ խոսել, ո՛չ էլ ընկալել, թե ինչ է կատարվում իր շուրջը: Կայմականն ասում է, որ բժիշկը խելագարվել է, այնպես որ անօգուտ է նրան կենդանի թողնելը:

Հուշերում պահպանված այս պատմությունները ևս մեկ անգամ ապացուցում են այն հանգամանքը, որ հայկական կոտորածներն իրականացնողները եղել են ոչ միայն թուրք զինվորները, ոստիկանները և պետական կառույցի աշխատակիցները, այլև հասարակ բնակչությունը: Բացի տղամարդկանցից, ջարդերին մասնակցում են ծերերը, կանայք, հաճախ նաև երեխաները: Նրանց հիմնական շարժառիթը հայերի գույքին և հարստությանը տիրանալն էր: Վերոնիկյան հաճախ է նշում, որ թուրքերը հայերից պահանջում էին իրենց հանձնել շարժական և անշարժ գույքը՝ պատճառաբանելով, որ, միևնույնն է, հայերը վաղը մեռնելու են: Ընդ որում նման գործողությունները պետությունն ամրագրում էր կրոնով՝ հայերի սպանողը անվանելով «սուրբ գործ», իսկ այն թուրքը, ով չէր մասնակցում դրան, կամ ավելին՝ փորձում էր ինչ–որ կերպ օգնել հայերին, հավատացյալ մուսուլման չէր համարվում և շատ հաճախ պատժվում էր: Փաստորեն այն թուրքը, ով սպանում էր թեկուզ մեկ հայ, կոդուպտում նրան, տիրանում գույքին, թրքացնում կամ ստրկացնում հայ կանանց և երեխաներին, ապահովում էր իր համար ինչպես բարեկեցիկ կյանք, այնպես էլ արժանանում էր «երկնային դրախտի»:

Հայ կանանց և երեխաների փրկության դրվագները Վերոնիկյա Բերբերյանի հուշերում

Տվյալ խմբի պատմությունները գլխավորապես կապված են Վերոնիկյայի մեծ հորեղբոր անվան հետ: Հարություն Բերբերյանը ավագ եղբոր բացակայության պայմաններում և հոր դաժան սպանությունից հետո իր վրա է վերցնում ընտանիքի հոգը: Բերբերյանների տունն ապահով վայր էր տեղի հայության համար, ուստի

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

երկար տարիներ բազմաթիվ հայեր ապաստանում էին նրանց մոտ: Ինչպես Վերոնիկան է նշում, Հարություն Բերբերյանը դարձել էր որբերին և այրիներին ապաստան տվող և մահից փրկող մի անձնավորություն, որի մասին պետք է իմանան մարդիկ: Վերոնիկա Բերբերյանի հուշերում շատ են պատմությունները հորեղբոր մասին, ով, վտանգելով իր և իր ընտանիքի ապահովությունը, ամեն կերպ փորձում է օգնել տեղի հայությանը: Իր հորեղբոր մասին նա նշում է, որ որբացած երեխաներին Հարությունը բերում էր իրենց տուն, սովորեցնում իր արհեստը՝ վարսավիչությունը, որպեսզի հետագայում կարողանան գումար վաստակել⁵²:

Վերոնիկան գրում է. «Երկրորդ ջարդից հետո մեծ հորեղբայրս մեր տուն բերեց մի մարդու՝ ասելով, որ նա աքսորյալ է Մերզաֆոնից... Եթե կհամաձայնեք մեր սենյակներից մեկը նրան տանք: Տատիկս սիրով համաձայնեց: Նա մեր տան անդամը դարձավ՝ Մելքոն էֆենդը»⁵³:

Հետաքրքիր է «Բայբուրդցի Աննայի ճակատագիրը» խորագրով պատմությունը: Վերոնիկան գրում է. «Մի խումբ թուրք կանանց հետ Բողազլյան է գալիս նաև Անսիկը... Աննան ամուսնացած է լինում մի թուրքի հետ: Փաստորեն նա արդեն համարվում էր թրքուհի: Մեր դռանը կանգնում են թուրք կանայք և խնդրում են ջուր տալ»⁵⁴: Աննան, լսելով հայերեն խոսքը, օգնություն է խնդրում: Հարությունը կարգադրում է իր խմբից ետ մնալ և գալ իրենց տուն, որտեղ էլ Աննային թաքցնում են: Վերոնիկան գրում է, որ նա ցանկանում էր իրենց տան մտնանք մտնել, սակայն դուռը փակ էր, և ներսից շշուկներ էին լսվում, երկու օր անց Հարությունն ասում է Վերոնիկային. «- Այնտեղ մի հայ աղջիկ է պահված: Քեզ թույլ եմ տալիս նրա մոտ գնալ, հետը խոսել, սակայն արգելում եմ այդ աղջկա մասին որևէ մեկին որևէ բան ասել»⁵⁵: Շուտով թուրքերը տեղեկանում են, որ թրքացած մի կին է ապրում Բերբերյանների տանը, գազազած ամբոխը պաշարում է տունը՝ հայտարարելով ժանդարմներին, որ «փափագենց»⁵⁶ տունն են այրելու, որովհետև այդ քյաֆիրները իսլամի կին են թաքցրել»⁵⁷: Մեկ ժամից ավելի տունը խուզարկելուց և Աննային չգտնելուց հետո ամբոխը հեռանում է: Ինչ վերաբերում է Աննային, ապա Հարությունը, նախապես իմանալով վտանգի մասին, նրան տարել էր որբանոց, որտեղ նա երեխաների հետ մնում է մինչև զինադադար: Հետագայում Աննան մեկնում է Ֆրանսիա՝ վերջնականապես փրկվելով իր կյանքին սպառնացող վտանգից:

Վերոնիկան անդրադառնում է իր մանկության ընկերուհու՝ Սիրանույշի ճակատագրին, որի ծնողներին և բոլոր ազգականներին սպանել էին: Նա պատմում է. «Իրիցկինն ինձ հայտնեց, որ գեղեցկուհի Սիրանին չեն սպանել: Նրան մոր գրկից վերցրել էր մի կին, որը երեխա չէր ունենում»: Տատն ասում է. «-Քո խաղընկերու-

⁵² Նույն տեղում, էջ 44:

⁵³ Նույն տեղում, էջ 49, 50:

⁵⁴ Նույն տեղում, էջ 44, 45:

⁵⁵ Նույն տեղում, էջ 45, 46:

⁵⁶ Փափագ բառը թուրքերեն նշանակում է քահանա, այստեղ նկատի ունեն հանգուցյալ տեր Հակոբ քահանային, ով Բերբերյանների ընտանիքի նախապետն էր:

⁵⁷ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, քժ. 8, ֆ.հ. 101, թայ. 81, էջ 50, 51:

հին թեև կենդանի է, սակայն նրան թուրք են դարձրել: Հիմա նա իր թուրք մոր հետ ոչ թե եկեղեցի, այլ մզկիթ պիտի գնա, ոչ թե հայերեն, այլ թուրքերեն պիտի խոսի, ոչ թե մամա, այլ աննա (թուրքերեն՝ մայրիկ) պիտի ասի»⁵⁸: 1915 թվականից անցնում է չորս տարի: Սիրանույշն այս տարիներին ապրել էր թուրքական միջավայրում՝ մոռանալով իր մայրենի լեզուն ու կրոնը: Նա երկընտրանքի առջև էր. մնալ նոր ընտանիքում և ապրել բարեկեցիկ կյանքով, թե՛ վերադառնալ իր արմատներին և պահել սեփական ինքնությունը: Չնայած տիրող վախի մթնոլորտին՝ Հարություն Բերբերյանը Վերոնիկային ասում է. «Վերոնիկա, դու ես նրա ամենամտերիմը, հիշեցրո՛ւ, որ նա թուրք չէ, և իր հարազատներին թուրքերն են սպանել: Եթե քեզ մոլլաները հարցնեն՝ թուրք ես, թե հայ, կասես հայ եմ, մի՛ վախեցիր»⁵⁹: Մի օր Բերբերյանների ընտանիքին կանչում են գրասենյակ: Այնտեղ էին դատավորը, մոլլաները, Սիրանույշը և նրա թուրք մայրը: Նրան հարցնում են. «Աղջի՛կս, դու թո՞ւրք ես, թե հայ», Սիրանը պատասխանում է. «– Ես հայ եմ»⁶⁰: Թուրք մայրը հարձակվում է նրա վրա, սկսում քաշքշել և անիծել աղջկան: Բերբերյանները երկար աշխատանք են տանում՝ Սիրանույշին հայկական ինքնությանը վերադարձնելու համար: Իր արմատներին վերադառնալուց հետո Սիրանույշն ամուսնանում է Խաչեր Բերբերյանի հետ: Նրանք մեկնում են Բեյրութ՝ ապահով և անվտանգ կյանք սկսելու համար, և ունենում են երկու դուստր և մեկ որդի:

1919 թ. փետրվարի 5-ին Բողազլյանում ողջ մնացած հայերը կազմում են Հայ ազգային միություն, որի անդամներից էին նաև Հարություն և Խաչեր Բերբերյանները⁶¹: Միության հիմնական գործառնությունը հայ կանանց և որբերի հավաքագրումն էր: Փողոցներից հավաքված որբերին տեղավորելու համար հայկական եկեղեցու և դպրոցի շենքը վերածվում են որբանոցի: Որբահավաք գործունեության մասին Հարություն Բերբերյանը գրում է. «1919 թ. փետրվարին կազմվեց որբախնամ վարչություն ... Աշխատանքի բաժանումը հետևյալ կերպ կատարվեց. Սարաֆյանը ընտրվեց վարչության նախագահ և ազգային ներկայացուցիչ, տեղակալ ընտրվեց Մայիսյանը: Նրանք երկուսով մեծ աշխատանք կատարեցին. թուրքերի տնտրում մնացած որբերին ու կնության տարված հարսներին հավաքեցին, թալանված ապրանքների գոնե չնչին մասը վերադարձաձևերին վերադարձրին: Թավրյան Նուրիցան որբանոցի ղեկավարն էր: Ես վարում էի որբանոցի տնտեսական շինարարական գործերը: Որբանոցն ուներ 4 երիտասարդ ուսուցիչներ՝ Խաչեր Մաճարյան, Վոան Շապուհ, Սահակ Ղարիբյան և եղբայրս՝ Խաչեր Բերբերյան, որոնք թրքախոս դարձած որբերին գրաճանաչություն և հայերեն լեզու էին սովորեցնում: Քանի որ եկեղեցին չէր գործում, քահանա չկար, իսկ որբերը և կանայք քնելու տեղ չունեին, եկեղեցին հարմարեցրինք նրանց ապրելու համար»⁶²: Հետագայում

⁵⁸ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 387, թպ. 242, էջ 8:

⁵⁹ Նույն տեղում, էջ 9:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ *Յուշարձան Եօղապոցիներու*, խմբ.՝ Վահե Հայկ, Ֆրեզնո, 1955, էջ 371:

⁶² ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 160:

խորհրդի ջանքերով հավաքագրված որբերն ուղարկվում են Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Թալասի որբանոց⁶³:

Համաձայն Կ. Պոլսի Ազգային խնամատարության տվյալների՝ Բողազլյանի որբանոցում 500 որբեր կային, շրջակա գյուղերում՝ 300 անօթևան որբեր, և ևս 500 հայ կին և աղջիկ գտնվում էին թուրքերի մոտ⁶⁴: Որբերին և կանանց թուրքական գերությունից փրկելու դժվարին գործի մասին Յոզդաթ և Բողազլյան այցելած Ազգային խնամատարության ներկայացուցիչը հայտնում է. «Թուրքերը ամեն ջանք կը թափեին զանոնք չհանձնելու համար, միշտ իրենց կողմն ունենալով նաև ոստիկանությունը: Կը տեղափոխեին, կը փախցնեին, անոնց կեանքին կը սպառնային: Այն բոլոր կիները, որոնք թուրքերու քով կը գտնվեին՝ կորուսած էին իրենց ազգային նկարագիրը: Յարատև կերպով ենթակա թուրք բռնություններու, հավատք չունեին իրենց ազատագրումի մասին: Ոչ միայն չէին դիմագցներ մեր ջանքերը, այլև մեզ դժվարություններու կը ենթարկեին՝ ուրանալով ու փախչելով»⁶⁵:

1919 թ. Բողազլյանի Հայ ազգային միության հանձնաժողովի անդամները ենթարկվում են նոր բռնությունների: Իր հուշերում Հարությունը գրում է. «Սարաֆյանը, Մայիսյանը, ես և չորս հայեր ձերբակալվեցինք... Մեզ նետեցին խոնավ մի նկուղ: Տանջանքներով ստիպում էին, որ չկատարած հանցանքները խոստովանենք... Անգամ խոշտանգումների էին ենթարկել Նուրիցային, որին մեղադրում էին որպես ամերիկյան լրտեսուհի: Ինձ մեղադրում էին, որ իբրև թե Կիլիկիայից զենք եմ գրաստներով փոխադրել: Այդքան հիմար մեղադրանք, երբ Կիլիկիան շատ հեռու էր մեզանից: Իբրև թե զենքերը թաքցրել էինք որբանոցում: Հինգ ամիս տանջելուց հետո ուղարկեցին ճահճոտ առուները մաքրելու և ճանապարհները կարգի բերելու»⁶⁶: Հարություն Բերբերյանի հուշերից պարզ է դառնում, որ նա՝ որպես բանտարկյալ, մի քանի տարի պարտադիր աշխատանք է կատարել Թուրքիայի տարբեր վայրերում, ապա թուրքի անվան տակ կարողացել է փախչել և վերադառնալ Բողազլյան:

Վերոնիկյան հիշում է, որ ինքն արդեն 16-17 տարեկան էր, երբ լքեցին հայրենի Բողազլյանն ու եկան Հայաստան՝ իրենց տունն ու ողջ ունեցվածքը թողնելով դրացի թուրքին⁶⁷: 1925 թ. Բերբերյանները փոխադրվում են Կ.Պոլիս, ապա տեղափոխվում են Բաթում, հետո՝ Նախիջևան: Այստեղ նրանք գտնում են Գասպար Բերբերյանին: Վերոնիկյան պատմում է, որ մեկուկես տարի է տևում նրանց ընտանիքի վերամիավորումը. հայրը մահանում է: Վերջինիս վախճանից հետո մոտավորապես 1928-29 թ. Բերբերյանները վերջնականապես հաստատվում են Երևանում⁶⁸: Այս թվականով էլ ավարտվում է ականատեսի նրանց վկայությունը:

⁶³ *Յուշարձան Եօզդայոցիներու*, էջ 373:

⁶⁴ Բողազլյանի որբանոցի մասին տե՛ս Մ. Էպլիդաթեան, *Ազգային խնամակալութիւն Ընդհանուր Կողմնակազմի*, Անթիլիաս, 1985, էջ 461-463:

⁶⁵ Մ. Էպլիդաթեան, նշվ. աշխ., էջ 462:

⁶⁶ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 8, ֆ.հ. 101, թպ. 81, էջ 161:

⁶⁷ ՀՅԹԻ-ի գիտական ֆոնդեր, բժ. 4, ֆ.հ. 13:

⁶⁸ Վ.Սվազլյան, նշվ. աշխ., էջ 372:

Այսպիսով, Բերբերյանների հուշերը մեծ արժեք ունեն, քանի որ նրանց ամբողջ գերդաստանն իր ծննդավայրում ականատես է դարձել 1915-1923թ.թ. Հայոց ցեղասպանությանը: Բերբերյանների վկայությունները հարուստ են Հայոց ցեղասպանության ողջ ընթացքն ու փուլերը լուսաբանող տարաբնույթ պատմություններով: Հուշերում տեղ են գտել դրվագներ հայ տղամարդկանց զորահավաքի, ձերբակալության և սպանության, մտավորականության և հոգևորականության ոչնչացման, հայ կանանց և երեխաների տեղահանության վերաբերյալ: Ներկայացվում են զանգվածային կոտորածների կազմակերպիչների ու իրականացնողների գործողությունները, հայ ժողովրդի թալանը և ունեցվածքի բռնագրավումը, նրանց լքված գույքի յուրացումը թուրքերի կողմից, հայ կանանց և երեխաների բռնի թրջացումը և իսլամացումը, հասարակ թուրք բնակչության մասնակցությունը կոտորածներին: Համատարած ջարդերի համատեքստում Բերբերյանները մանրամասնում են նաև իրենց ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին ընկած ճակատագիրը: Վերոնիկա և Հարություն Բերբերյանները նկարագրում են, թե ջարդերից հետո ինչպիսի իրավիճակ էր տիրում Բողազլյանում, ովքեր էին սակավաթիվ փրկվածները, և ինչպես էին նրանք փորձում շարունակել իրենց կյանքը: Նրանց հուշագրության ամենակարևոր դրվագներից մեկը թերևս Բողազլյանում մի քանի տարի գործած որբանոցի մասին տեղեկություններն են, հայ կանանց և երեխաների փրկության համար ծավալված աշխատանքները և որբահավաք գործունեությունը, որից անմասն չմնացին նաև Բերբերյանները:

Վերոնիկա և Հարություն Բերբերյաններն իրենց ընտանիքներով մնացել են Հայաստանում՝ միշտ հիշելով ծննդավայր Բողազլյանը: Հարությունը վախճանվել է 1978 թ. Երևանում 84 տարեկան հասակում: Վերոնիկան մահացել է 1999 թ. Երևանում 94 տարեկան հասակում, նրա հուշերի վերջին գրառումները թվագրված են 1992 թվականով:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Տաթև Արշակյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվում է ՀՅԹԻ գիտական ֆոնդերում պահվող Բերբերյանների ընտանիքի «Կյանքի և մահվան սահմանագծում. սպանդանոցից մազապուրծների հուշերը (1915-1923)»: Հենվելով Բողազլյանի հայ բնակչության կոտորածի վրա՝ հուշագրությունը նկարագրում է Հայոց ցեղասպանության փուլերը և ողջ ընթացքը: Հուշը ներառում է մասնակի պատմություններ, որոնք լուսաբանում են Բողազլյանի կայմական Մեհմեդ Քեմալի գործունեությունը՝ որպես թուրքական կառավարության ներկայացուցիչ, տեղի թուրք բնակչության վարքագիծը, հայերի ինքնասպանության և փրկության դրվագները, ինչպես նաև Բողազլյանի վերապրողների կողմից ծավալված որբահավաք գործունեությունը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Բողազլյան, հուշեր, ականատեսի վկայություն, Բերբերյան ընտանիք, Վերոնիկա Բերբերյան:

STORY OF ARMENIAN GENOCIDE EYEWITNESS BERBERIAN FAMILY

Tatev Arshakian

SUMMARY

The paper studies memoirs of Berberian family “On the border of life and death: survivors of slaughterhouse (1915-1923)”, which is stored in the archives of Armenian Genocide Museum-Institute. Based on the massacres of the Armenian population of Boghazlian, the memoirs represent the phases and entire process of the Armenian Genocide. The memoirs are composed of different stories, which illustrate the policy of Boghazlian’s *kaymakam* Mehmet Kemal, as a representative of Turkish government, the behavior of local Turkish population, as well as acts of suicide and rescue of the Armenians’ and later orphan retrieve operation carried by the survivors of Boghazlian.

Keywords: Armenian Genocide, Boghazlian, memoirs, eyewitness testimony, Berberian family, Veronika Berberian.

ИСТОРИЯ СЕМЬИ БЕРБЕРЯН – ОЧЕВИДЦЕВ ГЕНОЦИДА АРМЯН

Татев Аршакян

РЕЗЮМЕ

В статье рассматриваются воспоминания семьи Берберян “На границе жизни и смерти. Выжившие из бойни (1915-1923)”, которые хранятся в архивах Музея-Института Геноцида армян. Мемуары, основанные на примере резни армян поселка Богазлыян, описывают весь процесс и этапы Геноцида армян. Они состоят из разных историй, освещают политику каймакама поселка Богазлыян - Мехмета Кемаля, как представителя турецкого правительства; поведение местного турецкого населения; случаи самоубийства армян; случаи спасения армян, также деятельность выживших армян поселка Богазлыян по спасению осиротевших детей.

Ключевые слова: Геноцид армян, Богазлыян, мемуары, свидетельство очевидца, семья Берберян, Вероника Берберян.

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՈՐԲԵՐԻՆ. ԱՌԱՔԵԼ ՉԱՔՐՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ¹

Էդիպա Գզդյան

ա. Բռնի իսլամացումը՝ որպես Հայոց ցեղասպանության բաղկացուցիչ մաս

Հայոց ցեղասպանության տարիներին հայ ժողովրդի՝ զարհուրելի չափերի հասնող բռնի տեղահանումները և կանանց ու երեխաների բռնի իսլամացումը թուրքական պետական քաղաքականության կարևոր մասն էին կազմում: Ջանգվածային սպանություններին զուգահեռ՝ թուրքական կառավարությունը հստակորեն վարում էր բռնի կրոնափոխման քաղաքականություն՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով, ակնհայտ քաջալերելով կամ թույլատրելով հայ մանուկների և կանանց ձուլման գործընթացը մուսուլմանական տներում և այլ հաստատություններում²: Որոշ հայ մայրեր իրենց երեխաներին անխուսափելի մահից փրկելու համար ստիպված հանձնում էին թուրքերին, արաբներին և քրդերին:

Բռնի կրոնափոխությունը՝ որպես Հայոց ցեղասպանության կառուցվածքային բաղադրիչ, ծրագրվել էր նախօրոք՝ մինչև տեղահանությունների սկսվելը³: Ձուլման քաղաքականությունն իրականացվում էր խառը բնակեցումների, քրիստոնյա երեխաներին իսլամադավան ընտանիքներին հանձնելու կամ կառավարական որբանոցներում տեղավորելու, մուսուլման տղամարդկանց հետ հայ երիտասարդ կանանց և աղջիկների բռնի ամուսնությունների և արտաամուսնական կապերի միջոցով⁴:

Հայ աղջիկներն ու երիտասարդ տղաները բռնի իսլամացվում էին, որից հետո թուրքական կառավարության նախօրոք մշակված ծրագրով բռնի կրոնափոխ հայ որբերին հանձնում էին թուրքական որբանոցներին կամ հայտնի թուրքերին: Նրանք կրթություն էին ստանում կառավարական դպրոցներում, դաստիարակվում էին մուսուլմանական կրոնի, ավանդույթների և սովորույթների համաձայն: Նախ՝ փոխվում էին հայ երեխաների անունները՝ նրանց տալով թուրքական անուններ և կեղծված ծննդյան վկայականներ: Դրանից անմիջապես հետո երեխաներին ստիպում էին խոսել թուրքերեն և մոռանալ մայրենի լեզուն: Այնուհետև սկսվում էր մու-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15YPR-6A0120 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² St' u Ekmekcioglu Lerna, A Climate for Abduction, Climate for Redemption: the Politics of Inclusion during and after the Armenian Genocide, *Comparative Studies in Society and History*, Volume 55, Issue 3, July 2013, էջ 522-553:

³ St' u Akcam Taner, *The Young Turks' Crime against Humanity. The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, էջ 287-341:

⁴ St' u Sarafian Ara, The Absorption of Armenian Women and Children into Muslim Household as a Structural Component of the Armenian Genocide, *In God's Name. Genocide and Religion in the Twentieth Century*, ed. by Bartov O. and Mack Ph., New-York, Oxford 2000, էջ 210-211: Նաև՝ Akcam Taner, *The Young Turk's Crime...*, էջ 290:

սուլմանականացման փուլը: Կրոնական անձանց և ուսուցիչների միջոցով երեխաները սովորում էին իսլամը. «Երկու շաբաթ շարունակ առավոտյան և երեկոյան ստիպված էինք կրկնել նրանց մուսուլմանական աղոթքները: Ամեն շաբաթվա վերջում մեզ ստուգում էին»⁵: Այս ամենն արվում էր՝ նրանց հայկական ինքնությունը մոռացության տալու համար: Պատերազմի ժամանակ ստեղծվել էր «Կարմիր մահիկի» միության թուրքական մի մասնաճյուղ-կազմակերպություն, որը գտնվում էր Թալեթ և Էնվեր փաշաների, Հալիդե Էդիպի և այլ հայտնի մարդկանց հովանավորության տակ և զբաղվում էր նաև հայ երեխաներին մուսուլմանական ընտանիքներին բաժանելով⁶:

Արդյունքում հազարավոր հայ մանուկներ հանձնվեցին մուսուլմաններին, մի մասը՝ որպես ստրուկ՝ իրականացնելով ամենախտրական ու ծանր աշխատանքը, քչերը՝ որդեգիր: Իսկ չափահաս աղջիկների մի մասին բռնի կնության տվեցին, մյուսներին հանձնեցին հարեմներին⁷: Թեև որևէ հստակ թիվ չկա այն մասին, թե քանի երեխա է բաժանվել մուսուլմանական հաստատություններին, սակայն հաշվվում է շուրջ 100, 000-200, 000 հայ դավանափոխ է արվել⁸:

Գրեթե ողջ թուրք ժողովուրդը թաթախված էր այս հանցագործության մեջ՝ դրսևորելով ֆանատիզմի ամենաստոր ձևերը, բռնությունները, բռնաբարությունները, խարդախությունները՝ հայ կանանց և երեխաներին իրենց մեջ պահելու համար⁹: Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո հայ որբերի հավաքագրումն ու ազգային պատկանելության որոշումը դարձան բազմաթիվ հայ և միջազգային կազմակերպությունների ու անհատների առաջնային խնդիրներից մեկը: 1918թ. հոկտեմբերին Իզմեթ փաշայի հրամանով թույլատրվեց բռնի կրոնափոխվածներին վերադառնալ իրենց կրոնին, իսկ որբերին՝ վերամիավորվել իրենց ժողովրդի հետ¹⁰: Ուժեղ ճնշման տակ թուրքական կառավարությունը հրամաններ է ուղարկում տարբեր տարածքների՝ պահանջելով «անմիջապես իրենց խնամակալներին կամ համայնքին հանձնել հայ որբերին, աղջիկներին և կանանց, ովքեր գտնվում են մուսուլմանական ընտանիքներում, պաշտոնական կամ ոչ պաշտոնական հաստատություններում»՝ սպառնալով իրավական գործեր հարուցել այն անձանց դեմ, ովքեր չեն ենթարկվի վերոնշյալ պահանջին¹¹: Թուրքերից շատերը,

⁵ St'u Hampartzoum M. Chitjian, *A Hairs' Breadth from Death*, London and Reading: Taderon Press, 2003, էջ 101:

⁶ League of Nations Archives (LNA), Classement 12, Document N 9640, Dossier 4631.

⁷ St'u Watenpaugh Keith, "Are There Any Children for Sale?": Genocide and the Transfer of Armenian Children (1915-1922), *Journal of Human Rights*, Vol. 12, Iss. 3, 2013, էջ 283-295: Akcam Taner, *The Young Turks Crimes against Hyumanity...*, էջ 287-341:

⁸ St'u Akcam Taner, *The Young Turk's Crime against Humanity...*, էջ 320:

⁹ St'u LNA, Classement 12, Document 15998, Dossier 4631. Report submitted to the Second Assembly by the 5th Committee. Deportation of Women and Children in Turkey, Asia Minor and the Neighbouring Territories:

¹⁰ St'u Akcam Taner, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, New York : Metropolitan Books, 2006, էջ 274, նաև՝ Ekmekcioglu..., էջ 533:

¹¹ St'u Akcam Taner, *The Young Turk's Crime...*, էջ 333:

վախենալով պատժից, ինքնական հանձնում էին հայ մանուկներին, սակայն մյուսները կարծելով, որ երեխաներն արդեն մոռացել են իրենց մայրենի լեզուն ու ինքնությունը, պահում էին նրանց տարբեր սպառնալիքների ներքո: Ավելի մեծ տարիքով երեխաներն իրենք էին փախչում թուրքական տներից, սակայն լինում էին նաև դեպքեր, երբ հայ երեխաները վերադառնում էին թուրքական տներ, ինչը թուրք ընտանիքների հետ կապի արդյունք էր, որոնք հաճախ նվերներ կամ ուտելիք էին ուղարկում երեխաներին կամ պարբերաբար այցելում նրանց¹²:

Սակայն, չնայած բարի մտադրությունների վերաբերյալ պաշտոնական հավաստիացումներին, իշխանություններն ակտիվ օբստրուկցիոնիստական քաղաքականություն էին վարում, որը թաքցնում էին բառերի ներքո¹³:

բ. Հայ-հունական բաժնի գործունեությունը

Արևելյան ճակատում Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրության և դաշնակիցների միջև կնքված Մուդրոսի զինադադարով, որից մի քանի օր անց բրիտանական, ֆրանսիական և իտալական զորքերը մտան Կոստանդնուպոլիս: Մուդրոսի համաձայնագրի 4-րդ կետը ենթադրում էր Օսմանյան պատերազմական գերիների ազատ արձակումը, ինչը շատերի կողմից ընդունվեց նաև որպես իսլամացած կանանց և երեխաների ազատագրման պահանջ: Տարհանված հայերն իրավունք ստացան վերադառնալու իրենց հայրենի տները: Մուդրոսի համաձայնագրով հայերին և հույներին վերաբերող կետերը գործնականում իրագործելու նպատակով 1919 թ. փետրվարին Բրիտանական բարձրագույն հանձնաժողովը ձևավորեց Հայ-հունական բաժինը (Armenian-Greek Section A.G.S.), որի նստավայրը Կոստանդնուպոլսի բրիտանական դեսպանատունն էր: Բաժինը զբաղվելու էր թուրք հանցագործների պատժի, օգնության, փոխհատուցման, բանտարկյալների, իսլամացված քրիստոնյաների և թուրքերի ձեռքում գտնվող քրիստոնյաների վերաբերյալ հարցերով: Հայ-հունական բաժնում ընդգրկված էին նաև նպաստամատույցի 5 աշխատակիցներ՝ երկրի և լեզուների իմացությամբ, որոնք պետք է զեկուցեին Թուրքիայի ներսում քրիստոնյաների վիճակի վերաբերյալ և հնարավորինս հոգային նրանց կարիքները¹⁴:

Հայ-հունական բաժինը գործեց մոտ 4 տարի (1919 փետրվար – 1922 նոյեմբեր՝ կազմակերպելով շուրջ 87 հանդիպում): Բաժնի աշխատանքներում ընդգրկված բրիտանացի զինվորականները զբաղվում էին Օսմանյան կայսրության փոքրամասնությունների պաշտպանության գործերով, մասնավորապես հայ և հույն փոքրամասնությունների, ինչպես նաև թուրքական տներից ու հաստատություններից հայ և հույն կանանց ու երեխաների ազատագրման, քրիստոնյաների բռնազանձ-

¹² St'u LNA, Classement 12, Document 15100, Dossier 4631. Letter from Miss Cushman to the Secretary General of the League of Nations. July 16, 1921:

¹³ St'u Akcam Taner, *A Shameful Act...*, էջ 279:

¹⁴ St'u Sir Robert Graves, *Storm Centers of the Near East. Personal Memories 1879-1929*, London, Hutchinson, 1933, էջ 324:

ված գույքի համար փոխհատուցման հարցերով¹⁵: 1919 թ. մարտից Բաժնի աշխատանքներին միացան նաև հայկական և հունական պատրիարքարանների ներկայացուցիչները՝ հայկական կողմից՝ դոկտոր Դավիդյանը և պրն. Չաքրյանը, իսկ հունական կողմից՝ դոկտոր Թեոթոկասը: Իր առջև դրված խնդիրները լուծելու նպատակով բաժնի աշխատանքները բաժանվեցին նաև հայկական և հունական խմբերի, որոնք զբաղվելու էին վիճակագրական (գաղթականների և տեղի բնակչության թիվ, թուրք հանցագործների պատիժ), անօրինական կալանքի (խալամագված քրիստոնյաներ, ունեցվածք, բանտարկյալներ) և քաղաքական ու այլ հարցերով (քաղաքական, օգնություն, հայրենադարձություն): Յուրաքանչյուր խմբի պատասխանատու աշխատակիցը պետք է տեղեկություններ հավաքեր և գործողություններ ձեռնարկեր, որոնք ղեկավարվելու էին հայկական կամ հունական ենթաբաժնի ղեկավարների կողմից՝ համաձայնեցված Հայ-հունական բաժնի անգլիացի ղեկավարի հետ: Հայկական ենթաբաժինը գործելու էր Կովկասում, Տրապիզոն-Էրզրումում, Սվազում, Էսկիշեհիր-Անգորայում, Կոնյա-Նիզդեում, Դիարբեքիրում, Մարաշում, Մարդինում¹⁶:

Ինչպես նշվեց, Հայ-հունական բաժինը զբաղվելու էր նաև թուրքական տներից ու հաստատություններից հայ և հույն կանանց ու երեխաների ազատագրման գործով: Բրիտանական բարձր հանձնախմբի անդամ պրն Սմիթի օժանդակությամբ Առաքել Չաքրյանը¹⁷ լծվեց հայ որբերի հավաքագրման գործին: Ստեղծվեց Որբահավաք մարմին՝ 4 անդամներով՝ Ա. Չաքրյանի ղեկավարությամբ¹⁸: Բրիտանական դեսպանատան կողմից նրանցից յուրաքանչյուրը ստացավ հանձնարարագիր՝ ուղղված Դաշնակցական ոստիկանությանը՝ անհրաժեշտության դեպքում օժանդակություն ապահովելու համար¹⁹: Բաժնի ստեղծմամբ հայ կանանց ու երեխաների ազատագրումը նոր թափ ստացավ: Թուրքական տներից և հաստատություններից սկսեցին բռնի ազատագրել հայերին դաշնակցային ոստիկանական ուժերի, իսկ երբեմն էլ՝ թուրքական ոստիկանության աջակցությամբ: Ազատագրման մեթո-

¹⁵ Նույն տեղում, էջ 323, 324:

¹⁶ Տե՛ս *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919-1922: the Armenian-Greek Section*, compiled by Vartkes Yeghiayan, 2007 Glendale, California, published by Center for Armenian Remembrance (CAR), էջ 12:

¹⁷ Առաքել Չաքրյան (1885—1954)-Փարիզաբնակ անվանի գիտնական, քիմիկոս և գյուտարար: 1948 թ. Փարիզի ակադեմիայի ակադեմիկոս: Ֆրանսիական և հունական կառավարությունների կողմից արժանացել է Պատվո լեգեոնի և Սուրբ Գևորգի ասպետական աստիճանների: Վարել է նաև բարեգործական, աղքատախնամ և եկեղեցական պաշտոններ: Բրիտանական բարձր հանձնաժողովի անդամ պրն Սմիթի օժանդակությամբ Առաքել Չաքրյանը նույնպես լծվեց հայ որբերի հավաքագրման գործին: Ստեղծվեց Որբահավաք մարմին՝ 4 անդամներով՝ Ա. Չաքրյանի ղեկավարությամբ: Նրանցից յուրաքանչյուրը բրիտանական դեսպանատան կողմից ստացավ հանձնարարագիր՝ ուղղված Դաշնակցական ոստիկանությանը՝ անհրաժեշտության դեպքում օժանդակություն ապահովելու համար:

¹⁸ Որբահավաք մարմինը շարունակեց իր գործը մինչև Բրիտանական բարձր հանձնաժողովի պահանջով 1922 թ. օգոստոսին Չեզոք տան փակումը:

¹⁹ Տե՛ս Զաւէն արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս, վատերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրէ, 1947, էջ 181, 182:

դը հետևյալն էր. ուղղակի իշխանություններին ուղղված անձնական դիմումների կամ զեկույցների հիման վրա այցելություններ էին կազմակերպվում տարբեր մուսուլմանական տներ կամ հաստատություններ և պահանջում վերադարձնել քրիստոնյա կամ բռնի իսլամացված կանանց և երեխաներին²⁰:

Չնայած դաշնակցային ոստիկանության՝ իր հրամաններին ենթարկվելու իրավասությանը, երեխա թաքցնելը պատժելի արարք չէր, ուստի խիստ բարդանում էր նրանց հավաքագրումը: Թուրքական Բարձր դուռն ընդդիմանում էր առանձին թուրքերի՝ հայ երեխաներին հանձնելու պահանջին չենթարկվելու համար բանտարկության բրիտանական պահանջներին²¹: Իրավիճակը բարդանում էր նաև թուրքերի հարուցած խնդիրներով. թուրքական պաշտոնական և հասարակական կարծիքը դեմ էր իսլամացած հայ երեխաներին և կանանց հանձնելուն, ուստի սկզբից էլ բաժինը բախվեց բազմաթիվ դժվարությունների²²: Բաժնի հայ անդամ Ա. Չաքրյանը բողոքում էր, որ թուրքական որբանոցների թուրք տնօրենները և այլ ներգրավված անձինք հետ չեն տալիս հայ երեխաներին: Միջդաշնակցային ոստիկանությունը նույնպես բողոքում էր թուրքերի հարուցած դժվարություններից երեխաներին վերցնելու ժամանակ, քանի որ երբեմն ստիպված էին լինում 4-5 անգամ գնալ մեկ երեխայի հետևից²³:

Բաժնի առջև ծառացած առանցքային հարց էր հայ կանանց ազատագրելու խնդիրը, հատկապես երբ նրանք ամուսնացած էին թուրքերի հետ: Հայ և հույն պատվիրակները պնդում էին, որ տարիքային շեմ պետք է որոշվի, որից ներքև գտնվող կանանց պետք է ուժով վերցնել թուրքական տներից՝ առանց հաշվի առնելու նրանց ցանկությունները: Սակայն, քանի որ այս հարցը դժվարություններ կհարուցեր թուրքերից երեխա ունեցող կանանց համար, որոշվեց, որ նման դեպքերում կնոջն ընտրելու իրավունք է տրվելու: Արդեն ավելի ուշ թուրքերի հետ բռնի ամուսնացած հայ կանանց այլևս չէին ստիպում վերադառնալ հայկական միջավայր, քանի որ հնարավոր չէր ապահովել նրանց անվտանգությունը²⁴: Բացի դրանից՝ որոշ հայ կանայք ևս դժվարություններ էին ունենում հայկական միջավայր վերադառնալու հետ կապված²⁵:

²⁰ Տե՛ս *British Reports on Ethnic Cleansing in Anatolia...*, էջ 63: Հետագայում բաժնի հայ անդամներն առաջարկում են գործող ընթացակարգի փոխարեն երեխաների ազատագրման համար ներգրավել Միջդաշնակցային ոստիկանության 2-3 աշխատակցի: Առաջարկն ընդհանուր հավանության է արժանանում բրիտանական կողմից, և 1920 թ. սկզբից 3 ոստիկան է առանձնացվում՝ Ստամբուլի, Բոսֆորի ափական մասի և Փերայի ու եվրոպական մասի համար, սակայն առանց հստակ երաշխիքների, որ այս ոստիկաններն աշխատելու էին միայն այս ուղղությամբ: Միջդաշնակցային ոստիկանությունը երեխային այսուհետև հանձնելու էր անմիջապես պահանջագիր ներկայացնողին՝ դրանով չեզոքացնելով թուրք ոստիկանության դերը որպես միջնորդի:

²¹ Տե՛ս *British Reports on Ethnic Cleansing in Anatolia...*, էջ 119, 130:

²² Տե՛ս LNA, Classement 12, Document 16512, Dossier 4631. Memorandum Explanatory. Commission of Enquiry on Deported Women and Children:

²³ Տե՛ս *British Reports on Ethnic Cleansing in Anatolia...*, էջ 84, 91:

²⁴ Տե՛ս *British Reports on Ethnic Cleansing in Anatolia...*, էջ 23, 80:

²⁵ Տե՛ս Ekmekcioglu..., էջ 537:

Հայկական կողմը հատկապես կարևորում էր 4-5 տարեկան երեխաների արագ ազատագրումը, որպեսզի հնարավոր լիներ փրկել նրանց վերջնական իսլամացումից, նաև մշտապես պնդում էր երիտասարդ որբերի՝ հայկական միջավայրում մեծանալու անհրաժեշտությունը, որպեսզի հնարավոր լիներ վերականգնել նախնական գիտելիքները, որոնք մոռացվել էին թուրքական հաստատություններում ապրելու ընթացքում:

Հայ-հունական բաժնի ակտիվ գործունեությունը հանգեցրեց թուրքական կողմի դժգոհությանը, որը պնդում էր, թե ազատագրված երեխաներից շատերը թուրքեր են: Հայ ներկայացուցիչներին առաջարկվեց համապատասխան վայր ընտրել՝ որբերին և իսլամացած անձանց ընդունելու համար: Եվ անգլիական դեսպանատան պահանջով Հայոց պատրիարքարանը Կոստանդնուպոլսի Շիշլի թաղամասում վարձեց մի շինություն, որը կոչվեց Չեզոք տուն²⁶: Այստեղ պետք է բերվեին այն երեխաները, ում ազգությունը կասկած էր հարուցում՝ մինչև նրանց ինքնության վերջնական պարզումը: Չեզոք տունը գործում էր բրիտանական ոստիկանության վերահսկողության ու պաշտպանության ներքո, իսկ երեխաների թիվը 3-20 էր²⁷: Որբերի ազգության վերաբերյալ թուրքական իշխանությունների հետ բազմաթիվ վեճերից հետո որոշվում է ստեղծել նաև խառը հանձնաժողով՝ երեխաների ազգությունը որոշելու համար²⁸: Խառը հանձնաժողովը բաղկացած էր ամերիկացի, հայ և թուրք մեկական կանանցից, որոնք շաբաթական երկու անգամ հավաքվում էին՝ որբերին հարցաքննելու և նրանց ազգությունը պարզելու համար²⁹: Չեզոք տան երեք տնօրենների համաձայնությամբ որբերին 8 օր պահում էին այդտեղ, որից հետո միայն ներկայացնում էին հանձնաժողովին³⁰:

Չեզոք տան հայ աշխատակցի գործը բավական բարդ էր. նրա պարտականությունն էր երեխայի մեջ հիշողություններ արթնացնել անցյալի մասին, փաստերի

²⁶ Չեզոք տունն ուներ հայ, թուրք և ամերիկացի մեկական կին տնօրեն (Զարուհի Պահրի, Նեզիհե հանում, տիկին Հուայթինկ): Բացի տնօրեններից, Չեզոք տանն աշխատում էին երեք հայ և մեկ թուրք կին: Ազատագրված երեխաների ծախսերը կազմում էին ամսական շուրջ L.T. 10,000, որի կեսից ավելին հատկացնելու էր Հայոց պատրիարքարանը, իսկ մնացածը՝ Ամերիկայի նպաստամատույց առաքելությունը: Չեզոք տուն բերվել են 396 կասկածելի որբ, իսկ նրա միջոցով՝ 184:

²⁷ Տե՛ս *Constantinople Today or the Pathfinder Survey of Constantinople. A Study in Oriental Social Life. Under the direction of Clarence Richard Johnson*, M.A. Professor of Sociology, Robert College, Constantinople, The Machmillan Company, 1922, էջ 229:

²⁸ Տե՛ս *British Reports on Ethnic Cleansing in Anatolia...*, էջ 58:

²⁹ Տե՛ս Էպիլոպեան Մ., *Ազգային ինսամարարություն, ընդհանուր տեղեկագիր առաջին վեցամսյա 1 մայիս 1919-31 հոկտեմբեր 1919, յառաջաբանով Գարեգին Բ կաթողիկոսի, Բ տպագրություն, Անթիլիաս, 1985, էջ 86:*

³⁰ Նեզիհե հանումի հրաժարականից հետո նա բողոք է ներկայացնում ոստիկանական նախարարություն, և նախարարն անձամբ այցելում է Չեզոք տուն և հայտարարում. «Չտեսնված բան է, որ նույն անձը լինի ամբաստանող, հարցաքննող դատավոր և դատարանի անդամ: Երեխաներին օրերով պահում եք Չեզ մոտ առանց որևէ թուրք ներկայացուցիչի ու Չեք ուզածի պես վճռում նրանց ճակատագիրը»: Հայ տնօրինուհին պատասխանում է, որ արդար է, որ 4 տարի թուրքերի մոտ նրանց ազդեցության տակ ապրած երեխաները գոնե 8 օր միայն հայերի հետ լինեն (տե՛ս Զարուհի Յ. Պահրի, Ինչ էր Չեզոք Տունը, «Այսօր-սպագայ» ֆրանսիական ժողովրդական օրաթերթ, մայիս 6, 1953 թ., Փարիզ):

կամ դեպքերի հետ որևէ կապ ստեղծել: Այս ամենը հնարավոր էր դառնում՝ երեխային հիշեցնելով այն հանգամանքները, որոնք անմիջականորեն և ինտիմ կերպով կապված էին նրա կյանքի առաջին իսկ օրվա հետ: Այդ հանգամանքները հետևյալն էին՝ մայրենի լեզուն, երեխայի ծննդավայրի բարբառը, կրոնը, տվյալ քաղաքին կամ գյուղին բնորոշ սովորույթները և վարվելաձևը, հայրենասիրական և հայտնի երգերը, ազգային լեզենդներն ու հեքիաթները, ազգային սովորույթները, ծննդավայրին բնորոշ պարերը և երաժշտական զվարճանքները, հուշանվերները և այլն³¹. «Ակնհայտ է, որ բացի հայից, ով ծնվել է նույն հողում և մեծացել նույն պայմաններում, ոչ ոք չի կարող ստանձնել թուրքական հրեշավոր, հոգևոր և գաղափարական ճնշումներով համեմված ազդեցությունից երեխային փրկելու գործը: Հայ երեխաներին պահելու համար թուրքերն այժմ կիրառում են կոչեր, քարոզներ, գումար նախկին մահակի, սպառնալիքների, ծեծի փոխարեն: Երբ երեխան շատ վաղ հասակում է խլվել ծնողներից և մեծացել թուրքական միջավայրում, հայ կնոջ համար դժվար կամ զրեթե անհնար է երեխայի մեջ որևէ հիշողություն արթնացնել՝ որոշելու համար նրա ազգությունը: Թուրքերը մեծ ջանքեր են թափել՝ երեխաներին մտքով ու սրտով իսլամացնելու համար: Ավելի մեծ տարիքում ստրկացված երեխաներին ավելի հեշտ է ազգային հիշողության վերադարձնելը»³²:

Չեզոք տանը երեխաներին խոստովանության էին բերում հոգատարությամբ, հորդորներով, հիշողություններ արթնացնելով, երբեմն փոքրիկ խարդավանքներով, բայց ոչ երբեք ծեծով, սպառնալիքներով, վախով, չնայած թուրքական կառավարական թերթերը պնդում էին, որ հայերը ծեծում և ահաբեկում են մուսուլման երեխաներին՝ ընդունելու իրենց «հայկական ծագումը»³³:

Երեխաները սովորաբար մեկ շաբաթից մինչև 3 ամիս ակտիվորեն ժխտում էին իրենց քրիստոնեական և հայկական ծագումը, վիրավորում էին քրիստոնյաներին, սակայն քսնի որ նրանց պատմությունները բավականին կասկածելի էին, և նրանք պահվում էին հսկողության տակ, որոշ ժամանակ անց հայտնվում էին ապացույցներ երեխաների՝ քրիստոնյա լինելու մասին: Միջավայրի փոփոխությունը բերում էր նաև մտավոր փոփոխության, և երեխաները կարողանում էին բացահայտել իրենց ինքնությունը ու որոշ ժամանակ անց սկսում էին վերհիշել հայերեն բառեր, երգեր³⁴: Երեխաների կողմից իրենց ազգության ժխտման պատճառներից նշվում էին հետևյալները՝ աղջիկների դեպքում հիմնականում խոսքը նվերների խոստումների մասին էր (շորեր, զարդեր և այլն), տղաների դեպքում՝ սպառնալիքների,

³¹ St'u LNA, Classement 12, Document 15100, Dossier 4631. Letter of the Armenian Patriarch to Major Arnold, managing director to the American Relief Committee in the Near East, August 7, 1919:

³² Նույն տեղում:

³³ St'u Kevorkian Raymond, *The Armenian Genocide, A Complete History*, New York: I.B. Tauris, 2011, էջ 760-762.

³⁴ St'u LNA, Classement 12, Document 15100, Dossier 4631. Letter from Miss Cushman to the Secretary General of the League of Nations. July 16, 1921: St'u նաև «Չեզոք տուն», «Նայիրի» ազգային-գրական շաբաթաթերթ, 23-րդ տարի, թիվ 4, 5, 1975:

բռնությունների: Երեխաներն իրականում հավատում էին, որ թուրքերն իրենց պաշտպանում են ավելի դաժան ճակատագրից³⁵:

Նշանակումից հետո որոշ ժամանակ անց Չեզոք տան թուրք տնօրենը հրաժարական տվեց՝ պնդելով, որ բազմաթիվ թուրք երեխաներ հայացվում են³⁶: Սակայն հայերը, խիստ վախենալով, որ թուրքերը կարող են մեծ աղմուկ բարձրացնել, մեծ զգուշավորություն էին ցուցաբերում հարցի նկատմամբ: Ըստ Չաքրյանի՝ այն մի քանի երեխաները, որոնք երկար ժամանակ շարունակում էին պնդել իրենց մուսուլման լինելու հանգամանքը, ազատ էին արձակվում³⁷: Նեզիհե հանումի հրաժարականից հետո թուրքերը ձգձգում էին նաև Չեզոք տան թուրք ներկայացուցչի նշանակումը, ինչը հստակորեն նպատակ էր հետապնդում խափանելու հաստատության աշխատանքները: Պատրիարքարանի աշխատակիցները հաճախ թուրքերի կողմից ենթարկվում էին ծեծի, տեղափոխվում ոստիկանական բաժանմունքներ, նրանցից փորձում էին առգրավել Բրիտանական հանձնաժողովի վկայագրերը:

1919 թ. մայիսի 7-ի Հայ-հունական բաժնի նիստում Չաքրյանը ներկայացնում է երեխաների հավաքագրման ժամանակ թուրք պաշտոնյաների հարուցած դժվարությունների մասին, և բաժնի որոշմամբ այդ նյութերը տպագրվում են թերթում³⁸: Ներկայացնենք հոդվածաշարը մեր թարգմանությամբ որոշ կրճատումներով և խմբագրումներով:

գ. Առաքել Չաքրյանի նյութերը՝ տպագրված «The Orient News»-ում³⁹ 1920 թ.

Այն զարհուրելի խնդիրներից մեկը, որ պատերազմ վարելու թուրքական ձևն առաջացրել է մեզ համար, հազարավոր գողացված մանուկների և հայ որբերի որոնումներն են: Ենթադրվում էր, որ պատերազմն ավարտվելուն և հայերի բնաջնջումը դատապարտվելուն պես թուրքերը ստիպված կլինեին վերադարձնել գողացված երեխաներին, առնվազն որպես վճար իրենց կատարած ոճրի համար: Սակայն թուրքերն ամեն ձևով ձախողում են հայ որբերին գտնելու որոնողական աշխատանքները, որոնց թիվը շուրջ 100,000 է:

Բազմաթիվ հայ հայտնիներ, բրիտանացի սպաների օժանդակությամբ, այս գործի մեջ ներգրավվել էին դեռ զինադադարից սկսած: Ըստ որոշ տվյալների՝ մոտ 60-70 հազար երեխաների հետք դեռ չի գտնվել: Շուրջ 15-17 հազար երեխայի հնարավոր է եղել գտնել, սակայն նրանք մեծ դժվարություններից հետո են ընդունել իրենց հայկական ծագումը: Պատճառները խիստ բազմազան էին. նրանցից շատե-

³⁵ St' u LNA, Classement 12, Document 15100, Dossier 4631. Letter from Miss Cushman to the Secretary General of the League of Nations. July 16, 1921:

³⁶ St' u Զարուի Յ. Պահրի, Ի՞նչ էր Չեզոք տունը, «Այսօր-սպազայ» ֆրանսիական ժողովրդական օրաթերթ, մայիս 3, 4, 5, 6, 1953, Փաթիկ:

³⁷ St' u Ekmekcioglu Lerna, A Climate for Abduction..., էջ 541:

³⁸ St' u British Reports on Ethnic Cleansing in Anatolia..., էջ 42:

³⁹ «The Orient News»-ը Կոստանդնուպոլսի անգլիալեզու 2 թերթերից մեկն էր, որը տպագրվել է 1919-1922 թթ.: St' u LNA, Classement 12, Document 9640, Dossier 4631:

րին վախեցրել էին տարբեր ձևերով (օրինակ՝ մեծ աղջիկներին հաճախ սպառնում էին ուղարկել վատ համբավ ունեցող տներ) կամ խոստացել նվերներ և այլն⁴⁰:

Տեղահանությունների ժամանակ նախօրոք ծրագրված քաղաքականությամբ թուրքերը բաժանել էին երեխաներին կառավարական որբանոցներ (մոտ երկու հազարը գտնվել են Կոստանդնուպոլսում) կամ առանձին ընտանիքներ, որտեղ նրանք մեծանում էին որպես ծառաներ: Երեխաների միջին տարիքը 6-15 տարեկան էր: Նրանց մանրամասն սովորեցնում էին Իսլամ: Ոչ մի կասկած չկար, որ այդ ամենը թուրքական կառավարության կողմից ծրագրված քաղաքականություն էր: Թուրքերն այս գործում կիսջողեն, քանի որ կանխամտածված կարողացել են ծածկել գրեթե բոլոր հետքերը և հասնել նրան, որ համարյա լիովին ջնջել են երեխաների հիշողությունն անցյալի մասին:

Երկու-երեք ամիս ժամանակ էր անհրաժեշտ լինում՝ այս երեխաներին ստիպելու ընդունել իրենց հայկական ծագումը, քանի որ իսլամական կրթությունը և վախը բավական խորն էին նրանց մեջ:

Սկզբում որոնողական աշխատանքները համեմատաբար ավելի հեշտ էին ընթանում և ավելի քիչ դժվարությունների հանդիպում: Իսկ երբ աշխատանքները պաշտոնական բնույթ ստացան, թուրքերն ավելի կոշտացրին այն մեթոդները, որոնցով որբերին ստիպում էին մոռանալ իրենց ինքնությունը, և ավելի մեծ զգուշավորություն ձեռնարկեցին՝ նրանց թաքցնելու համար: Այս գործի մեջ ներգրավված էին նաև թուրք կանայք, որոնց Իսլամը դրախտ էր խոստանում, եթե կարողանային իսլամադավան դարձնել որևէ մեկին, նույնիսկ երեխայի: Նրանք ահ ու սարսափ էին տարածում երեխաների մեջ հայերի ու քրիստոնեացիների հանդեպ՝ հավաստիացնելով, որ հայերը և անգլիացիները կտրատում և ուտում են երեխաներին: Պատմությունը հաշվարկված էր՝ երեխաներին վախեցնելու համար, ինչը հաջողությամբ իրականացվում էր: Թուրք պաշտոնյաները մշտապես նամակներ էին ուղղում Վերականգնման կոմիտե (Committee of Recovery)⁴¹՝ մեղադրելով վերջիններիս թուրք երեխաների բռնի քրիստոնեացման մեջ, ներկայացնում կեղծ ծննդյան վկայականներ և այլն: Կոմիտեն, որ միշտ բարեխիղճ էր, նման դեպքերում վերաքննում էր գործը: Օրինակ՝ հերթական անգամ, երբ հանձնաժողովը մի թուրք գեներալի պնդմամբ վերաքննում է գործը, պահանջում է գեներալին բերել երեխայի ենթադրյալ ծնողներին: Հանդիպման ժամանակ գեներալը ենթադրյալ ծնողներին հուշել էր ճանաչել երեխային, սակայն կոմիտեին հաջողվել էր, փոխելով երեխաների տեղերը, լիովին մոլորեցնել կեղծ ծնողներին և ձախողել գեներալի ծրագիրը:

Անհրաժեշտ էր լինում երեխաներին հանկարծակիի բերել և դանդաղորեն հասցնել խոստովանության: Նրանց ուղեղն այնքան էր լցված հակաքրիստոնեական և հակահայկական զգացումներով, որ ոչ մի այլ մեթոդ գործնական չէր: Օրի-

⁴⁰ St'u LNA, Work of the Commission of Enquiry with regard to the Deportation of Women and Children in Turkey and Adjacent Countries, Interim Report. Classement 12, Document N 9640, Dossier 4631, էջ 4:

⁴¹ Խոսքը Խառը հանձնաժողովի մասին է:

նակ՝ մի անգամ հանձնաժողովի հայ անդամը բրիտանացի գնդապետին խնդրել էր կանգնել դռան մոտ, իսկ ինքը հանկարծակի մտել էր ու հայերեն հարցրել. «Ի՞նչ էր քո մայրն անում, երբ գնում էիք եկեղեցի»: Ենթագիտակցորեն երեխան սկսել էր խաչակնքել:

Տեղեկանալով, որ դեռ տասներեք հայ երեխա կա Կոստանդնուպոլսի մոտ գտնվող N.C.O.'s դպրոցում, որտեղից 150 երեխա արդեն ազատագրվել էր, բրիտանացիներին հաջողվում է գտնել նրանցից 7-ին: Սկզբում երեխաները լիովին ժխտում էին իրենց հայ լինելը և ասելություն էին ցուցաբերում՝ մերժելով անգամ հաց և թեյ վերցնել բրիտանացի զինվորներից: Նրանցից երկուսը եղբայրներ էին, որոնց քույրը վերջերս էր գտնվել: Եղբայրներին վերցրին քոչ ներկայությամբ, և նրանք անմիջապես սկսեցին հեկեկալ և հայիոյել աղջկան: Մեկը նույնիսկ վերցրեց փայտը ու փորձեց հարվածել նրան: «Դու դարձել ես հայ, իսկ մենք՝ ոչ: Դու ժխտում ես քո ազգը, և դու կգնաս դժոխք»: Տղաներից մեկը հատկապես լավ կրթություն ուներ իսլամի ոլորտում և Դուրանի սուրահների մասին և հպարտորեն ասում էր. «El homdollah ben islam im»⁴²: Միայն 24 ժամ անց եղբայրները և քույրը սկսեցին միասին խաղալ, և միայն ավելի ուշ տղաներն ընդունեցին իրենց հայկական ծագումը:

Համակված նոր և կեղծ գիտակցությամբ, հրեշային մղձավանջից ահաբեկված՝ այս երեխաները մոռացել էին իրենց ծնողների կորստի ողբերգությունների մասին հիշողությունները, ինչպես նաև իրենց ծագումն ու ծննդավայրը: Հիմնականում մոռացված էին կրոնական հիշողությունները: Այսպես, օրինակ, երբ երեխաներից մեկը վերջապես խոստովանեց, որ հիշում է իր մոր գերեզմանը, և նրանց հարցերին, թե ինչպիսի տեղ է, արդյոք ունի՞ բարձր ծառ և քարերի կույտեր, ինչպես թուրքերի գերեզմանաքարերի նոճիներն ու քարերը, նա եռանդուն պատասխանեց. «Ո՛հ, գերեզմանները նշված էին որպես «goavour odounous»/անհավատ լինել)»: Այսպիսի անուսով էին ճանաչում խաչը գողացված երեխաները⁴³:

Վերջերս թուրքական տնից ազատագրվել էր յուրահատուկ գեղեցկությամբ մի երիտասարդ աղջիկ՝ տասնհինգ տարեկանից էլ փոքր: Չնայած Չեզոք տան հանձնաժողովի բոլոր ջանքերին՝ հնարավոր չեղավ պարզել՝ նա հա՞յ է, թե՞ ոչ: Աղջիկը պնդում էր, որ թուրք է⁴⁴: Բայց վերջապես նա ինքը խոստովանեց, որ հայ է: Հանձնաժողովի անդամներից մեկը մեծ նմանություն նկատեց այդ աղջկա և թուրքական որբանոցից փրկված մի որբ տղայի միջև: Աղջիկը պատմել էր, որ իր հայրն ու մայրը սպանվել էին ութ քույրերի և եղբայրների հետ, և միայն մի եղբայրն էր կորել: Երբ տարբեր մարդկանց ներկայությամբ տղային բերեցին, բոլորն անմիջապես նկատեցին տարօրինակ նմանությունները: Տղան սկզբից նայում էր աղջկան և որոշ ժամանակ ոչինչ չէր ձեռնարկում: Ակնհայտ էր, որ նա փորձում է անցյալի

⁴² Թուրքերենից թարգմանաբար՝ «Շնորհակալ եմ Աստծուն, որ ես իսլամ եմ»:

⁴³ Տե՛ս LNA, Classement 12, Document N 9640, Dossier 4631, The Orinet News, July 16, 19, 20, Vol. 2, №25:

⁴⁴ Աղջկա հետ ազատվել էին նաև երկուսը, որոնց մասին ցուցմունք էր տվել դրկից հույն մի կին, ով երկար ժամանակ հետևել էր աղջիկներին:

իր հիշողությունները: Որոշ ժամանակ անց տղան հասկացավ, որ առջևում քույրն է, մոտեցավ նրան, գրկեց՝ ասելով. «Իմ քո'յր, Ազատուհի՛»: Քույրը հեկեկում է և զգում իրեն եղբոր գիրկը. «Իմ եղբայր, Վահրի՛ճ»: Իսկ այն հարցին, թե ինչու չէր խոստովանում իր ծագումը, աղջիկը պատասխանում է. «Ես այնքան եմ տառապել հայ լինելու համար, որ այլևս երբեք չեի ցանկանում նորից ասել, որ հայ եմ»⁴⁵:

II

Հայ երեխաների մեջ, որոնք բռնի իսլամացվել էին և բերվել Կեսարիայի թուրքական որբանոցից, կար մի երեխա՝ Արդուլա Օսմանի որդի անունով, ինը տարեկան: Չեզոք տան հանձնաժողովի կատարած հետախուզական աշխատանքների արդյունքում պարզվել էր, որ երեխան հայ է՝ Հրանտ անունով: Երեխային տարան Շիշլիի որբանոց, բայց կարճ ժամանակ անց թուրքերը կրկին գողացան նրան և ուղարկեցին Օրթա Քյոյի թուրքական որբանոց: Նրա գտնվելու վայրը պարզվեց, և երեխան երկրորդ անգամ բերվեց Չեզոք տուն: Թուրքական կառավարությունը պնդում էր, որ երեխան պետք է վերադարձվի, քանի որ հաստատ թուրք է, որ իրենք հեռագրել են Սու Շեհիրի քաղաքապետին, և վերջինս նույնպես կտրականապես պնդում է, որ երեխան թուրք է: Այսպիսին էին թուրքական ջանքերը՝ պահելու գողացված երեխաներին: Բայց պատահեց այնպես, որ մի քանի օր առաջ մի մարդ էր եկել Հայ ազգային օժանդակության կոմիտեից (Armenian National Assistance Committee)՝ փնտրելու տեղահանությունների ժամանակ կորցրած իր երեխային: Հանձնաժողովի անդամներից մեկը, նմանություն նկատելով երեխայի և այդ մարդու միջև, վերջինիս ուղարկել էր որբանոց, որտեղ հայրը քունքի նշանով ճանաչել էր իր երեխային: Քանի որ երեխան ոչինչ չէր հիշում, որբանոցի տնօրենը համոզված չէր: Եվ երբ հայրը նշեց, որ երեխայի աջ ոտքի երկու մատները միացված են թաղանթով, նրան հանձնեցին հորը:

III

Կեսարիայից տեղահանման ժամանակ Մաթևոսյանների՝ յոթ անձից բաղկացած ընտանիքը տեղահանվեց տարբեր ուղղություններով: Ամենամեծ աղջիկը՝ Ռեբեկան, ով իր եղբայրների և քույրերի հետ Ամերիկյան քոլեջում էր, իսլամացվեց նույն կորտեժի աղջիկների հետ և որպես բուժքույր ծառայության մտավ Կարմիր մահիկի հիվանդանոց: Մյուս աղջիկներին ստիպեցին ամուսնանալ թուրքերի հետ, իսկ ավելի փոքր տղաներին և աղջիկներին բռնի իսլամացումից հետո ուղարկեցին թուրք ընտանիքներ և որբանոցներ: Նրանց մեջ էին Ռեբեկայի քույրերն ու եղբայրները:

Ջինադադարից մի քանի օր հետո Ռեբեկան 15 այլ իսլամացված հայ աղջիկների հետ Կեսարիայից բերվեց Կոստանդնուպոլիս՝ աշխատելու տեղի թուրքական հիվանդանոցում: Ժամանման պահին նրանց ազգային պատկանելությունը բացահայտվեց, և նրանք ազատագրվեցին: Դրանից անմիջապես հետո Ռեբեկան խնդ-

⁴⁵ St'u LNA, Classement 12, Document № 9640, Dossier 4631, The Orinet News, July 25, Vol 2, №38:

րեց ազատել նաև իր եղբայրներին ու քույրերին: Չաքրյանն աղջկա հետ սկսեց փնտրել նրա ընտանիքը՝ այցելելով թուրքական որբանոցներ: Երկու շաբաթ անընդմեջ որոնումներից հետո երկու քույրերի հայտնաբերեցին Չամլիջայի աղջիկների որբանոցում: Ռեբեկայի հետ մտնելով ճաշարան՝ հայ պատվիրակը նկատում է, որ յուրահատուկ գեղեցկությամբ երկու աղջիկ խիստ վախենում են, իջեցնում իրենց գլուխներն ու սկսում լացել: Զգալով, որ նրանք վերջապես հասան իրենց՝ Չաքրյանը գրկում է ամենափոքրին, իսկ ավելի մեծ քույրը փարվում է Ռեբեկային: Ամենափոքրի անունն Անուշ էր. նրան տվել էին թուրքական Ջելիլե անունը: Մյուսի անունը Սիրանուշ էր, որին Աթիհե էին կոչել:

Վերոբերյալ պատմությունը տեղի ունեցավ բրիտանացի հրամանատարի ներկայությամբ որբանոցի թուրք տնօրենի պաշտոնական և կտրուկ հայտարարությունից հետո, որ որբանոցում ոչ մի հայ աղջիկ չկա, և նա, որպես ազատամիտ և գիտակից մարդ, երբեք թույլ չէր տա հայ աղջիկների գողությունը:

Մի քանի ամիս անց Ռեբեկայի եղբորը գտան Բեբեկի թուրքական որբանոցում, մյուսին՝ Ադանայում: Բաժնի աշխատակիցներին հաջողվեց նաև գտնել նրանց հորը Ամերիկայում և մորը՝ Յոզգաթում: Բրիտանական պաշտպանության ներքո հինգ երեխաները մեկնեցին Ամերիկա, և այսպիսով, ամբողջ ընտանիքը վերամիավորվեց⁴⁶:

IV

Տասներկու աղջիկ, որոնց հայ էին համարում, վերցվեցին Կիթանե թուրքական որբանոցից: Բոլորը դառնորեն ողբում էին՝ պնդելով, որ մուսուլման են: Նրանց մեջ էր ինը տարեկան փոքրիկ Բրունը (Brune), որին կոչում էին Ջելիլ: Աղջիկը լացում էր և պնդում, որ ինքը մահմեդական է, որ իր ծնողներն ու եղբայրները սպանվել են հայերի կողմից, և միայն ինքն է կենդանի մնացել, որ այս մասին իրեն ասել էին որբանոցում: Եվ միայն, երբ Չաքրյանը երդվում է իր ծնողների և Աստծո անունով, որ կվերցնի աղջկան որպես իր երեխա, Բրունը պատմում է իր պատմությունը. «Մեր գյուղը սարի լանջին էր: Յուրաքանչյուր գյուղացի այնտեղ իր ազարակն ուներ, և բոլորը հարուստ էին: Իմ հայրն ամենահարուստն էր⁴⁷: Մի առավոտ գյուղի բոլոր տղամարդիկ և տղաները իմ հոր և եղբայրների հետ հավաքվեցին կարմիր գծավոր տաբատներով մարդկանց կողմից⁴⁸: Օ՛, ես երբեք չեմ մոռանա՝ ինչ դաժան և չար տեսք ունեին այդ մարդիկ: Երբ մտածում եմ նրանց մասին, վախից դողում եմ: Որքան էի խնդրում նրանց վերադարձնել հորս, բայց նրանք խփում էին և հեռու քշում ինձ, նրանք չէին խղճում նույնիսկ փոքր երեխաներին: Տղամարդկանց և տղաներին ծեծելուց հետո նրանք կապեցին նրանց երկուական և տարան, չգիտեմ՝ ուր: Օ՛, որքան էի սիրում իմ հորը: Նա այնքան բարի էր ու մեղմ: Ամեն կիրակի մենք գնում էինք եկեղեցի, և քահանան, ով երկար սպիտակ մորուք ուներ,

⁴⁶ St' u LNA, Classement 12, Document N 9640, Dossier 4631, The Orinet News, July 29, Vol 2, №30:

⁴⁷ Չաքրյանը գրում է, որ աղջկա նկարագրությունից հասկացել է, որ նա Ջելթուն գյուղից էր:

⁴⁸ Աղջիկը նկատի ունի թուրքական ժանդարմներին:

տալիս էր կտր, հարթ հացի մի կտոր, որի վրա մեր Տիրոջ պատկերն էր: Մեր հոր գնալուց մի որոշ ժամանակ անց տեսա մորս լացելիս և հասկացա, որ հայրս մյուսների հետ սպանվել է: Որոշ ժամանակ անց մյուս կանանց և երեխաներին հրամայվեց լքել գյուղը: Չար թուրքերն այնքան էին ծեծել իմ մորը, որ ճանապարհի կեսին նա հիվանդացավ և մահացավ: Ճանապարհորդության ողջ ընթացքում տեսնում էիր միայն մահ և ուրիշ ոչինչ: Մեր քարավանից շատերը մահացան: Ոչինչ չկար ուտելու, խմելու, և մենք ստիպված էինք քայլել և քայլել ուժեղ արևի տակ: Ոչ մի վերջ չկար այս ամենին: Տեսնում էք, դեռ շատ փոքր եմ, բայց տեսել եմ բաներ, որ դուք երբեք չեք տեսել: Ողջ մնացածների հետ հասանք Հալեպ, որտեղ ինձ վերցրին և իմ անունը Սիրանուշից փոխեցին Ջելիլ և տարան թուրքական որբանոց, որտեղ ամեն առավոտ և երեկո մենք ստիպված էինք աղոթել թուրքերենով»: Որոշ ժամանակ հետո նա ասում է, որ մյուս աղջիկները ևս հայեր են: Այսպես, հնարավոր է լինում հայտնաբերել տասնհինգ հայ իսլամացված աղջիկների, ովքեր պահված էին Կիաթանեի աղջիկների թուրքական որբանոցում:

V

Մի փոքր աղջիկ՝ Աֆիֆ Ջեն (Afife Djen) անունով, վերցվել էր բրիտանացիների կողմից շեյխ Նուրուլ Էֆենդիի (Nurull effendi) տնից: Ենթադրվում էր, որ նա հայ է: Աղջկան վերադարձնելու պահանջներին ի պատասխան՝ թուրքական կառավարությունը, մինչև նրան Չեզոք տուն հանձնելը, երեք օր պահել էր բանտում՝ ահաբեկելով նրան: Թուրքական կառավարությունը պնդում էր, որ աղջիկը պետք է վերադարձվի՝ պահանջը հիմնավորելով կեղծ ծննդյան վկայականով և շեյխի այն պնդումներով, որ աղջիկը մուսուլման է: Չեզոք տուն ժամանելուց հետո աղջիկը դիմադրում էր: Երեկոյան Չաքրյանը նրան հարցնում է. «Ինչո՞ւ չես պատմում ճշմարտությունը: Տեսնում ես, թե որքան ենք տանջվում՝ պարզելու համար՝ ով ես: Եթե պատահի, որ մայրդ վերադառնա և փնտրի քեզ, ի՞նչ ենք նրան պատասխանելու: Եթե վերադառնաս թուրքական տուն, կարո՞ղ ես պատկերացնել, ինչ ահավոր տխուր կլինի քո մայրը»: Իսկ աղջկա այն հարցին, թե գուցե մայրը մահացել է, Չաքրյանն ասաց. «Չգիտես, որ մեր մահից հետո կա այլ կյանք, որտեղ մենք բոլորս հանդիպելու ենք, և այդ ժամանակ քո մայրը տեսնելով, որ մահմեդական ես դարձել, չի գրկի քեզ: Նա քեզ հետ կվանի»:

Աղջիկը, չդիմանալով մոր սիրո մտքից, խոստովանում է ողջ ճշմարտությունը. «Իմ անունը Վիրջին է: Մի օր հանկարծակի իմ հորս ու մորս ուժով վերցրին մեր տնից և մյուսների հետ ուղարկեցին անհայտ ուղղությամբ: Միայն ես մնացի, և նրանք ինձ տարան Կոստանդնուպոլիս և տվեցին Հադջա անունով մի չար մարդու, ով ինձ միշտ ասում էր, որ եթե հայ դառնամ, կսպանեն ինձ, ու ես դժոխք կգնամ»⁴⁹:

⁴⁹ St'u LNA, Classement 12, Document N 9640, Dossier 4631, The Orinet News, August 08, Vol 2, №46:

VI

Կեսարիայի որբանոցից բերված բռնի իսլամացված հայերի մեջ էր նաև Թոսուն անունով ութ տարեկան մի տղա: Նրա դիմագծերը հայկական էին, բայց ոչինչ չէր հիշում, և քանի որ նրա ազգության վերաբերյալ ոչ մի ապացույց չկար, տղան վերադարձվեց թուրքերին: Կեսարիայի հայ կանայք, տեղեկանալով որբերի ժամանման մասին, գնացել էին՝ փնտրելու իրենց ազգականներին: Կանանցից մեկը ճանաչեց տղային՝ պնդելով, որ վերջինիս հորաքույր/մորաքույրն է⁵⁰: Սակայն ակնհայտ էր, որ տղան ոչինչ չէր հիշում: Հաջորդ օրը կինը բերեց երեխայի և նրա ծնողների նկարը: Այլևս կասկած չկար, որ չնայած թուրքերն ամեն ինչ արել էին, որ տղան մոռանա իր ազգությունը, երեխան հայ էր: Երբ լուսանկարը ցույց տվեցին տղային, նա անմիջապես ոգևորվեց և իր բարակ մատով առաջինը ցույց տվեց հորը, հետո՝ մորը և վերջապես՝ եղբայրներին ու իրեն: Տղայի իսկական անունը Վարդգես էր:

VII

Մի օր հայ լինելու կասկածանքով Հուսեյն էֆենդիի տնից երկու բրիտանացի գնդապետների ներկայությամբ Չեզոք տուն բերվեց մի գեղեցիկ աղջիկ՝ Լյուիֆի անունով: Չնայած իր ուրախ բնույթին՝ աղջիկն անընդհատ լալիս էր: Բրիտանացի պաշտոնյաների այն հարցին, թե ինչու է լալիս, աղջիկը պատասխանում է, որ գիտի, թե ինչպես են հայերն ու անգլիացիները հավաքում երեխաներին, որ ուտեն նրանց, քանի որ իր աչքով է տեսել, և պատմեց հետևյալը. «Մի օր մենք այցելեցինք մեր հարևանությամբ ապրող մի թուրք կնոջ, և տան բոլոր անձինք սգի մեջ էին, իսկ խանումը դառնորեն լացում էր: Ես նրան հարցրի՝ ինչու է լացում, և նա պատասխանեց, որ անգլիացիները գողացել են իրենց հետ եղած փոքրիկ աղջկան, մասնատել և կերել նրան»: Երեխան ավարտեց պատմությունը՝ հեկեկալով և ասելով. «Ի՛նչ հրեշավոր խաղ»:

Այս դեպքից երկուսուկես ամիս անց աղջիկը դեռ շարունակում էր տարօրինակ կերպով ժխտել իր ազգությունը: Երբ հարցնում էինք իր ծնողների անունները, միշտ թուրքական անուններ էր ասում: Մի օր մի հայ կին եկավ Չեզոք տուն՝ փնտրելու ընտանիքի կենդանի մնացածներին: Կինն ու երեխան ճանաչեցին միմյանց, և աղջիկը բնագոյաբար գցեց իրեն կնոջ գիրկը՝ լացելով. «Օ՛, իմ սիրելի՛, սիրելի՛ մորաքույր»: Մորաքույրը համբուրեց նրան և ասաց. «Իմ սիրելի՛ փոքրիկ Նվարդ»: Երբ հաջորդ անգամ երեխան տեսավ Չաքրյանին, ամաչեց, փակեց իր դեմքը ձեռքերով և փախավ⁵¹:

VIII

Մասնավոր աղբյուրներից տեղեկանալով, որ մի քանի հայ որբ աղջիկներ պահվում են Աբդուլ Սելամ փաշայի (վերջինս սուլթան Աբդուլ Համիդի գլխավոր բժիշկն

⁵⁰ Բնագրում գրված է «aunt».

⁵¹ Տե՛ս LNA, Classement 12, Document N 9640, Dossier 4631, The Orinet News, August 20, Vol 2, № 55:

էր) մոտ, մի քանի ամսվա աշխատանքից հետո հաջողվում է նրա տնից դուրս բերել երեք հայ և մի բուլղարացի աղջկա, որոնք բոլորն էլ իսլամացվել էին: Փաշան ամեն ինչ անում էր՝ կանխելու աղջիկների ինքնության պարզումը: Ապացուցելու համար, որ աղջիկները մահմեդական են, նա թուրքական կառավարությունից, քաղաքապետից և իր գյուղի կրոնական ղեկավարությունից կեղծ ծանդականներ էր վերցրել: Բացի դրանից՝ նամակներ և հեռագրեր էր ուղարկել տարբեր ատյաններ՝ ընդդիմանալու մեր գործողություններին: Նամակներից մեկում նա բառացի ասում էր. «Ներկայիս դարում նման բռնի կրոնափոխությունները կարող են զայրացնել գիտակցություն ունեցող յուրաքանչյուր անձի և կարող են ստիպել պաշտպանել թույլերին և կանխել անարդարությունները: Վիջդանի (աղջիկներից մեկի թուրքական անունն է) մահմեդական լինելն անվիճելի է, հետևաբար՝ անարդար է, որ նա բռնի քրիստոնեացվի»:

Վիջդանն ազատագրվելուց հետո արեց հետևյալ հայտարարությունը. «Ես հայ եմ: Իմ իսկական անունը Անժել է: Իմ հոր և մոր անունները՝ Նշան և Խոսրովանուշ: Ես եկել եմ Սվազի գավառից: Չորս տարի առաջ Յենիհանում տեղահանումների ժամանակ չորս հարյուր ուրիշ հայերի հետ մեզ տարան Հալեպ: Տեղահանությունների ընթացքում թուրք պաշտոնյան, որ առաջնորդում էր մեզ, հորս ու մորս սպանելուց հետո բռնաբարեց քրոջս՝ Սրբուհուն, ինձ և մյուս փոքր աղջիկներին բռնաբարեցին ժանդարմները: Բոլոր տղամարդկանց և կանանց սպանեցին կացիններով: Յոթ տարեկանից բարձր բոլոր տղա երեխաներին ևս սպանեցին: Մնացածներս իսլամ ընդունեցինք: Մի քանի օր քայլելուց հետո ինձ ուղարկեցին Հալեպի հայ եկեղեցի, որը ճամբար էր տեղահանվածների համար: Այնտեղ մենք հավաքված էինք շների պես, և մեզանից շատերը մեռան սովից և հիվանդություններից: Այդ ընթացքում թուրք կանայք այցելում էին եկեղեցի և ընտրում աղջիկների՝ որպես ծառաներ: Այսպես, մի թուրք կին ինձ վերցրեց: Նրա տանը ամեն օր ինձ ծեծում էին և գոռում վրաս. «Գյավուր օղլու»⁵²: Ես ստիպված էի ողջ օրն աշխատել մի կտոր հացի համար: Ես փախա, բայց բռնվեցի, և ինձ տարան մեկ ուրիշ թուրքի տուն, և վերջապես Աբդուլ Մելամի կինն ինձ բերեց այստեղ»: Այն հարցին, թե ինչու էր պնդում, որ մահմեդական է, աղջիկը պատասխանում է. «Ես վախենում էի, որովհետև փաշան ինձ ասել էր, որ հայերը թողնում են որբերին մեռնել, և անգլիացիների՝ Կոստանդնուպոլիսը լքելուց հետո թուրքերը կրկին կոչնչացնեն քրիստոնյաներին: Այն պահին, երբ ես լքում էի տունը, նա ինձ ասաց. «Հանուն Աստծու հանդեպ սիրո երբեք չասես, որ հայ ես: Եթե դու պնդես քո թուրք պատկանելությունը, ես կգնեմ՝ ինչ ուզես»: Աղջիկն իր պատմությունն ավարտեց հեկեկալով. «Բայց ես չեմ հասկանում՝ ինչու եք մեզ փրկում: Ես անարգված աղջիկ եմ և ամաչում եմ, որ կենդանի եմ: Իմ բոլոր բարեկամները սպանվել են: Ես չեմ կարողանում մոռանալ նրանց և չեմ ուզում այլևս ապրել»⁵³:

⁵² Թուրքերենից թարգմանաբար՝ «Անհավատի երեխա»:

⁵³ St'u LNA, Classement 12, Document N 9640, Dossier 4631, The Orinet News, August 20, Vol 2, № 55:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՈՐԻԵՆՏԻՆ. ԱՌԱՔԵԼ ՉԱՔՐՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ

Էդիտա Գզոյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է 1919թ. Բրիտանական բարձրագույն հանձնաժողովի կողմից ձևավորված Հայ-հունական բաժնի հայ պատվիրակ Առաքել Չաքրյանի հոդվածաշարը՝ նվիրված մուսուլմանական տներից և հաստատություններից բռնի իսլամացված հայ երեխաների հավաքագրման, նրանց ինքնության վերադարձելու ժամանակ հանդիպող խոչընդոտներին, ինչպես նաև թուրք պաշտոնյաների հարուցած դժվարություններին: Հայ-հունական բաժնի որոշմամբ այդ նյութերը տպագրվում են Կոստանդնուպոլսի «The Orinet News» թերթում:

Հոդվածում ներկայացվում են նաև Չեզոք տան վերաբերյալ որոշ տվյալներ՝ Ազգերի լիգայի արխիվից:

Բանալի բառեր՝ հայերի բռնի իսլամացում, Չեզոք տուն, Առաքել Չաքրյան, «The Orient News» թերթ, Հայ-հունական բաժին:

SAVING ARMENIAN ORPHANS: MEMOIRS OF ARAKEL CHAKIRIAN

Edita Gzoyan

SUMMARY

The article presents memoirs of Arakel Chakirian, an Armenian delegate of the Armenian-Greek Section established by the British High Commission in Constantinople in 1919, published in the Orient News newspaper by the decision of the Section. The publication is about the difficulties faced during the collection of the forcibly Islamized and hidden Armenians from the Muslim homes and institutions, bringing them back to their national identity, and also the difficulties created by the Turkish authorities during the implementation thereof. The article also dwelled upon the Neutral House, based on the materials of the League of Nations Archives.

Keywords: forced islamization of Armenians, Neutral House, Arakel Chakirian, “The Orient News” newspaper, Armenian-Greek Section.

СПАСЕНИЕ АРМЯНСКИМ СИРОТАМ: ВОСПОМИНАНИЯ АРАКЕЛА ЧАКРЯНА

Эдита Гзоян

РЕЗЮМЕ

В работе представлена серия статей Аракела Чакряна, армянского делегата Армяно-греческого отдела, образованного Британской верховной комиссией в 1919 году, опубликованные в газете “The Orient News”. Эта серия посвящена сбору насильственно исламизированных армянских детей из мусульманских домов и учреждений, преградам, встречающимся на пути восстановления их идентичности, а также трудностям, создаваемыми турецкими чиновниками.

В статье представлены также некоторые данные про Нейтральный дом, взятые из архива Лиги наций.

Ключевые слова: насильственная исламизация армян, Нейтральный дом, Аракел Чакрян, газета “The Orient News”, Армяно-греческий отдел.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռոբերտ Թաթոյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության զոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

Նարինե Հակոբյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող: Զբաղվում է 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների առանձին ասպեկտների ուսումնասիրությամբ:

Սեդա Պարսամյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ: Զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Նարինե Մարգարյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության և ուսումնասիրությունների բաժնի վարիչ: Զբաղվում է արաբական երկրներում Հայոց ցեղասպանության արձագանքի թեմայի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

Ռեզինա Գալուստյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՅԹԻ գրադարանի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Թուրքական ինքնության ձևավորումը և Հայոց ցեղասպանությունը»:

Շուշան Խաչատրյան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ, ՀՅԹԻ հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտական աշխատող: Պատրաստում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրություններ՝ Օսմանյան կայսրության կրոնական իրավիճակի, կրոնների բախման, ցեղասպանության աստվածաբանության, թեոլոգիայի, Հոլոքոստի փիլիսոփայության ոլորտներում:

Նարեկ Պողոսյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ: Գիտական հետազոտության թեման է Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ:

Միհրան Մինասյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան- ինստիտուտի հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ: Յոթ մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության երկրորդ փուլը (Սիրիայի տարածքում), հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն:

Տաթև Արշակյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերի լաբորանտ: Զբաղվում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների անտիպ հուշերի ուսումնասիրությամբ:

Էդիտա Գզոյան, պատմական գիտությունների թեկնածու, իրավունքի մագիստրանտ, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Հայոց ցեղասպանության իրավական խնդիրներով: Մեկ մենագրության հեղինակ է:

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան:

Համակարգչային էջադրումը՝ «Կոլլաժ» ՍՊԸ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 11.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «Կոլլաժ» տպագրատանը
Երևան, Սարյան 4 • Հեռ.՝ (+374 10) 52 02 17
Էլ. փոստ՝ collagetd@gmail.com • Էլ. կայք՝ www.collage.am